


Մ. ԱԲԵՂՅԱՆ

399

**ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ  
== ԻՆՖՈՐՄԱՆ ==**

—

**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳՈՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳՐՈՂՆՑԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐԵՆԵՐ, ՄԻԱԾԵՉ

49199-1

Ա-13

Մ. ԱՐԵՂՅԱՆ

ՀԱՅԿԵՐ 1 1925

# ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՌԵՖՈՐՄԸ

5876



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏՕՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ—№ 199.

ՅԵՐԵՎԱՆ—1925



Քրատունաբանութիւն, ցառակետ կիւղաբանական

1800 թվական

899  
—  
III



## ՌԻՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՌԵՖՈՐՄԱ

### I.

1021 թ. հունվարի ամսին Հայաստանի Ս. Խ. Հանրապետության լուսավորության ժ. կոմիսար Ա. Հովհաննիսյանի հրավերով Յերևանում բազմամարդ ունկնդիրների առաջ կարգացի մեր ուղղադրության բարեփոխության մասին մի զեկուցում, վարից հետո յեղավ մաքերի փոխանակություն: Այդ խնդիրն ինձ համար նորություն չէր, վորովհետև մի նույնպիսի զեկուցում կարդացել էիք և Եջմիածնում 1913 թ. հայոց գրերի գյուտի մեծ հորեյանի առթիվ Հորեյանական հանձնաժողովի հանձնարարությամբ\*: Իմ զեկուցումը լուս. ժող. կոմիսարը ներկայացրեց մի հանձնաժողովի, վոր և ընդունեց այն. ապա կոմիսարը տպագրել տալով այն՝ ուղարկեց շատերին, ցանկանալով ըլսել հայ լեզվի մշակների, առանձնապես լուսավորության գործով մտահոգվածների խոսքը: Վորքան գիտեմ, վոչ մի տեղից չլսվեց այդ խոսքը: 1922 թ., վորքան հիշում եմ, փետրվարի ամսին, կազմվեց մի յերկրորդ հանձնաժողով, վոր նորից քննության առնելով իմ զեկուցումը՝ իր կարծիքը մեր լեզվի ուղղադրության ուժգորմի մասին՝ ներկայացրեց լուս. ժող. կոմիսարին, բայց լուս. ժող. կոմ. ընկեր Գ. Մակինցյանը վոչ թե Հանձնաժողովի կարծիքը, այլ իմ Զեկուցման մեջ արված բոլոր առաջարկությունները ներկայացրեց ժող. կոմիսարների Խորհրդին, վոր և 1922 թ. մարտի 4-ին հաստատեց այն և հրամայեց գործադրել:

Միևնույն թվականին, միջանի ամիս հետո, լույս տեսավ իմ մի փոքրիկ գրքույկը «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղադրության» վերնագրով, վորի առթիվ անհ Սա. Մալխասյանցը Թիֆլիսի «Մարտակույզ» թերթի 1924 թ. № 10 և 11-ում քննության ե առնում հայոց լեզվի նոր ուղղադրությունը «գործնական տեսակետից», հայտնելով թե ինքը իմ Զեկուցման, այսինքն նոր ուղղադրության տեսական-գիտական կողմի մասին, միջանի անգամ առիթ ե ունեցել իր կարծիքը հայտնելու: Ինձ հայտնի չե նրա այդպիսի կարծիքներից և վոչ մեկը. իսկ ինչ վոր նա 1922 թվին հայտնել ե իբրև հանձնաժողովի անգամ, յես տեսական-գիտական կարծիք չեմ համարում:

Վոչ գործնական և վոչ գիտական տեսակետով յես արժեք չեմ տալիս նաև «Մարտակույզ» մեջ տպագրված նրա հոդվածին, վորի վրա չարժեր նույնիսկ ուղղադրություն դարձնել: Նա լրջությամբ չի մտտեցել խնդիրն և նեղություն չի կրել հիմնովին ուսումնասիրելու ուղղադրության խնդիրը, այլ միայն ցանկացել ե ճարտար դրությամբ ազդել ընթերցողների վրա, անընդունելի կացուցանելու համար ուղղադրության ուժգորմը, վոր կատարված իրողություն ե: Այդ պատճառով յես մտադիր չեյի մի տող անգամ

\* Տպված «Արարատ» ամսագրի մեջ, 1945 թ. № 11 յիվ 12:

գրելու այդ մասին՝ Բայց վորովհետև նա լեզվաբանի համբավ ունի, և նրա այդ գրութիւնն այնպիսի բնավորութիւն ունի, վոր անտեղյակ մարդկանց կարող է ձգել մոլորութեան մեջ ուղղագրութեան ռեֆորմի վերաբերմամբ, ուստի միջանի ընկերների խոսքից դրոված՝ մանրամասն քննութեան եմ յենթարկում նրա ասածները, ինչպես յերբեմն նրա մի ուրիշ հոգովածը: Յեթե մեկ-մեկ իմ գրութեան վրէժ հարմար չե այս նյութին, դրա առիթ՝ ավոզն ինքը հոգովածագիրն է յեղել:

Նախ թնչ և ուղղագրութեան մեջ կատարված ռեֆորմը: Յես կըբերեմ «Առաջնորդից», վոր Ս. Մ.-ի քննութեան առարկան է:

Ընոր ուղղագրութեան նպատակն է՝ ձայնավորների, յ կիսաձայնի և զ բաղաձայնի նկատմամբ վերացնել գրել-կարդալու և ուղղագրութեան ուսման դժվարութիւնները, վոր ժամանակի ընթացքում մեր լեզվի բնական հնչափոխութեամբ առաջացել են գրութեան մեջ...

«Բարեփոխութիւնը հիմնված է գրական-դպրոցական արտասանութեան վրա և կատարված է հետեյալ սկզբունքներով.

«Ա. Ամեն մի հնչյուն միայն մեկ առանձին նշանագիր պիտի ունենա, և ամեն մի տառ միայն այդ մեկ հնչյունի նշանագիրը պետք է լինի. ուստի՝

«Փոխված հնչյունները պետք է գրել այն տառերով, վոր մեր այբբեն-նարանում սկզբից ի վեր ընդունված են այդ հնչյունների համար. ինչպես՝ 1) ախօս, 2) հանգէս, 3) կաւ, 4) նուսաստ, 5) լոյս, 6) յաասակ, 7) սենեակ, ամսօրեայ, եօթն, արիւն բառերն այլևս չենք արտասանում, ինչպես հնուօն, իբրև akos\*, handes\*, kaw, nuast (ռուս. нуаст), loys (ռուս. лойс), yatak (գերմ. jatak, ռուս. йатак), seneak, amsoreay\*, eothn\*, ariwn, այլ իբրև akos, handes, nuast (ռուս. нваст), luys (ռուս. луйс), hatak, senyak (գերմ. senjak, ռուս. сенйак), amsorya (գերմ. amsorja, ռուս. амсорйа), yothn (գերմ. jothn), aryun (գերմ. arjun, ռուս. арйун). ուստի պետք է գրել՝ 1) ախոս, 2) հանգես, 3) կավ, 4) նվաստ, 5) լույս, 6) հատակ, 7) սենյակ, ամսորյա, յօթն, արյուն:

«Բ. Զգիտի գրել այն տառերը, վոր այլևս չեն արտասանվում. ինչպես՝ 8) գոյ բառն այժմ չենք արտասանում իբրև gay (ռուս. гай), այլ իբրև ga (ռուս. га), ուստի պետք է գրել գա:

«Գ. Յերբ բառերի մեջը կամ սկզբում ավելացել են նոր հնչյուններ, պետք է գրութեան մեջ ել ավելացնել դրանց համապատասխան տառերը. ինչպես՝ 9) բոպէական, բոպէով, գրէի, 10) ոտ, 11) եկ, 12) դու ես, գնալու եմ բառերն այժմ չենք արտասանում իբրև ropéakan, ropéov, grèi. ot (ռուս. от), ek, (ռուս. эк), du es (ռուս. ду эс), գնալու em (ռուս. гналу эм), այլ իբրև ropéakan (ռուս. ропэйакан), ropéov (ռուս. ропэйов), gréyi (ռուս. грэйи), vot (ռուս. вот), yek (գերմ. jek, ռուս. йэк), du yes (գերմ. du jes, ռուս. ду йэс), gnalu yem (գերմ. gnalu jem, ռուս. гналу йэм). ուստի պետք է գրել՝ 9) բոպէյական, բոպէյով, գրէյի, 10) վոտ, 11) յեկ, 12) դու յես, գնալու յեմ»:

Ահա այն փոփոխութիւնները, վոր ընդունված են դեկրետով և գործադրութեան մեջ գրված: Ըստայսմ օ, օ (ռուս. օ), ւ (ռուս. ւ), ւ (ռուս. ւ),

\* Դժովոր օ, օ տառերը չլինելու պատճառով՝ դրանց փոխանակ դրվում են շեշտավոր օ օ:

և, ք (գերմ. j, ուսու. ի). հնչյունները գրութայն մեջ արտահայտվում են միայն մի-մի ձևով՝ ո, ե, վ, ու, հ, յ, և այս տառերը և ու յերկտառը միայն այդ հնչյուններն են արտահայտում: Գրությունը հիմնվում է արտասանութայն վրա. ամեն հնչյուն իր համապատասխան տառով է գրվում. յերբ մի հնչյուն արտասանվում է՝ գրվում է համապատասխան տառը, չի արտասանվում վոչ մի հնչյուն՝ չի գրվում վորևէ ավելորդ տառ: Ձի փոխված, սահայն, ուղղագրությունը իա, իե, իո, իու կապակցությունների, վորոնք սովորաբար արտասանվում են՝ իյա, իյե, իյո, իյու կամ յա, յե, յո, յու, ինչպես՝ միանալ-միյանալ, մյանալ. միլիոն-միլյոն, Գերմանիա-Գերմանյա:

Ս. Մ.-ն ընդունված բարեփոխություններից 1 և 2 կետերը իր հոգվածի մեջ մասամբ միայն ընդունում է, այն է՝ բառամիջում 0 և է տառերի փոխանակ գրել ո, ե տառերը (ակոս, հանդես): Մերժում է ամբողջովին 0. 7. 9. 10. 11 և 12 կետերը\*. իսկ 3. 4. 5 և 8 կետերին (կավ, նվաստ, լույս, գա) իր բարեհաճ հավանությունն է տալիս, ավելացնելով թե ւարանցից յերեքը (3, 4, 8) Մ. Արեղյանին ել չեն պատկանում, այլ առաջարկված, պաշտպանված ու գործադրված են յեղել ուրիշներից: Կարծես թե մեկն ասել է նրան, թե «Արեղյանին են պատկանում»... Ուստի հենց սկզբից կարող եմ հանգստացնել Ս. Մ.-ին, վոր ինձ լավ ծանոթ է նրա «Մի հնչյունին մի գիր», «Վեվագրություն» կոչված գրքույկը, վորի մեջ յեր. 13 կարելի յե կարգալ. «Այսպիսի ուղղագրությունը (այսինքն «վեվագրությունը») նորությունն էլ չե. դեռ 10—11-րդ դարերից ըսկզսած թե՛ արձանագրությունների և թե՛ գրքերի մեջ պատահում են վ-ով գրություններ անգրագետ գրիչներից (այսինքն՝ վոր նախապաշարված չեյին ավանդական ուղղագրությամբ)... Միթե՞ արյանները դեռ 19-րդ դարի ըսկզբում, աշխարհաբար գրելու ժամանակ, հետևում եյին այս գրության կերպին... Սայաթ-Նովայի գիտնական հրատարակիչը՝ բժ. Հախվերդյան կրավորականի բոլոր ձևերը գրում եր «վ»-ով... Խաչ. Արովյան «վ» է գործածել բոլոր տեղերում, ուր մենք ավանդական ուղղագրությամբ եու» յենք գրում «վ» հնչելիս... իսկ Խորեն Ստեփանեն իր «Հայկական աշխարհում» ավելի արմատական կերպով է վարվել և ամեն տեղ, ուր հնչվում է «վ» հնչյունը, գրել է վ— Աստված... վերջապես այս ուղղագրությունը գիտական տեսակետից պաշտպանել է... և Սարգիս Սարգսյանը:— Ս. Մ.-ը կարող եր և ուրիշ ժամանակակիցների անունը տալ, գոնե «Մշակ» լրագրինը: Կարող եմ Ս. Մ.-ին ապահովել և այն մասին, վոր մյուս կետերի նկատմամբ ել վոչ մի բան չկա, վոր ուրիշներն ել մտածած չլինեն և մասամբ նույնիսկ գործադրած Յես միայն մի բան եմ արել. յերբ ինձնից հարցրել են իմ կարծիքը ուղղագրության ուժգորմի մասին, տվել և պաշտպանել եմ իմ պատճառաբանված զեկուցումը, վորի մեջ առաջարկել եմ միքանի բան փոփոխել մեր ուղղագրության մեջ: Դեռ այս ել պիտի ավելացնեմ, վոր թեպետ և սկզբից յես յեղել եմ այն տեսակետին, թե պետք է ընդունել և գործադրել իմ Ձեկուցման մեջ դրված բոլոր կետերը, բայց հենց սկզբից ել կարևորությունն եմ տվել ընդունելության խնդրին, ուստի իմ Ձեկուցման մեջ մի ամբողջ

\* Իրեվ ուղղագր. հանձնաժողովի ունդամ՝ նա ընդունել է նայել բառավերջում 0, է տառերի փոխանակ գրել ո, ե. իսկ բառամիջում էա կապակցության փոխանակ գրել եյա, ինչպես՝ բուպեյական, քրիստոնեյական:

հատված (յեր. 20—22) նվիրել եմ դրան, վոր և Մ. Մ.-ը կարող է կարգալ-  
 «Շարվածքի և թուղթ ու թանաքի տնտեսումից շատ ավելի կարևոր է քն-  
 դուհեղուքյան խնդիրը: Գրագետները, վորոնց վերաբերում է ընդունելության  
 խնդիրը, այնքան կապված են մնում դժվարությամբ սովորած ուղղագրու-  
 թյանը, վոր չեն հոժարում դրանից կտրվել և մի նոր նեղություն պատճա-  
 րել իրենց՝ մի նոր բան էլ սովորելու: Բացի այդ՝ սովորած տառն այնքան  
 է կաշկանդում հնչարանության ուսմանն անվարժ մարդկանց, վոր նրանք  
 չեն կարողանում նույնիսկ հնչյունների վերլուծությունն ըմբռնել, ուստի  
 և կառչած են մնում ավանդական ուղղագրությանը:

«Այսպիսի գրագետներին մեծ դժվարություն չպատճառելու համար՝  
 կարելի յե ուղղագրության բարեփոխումն անել նաև աստիճանաբար, չպա-  
 հելով սկզբում խիստ հնչյունական գրությունը: Կարելի յե, ուրեմն, առայժմ  
 չգործադրել առաջարկված բարեփոխություններից այնպիսիները, վորոնք  
 բավական դժվարություն կպատճառեն գրագետներին: Յեվ ապա բերված  
 են միջանի տեսակի աստիճանական բարեփոխությունների որինակներ:  
 Դեռ ավելին նա:

Յերկրորդ հանձնաժողովի մեջ, վորի անգամ եր և Մ. Մ.-ը, տեսնելով  
 վոր նույնիսկ սա այնքան ընախապաշարված է ավանդական ուղղագրու-  
 թյամբ» և բավական թույլ հասկացողություն ունի իմ Զեկուցման մեջ  
 բերված կետերի մասին, յես էլ ունեցա իմ Զեկուցման մեջ բերված կետերի  
 մասնակի գործադրության տեսակետը: Բայց, ինչպես ասացի վերևում, լուս-  
 ժող. կոմիսարը հաճեց ռեֆորմի խնդիրն սմբողջական ձևով ներկայացնել  
 ժող. կոմ. Պորհրդին, կանգնած լինելով այն տեսակետի վրա, վոր յեթե  
 ռեֆորմ է լինում, պետք չե բավականանալ չնչին փոփոխություններով: Յեվ  
 յես այժմ տ'սնում եմ, վոր իրավունքը լուս. ժող. կոմ.-ի կողմն եր. վո-  
 րովհետև 1500 տարվա հնություն ունեցող մի ուղղագրություն փոխելու  
 համար՝ միշտ չի լինիլ հարմար ժամանակ. իսկ 1922 թվականը հենց այդպիսի  
 հաղվադեպ վայրկյաններից մեկն եր: Այժմ տարիուկեսով ընթացքում Հայաս-  
 տանի Հանրապետության սահմաններում արգեն մեծ մասամբ հաղթահար-  
 ված են գրագետների հարուցած դժվարությունները, վոր նախատեսվում  
 էին. պետք է հուսալ, վոր մի տաս-աասնուհինգ տարի հետո Հայաստանի  
 սահմաններից դուրս էլ «ավանդական ուղղագրությամբ նախապաշարված-  
 ները» ստիպված կլինեն հետզհետե տեղի տալու ապագա սերնդի առաջ,  
 վոր շուտով գալու յե, և վորին այլևս վոչ մի կերպ չեն կարող ստիպել, վոր  
 նորից հանձն առնի ուղղագրություն սովորելու համար գործադրել անպետք  
 և ապարդյուն աշխատանք և ժամավաճառ լինել:

Այս՝ այս: Հիմա անցնենք Մ. Մ.-ի հողվածին:

## II

«Իմ կարծիքով՝ վոչ մի կետ նոր ուղղագրության մեջ այնքան անպետք,  
 սխալ, աչք ծակող ու սարտեցնող չե, վորքան ես=յա, իւ=յու գրությու-  
 նը», գրում է Մ. Մ.-ը. ուստի յես էլ սկսում եմ հենց այդ կետից, վորին  
 նա, «գործնական տեսակետով», շոսյում է նաև հետևյալ ածականները՝  
 «մի չտեսնված, խորթ, անճոռնի, յերկար ու սխալ գրություն»:

«Անպետքն» ու «սխալն» առժամանակ թողնենք. մնացած ածական-  
 ները վերաբերում են օրսոգության զգայությանը և վոչ լսողության: Զեմ

կարծում, թե Ս. Մ.-ը չիմանա, վոր լեզվի հնչյունական գրությունը հիմ-  
 արվում է հնչյունների վրա, վորոնք լսողության են վերաբերում. մինչդեռ  
 բառերի տանճոռնի, աչք ծակող, յերկար գրության՝ զգայությունը, վոր առա-  
 ջանում է բառերի գծագրության և տառերի կապակցության արտաքին  
 պատկերից, գործ չունի լսողության հետ, այլ վերաբերում է միայն տեսո-  
 զությանը: Վիճել չի կարելի, անշուշտ, վոր այսինչ կամ այնինչ անձի համար,  
 նրա նրբացած ճաշակին նայելով, վարևե գրություն կամ տառ ու տառերի  
 կապակցության ընդհանուր պատկեր կարող է տանճոռնի՝ գրություն յերեալ-  
 կան մարդիկ այժմ, վորոնց հաճելի չեն մեր անկյունավոր տառերը: Բայց  
 Ս. Մ.-ը գոնե պետք է իմանար, վոր դա կապ չունի ուղղագրության ու-  
 ֆորմի հետ:

Այսպէս պետք է նկատի ունենալ հետևյալը: Մենք մանկական հասակից  
 կարգալ-գրել սովորելով և շարունակ նույնը կրկնելով՝ ունենում ենք խիստ  
 զօրեղ տեսողական մտապատկերներ բառերի արտաքին գծագրության հա-  
 մար, մանավանդ վոր դրանց հետ միանում են նաև գրելու համար գործ  
 դրած ձեռքի շարժման մկանային մտապատկերները: Այս պատճառով, հենց  
 վոր բառերի գրության ծանօթ և ընտել պատկերը մի փոքր փոխվում է,  
 իտղուն զա մեր աչքը ծակում է, լիսրթ և անճոռնի՝ յե յերեւում: Յերե-  
 վակայեցեք մի մարդ, վոր հիսուն և ավելի կամ պակաս տարիներ շարունակ  
 ունեցել է սեճեակ, աբիւճ բառերի այս հին գրությունների տեսողական  
 զգայությունն ու մտապատկերները, միացած մկանային շարժման մտա-  
 պատկերների հետ, և անհայտ մարդուն հրամցում ենք սեճյակ, աբյուճ  
 գրությունները. անպայման սրանք «չտեսնված», խորթ, անճոռնի և աչք  
 ծակող կերևանա, մանավանդ վոր այդ մարդը, հետևած չլինելով մեր գիտա-  
 կան գրվածքներին, չի տեսել, վոր ուղղագրության ուֆորմից առաջ դործած-  
 ված է յա, յու գրությունը փոխանակ ետ, իւ գրության: Այդպիսի մեկը գու-  
 ցե սկզբում չկարողանա նույնիսկ կարգալ բառերի փոխված գրությունը:  
 Այս տեսողական և մկանային զօրեղ մտապատկերներն են հենց գլխավոր  
 պատճառը, վոր միշտ և ամեն տեղ գրագետներն ընդհանրապես դժվարանում  
 են ընդունել վորևե փոփոխություն ուղղագրության մեջ: Ս. Մ.-ի նման  
 մեկը, սակայն, վոր իր ասելով անկեղծ կողմնակից է մեր ուղղագրության  
 արմատական ուֆորմին, ընդունված ուֆորմի դեմ գրելով՝ չպիտի գիմեր  
 այսպիսի եժանագին միջոցների, վոր խնդրին անհմուտ մարդկանց միայն  
 մոլորեցնել կարող են: Բայց նրան այնքան «աչք ծակող, անճոռնի ու խորթ»  
 են յերևում այդ «չտեսնված» (այժմ արդեն բավական տեսնված) սեճյակ,  
 աբյուճ գրությունները, վոր նա մինչև անգամ «սարաչում է», այսին-  
 քըն տեղից վեր է թռչում խրտնած: Յովուճ էմ: Բայցնա կարող է նրանով  
 մխիթարվել, վոր ուղղագրության ուֆորմը լինում է վոչ թե հին սերնդի  
 համար, այլ գալիք սերնդի համար, վոր ասնյակ և «արյուն» գրություն-  
 ներին վարժվելով— և արդեն վարժվում է— մի որ կգարմտնա, թե ինչն:  
 Ս. Մ.-ը «սարաչել է» այս գրություններից է թե ինչով է նա չ տառի  
 գրությունը անճոռնի գտել, իսկ ե և ի տառերի գրությունը «ճոռնի»  
 (ստիլիսաներից ներդրություն էմ խնդրում այս նոր բառի համար. միտքս  
 արտահայտելու համար ուրիշ հարմար բառ չգտա):

Այսպես ուրեմն տեսողության զգայությունը մի կողմ պիտի դնել. Ս.  
 Մ. ի շուայած աչք ծակող, անճոռնի և այլն անպակասները միայն տպավոր-

րություն թողնելու համար են. թե չե՛ դրանք վոչ մի ապացույց չեն, թե ետ, իւ յերկբարբառները յա, յու. չպիտի գրվեն:

Գուցե Ս. Մ.-ը չհամոզվեց իմ ասածին. այդ դեպքում հավանորեն նա ինքն իրեն կհամոզի իր այս խոսքերով, վոր դալիս են այն յերանյալ ժամանակից, յերբ նա դավանում և քարոզում եր «մի հնչյունին մի գիր» առողջ սկզբունքը. «Կա վերջապես և մի առարկութիւն — միակ անկեղծք, թե վ-ով ուղղագրութիւնն անսովոր է, աչք է ծակում:— Ուղիղ է այս դիտողութիւնը: Բայց միթե սա պատճառ պետք է լինի վ-ով գրութիւնը մերժելու... Սովոր տեղից հանկարծ լուսի մեջ տեղափոխվող մարդու համար լուսն անսովոր է և աչք է ծակում: Հին և հասարակ զգեստ հագնողն էլ, յերբ նոր ու փառավոր զգեստ է հագնում՝ սկզբում քաջվում է, անսովոր է զգում այդ զգեստը... Աշխարհիս յերեսին վոչ մի ռեֆորմ չեր իրականանա, յեթե մարդկութիւնն առաջնորդվելու լիներ անսովորութեան յերկրորդով... Առարկութիւն անողները մոռանում են, վոր մեր լեզուն անցյալ դարերում շատ անգամ ուղղագրական ռեֆորմների յ յենթարկվել, վորոնցից ամեն մեկն իր ժամանակ անսովոր է յեղել և աչք է ծակել... Կարիքը, հեշտութիւնը, պարզութիւնը, նրանց (նախնիքներին) առաջնորդել են գրութեան մեջ այս կամ այն նորութիւնը մտցնելու, թեպետ իրանք ել անշուշտ զգում էին նորութեան անսովորութիւնը կամ հարձակումների յերթարկվում հակառակորդների կողմից» և այլն և այլն: Յեվ ուրիշ լավ լավ քարոզներ (Ստ. Մալխ. «Մի հնչյունին մի գիր», յեր. 28-30):

Համոզվեց արդոք Ս. Մ.-ը, վոր պիտի հրատարակի «խորթ, աչք ծակող, անճոռնի» և այլ բառերից:—Չեմ կարծում. վորովհետև այդ քարոզը նա տվել է 14 տարի առաջ, իսկ այսքան տարիները շատ են ավանդական ուղղագրութեամբ ավելի ևս նախապաշարվելու համար, մանավանդ վոր վերջին տարիների անտեսական տազնապը ռեֆորմացիոն զգացմունքն էլ ավելացրել է տեսողական և մկանային մտապատկերներին, Տեսնենք այդ կողմը:

«Յերկարագրութիւն», «յերկարեցնում է գրութիւնը», «գրութիւնը յերկարեցնել», «գրութիւնը չի յերկարում», «գրութիւնն էլ յերկարում է մի գրով, այն ինչ նոր ուղղագրութիւնից մեծ է իրազմունք ունեցիկ հակառակն օպասելու». «ետ, իւ յերկբարբառները (ինչպես և ու գրութիւնը) կարիք ունեն ռեֆորմի ... գծագրական տեսակետից: Հարկավոր է նրանց համար ստեղծել միաստու նշանագրեր, վորի շնորհիվ մոտ 4 տոկոս կեծանանա ապագրութիւնը. գրելու ժամանակի խնայողութիւն կլինի»... Ահա թե ինչ է կրկնում Ս. Մ.-ը: Իսկ «Մի հնչյունին մի գիրը»,—այդ գին է գրված, այդ գոյութիւն չունի: Տեսնութիւնն է հետաքրքրում նրան:

Իմ «Ջեզուցման» մեջ, նախիմանալով այդ առարկութիւնը, մանրամասն կանգ եմ առել խնդրի և այդ կողմի վրա (յեր. 16—20). դրանից մի յերկու կտոր կուղեյի գնել այստեղ, վորովհետև այդ գրքույկը շատերի ձեռքը չի ընկել և չի ընկնիլ: «Ուղղագրութեան բարեփոխման վրա՝ վոմանք ուզում են նայել թուղթ ու թանաքի, գրելու կամ տառերը շարելու համար գործ դրած ժամանակի ռեֆորմացիոն տեսակետից: Անշուշտ, յեթե մեր լեզվի հնչափոխութիւնն այնպես գործած լիներ; վոր յերկու հնչյունը կամ յերկու տառը մի հնչյունի կամ մի տառի վերածված լինային (գնացեալ = գնացել, ազաւթք = աղօթք = աղոթք, այլ = էլ, գուարթ = զվարթ), կամ մի հնչյուն, ուրեմն և մի տառ դուրս ընկներ (ծառայ = ծառա), և վոչ թե, ընդհակառա-

կլն, նաև նոր հնչյուններ, ուրիմն և նոր տառեր ավելանային (ոտ=վոտ, եկ=յեկ) և կամ մի տառով նշանակվող մեկ հնչյունը փոխվեր յերկու տառով նշանակվող մեկ հնչյունի (լոյս=լույս, իւր=յուր) — այդ դեպքում բառերի գրութունը կկարճանար, շարելու համար ավելի քիչ ժամանակ կպահանջվեր, և կարելի կլիներ այդպիսի մի տնտեսական տեսակետով ել հիմնավորել մեր ուղղագրութան փոփոխութիւնը, վոր յեւ հետ քմբռնելի կլինէր սովորեկացն մտածողութեան համար: Յեւ իսկապես, ինչ ավելորդ մի աշխատանք և ծախք՝ բառերի վերջում գրել մի տառ, վոր չի արտասանվում: Հայտնի յե, թե ուսերենում Ե տառի դուրս ձգվելով վորքան ժամանակ և թուղթ ու թանաք ե տնտեսվում:

Ընդ սոցնետումը, սակայն, կապ չունի ուղղագրութեան բարեփոխման խիստ հնցյունակացն սիտեմի հետ. դա պատահարար միայն կարող ե միանալ կամ չմիանալ ուղղագրութեան բարեփոխման հետ: Կան լեզուներ ել, վորոնք ունեն 24 և նույնիսկ ավելի պակաս հնչյուններ, ուրիմն 24 տառ միայն պիտի սովորել, ձուլել, գրի մեքենայի վրա ունենալ և այլն. մինչդեռ մեր յերեխաները պետք ե սովորեն 38 տառ. ուրիմն ավելի ժամանակ պիտի գործ գնեն, և ավելի ծախք պետք ե անենք տառերի մայրեր շինելու ու տառեր ձուլելու համար և այլն: Ինչպես վոր այստեղ, տառերի թվի նկատմամբ, վոչինչ անել չենք կարող, վորովհետև գա ծագում ե մեր լեզվի ընական հատկութեանց, նույնպես և, յեթե մեր հնչափոխութեամբ՝ բառերն ընդհանրապես ավելի մեծացել են, քան փոքրացել, մենք չենք կարող վոչինչ անել՝ գրութիւնն ու շարվածքն արագացնելու ե թուղթ ու թանաքի տնտեսման նկատմամբ, առաջն հակասելու հնցյունակացն սիտեմի և առանց դժվարացնելու գրագիտութիւն և ուղղագրութիւն սովորելու գործը: Դրա համար կան տեխնիկական միջոցներ՝ սղագրութիւն, գրող մեքենա, շարող մեքենա և այլն: — Յեւ այնուհետև ասել եմ, թե կան լեզուներ, վորոնց գրութեան մեջ ձայնավորները չեն նշանակվում, կամ մեր ք առք չի գրվում, և ապա պատվով գրութիւնների և ուսերենի Զ, Յ, Խ տառերի մասին և մեր ու յերկտառի միասին ձուլելու մասին, իսկ Առաջնորդի մեջ (յեր. 7. ծան. 2) նաև, թե հնարավոր ե ապագայում ուրի տեղ միայն ւ գրել, ինչպես՝ արյուն, լավութեան, լյս և այլն: Բայց այդ ամենը հարկավ ուղղագրութեան ռեֆորմի հետ կապ չունի:

Տեսնում եք, յես ել իմանալով, վոր անհմուտ մարդիկ յեթե վոչ մի բան չհասկանան, գոնե այն կհասկանան, թե կարճը, շուտ գրելն ու շարելն ավելի լավ ե, քան յերկարը, այսքան կանգ եմ առել այդ մասին: Բայց չեյի կարող յենթադրել, վոր մի լեզվաբան կիջներ սովորական մտածողութեան մակարդակին այն աստիճանի, վոր կառաջարկեր նույնիսկ վանկագրութեան դիմել և այդքան կկրկներ «յերկար», «յերկարում ե» բառերը: Մտքովս չեր անցնիլ, վոր հնչյունական ուղղագրութեան ռեֆորմի ժամանակ — և վոչ տառերի ձևի ռեֆորմի ժամանակ — մի լեզվաբան կկարծեր, թե իրավունք ունի սպասելու, վոր գրութիւնը կարճանար: Ուստի ստիպված եմ հիշեցնել նրան իմ Զեկուցումից հետևյալը. «Բարեփոխված ուղղագրութեան մեջ վոչ թե այդպիսի տնտեսումը նկատի պիտի առնվի, այլ միմիայն խիստ հնցյունակացն սիտեմը, վորի հետ միացած ե և մանկավարժական, այսինքն գրել-կարդալու և ուղղագրութեան ուսման համար գործադրելի ժամանակի և աշխատանքի տնտեսումը: Ե տառը դուրս են ձգել վոչ թե

ներա համար, վոր գրեին ու շարեին արագանա և թուղթ ու թանաքի խնայողութիւն լինի, այլ վորովհետև այժմյան լեզվի մեջ այդ տառն այլևս չի արտասանվում: ՎՄանկավարժութեան պահանջն է՝ հեշտ և արագ սովորեցնել անխալ գրել և կարդալ, չենց այս նպատակին հասնելու համար՝ գրութիւնը գաղափարագրից ու վանկագրից անցնելով՝ դարձել է հնչյունագիր, այսինքն՝ խոսքը վերլուծվել է իր ամենապարզ բաղադրիչ մասերին՝ հնչյուններին, վորոնց թիվը փոքր է, և վորոնց համար միայն հորինվել են առանձին պայմանական նշաններ՝ տառեր... Հառկանալի յե, վոր այբբենարանի խիստ հնչյունական գրութիւնը, — վորով լեզվի ամեն մի հնչյուն մեկ առանձին նշանագիր պիտի ունենա, և ամեն մի տառ միայն այդ մեկ հնչյունի նշանագիրը պետք է լինի, — ծայր աստիճանի դուրացնում և արագացնում է գրել-կարդալ սովորողների գործը և վերացնում ամեն ուղղագրական դժվարութիւնը... Յես ել չեմ շարունակիլ:

Բայց անոյ յեկանք հառանք դարձյալ «մի հնչյունին մի գիր» սկզբունքին: Ս. Մ.-ն ել մի ժամանակ դավանում ու քարոզում էր այդ սկզբունքը, իսկ մշտմ, Խնչ պատահեց այժմ, վոր նա այդ սկզբունքը մոռացավ կամ արդուք ինչ նպատակով խոհեմութիւն և համարել կատարյալ լսութիւն պահպանել, բերանից մի խոսք անգամ չփախցնել այդ սկզբունքի մասին այն ժամանակ, յերբ իբր «գործնական տեսակետով» քննում է մի ուղղագրական ակֆորմ, վոր այդ սկզբունքով է կատարված, և այդ մասին մի գրքույկ, վորի առաջին տողերի մեջ հենց շեշտված է այդ սկզբունքը, վոր հենց «գործնական տեսակետը» նկատի ունի:

Ասում են, վոր յերբ ուղղագրութեան դեկրետը հասնում է Թիֆլիս և մանավանդ յերբ մայիսին սկսվում է «Սորհրդային Հայաստանի» մեջ գործադրվել ուղղագրութեան ակֆորմը դեռևս մասնակի, այդ ժամանակ շարժվում են Թիֆլիսի «ազգային ջոջերը» և ազմուկ բարձրացնում, թե հայոց դարավոր կուլտուրան վոչնչացավ: Նրանք Սմբ. Տ.-Ավետիքյանի, Մարգ. Ավետիսյանի և ուրիշների առաջնորդութեամբ, — լսած լինելով վոր Ս. Մ.-ն յեղել է Յերեանում ուղղագր. հանձնաժողովի անդամ, — գալիս պաշարում են նրան: Ս. Մ.-ի առաջին խոսքը լինում է, թե այն չեմ, յես չեմ, այլ Մ. Արեղյանն է մեղավոր: Յեվ անոյ քնից արագ դարձնած Թիֆլիսը, կարծելով թե դեռ հին ժամանակներն են, և ինքը կարող է առաջվա պես հրամայել Յերեանին ու Հայաստանին, անսպասելի արագութեամբ մայիսի վերջին ժողով է անում և ընտրում մի հանձնաժողով թե մասնաժողով՝ հայկական նոր ուղղագրութիւնը քննելու և տապալելու: Թիֆլիսի համար անսպասելի արագութեամբ գործում է այդ մասնաժողովը, այսինքն Ս. Մ.-ի ձեռքով պատրաստվում է մի հակազեկուցում և մի շաբաթ հետո հրավիրվում է նորից ընդհանուր ժողով, վոր ամբողջապես ընդունում է այդ հակազեկուցումը: Յեվ այնուհետև Ս. Մ.-ն այլևս չի համարձակվում իր «մի հնչյունին մի գիր» անունը տալ:

Դե վոր մարդ մի անգամ ուրացավ այդ սկզբունքը, այն ժամանակ կարելի յե ամեն բան ասել:

Գարեիլի յե ասել, թե չնայելով վոր բառերի մեջը կամ սկզբում նոր հնչյուններ են ավելացել, չպետք է ավելացնել դրանց համապատասխան տառերը, վորովհետև «գրութիւնը յերկարում է», «այսինչ նոր ուղղագրութիւնից մենք իրավունք ունենք հակառակն սպասելու»: Յեվ ինչպէ կարելի չե



նույնիսկ ասել, թե մենք լեզվից իրավունք ունենք հակառակն սպասելու, և թե ինչ «անճոռնի» լեզու յն հայոց լեզուն, վոր բառերը կարճացնելու փոխանակ յերկարացրել ե. ոս (от, ոու. OT) շինել ե վոս (во, ոու. ВОТ): Յեզվ վորովհետեւ լեզուն այդպես անշնորհք ե գտնվել, ուստի կարելի յն լեզվի դեր ստանձնելով՝ մի շարք բասերի սկզբի յ-երը դուրս ձգել, յափշտակել, յարձակվել, յոգոց հանել և այլն կարելի յն գրել՝ ափշտակել, արձակվել, ոգոց հանել: Յեզվ կատակ չն այս. Ս. Մ.-ը, ինչպես կտեսնենք, առաջարկում ե այդ բասերն այդպես գրել:

Կարելի յն ուղղագրության ռեֆորմի դեմ գրելիս՝ և այն ասել, թե «ուսերենի նոր ուղղագրությունը 6-7 տոկոս կրճատել ե գրությունը, իսկ հայերենի նոր ուղղագրությունը 2-3 տոկոս ավելացրել ե», և դրանով թելադրել միամիտ ընթերցողին, թե իբր ուղղագրության ռեֆորմը գրությունը կրճատելու համար ե լինում: Բայց կարելի յն միաժամանակ և չասել, թե ուսերենի գրությունը յերկարացել ե նոր ուղղագրությամբ նրանով, վոր 1 տառի փոխանակ ընդունել են Ո տառը. չէ՞ վոր կարճացնելու համար 1-ն պիտի պահելին, մանավանդ վոր սա նույն ե ուրիշ յեզրուպական ազգերի նույն 1 տառի հետ:

Կարելի յն Իւ յերկարաբառի յւ գրելու դեմ իբրև հիմք ծառայեցնել գրության յերկարելը, իսկ ոչ յերկարաբառի փոխանակ հանգիստ ընդունել ուչ գրությունը և չասել թե այս դեպքում ել գրությունը յերկարում ե (լոյս-լույս):

Կարելի յն նույնիսկ ասել, թե ես, Իւ կապակցությունների համար, վորոնք յերկու հնչյունից են կազմված, պետք ե «ստեղծել միտառն նշանագրեր», վորպեսզի գրությունը կարճանա, տպագրությունն եժանանա, և խնայողություն լինի. բայց կարելի չն ասել, թե պետք ե բոլոր վանկերի համար կա՝ բա, բո, բու, բի, բը, որ, ուր, իբ և այլն միատառ նշանագրեր ստեղծել և ամբողջապես յետ դառնալ հնչյունագրից վանկագրության: Յեզվ ինչու կարելի չն այս ասել, չէ՞ վոր այդպիսով բանն ավելի արագ կգնա, սղագրության ել կարիք չենք ունենալ...

Ահա թե ինչու Ս. Մ.-ը կարծում ե, թե «իրավունք ունի սպասելու», վոր նոր ուղղագրությամբ կարճանա գրությունը: Բայց վոր լեզվի բնական հնչափոխությունը չի տալիս նրան այդ իրավունքը: Ինչ փոյթ. նա գարձյալ իրավունք ունի, վորովհետև այդ ե ասում «գործնական տեսակետը»: Բայց ուր միայն «մի հնչյունին մի գիրը». դա խեղդվել ե գործնական-տրնտեսական հաշիվների մեջ:

Ս. Մ.-ը իբ հիշված գրքույկի մեջ (յեր. 17) գրում ե. «Դիմեցի Աղայանին ու հարցրի թե ինչու նա «և» տառն ընտրեց և վոչ թե «վ»: Պ. Աղայանը ժողովի ներկայությամբ պատասխանեց. «Վորովհետև «վ»-ը մեծ գիր ե»: Հիմա հարցնում ենք Ս. Մ.-ին, թե ինչու նա չի ուզում ավելացած հնչյունների համապատասխան տառերն ավելացնել, նա պատասխատնում ե. «Վորովհետև գրությունը յերկարում ե, աչք ծակող ու խորթ ե դառնում: Մթթե գրության յերկարելն ու կարճանալն ավելի մեծ արժեք ունի, քան տառի մեծ ու փոքր լինելը: Ս. Մ.-ը տարիներ հետո մոռացել ե, վոր ուղղագրության մեջ մտցրած փոփոխությունը պետք ե հիմնավորված լինի հնչարանական (ֆոնետիկական) տեսակետով ու պատմականորեն, և յուրացրել ե Աղայանի տեսակետը: Նա մոռացել ե, վոր լեզվաբանական-ֆոնետիկական տեսակետով միևնույն արժեքն ունեն լեզվի մեջ առաջացած յերեք տեսակի

փոփոխութիւններն ես, վոր են՝ հնչյունների զուրս ընկնելը (վրայ—վրա, գնացեալ—գնացել), հնչյունների ավելանալը (ոտ-վտա), հնչյունների փոխվելը մի ուրիշ հնչյունի (սենեակ-սենյակ)։ Մ. Մ.-ը հեշտութեամբ ընդունում է առաջինը՝ վորովհետև կարճանում է և լինայողութիւնն և լինում։ մերժում է յերկրորդը, վորովհետև յերկարում է... վորովհետև զրանով խնայողութիւնն չի լինում։

Այսպես ուրեմն, Մ. Մ.-ի անտեսութիւնն ու խնայողութիւնն ել պիտի դնեն դնել նրա տեսողութեան մտապատկերների կողքին։ Դրանք ուղղագրութեան ակֆորմի հետ առընչութիւնն չունեցող բաներ են և սովորական մտածողութիւնն ունեցողներին միայն մոլորեցնել կարող են։ Անցնենք նրա մյուս ածականներին։

«Անպետք ուղղագրութիւնն», վորովհետև Մ. Մ. չի հիշում։

«Վորեք մեկը յերեկից նկատել է, վոր հայերեն գրողը, յերեխա թե չափահաս, դժվարութիւն կրեր կամ սխալ գրեր իւ (= ԻՕ) և եա (= ԻԳ) հնչյունները», հարցնում է Մ. Մ.-ը և շարունակում։ «Եես գոնե իմ յերեսնամյա ուսուցչութեան ընթացքում այսպիսի դեպք չիմ հիշում։ Ի՞նչ հարկ կա ուրեմն՝ վոչ մի դժվարութիւն չհարուցանող, ճիշտ կարգացվող ու ճիշտ գրվող գրութեան ձևը վերածել մի չտեսնված, խորթ, անճոռնի, յերկար ու սխալ գրութեան։ Սա հեշտացնել է ուղղագրութիւնը, թէ՛ դժվարացնելը։— Յեմ սպասում է Մ. Մ.-ը, վոր գործին անհմուտ ընթերցողը, — վորի համար նույնպես հարկավ անսովոր ու խորթ են այդ նոր գրութիւնները, — կը պատասխանի. «անշուշտ, դժվարացնելը»։ Տեսնենք։

Նախ՝ «չափահաս հայերեն գրողը» դնեմ պիտի դնել, վորովհետև այդպիսի մեկն արդեն վարժված է հայերեն կարգալու և գրելու։ Այդպիսի մեկին ուղղագրութեան մեջ մտքած փոփոխութիւնը, ինչպես ել լինի, վոչ միայն հեշտութիւնն չի պատճառի, այլ միշտ ել դժվարութիւն կպատճառի. վորովհետև հին սովորածը պիտի թողնի և մի նոր բան պիտի սովորի։ Յեմ յեթե մենք չափահաս գրողներին նկատի ունենանք, ուղղագրութեան մեջ վոչ մի ակֆորմ չպիտի մտցնենք։ Բայց Մ. Մ.-ը յերեկից չի նկատել կամ չի հիշում, վոր յերեսները սխալներ անելին եա, քա հնչյունների նկատմամբ, վոր այդ միայն այն բանի ապացույց է, վոր կամ նրա հիշողութիւնը թուլ է, կամ նա յերեսուն տարի բախտավոր ուսուցիչ է յեղել, յերեսներ տեսարակների հետ գործ չի ունեցել, և կամ չի հետաքրքրվել իմանալու, թե յերեսներն ինչպիսի սխալներ են անում ուսման առաջին չորս-հինգ տարիների ընթացքում։ Հենց այդ պատճառով նա չի նկատել և չի հիշում։

1) եուզ, արեուն, հարեուր և նման գրութիւնները, վորոնց մեջ եու = իւ, Անսխալ գրութիւնն եր սա քա (= ԻՕ) հնչյունի։ Դեռ Մ. Չամչյանը 18-րդ դարում իր քերականութեան մեջ քա յերկարբարու հնչյունը բացատրելու համար դիմացը դնում է եու. նույնը և Հայկազյան լեզվի մեծ բառագրքի մեջ՝ « իւ այսինքն եու »։

2) ծառահութիւն, կահուն և նման գրութիւնները։

3) ծառախական, ծառախութիւն և նմանները։

4) ծառահական, նտեած, ծառահով, և նմանները։

Դեռ Հայկազյան լեզվի մեծ բառագրքի մեջ 1-ի հնչյունը նույնացրած է ե և ք տառերի սկզբի հնչյունի հետ. իսկ Չամչյանը ծառախական և նման բառերի մեջ 1-ի հնչյունի համար ասում է թե «եչի» նման է հնչում. անհ

այս բեչի՝ հնչյունն է պատճառը, վոր մեր արեմտյան լեզվի մեջ ոտարազդի բաների սկզբում  $\gamma$  (= Ծ) վանկը գրում են եռու. մենք գրում ենք Իւսուսիյան, նրանք՝ Ենուսուսիյան, այսպես և եուվա, եոււրոււս և այլն: Այդ բեչի՝ հնչյունն է պատճառը, վոր ինչպես եուվա, եար, սենեակ են գրում, նույնպես և վկահեւթյուն, հրամահած և այլն:

5) Նա չի հիշում և այսպիսի գրությունները՝ սենիակ, արդիքը, Ստեփանիան: Բայց այս բոլորիս մոտիս և Յերեանի այս տարվա I աստիճանի № 6 դպրոցի IV խմբի մի աշակերտի շարադրություն, վորի տակին աշակերտը ստորագրել է իր ազգանունը Խաճ ձեռվ, «Առաքելիան Ձալիբեկ»:

6) Նա չի հիշում և այսպիսի սխալներ՝ «գյուղ, գյուղացի», բայց յես, վոր 1887 թվից հետևում եմ աշակերտական սխալներին, շատ լավ հիշում եմ. բերեմ մեկը միայն: 1922 թվին, փետրվար ամսին, նոր ուղղագրության գեկրետը դեռ գուրս չէր յեկել, վոր Յերեանի ամերիկյան դպրոցի ուսուցիչներից Մ. Մկրտումյանը, իմանալով, վոր յես հետաքրքրվում եմ աշակերտական տառասխալներով, ինձ ցույց տվավ ուսման Ձ-ըդ տարվա մի աշակերտի մի փոքրիկ շարադրություն, վոր գյուղական կյանքից առնված մի պատկերի բովանդակություն էր և մեջը յերկու անգամ գրած «գյուղ» և «գյուղացի» բառերն այս ձևով:

Ս. Մ.-ը չի հիշում ետ; Իւ հնչյունների նկատմամբ այս բոլոր սխալները, բայց միայն իր հոգվածի վերի մասում, յերբ հարկավոր չի հիշել. իսկ հոգվածի ներքևի մասում, յերբ հարկավոր է հիշել, մոռանալով վերևում ասածը, հիշում է գոնե յերկու տեսակ սխալ. նա ինքը գրում է. «Բավական է Մ. Արեղյանի պես սխալվել և բառը բաժանել ծառա—յական, ծառա—յություն և անմիջապես կսացվի ծառա—եական, ծառա—իություն հնչյունն և գրությունը»: Մ. Արեղյանի պես, ինչպես կտեսնենք, սխալվում են՝ ամենքը. և յեթե Մ. Մ.-ն Արեղյանի պես սխալվելով՝ գտավ այդ գրությունները, յերեսներին, իհարկե, չի արգելված «Արեղյանի պես սխալվելով» վանկերի բաժանել և ստանալ անմիջապես ծառաեակաճ, ծառաիություն գրությունները: Ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը, ըստ հին ուղղագրության՝ ճիշտ գրություններ են այդ, ինչպես և վերևի գրությունները—եուղ, Առաքելիան և այլն: Յեվ ինչից եյին առաջանում այդ սխալները, վոր նա յերեսուն տարվա ընթացքում նույնիսկ չի նկատել և կամ չի հիշում. . . — «Մի հնչյունին մի գիր» սկզբունքից, վոր նույնպես չի հիշում նա:

Յերեսայի ականջը շատ լավ լսում և տարրերում է կիսաձայն Ի (=  $\gamma$ , գերմ յ) հնչյունը, վոր մեկ հնչյուն է, բայց նշանադրվում եր<sup>3</sup> յերեք տառով. 1) ե-ով (սենեակ), վոր միաժամանակ նաև e (Յ) հնչյունի նշանն է (բերեցի), ինչպես և ye (յօ) կապակցության (եկ =  $\gamma$ ek), 2) Ի-ով (հարիւր), վոր միաժամանակ և Ի ձայնավորի նշանն է. 3) յ-ով (այո, ծառայական), վոր միաժամանակ հագագային և-ի նշանն է: Նայելով Թե  $\gamma$  (յ) հնչյունի համար այդ յերեք տառերից (յ, ե, Ի) վորի մտապատկերն ավելի զորեղ է յերեսայի հոգու մեջ և կամ վորի պատկերացումն է գրելու բոլորիս յերեան գալիս, այն տառն էլ նա գրում է. ծառայական, ծառաեական, ծառաիական, իւղ, եուղ և այլն. մինչև վոր յերկար վարժություններից հետո միայն դրանցից յուրաքանչյուրը սերտ զուգորդվում է վորոշ կիրառությունների հետ: Տեսնում եք, ուրեմն, Թե վնդան «ճիշտ չգրվող» ձև էր այս ետ, Իւ հնչյունական կապակցությունը և միևնույն  $\gamma$  (յ) հնչյունի գրությունը, վորի

հետ սերտ կապված են նաև երեկոեաց, երեկոյաց, հայացք, հաեացք, ճեռլ, սակաթն, վկախիւրիւն սխալների նմանները, վոր նույնպես չի նկատել և չի հիշում Ս. Մ.-ը. «Ծիշտ կարդացվող» գրութիւններ ել են դրանք ըստ Ս. Մ.-ի: Բայց, որինակ, սենեակ բառը սառացի քանի՞ տեսակ կարելի յի կարդալ. և սենեակ-ակ, և սեն-յի-ակ (sen-ye-ak) և սենյակ. չէ՞ վոր ե = օ (ə), յօ և ւ. իսկ իւ = iu, ււ և ււ: Յեվ յեթե յերեւան Վերջիվերջո կարդում եր սենյակ, այդ լինում եր յերկար վարժութիւնից հետո: Բեճ-այր-բա, բեն-եչ-րե սսելով ել յերբեմն վերջիվերջո սովորում եյին ճիշտ կարդալ: Ս. Մեղրապը կարողացել և 5-րդ դարում Կ (յ) հնչյունի համար ստեղծել յ տառը, իսկ Ս. Մ.-ը ցանկանում և, վոր 20-րդ դարում տարմատական և կատարյալ ռեֆորմ» մտցնենք մեր ուղղագրութիւն մեջ, բայց միաժամանակ և զգործնական տեսակետով», այսինքն հեշտութիւն համար, շարունակենք նշանազրել այդ մի հնչյունը յերեք տառերով, վորոնք յերեքն ել միաժամանակ նաև մեկ կամ յերկու ուրիշ հնչյունի նշան են: Նս ցանկանում և, վոր շարունակվեն վերեւում դրված սխալները՝ եուդ, արեուեն, կահուն, ծառահական, ծառախական, սենիակ, արդիոք, ծառատով, գյուղ, նաեւ, երեկոյան և այլն, վորոնց բոլորի աղբյուրն և մի հնչյունին մի գիր» սկզբունքի խախտումը:

Ս. Մ.-ը յերեսուն տարվա ընթացքում բախտավոր կերպով չի նկատել այդ խառնաշփոթութիւնը մեր գրութիւն մեջ, ուստի և իրավունք և համարում իրեն գրելու. «Այս փոփոխութիւնը բարձրագոյ բողոքում և այն նպատակի դեմ, վոր արտահայտված և «Առաջնորդի» հենց առաջին խոսքերով՝ «վերացնել գրել-կարդալու և ուղղագրութիւն համար դժվարութիւնները»:— Այդ նշանակում և Ս. Մ.-ը բարձրագոյ բողոքում և, վոր «մի հնչյունին մի գիր» սկզբունքով՝ մի վ (ւ, օ) հնչյունը յերեք ձևով (վ, ւ, ու) գրելու փոխանակ՝ միայն մեկ վ տառով ենք գրում: Բայց վոչ. ներողութիւն, սխալվեցի. «բարձրագոյ բողոքը» վ-ի դեմ չի ուղղված, այլ այն բանի դեմ, վոր մի Կ (յ) հնչյունը մի յ տառով ենք ուղղում արտահայտել և վոչ թե յերեք ձևով (յ, ե, ի): Չէ՞ վոր ուրիշ բան և այդ «անճոռնի», «աչք ծակող» ու ծխորթ» յ տառը. թնչ իրավունք ունի նա ե-ի տեղ դրվելու կամ ի-ի տեղ. թնչ իրավունք ունի այդ «անճոռնի» յ-ն պահանջելու, վոր կիսաձայն Կ հնչյունն ինքը միայն արտահայտի և վոչ թե միաժամանակ նաև և և ի տառերը: Յեվ մենք թնչ իրավունք ունենք պահանջելու, վոր ուղղագրութիւնից վերանան դրանից առաջացած բազմազան սխալները՝ հրամահած, հրամախած, հրամաել, եուդ և այլն. չէ՞ վոր Ս. Մ.-ն յերեսուն տարի շարունակ չի նկատել և չի հիշում այդպիսի սխալները, հետևաբար և նա իրավունք ունի «բարձրագոյ բողոքելու»... Բայց յերեխաներն ել չեն լսում այդ «բողոքին» և մեկուկես, մեկ և նույնիսկ կես տարում (նայելով դպրոցին) արդեն յուրացրել են մի Կ (յ) հնչյունը մի յ տառով արտահայտելը: Մի տասը տարի ևս, և նրանք կտպացուցանեն Ս. Մ.-ին, թե վորքան լավ և մի հնչյունը մի գրով արտահայտելը:

Յեվ այսպես Ս. Մ.-ին ել ուրիշ բան չի մնալ յա, յու գրութիւն դեմ առարկելու զգործնական տեսակետով. նա ստիպված պիտի գիմի զգիտական-տեսական» կողմին և ասի ու տպացուցանի, թե «սխալ» և ես, իւ կապակցութիւնների փոխանակ յա, յու գրելը: Յեվ նա զգործնական տեսակետով գրած իր հողվածի մեջ դուրս և բերում իր գիտական զինանոցի

բոլոր գործիքները, վոր ցույց տա, թե բախալ՝ և եա-յա, եո-յո, իւ-յու գնելն և գրելը: Յես ել ուղեմ-չուղեմ պիտի անցնեմ դրան:

## III

Խնդիրը վերաբերում է հին եա = ea, եօ = eo, իւ = iw յերկրարբանների այժմյան ya, yo, yu կամ ja, jo, ju, (ռուս. Яа, Яо, Яу) արտասանութեանը և յա, յո, յու ձևով գրվելուն, այսինքն հին գրութեան ե և ի առաերի փոխանակ չ տաւը գրելուն: Ուստի նախ պետք է տեսնել, թե թնչ է յերկրարբառ և կիսաձայն առածը և ինչ և յեզել և այժմ է մեր չ տառի հնչյունը: Վորովհետև ընթերցողներից կարող են այնպիսիները լինել, վոր լավ ծանոթ չլինեն «յերկրարբառ» և «կիսաձայն» տերմինների նըշանակութեանը, իսկ պես նշանակութուններին, և Ս. Մ.-ն ել, ինչպես իր հոգովածից յերևում է, լավ ծանոթ չէ, ուստի յեստիպված եմ այստեղ մի փոքրը կանգ առնել այդ մասին: Բայց կզրեմ վոչ թե իմ խոքերով, այլ հեզիտակավորների, քանի վոր Ս. Մ.-ին, ինչպես կտեսնենք, հեզիտակութուններ են նարկավոր, և ինքը չի գտնում այդ հեզիտակութունները: Եա, յերեի, լսել է Նդուարդ Սիվերսի անունը և ծանոթ է նրա Grundzüge der Phonetik կոչված գրքին (ձեռքիս տակ ունեմ 4-րդ հրատարակութունը), վոր կազմում է առաջին հատորը Bibliothek indogermanischer Grammatiken հայտնի հրատարակութունների, վոր արել են 19-րդ դարի վերջի գերմանացի նշանավոր լեզվաբանները: Նույն հրատարակութունների վեցերորդ հատորն է կազմում Հ. Հյուբշմանի Armen. Grammatik, I Theil, Armen. Etymologie: Սիվերսն իր աշխատանքի մեջ հաճախ խոսում է նաև հայերենի հնչյունների մասին և նա յե, վոր առաջին անգամ դիտել է մեր լեզվի մեջ (Աշտարակի բարբառ) հազագավոր ձայնեղ բաղաձայնների գոյութունը (բհ, գհ, դհ): Բացի Սիվերսի աշխատանքից ձեռի տակ ունեմ Ֆրանսերեն Leonce Roudet, Eléments de Phonetik générale, Paris, 1910: Այս գրքի մասին ժամանակին լավ կարծիք է հայտնել Ա. Մեյն: Դրա հեզիտակը, վոր ունի բազմաթիվ հնչաբանական աշխատանքներ, ոգտվել է P. J. Rousselot-ի, «Փորձական հնչաբանութեան հիմնադրի» աշխատանքներից, հետևաբար և ներկայացնում է վերջին տասնամյակների հայացքները: Բացի սրանցից՝ ձեռիս տակ ունեմ նաև միքանի ռուս լեզվաբանների իշխատանքներ, վորոնց մասին իրենց տեղում: Այժմ անցնենք ինդերին: Յես մի փոքր մանրամասն կզրեմ, վոր վոչ լեզվաբանների համար ել պարզ լինի:

Ինչպես ըուր հնչյունները, նույնպես խոքի հնչյունները տարբերվում են իրենց ավելի կամ պակաս ուժով: Խոքի հնչյունների ամենապարզ կազակցութեան, այսինքն վանկի մեջ մի ուժեղ հնչյունին առաջից կամ յետեից միանում են թույլ հնչյունները և միասին առանց ընդհատվելու արտաբերվում են արտաշնչութեան մի մղումով իբրև մի միութուն: Մեր լսելիքը վանկի մեջ տարբերում է ամենամեծ ուժով արտաբերվող մի հնչյունը, վոր վանկի կենտրոնը կամ գագաթն է, և վորի ուժեղ արտաբերութեան շնորհիվ կազմվում է վանկը, այսինքն առաջ է գալիս թույլ հնչյունների միացումն ուժեղի հետ. որինակ՝ ան, ալ, ապ կապակցութունների մեջ հայտնապես առաջին ա հնչյունն է ականջի ընկնում իր ուժով, իսկ նա, լա, պա վանկերի մեջ՝ յերկրորդ ա հնչյունը: Ըստ այսմ խոքի հնչյունները նայելով իրենց կատարած դերին վանկի մեջ՝ լինում են. 1) վաճկայից

կամ վանկ կազմող հնչյուններ, վորոնք վանկի մեջ արտաբերվում են ամենամեծ ուժով, և վորոնց հետ միանում են նախորդ կամ հաջորդ թույլ հնչյունները, և ջ) անվանկային կամ վանկ չկազմող հնչյուններ, վորոնք թույլ արտաբերվելով միանում են նախորդ կամ հաջորդ ուժեղ հնչյունին: «Վանկային» և «անվանկային» բառերի նշանակութամբ գործածվում են նաև առաջինի համար ձայնավորակ (sonantisch) կամ սոնանտ (sonant), իսկ յերկրորդի համար բազանայնակ (consonantisch, consonantique) կամ կոնսոնանտ (consonant):

Հնչյունների այս բաժանումը չպետք է շփոթել սովորական ձայնավոր և բազանայն բաժանման հետ, վոր դալիս է հին հունական քերականություններից և հիմնված է հնչյունների ֆունկցիայի վրա վանկի մեջ: Ըստ հին քերականությունների ձայնավորը վանկ կազմելու համար մի անհրաժեշտ հնչյուն էր, իսկ բաղաձայնը չէր կարող վանկային լինել: Բայց հնչյունների բնավորութայն ավելի ճիշտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր բաղաձայնները, վորոնք սովորաբար վանկ չեն կազմում, կարող են լինել նաև վանկային, և այս կամ այն լեզվի մեջ (սովորաբար ն, մ, բ, լ նայ կոչված հնչյունները) վանկային կամ ձայնավորական են. մյուս կողմից բոլոր ձայնավորները կարող են լինել վանկային և սովորաբար վանկային են, բայց կարող են նաև թույլ արտաբերվելով՝ լինել անվանկային կամ բաղաձայնական:

Առնենք ձայնավորներից մեզ համար այս դեպքում կարևոր է ձայնավորը: Այս հնչյունը կարող է ուժեղ արտաբերվելով լինել վանկային, ինչպես՝ ինձ, միս, ին վանկերի մեջ, բայց կարող է նաև թույլ արտաբերվելով դառնալ անվանկային կամ բաղաձայնական մի հնչյուն. որինակ՝ յերկավանկ a-in ա-ին կապակցութայն մեջ է ձայնավորը վանկային է, բայց նույն ձայնավորը միավանկ ain (այն) կապակցութայն մեջ անվանկային է: Այսպիսի անվանկային ձայնավորները կոչվում են անվանկային կամ բազանայնակ և ձայնավոր կամ կիսանայն: Միավանկ ain կապակցութայն մեջ, ուրեմն, i ձայնավորն է անվանկային կամ բաղաձայնական i, կամ կիսանայն i:

Հայերեն լեզվի այբբենարանում հենց սկզբից ունենք յերկու տառ՝ ի և յ. սրանցից առաջինը վանկային է ձայնավորի նշանն է, իսկ յերկրորդը, ինչպես քիչ հետո կտեսնենք, անվանկային կամ բաղաձայնական կամ կիսանայն ի-ի նշանն է:

Անցնենք այժմ յերկրարբաններին: Յես բառացի կրերես Միվերսից: ԵՅԻԿԲԵՐԲԵՐՈ Ասելով բառի ընդհանակ մեծով հասկացվում է միավանկ (այսինքն արտաշնչութայն միևնույն մղումով արտաբերված) կապակցությունը յերկու պարզ ձայնավորների, վորոնցից մեկը վանկային (սոնանտ) է, մյուսը՝ անվանկային (կոնսոնանտ) է. կիսանայն (վոր նշանակում ենք տակին դրված ~ նշանով) ասելով հասկանում են ընդհանակ մեծով պարզապես անվանկային ձայնավորը: Կարելի յե, ուրեմն, ասել նույնպես, թե յերկրարբառը կազմվում է մի «ձայնավորից» և մի «կիսանայնից». որինակ ai (=այ), մի վանկային ձայնավորից + մի անվանկային կիսանայն i (=յ), կամ օուռ օված՝ ia (=յա), մի անվանկային կիսանայն i (=յ), + վանկային ձայնավոր a, և նմանները:— Փակագծերի մեջ դրված ա, յ, յա իմ ավելացրածներն են: Բայց շարունակենք:

«Գործնականի մեջ, սակայն, «յերկրարբառ» և «կիսանայն» անունները

ամեն տեղ այս նշանակութեամբ չեն գործածուում: Այլ մանավանդ թե հընդ-  
կաց, հունաց, և լատինաց հին քերականութիւններէ գործածութեանը հետե-  
վելով՝ յերկարրառ ստեղծ հասկանում են հաճախ միայն այնպիսի միա-  
վանկ կապակցութիւնները, վորոնց մեջ վանկ կազմող ձայնավորն առաջ ե  
ընկնում, ուրեմն ա՛ ( = այ ), օ կապակցութիւնները, և ընդհակառակն, մի-  
այն այն դեպքում են կիսաձայնի մասին խոսում, յերբ անվանկային  
ձայնավորն առաջ ե ընկնում, ուրեմն օա ( = յա ), օա կապակցութիւն-  
ներէ ժամանակ:

Բերեմ նաև ուսու լեզվաբան Վ. Պորժեզինսկուց\* հետևյալը. «Յերբ  
անվանկային ձայնավորը միանում ե վանկային ձայնավորին, այն ժա-  
մանակ կազմվում ե յերկարրառ այս տերմինի ընդարձակ մեծով. որինակ  
օա անվանկային օ-ի կապակցութիւնը վանկային ա-ի հետ, և ա՛ վանկա-  
յին ա-ի կապակցութիւնը անվանկային օ-ի հետ միակերպ յերկարրառ-  
ներ են. բայց յերկարրառ այս տերմինի ճեղ մեծով կոչում են սովորաբար  
միայն յերկրորդ տիպի կապակցութիւնները, այսինքն այնպիսի կապա-  
կցութիւնները, վորոնց մեջ անվանկային ձայնավորը հետևում ե վանկա-  
յինին: Ռուսաց լեզվի մեջ հայտնի յեն, որինակ, հետևյալ յերկարրառները  
այ, օյ, օյ. այստեղ ուսուներենի ուղղագրութեամբ օճվածկայից օ-ն արտա-  
հայտվում ե յ նշանագրով (յեր, 122): Այսպես և Դ. Ուշակով\*\* և ուրիշները:  
Բայց շարունակենք Սիվերսից:

«Այս գործածութիւնը (այսինքն օա = յա, օա\*\*\* կապակցութիւնները յերկ-  
արրառ չհամարելը, բայց օ-ին, օ-ն կիսաձայն կոչելը), ինչպես կարելի յե  
տեսնել, իրի ելութիւնից չի ծագում, վորովհետև վորակով այդ անվան-  
կային «կիսաձայնները» նույնպիսի ձայնավորներ են, ինչպես և վանկային  
լի ձայնավորները, միայն վանկերի կազմութեան մեջ դրանք տարբեր ֆունկ-  
ցիա ունեն, իսկ վանկերի հաջորդութեան մեջ ա՛ ( = այ ) կլինի թե օա ( = յա )՝  
ընկանաբար դա նույնքան քիչ նշանակութիւն ունի, վորքան, որինակ,  
ա՛ կամ օա, ա՛ր կամ օա կապակցութիւնների մեջ բաղաձայնների յետ ու  
առաջ դրվելը: Այդ գործածութիւնը (այսինքն օա = յա կապակցութիւնը  
յերկարրառ չհամարելը) ծագում ե միայն այն պատահական իրողու-  
թիւնից, վորով ե ի՛նք Բերեկաճճերէ իրենց յերկարրառները, (ուրեմն վան-  
կային ձայնավոր + անվանկային ձայնավոր կապակցութիւնը, ինչպես  
աբ, աբ) համարել են կրկին ձայնավոր հնչյուններ (ձայնավոր + ձայնավոր),  
և ընդհակառակն օա ( = յա ), օա և նման հաջորդութիւնները համարել են  
բաղաձայն + ձայնավոր խմբեր և ըստ այնմ առանձին նշաններ են հորի-  
նել յ( = յ ) և օ ( = օ և օ ըբաղաձայնների ) համար: Նրանք վոր գերադա-  
սում են յերկարրառ բառն ընդարձակ մեծով գործածել, սովորաբար  
«կիսաձայն» բառը բոլորովին մի կողմ են թողնում և սոնանտով սկսվող  
յերկարրառները, ինչպես են ա՛ ( = այ ), ա՛, կոչում են իջնող յերկարրառ

\* Проф. Б. Поржезинский, Введение в языковедение, Москва, 1916.

\*\* Прив.-доц. Д. Н. Ушаков. Краткое введение в науку о языке, 1915. յեր. 57:

\*\*\* Այստեղից սկսած ի յեվ օ տառերը փոխարինում են լատինական ի յեվ օ  
(ընդգծված) տառերին, վորոնց նշանները չկան տպարանում:

իսկ այն յերկբարբառները, վորոնց մեջ կոնսոնանտն առաջ է ընկնում, ինչպես՝ իձ (≡յա), ոձ, կոչում են բարձրացող յերկբարբառ»:

ԵՑԵՐԻՑԵՑԵՐԻ գործածությունը հաճախ բավական կամայորեն փոփոխվում է զուտ քերականական կամ լեզվաբանական կշռադատություններով: Համեմատական լեզվաբանություն մեջ «կիսաձայն» բառն, որինակ, բավական գործածական է. վորովհետև սովորական է իձ (≡յա), ոձ և նման կապակցությունների մեջ 1-ն և Ը-ն համարել առանձին բազմայնական արժեքներ (բաղաձայնական՝ հին իմաստով): Ռոմանագետներն, ընդհակառակն, անվանկային + վանկային կապակցությունները, վոր սոմանական լեզուների մեջ շատ հաճախված են, ինչպես Փրանսերեն լե, օլ (այսինքն՝ լե, օլ), իտալերեն օո (այսինքն՝ օո)... ավելի սիրով բարձրացող յերկբարբառներ են կոչում. վորովհետև գրանք ծագում են սկզբնական պարզ ձայնավորներից և իրենց սովորական ուղղապարտությամբ ձայնավոր օտարով են արտահայտվում (յեր. 148 հան.):

Այսպես, ուրեմն, Սիվերսը և շատերը թե օլ և թե իձ (≡այ և յա) կապակցությունները, — վորոնք կազմված են վանկային ձայնավոր + անվանկային ձայնավոր և շրջված, անվանկային ձայնավոր + վանկային ձայնավոր, — միակերպ յերկբարբառ են համարում այս տերմինի ընդարձակ մտքով. իսկ ուրիշներն այդ կապակցություններից յերկրորդը, իձ (≡յա) կապակցությունը, հետևելով հին քերականություններին, յերկբարբառ չեն համարում, սկզբի անվանկային 1-ն կոչում են «կիսաձայն» և նույն իսկ բաղաձայն (հին իմաստով), չնայելով վոր դա վորակով ձայնավոր է:

Այս տարբեր ըմբռնումները հասկանալու համար պետք է իմանալ, թե ինչով են տարբերվում միմյանցից ձայնավորներն ու բաղաձայնները. Քնչ է նրանց եյական ընավորությունն ու վորակը: Առանձնք այս դեպքում մեզ համար կարևոր է ձայնավորը և նրա համապատասխան գերմաներենի «յոտ» կոչված (գերմ. j տառը) բաղաձայնը:

Ի ձայնավորի արտաբերության համար լեզուն բարձրանում է դեպի առաջաքիմքը (կոշտ քիմքը) և նրա հետ միասին կազմում մի անցք, վորի միջով ազատ դուրս է գալիս արտաշնչած ողը: Յերբ այդ ժամանակ կոկորդի ձայնալարերը տատանվելով հնչում են կամ ձայն են տալիս, բերանում կազմված ռեզոնատորով ուժեղացվում է ձայնը, վորով և առաջ է գալիս առաջաքմային է ձայնավորն իր վորոշ յերանգով կամ վորակով: Դա մի յերաժշտական հնչյուն է, վորի մեջ գերիշխում է ձայնը, այսինքն ձայնալարերի հնչումը: Վորովհետև խոսքի որգանները, ինչպես բոլոր ձայնավորների, նույնպես և է-ի արտաբերության ժամանակ, բավականաչափ բաց, այսինքն մեկ-մեկուց հետու յեն մնում, ուստի արտաշնչած ողի հոսանքն ազատ անցնում է է-ի արտաբերության համար կազմված անցքով, և մեծ աղմուկ չի առաջ գալիս ողի շփումից խոսքի որգանների հետ. առաջացած թեթև աղմուկն էլ բոլորովին խեղդվում է ձայնով և անզգալի յե մնում, այնպես վոր մեզ թվում է, թե այդ է հնչյունը, ինչպես և բոլոր ձայնավորները, մի մաքուր յերաժշտական հնչյուն է, և բերանը միայն ռեզոնատորի դեր է կատարում:

Գերմաներենի յոտ (j) տառի արտահայտած հնչյունը, վոր պատահում է նաև մեր բարբառների մեջ է սովորական է շատ լեզուների մեջ, մի առաջաքմային նեղվածքի շփական բաղաձայն է: Դրա ար-



տաբերութեան համար ևս, ինչպես ի ձայնավորի, լեզուն բարձրանում է դեպի առաջաքիմքը և կազմում նրա հետ մի անցք, վոր, սակայն, ավելի ևս նեղ է, քան ի ձայնավորի արտաբերութեան համար կազմված անցքը: Յերբ այդ նեղ անցքի կամ ցեղվածքի միջով դուրս է մղվում արտաշնչած ողբ, նեղվածքի մեջ արգելքի հանդիպելով՝ շփվում է խոսքի որդաններին և հանում է ազմուռ, և յերբ միաժամանակ հնչում են ձայնալարերը, առաջ է դալիս առաջաքմային նեղվածքի աղմկավոր շփական ձայնեղ յ հնչյունը: Դա կազմված է, ուրեմն ձայնալարերի հնչումից—ձայնից և ողի շփման աղմուկից. բայց աղմուկը վոչ միայն պարզ լսելի յ է, այլև, ինչպես բոլոր բաղաձայնների մեջ, գերըշխում է ձայնի վրա: Վորակով, ուրեմն, գերմաներենի յոտը (յ) մի նույնպիսի աղմկավոր շփական հնչյուն է, մի իսկական բաղաձայն, ինչպես վ, գ, ժ տառերի հնչյունները: Իբրև մի բաղաձայն դա կարող է լինել և՛ ձայնեղ, այսինքն հետո ունենալ ձայնալարերի տատանման հնչյունը (ձայնը), և անձայն (խուլ), այսինքն արտասանվել առանց ձայնի, միմիայն աղմուկից կազմված լինել (ինչպես վ, գ, ժ ձայնեղ են, իսկ համապատասխան ֆ, ս, շ հնչյուններն անձայն են): Գերմաներենում կա այդ ձայնեղ յոտի (յ) համապատասխան մի անձայն հնչյուն, վոր կոչվում է ich-հնչյուն և արտահայտվում է ըն տառերով յ ձայնավորից հետո (ich, wirklich) և բաղաձայններից հետո (manch, Mädchen): Գերմաներենի ձայնեղ յ-ին մենք հեշտութեամբ վարժվում ենք, վորովհետև դա կա, ինչպես ասվեց, մեր բարբառների մեջ և, ինչպես շուտով կտեսնենք, դրան մոտիկ հնչյուն է մեր կիսաձայն յ-ի հնչյունը մեր լեզվի մեջ. բայց նրա համապատասխան անձայն ich-հնչյունը, մանավանդ բաղաձայնից հետո, հայերս մեծ դժվարութեամբ ենք կարողանում յուրացնել: Ձայնեղ յ հնչյունի արտաբերութեան տեղը, նեղվածքը կազմվում է առաջաքիմքի վրա. բայց նայելով լեզուներին և նույնիսկ բարբառներին, կարող է ավելի կամ պակաս չափով ավելի ևս առաջի կողմում կամ յետևի կողմում լինել և նույնիսկ մեջաքիմքում լինել:

Ինչքան ել ձայնավոր և բաղաձայն հնչյուններն իրենց արտաբերութեամբ և վորակով տարբերվում են միմյանցից, «բայց և այնպես կտրուկ ոահման չկա ձայնավորի և բաղաձայնի միջև: Բաղաձայններն ու ձայնավորները մասն են կազմում մի ընկական շարքի, վորի ծայրերն են միայն վորոշ կերպով դատված միմյանցից»: Հենց վոր շփական բաղաձայնների արտաբերութեան անցքը բավականաչափ նեղ չի լինում, կամ փոքր ինչ պակասում է ողի շփումը, իսկույն շփական բաղաձայնները վերածվում են ձայնավորների, և, ընդհակառակն, յերբ ձայնավորի արտաբերութեան անցքը մի քիչ ավելի նեղ է լինում, այդ ժամանակ ողբ միջովն անցնելիս աղմուկ է հանում և ձայնավորը դառնում է բաղաձայն (Rovdet, յեր. 76. 126):

Այս փոթաճեցումը կա նաև ի ձայնավորից գեղի օփակեց բաղաձայն յ-ը, յեվ ընդհակառակն: Վանկային ի ձայնավորը և շփական յ բաղաձայնը միևնույն շարքի հնչյունների յերկու վորոշ կերպով տարբերվող ծայրերն են և յերբեք չեն շփոթվում իրար հետ. վորովհետև դրանք վոչ միայն վորակով, այլև վանկի մեջ ունեցած ֆունկցիայով տարբեր են: Չեն շփոթվում միմյանց հետ նաև վանկային ի ձայնավորը և անվանկային կամ բաղաձայնական ի (յ) ձայնավորը. վորովհետև դրանք թեպետև վորակով և արտաբերութեամբ նույն են, բայց վանկի մեջ ունեցած ֆունկցիայով տար-

բեր են, և այդ ֆունկցիան միշտ զգալի յի մեկի ուժեղ, մյուսի թույլ արտաբերութեան շնորհիվ: Բայց անվանկային Ի (1) ձայնավորը և շփական յ բաղաձայնը, վորոնք յերկուսն ևլ վանկի մեջ նույն բաղաձայնական ֆունկցիան ունեն, կարող են շփոթվել միմյանց հետ: Ուստի Սիվերսը գրում է. «Շփական յ-ի հետ, վոր ավելի էրսա նեղվածքի կազմութեամբ հաճախ կիսաձայն (անվանկային) ՚ից և զարգացած, չպետք է շփոթել այս վերջինը», այսինքն անվանկային ՚ն (յեր. 150): «Շփական յ-ը, ինչպես մեծ մասամբ արտաբերվում է Հյուսիսային և Միջին Գերմանիայում, պետք է տարբերել կիսաձայն (= անվանկային) ՚ից, վոր հաճախ պատահում է, որինսկ, Հարավային Գերմանիայում» (յեր. 123): Նույնպես և Պորտեղիսուկին (յեր. 123) առևերենի համար. «Անվանկային 1 ձայնավորից պետք է տարբերել յ-ը, վոր շփական բաղաձայն է»:

Ինչլից է առաջանում այս շփոթումը: Անվանկային Ի (1) ձայնավորը և շփական յ բաղաձայնը վորակով տարբերվում են միմյանցից միայն իրենց արտաբերութեան անցքի լայնութեամբ կամ նեղութեամբ. բավական է միայն, վոր Ի ձայնավորի արտաբերութեան անցքը մի փոքր նեղանում է, այդ ժամանակ ողի շփումը մեծանում է, առաջ է դալիս ձայնի վրա դերիշխող աղմուկ և անվանկային Ի (=1) ձայնավորի վորակը փոխվում է և դառնում է աղմկավոր շփական յ բաղաձայն: Այս պատճառով լեզուների զարգացման ընթացքում «1 (=1) կիսաձայնից (այսինքն անվանկային 1 ձայնավորից) առաջ է դալիս յ-ը, և ընդհակառակն, յերբ յ-ի համար կազմված նեղվածքը լայնանում է, իսկական շփական աղմուկը գրեթե կորչում է և մնում է միայն ձայնը, և այս դեպքում «շփական յ-ը, ըստինքյան հասկանալի յի, կիսաձայն (= անվանկային) ՚ի (=յ-ի) հետ նույնանում է. վորովհետև դրանք իրոք եյապես յ-ի շփական բնավորութեամբ են միայն տարբերվում միմյանցից» (Սիվերս, 176): Վուչ միայն լեզվի պատմական կյանքում անվանկային ՚ից (=յ-ից) այսպես առաջ է գալիս յ բաղաձայնը և ընդհակառակն, այլև միևնույն լեզվի ժամանակակից բարբառների մեջ մի տեղ նույն բառը անվանկային ՚ով (=յ-ով) են արտասանում, մի ուրիշ տեղ շփական բաղաձայն յ-ով. այսպես, որինսկ, Գերմանիայում յung բառը վորոշ բարբառներում արտասանում են շփական բաղաձայն յ+ս կապակցութեամբ, իսկ ուրիշ բարբառների մեջ արտասանում են յung, այսինքն անվանկային ձայնավոր ՚+ս կապակցութեամբ, կամ իբրև յերկու ձայնավորից կազմված ՚ս (յու.) յերկբարբառ, այս տերմինի ընդարձակ մտքով: Նույնպես ըստ Աճառյանի արևմտյան հայերն, որինսկ, «ազատութեան» բառը արտասանում են Կ (յ) բաղաձայնով իբրև azaduth-yan, իսկ արևելյան հայերն արտասանում են անվանկային 1 ձայնավորով իբրև azatu-thian:

Այս փոխանցումը անվանկային 1 (=յ) ձայնավորի և շփական յ բաղաձայնի մեջ միանգամից չի առաջ գալիս, այլ կան փոխանցման զանազան աստիճաններ, ուստի նայելով բարբառին կամ լեզուներին՝ արտաբերութեան անցքի նեղանալու պատճառով առաջացած աղմուկը կարող է լինել ավելի կամ պակաս չափով. ուստի և անվանկային Ի (=1) ձայնավորի և շփական յ բաղաձայնի մեջ մտնում է մի ա՛րջնակա՞ն հեցու՞ն, վոր նշանադրում են Կ տառով և դարձյալ կոչում են յոտ անունով և կիսաձայն: Այս կիսաձայն ասածը նույնը չէ, ինչ վոր առաջինների կիսաձայնը, վոր նույնանում է անվանկային Ի ձայնավորի հետ:

Ինչ է այս միջնական կիսաձայն *y* հնչյունի բնավորութունը կամ վորակը: Ինչպես տեսանք, յերբ է ձայնավորի արտաբերութեան անցքը նեղանում է, աղմուկը սաստկանում է, և այդ ձայնավորը դառնում է շփական յ: Բայց կարող է միաժամանակ և այնպես պատահել, վոր արտաբերութեան որգանները կազմեն մի այնպիսի սեզոնատոր, վոր շատ քիչ է տարբերվում վորոշ ձայնավորի սեզոնատորից: Այսպես՝ Փրանսերեն *yeux* բառի սկզբի հնչյունի արտաբերութեան ժամանակ որդանները բավականաչափ նեղ անցք են կազմում, այնպես վոր լսվում է թույլ, բայց շատ վորոշ շրփում, բայց միաժամանակ լսվում է նաև *i* ձայնավորի յերանդին մոտիկ մի յերանդ: Ձայնավորի և բաղաձայնի միջև յեղած այս միջնական հնչյունը կոչվում է կիսաձայն *ya* Այս միջնական կիսաձայնը, ուրեմն, մի հնչյուն է, Վորի արտաբերութեան միջոցին ականջն զգում է միաժամանակ և ձայնավորի յերանդը և արտաբերութեան անցքի միջով դուրս մղվող ուրի հանած աղմուկը: Եփակ ձայնավորներից յուրաքանչյուրը կարող է այսպիսի կիսաձայնի վերածվել, յեթե արտաբերվի միջիջ ավելի բարձրացրած լեզվով և ավելի փակված ծնոտներով: Այսպես Եփակ *i*-ի համապատասխան *y* կիսաձայնը նույն փակ *i*-ն է, միայն ավելի ևս փակ և կարճ: Բայց դա Եկարող է փակվածքի զանազան աստիճաններ ունենալ: Գերմաներենի *y*-ը *ja, jaug* բառերի սկզբում՝ դրա ամենափակ նրբերանգը (նյուանսն) է. դրա արտաբերութեան անցքն այնքան նեղ է, վոր վոչ միայն թեթև կերպով ավելի ևս նեղանալու գեղքում այդ կիսաձայն *y*-ը դառնում է շփական յ բաղաձայն, այլ հենց այնպես էլ հաճախ գերմաներենի այդ *y* կիսաձայնը համարվում է շփական յ բաղաձայն:

Փրանսերենի կիսաձայն *y*-ը պակաս փակ է, հեռուաբար և պակաս է տարբերվում փակ *i*-ից, քան գերմաներենի այդ կիսաձայնը: Դա Փրանսերենի *hier, vieux, rien, yeux* բառերի, ինչպես և *fièvre, passion, il ya* բառերի մեջ լսված *i* և *y* տառերի հնչյունն է: Լատիներենի *i* տառը ձայնավորից առաջ, որինակ՝ *iesanus* բառի մեջ, արտահայտում էր միևնույն կիսաձայնը և վոչ թե շփական հնչյուն, և սկզբնապես գրվում էր *i* տառով. միջնագարից է *i* և *j* տառերի գրութեան տարբերութունը: Միևնույն հնչյունը կա նաև զանազան ումանական լեզուների մեջ, իտալերեն *jettatore*, սպաներեն *yusto* բառերի սկզբի հնչյունը. այսպես և անգլերենում Փրանսերենի հետ գրեթե նույն կիսաձայնն է լսվում *yes, yard* բառերի սկզբում և *opinion, onion* բառերի վերջին վանկի մեջ: ԵԱյս *y* կիսաձայնը հաճախված է նաև ուսերենում, վորի այբբենարանի միջանի տառեր վոչ թե պարզ հնչյուն են արտահայտում, այլ մի յերկբարբառ, վորի առաջին բաղադրիչն է *y*: Նույնպես Ե՛՛ տառն արտահայտում է մի կիսաձայն, վոր նախորդ ձայնավորի հետ կազմում է Փրանսերենի իջնող յերկբարբառների նման յերկբարբառներ (Boudet, յեր. 76 հան. 105):

Փրանսիացի մասնագետից մասամբ բառացի, մասամբ քաղվածորեն բերված այս հասկածը, կարծում եմ, պարզեց է ձայնավորի և *j* բաղաձայնի միջև յեղած միջնական հնչյուն *y* կիսաձայնի բնավորութունը: Մի անգամ վոր այս միջնական հնչյուն կիսաձայն *y*-ը յերևան է գալիս, բնականաբար վոչ միայն կիսաձայնի, այլ և յերկբարբառի նշանակութունը փոխվում է: Ինչպես տեսանք, ըստ Միվերսի կիսաձայն կամ անվանկային *i*-ով կազմվում են միակերպ և *a* (=այ) և *ja* (=յա) յերկբարբառներ: Յերկբարբ-

բառն, ուրեմն, յերկու ձայնավորի միավանկ կապակցությունն է: Ըստ Ռուս գեյի հնչաբանության ևս բոլոր այդպիսի միավանկ կապակցությունները, լինեն ai, oi, ui թե ia, io, iu, յերկրարբառ են, միայն այստեղ տարբերվում են յերկրարբառների յերկու զանազանակներ *deux variétés de diphtongues*, մեկը յերկու ձայնավորից կազմված, մյուսը՝ մի ձայնավորից և մի կիսաձայնից, կիսաձայնը իբրև մի միջնական հնչյուն է ձայնավորի և շփաւան յ բազմաձայնի միջև: Ուստի յերկրարբառ սահմանված է այսպես՝ Յերկրարբառ կոչվում է այն մի վանկը, վոր կազմված է կամ մի կիսաձայնից և մի ձայնավորից, կամ յերկու ձայնավորից: Ըստ այսմ յերկրարբառները լինում են.

1. Թույլ և կարճ ձայնավոր-ուժեղ և յերկար ձայնավոր, ինչպես՝ ֆրանս. oi գրությունը, վոր արտասանվում է ու կամ օա.

2. Ուժեղ և յերկար ձայնավոր + Թույլ և կարճ ձայնավոր:

Այս տիպի յերկրարբառներ չկան արդի ֆրանսերենում, բայց կան գերմաներենում, անգլերենում և մյուս առմանական լեզուների մեջ, նաև հին հունարենում և լատիներենում: Գերմաներեն ai (Zeit, Hain) oi (dentsch, Häuser), անգլերեն boy և այլն:

3. Կիսաձայն + ձայնավոր: Այս տիպի յերկրարբառները շատ հաճախված են ֆրանսերենում, ինչպես՝ yeux, գերմ. ja, jung, անգլերեն yard բառերի սկզբում:

4. Ձայնավոր + կիսաձայն յերկրարբառներ, վորոնք նույնպես շատ հաճախված են ֆրանսերենում. u + y (houille), o + y (Hanoi), a + y (fravail), e + y (soleil), i + y (fill):

«Պետք է նկատել, վոր շատ բանասերներ այս վերջին յերկու տեսակի (3-րդ և 4-րդ) կապակցությունները յերկրարբառ չեն կոչում. վորովհետև նրանք կիսաձայնը համարում են բազմաձայն: Յերկրարբառն այն ժամանակ ամբողջպես նույնանում է բազմաձայն + ձայնավորից կազմված վանկի հետ: Ուրիշներն այս կապակցությունները կոչում են կեղծ (անիսկական) կամ Թույլ յերկրարբառներ: «Կիսաձայն Կ-ը բաղաձայն համարող հնչաբանները ձայնավոր + կիսաձայն յերկրարբառներն ել բնականաբար նույնացնում են մի ձայնավորից և մի բաղաձայնից կազմված վանկերի հետ» (Bendet, յեր. 108 հան.):

Այսպես, ուրեմն, մինչ մի հնչաբան միակերպ յերկու ձայնավորից կազմված յերկրարբառ է համարում միավանկ ai, oi, ui և ia, io, iu կապակցությունները, մի ուրիշը գրանց մի մասը համարում է յերկու ձայնավորից կազմված յերկրարբառներ, իսկ մյուս մասը մի միջնական կիսաձայնից և մի ձայնավորից կազմված յերկրարբառներ. մի յերբորդ հնչաբան ել այս վերջինները համարում է բաղաձայնից ու ձայնավորից կազմված վանկեր, կամ անիսկական յերկրարբառներ:

Այս տարբեր ընթանումներն առաջանում են արտասանության նուրբ տարբերություններից. վորովհետև, ինչպես տեսանք, հեշտությամբ փոխանցում է լինում անվանկային է ձայնավորից դեպի միջնական Կ կիսաձայնը և շփական յ բաղաձայնը, և հաճախ նույնիսկ դժվար է տարբերել անվանկային է ձայնավորը միջնական Կ կիսաձայնից և այս վերջինը շփական յ-ից: Այդ պատճառով և լեզուների այբբենարանների մեջ չկան գրանց համար հատուկ տառեր և յերբեմն ել արտահայտվում են մեկ տառով, ինչ-

պես մենք մեր յ տառով արտահայտում ենք և անվանկային ի և յ և միջնական յ կիսաձայն: Լատիններենում սկզբում յեղել ե միայն ի տառը: Բայց հին քերականներն արգեն տարբերում եյին վանկային ձայնավոր ի հնչյունը յտաի հնչյունից, վոր միևնույն ի տառով եր արտահայտվում, մինչև վոր միջնադարում առաջ ե գալիս յ տառը, վորի հնչյունն իր վորակով կամ բաղաձայնական ի ձայնավոր ե, կամ վերջինիս շատ մոտ մի միջնական կիսաձայն, բայց հին քերականները համարում են բաղաձայն, վորովհետև դրանով եր արտահայտվում ի-ի բաղաձայնական ֆունկցիան:

## IV

Հայոց լեզվի այբբենարանում հենց սկզբից ունենք յերկու տառ՝ վանկային ի ձայնավորը, վոր մեր այբբենարանի շարքի մեջ համապատասխան ե հունարենի ի տառին, և յ տառը, վորի համապատասխան տառ չկա հունական այբբենարանում: Ի՞նչ ե յեղել և ե՛ այժմ մեր յ տառի բուն հնչյունը.

«Հայկադեան լեզուի նոր բառգրքի» հեղինակները, 19-րդ դարի առաջին քառորդում արդեն, այդ բառգրքի մեջ այսպես են բնորոշում մեր յ տառի հնչյունը. «Յ. տառ երկձայն, երբեմն բաղաձայն համարեալ՝ որպէս ե թոյլ և տնհագազ, և երբեմն ձայնավոր գատեալ՝ որպէս սկզբաւորութուն հնչումացս ե ե ի»... Ի վերջն մնայ անձայն... բացի քանի մի բառից, յորոց ի վերջն հնչէ որպէս ե բերան. զոր օրինակ, վնյ, հնյ, ըստ ոմանց նակ բնյ, մակբնյ, խնյ: Իսկ ըստ երկբորգին (այսինքն իբրև ձայնավոր) ի մէջ բառից հնչէ որպէս ե... լատ. երկայն ի, յ. յասելն մեր այո, այս, այդ, այն, գայի, գայիր, գայր, արքայից, արքայութիւն, գոյք, գոյից ևլն»: Չնայելով վոր մեր յ-ի համապատասխան լատ. յ-ը գրվում ե իբրև բաղաձայն, մեր յ-ն մեծ բառգրքի մեջ պարզապես ձայնավոր ե համարվում, նույնը՝ ինչ վոր ի ձայնավորի սկզբնավորութեան հնչյունը կամ ե ձայնավորի սկզբնավորութեան հնչյունը, «թերատ ե»: Իսկ այս վերջին տառի համար գրված ե. «Ծ. դիր անուանեալ եչ, ունակ զօրութեան կրկին ձայնաւորացս ի մի յարելոց սղելով իէ որպէս ձայնաւոր կիսաձայն, կամ երկբարբառ անկատար, յար և նման յ տառի անկելոյ ի մէջ բառի... և լա. յ, որ ասի ի երկայն և ընդ բաղաձայնս գրի»: «Թերատ ե»-ն ե, ուրեմն, բառասկզբի ե տառի սկզբի անվանկային կամ բաղաձայնական ի հնչյունը. յ տառն ունի, ուրեմն, այս միավանկ իէ կապակցութեան սկզբի ի հնչյունը, վոր անվանկային ի ձայնավոր ե:

Մեծ բառգրքի հեղինակների տեսակեան ունի և Ա. Մեյլեն իր «Կլասիկ հայերենի համեմատական քերականութեան» մեջ (տպ. 1903) «յ-ն ե ի-ի բաղաձայնական ձևը»: Նույնպես և իր «Հին հայերենի տարրական գրքի» մեջ\*. «Բառասկզբում յ-ն այժմ արտասանվում ե և շատ վաղ արտասանվել ե իբրև ն, բայց ա], ա] յերկբարբառների մեջ և բառամիջում ձայնավորների միջև իբրև ջ (բաղաձայնական ի): Կլասիկ հայերենում ամեն տեղ արտասանվում եր իբրև ջ: Բառասկզբի յ-ն համապատասխան ե ասորական [բերած ե տառը]—ին այսպիսի հատուկ անունների մեջ՝ Յովնան (yovnan), ասորերեն [բերած ե ասորերեն անունը]: Ե նախդիրը բաղաձայններից առաջ հնչվում ե

\* A. Meillet, Altarmenisches Elementarbuch, տպ. 1913 թ. իբրև յերկրորդ հատոր Indogerm. Bibliothek հրատարակութեան:

իրբրև ւ, իսկ ձայնավորներից առաջ իրբրև ւ (յ). որինսակ՝ ի քաղաքէ, բայց յաւանէ (yavane). ւ-ն ուրեմն ի-ի ( i-ի ) բաղաձայնական ձևն է՝— Այսպես, ուրեմն, Մեյեն մեր ւ տառի հնչյունը համարում ե բաղաձայնական (անվանկային) ի, այսպես կլասիկ լեզվի մեջ ամեն տեղ, ուստի և միշտ միակերպ չ տառով ե տառադարձում նա մեր ւ-ն: Հնդեվրոպական լեզուների համեմատական քերականութեան մեջ ևս, ըստ Մեյեյի, ւ ձայնավորն ուրիշ բան չե, բայց յեթե չ ( յ ) ձայնավորական ֆունկցիայով\*: Մեյեն յերկարբառներ ե գնում այ (ay), ոյ (oy), ինչպես այս (ays), յոյս (yoyss). այս վերջին յերկարբառի այժմյան արտասանութունը՝ ույ (ui):

Նույնն ասում ե և Ն. Մառն իր «Հին հայերենի քերականութեան» մեջ (տպ. 1903 թ.). նա մեր ւ տառի հնչյունը դնում ե նույնպես իրբրև կիսաձայն, պարզ ի ձայնավորի քանակի (ամանակի) կիսով չափ. սկզբնական հնչյունը յեղել ե ուսեբենի ֆ (լատ. ց). բայց բառասկզբում ընդհանուր ընդունված վուլգար արտասանութեամբ կարգացվում ե այժմ իրբրև և, իսկ բառամիջում իր սկզբնական ֆ (յ) հնչյունով: Ինչպես տեսանք, ուս լեզվաբաններն իրենց ֆ տառի հնչյունը համարում են անվանկային կամ բաղաձայնական ի: Ըստ Մառի ևս, ուրեմն, նույն հնչյունն ունեցել ե մի ւ-ն հնում ամեն տեղ, իսկ այժմ բառամիջում դա անվանկային ի ձայնավոր ե:

Հ. Հյուսիսային իր «Հայերենի քերականութեան» մեջ (տպ. 1898 թ.) մեր ւ-ն տառադարձում ե ց-ով, բայց ալ, ոյ յերկարբառների ւ-ն բաղաձայններից առաջ դնում ե ւ (ալ=al, ոյ=oi), իսկ մնացած դեպքերում ց. իր մի ուրիշ աշխատութեան մեջ\*\* դրում ե, թե «Հայերը գրութեան մեջ ւ-ի և օ-ի փոխանակ իրբրև յերկարբառ բաղադրիչ al, au և այլն յերկարբառների դնում են միշտ ց, ց (յ, ւ) կիսաձայնը. գրում են hayt փոխանակ hair գրութեան»: Կնշանակի ըստ Հյուսիսային ւ-ն բաղաձայնից առաջ յեղել ե անվանկային ի ձայնավոր և կազմել ե յերկարբառ, իսկ մնացած դեպքերում «կիսաձայն հնչյուն, տարբեր ի ձայնավորից»: Բայց և այնպես նա նույն տեղում հենց գրում ե, թե բառավերջում ալ, ոյ արտասանում եյին իրբրև al, ay, oi, oy և հայ բառը տառադարձում ե hai, ինչպես և ուրիշ անուններ, Ուսհայ Urhai, Վնդոյ Vndoi: Նա ոյ յերկարբառն ըստ կլասիկ արտասանութեան դնում ե իրբրև oi, իսկ ըստ այժմյան արտասանութեան՝ oi= ույ, ուրեմն դարձյալ անվանկային ի ձայնավորով:

Հ. Աճառյանը խոսում ե ւ տառի արտասանութեան մասին և նոր գրական լեզվի մեջ ե կլասիկ հայերենում: «Բարբառագիտութեան» մեջ գրում ե, թե այ տառը բառին սկիզբը կկարգացվի և, մեջը ց, իսկ վերջը անձայն է»: Թե ինչ հնչյուն ե արտահայտում բառամիջին ց-ը, այդ պարզում ե նա իր «Հայոց գրերը» գրքի մեջ. «Արդի գրական լեզվին ւ տառը ըստ տեղին յերկարբառներ հնչում ունի, բառասկիզբը կհնչվի և. բառամեջը յեվրոպական ց (գերմ. j), բառավերջը անձայն է»: Նա այս էյեվրոպ. ց (գերմ. j)՝ տառի հնչյունը քիչ հետո անվանում ե մի յերկու անգամ պարզապես «բաղաձայն».

\* Roudet L. Elemend de Phon. յեր. 188. A. Meillet, Introduction à l'étude Comparée. յեր. 76, 400.

\*\* Zur Chronologie der armen. Vokalgeseetze, Sprachliche Abhandl. 1898 Bd I. յեր. 158.

ուրեմն դերմաներևնի շփական յ բաղաձայնը: Յերկբարբառը նա սահմանում է «միտլթյուն յերկու տարրեր ձայնավորներու, վորոնցմե մեկը կհնչվի ամբողջ, իսկ՝ մյուսը կիսաա, խուսափուկ հնչումով, վորով և կկոչվի կիսաձայն»: Նրա տեսակետով «մեր արդի գրական լեզուն, ինչպես և բարբառներուն ամենամեծ մասը, յերկբարբառ չունի: Յերկբարբառ չունի նաև թուրքերենը, վորուն ազդեցությունն այնքան մեծ է մեր լեզվին վրա, Հետևաբար յերկբարբառին գիտակցությունը կպակսի մեզի» («Հայոց զբերը», յեր. 313): Այսպես, ուրեմն, արդի գրական լեզվի մեջ, ըստ Աճառյանի, ձայն, լույս, գոյական, ծառայական և նման բառերի մեջ չ տառի հնչյունը բաղաձայն է, նույն գերմաներենի յ-ի հետ, և նախ, լույս բառերի մեջ ա, աչուչ յերկբարբառ չեն, այլ ա+չ բաղաձայն, ս+չ բաղաձայն վանկեր: «Բարբառագիտության» մեջ նահայերենի կլասիկ շրջանում յ տառի հնչյունը դնում է ամեն տեղ այն, ինչ վոր այժմ այդ տառն ունի գրական լեզվի մեջ բառամիջում: «Հայոց զբերը» աշխատանքի մեջ ևս նա նախ-նույնն է ասում բառասկզբի և բառամիջի յ-ի համար. «Բառամիջի չ ևս յեվրոպ. չ ձայնն ունի. ասոր համաձայն կուգան արդի միահամուռ հնչումը».. Բայց հետո ընդունում է թե չ-ն հնում բառասկզբում և բառամիջում յերկու ձայնավորի միջև արտասանվել է իբր բաղաձայն յ, «բաղաձայնավոր վանկ», իսկ բաղաձայններից առաջ կազմել է յերկբարբառ «ի ձայնավորին ավելի մոտ հնչյունով»: իսկ բառավերջում անորոշ է թողնում, կամ յ կամ կիսաձայն: Հին հայերենի համար տառի արտասանությունը վորոշելը դժվարանում է նրանով, վոր «հայերենի այբուբենը այս կրկին ձայնաբանական յերևույթներու համար առանձին նշաններ չունի»: այսինքն՝ թե «ի ձայնավորի մոտ» կիսաձայնը և թե յեվրոպ. չ (գերմ. յ) հնչյունն արտահայտվել են մի հատ չ տառով: Այսպես ել չեր կարող լինել. ծ-րդ դարում ս. Մեսրոպը պետք է նկատի ունենար հնչյունների ֆունկցիան վանկի մեջ և չեր կարող անվանկային ի ձայնավորը տարբերել միջնական չ կիսաձայնից, ինչպես և վերջինս յ բաղաձայնից, և յեթե այդ հնչյունները կային լեզվի մեջ, մեկ տառով ել պետք է արտահայտվեյին. ինչպես և այժմ ել ըստ չենք տարբերում և միակերպ արտահայտում ենք չ տառով կամ եա, եօ կապակցություններով: Փր. Փինկն իր «Արևելյան գրական հայերենի դասագրքի»\* մեջ մեր չ տառի հնչյունը բառասկզբում դնում է իբրև ի. բառերի մեջ բաղաձայններից առաջ համարում է պարզապես փակ ի ձայնավոր, հավասար ֆրանսերենի փակ ի ձայնավորին (si բառի մեջ), իբրև յերկրորդ բաղադրիչ այ=ai, էյ=ei, ոյ=oi, ոյ=ույ=ui յերկբարբառների. հայ=hai, խոյ=xoi, լայն=lain. ուրեմն անվանկային փակ ի ձայնավոր: Իսկ յ-ի արտասանությունը յերկու ձայնավորի միջև գնում է իբրև իյ, այսինքն մի փակ ի և մի գերմաներեն յ (ինչպես գերման. ja բառի մեջ), այսպես՝ Հայաստան=Hajastan, գոյական=goj'akan: Միայն այս բառը նա բացառություն է համարում և գնում այօ, այսինքն առանց փակ ի-ի, պարզապես գերմ. յ տառով: Այս մասին յես կը-խոսեմ հետո:

Ինչ է ասում ինքը Ս. Մ.-ը մեր չ տառի հնչյունի մասին հենց իր հոդվածի մեջ: «Յ գիրը կիսաձայն է (ձայնավորական բաղաձայն \*\*), նա-

\* Fr. N. Finck, Lehrbuch der neuostarmen. Litteratursprache, 1902.

\*\* Այս «ձայնավորական բաղաձայն» տերմինը ինձ համար նորոթյուն է. յերկու ուրիշների «բաղաձայնական ձայնավոր» նշանակությամբ և գործածված:

խընթաց ձայնավորի հետ նա ձուլվում միանում եւ հնչվում իբրև յերկրարբառ»։ «կան ալ, ոլ, սլ յերկրարբառներ, վորոնց կարող են հետևել թե բաղաձայններ և թե ձայնավորներ. հայ, հայց, հայերեն, հայություն, Հայաստան, հայոց, հայի, գոյ, գոյր, գոյական, գոյություն, այսպես և ծառայական, ծառայություն»։—Այստեղից պարզ յերևում ե. 1. Մ.Մ.-ը բառամիջում և բառավերջում նույն հնչյունն է ընդունում յ տառի համար և միակերպ յերկրարբառ ե համարում ալ, ոլ կապակցություններն ամեն տեղ՝ հայ, հայց, Հայաստան։ 2. Այդ յ հնչյունը, քանի վոր բոլոր դեպքերում յերկրարբառ ե կազմում (հայ, հայց, Հայաստան), կիսաձայն ե (ինչպես վոր կոչում ել ե Մ. Մ.-ը), այսինքն բաղաձայնական ձայնավոր. և վորովհետև նա նույն հոգվածի մեջ մեր այ, ոյ, ուլ յերկրարբառները հավասար ե դնում ուղևերենի ա՛յ, օ՛յ, ց՛յ յերկրարբառներն, իսկ այս վերջինների մեջ ՚ի տառի հնչյունը, ըստ ուղև լեզվաբանների, ձայնական կամ անվանկային Ի ձայնավոր ե,—կնշանակե՛ Մ. Մ.-ն ել մեր կիսաձայն յ-ին տալիս ե անվանկային կամ բաղաձայնական Ի ձայնավորի հնչյուն։

Յ տառի այս հնչյունը, վոր այժմ այդ տառն ունի բառամիջում և բառավերջում, Մ. Մ.-ը նույն հոգվածի մեջ համարում ե սկզբնա՛յան, — էլ գրի սկզբնական կիսաձայն հնչյունը, և յեա=yei, յեսան=yesan և մի յերկու այդպիսի բառերի համար նա գրում ե, թե «ժողովուրդը բառասկզբի յ-ն... արտասանում ե բուն յ-ի հնչյունով»։ Այստեղից պիտի յեզրակացնենք, վոր նրա կարծիքով մեր կլասիկ լեզվի մեջ յ տառն ունեցել ե ամեն տեղ նույն հնչյունը, ինչ վոր այժմ ունի բառամիջում։ Մինչև այստեղ, ինչպես կարելի յ տեսնել, Մ. Մ.-ի կարծիքը մեր յ տառի հնչյունի մասին վոչնչով չի տարբերվում ուրիշների՝ Մեյյի և Մառի ընդունածից, բայց...

Բայց նա իր հոգվածի վերջում,—մոռանալով ըբուն յ-ի հնչյունը, էլ գրի սկզբնական կիսաձայն հնչյունը, վոր էլ գիրը կիսաձայն ե (ձայնավորական բաղաձայն),—հանկարծ մի գյուտ ե անում մեր կլասիկ լեզվի արտասանության համար. «Բառասկզբում գտնվող այդ [յա, յու, յո] կապակցությունները, նույնպես չեն և չեն ել յեղել յերկրարբառներ... Նախ՝ վոր նա հայանում ե, թե յատակ=հատակ, յուսալ=հուսալ և նման բառերի սկզբի ալ, յալ, յո կապակցություններն այժմ յերկրարբառ չեն, դրանով ել նա մի փոքրիկ գյուտ ե անում, բայց միաժամանակ և կարծել ե տալիս, թե իբր յես, Արեղյանս, ասած լինեմ, թե, որինակ, յառակ բառի սկզբի յա=հա կապակցությունը յերկրարբառ ե։ Մ. Մ.-ը շատ լավ գիտե, վոր յես բառասկզբի յ=հ եմ համարում. իսկ կլասիկ լեզուն... բայց շարունակենք. «և չեն ել յեղել յերկրարբառներ, այլ սղված յեղավ=ճեղճեղ, ինչպես յերևում ե հունարենից առնված անունների տառադարձության մեջ—Յակոբ, Յուդա, Յովսեփ (ուղևերեն յեղավ=ճեղ Iakov, Iyda, Iosif)։ Այսպես ել բուն հայերեն բառերի մեջ. յեթե ըի տանէ» հնչյունին իբրև համապատասխան գրվում եր «յազգէ», պաբգ Ե, վոր սա կարդացվում եր իբրև սուղ «իազգէ». «յառաջ»=սուղ «իառաջ» և վոչ թե իբրև եազգէ, եառաջ»։ Ահա մեծ գյուտը։ յ տառի հնչյունը բառասկզբում չի յեղել լատիններեն յ, կիսաձայն ց, բաղաձայնական կամ անվանկային Ի, ուղև. ՚ի կիսաձայն, կամ բաղաձայն յեվրոպ. ց (գերման. յ)»,—ինչպես ընդունում են վերևում հիշված բոլոր լեզվաբանները, և վոչ ել «կիսաձայն=ձայնավորական բաղաձայն», ինչպես Մ. Մ.-ն և միքիչ հետո ասում նույն հոգ-



վածի մեջ,—այլ յեղիլ և «սուդ», «սղված» ք ձայնավոր: Բայց ինչքան ել սուղ ու սղված, գա յեղիլ և վանկային, առանձին վանկ և կազմել. յա վոչ թե մի վանկ՝ յա կամ Կա, Իա, այլ յերկավանկ՝ i-a. յառակ բառը վոչ թե յերկավանկ՝ jatak կամ yatak, այլ յեռավանկ i-a-tak. այսպես, ուրեմն, ըստ Ս. Մ.-ի մեր հին լեզվի մեջ բառակազմում յ-ն յեղիլ և սուղ=կարճ ք: Այս այնպիսի մի գյուղա ե, վոր պիտի ուղարկել այն աշխարհը Հյուսիսային, վոր հարուստն առնելով ուղղի իր քերականութան մեջ Յիսուս, Յակոբ, Յովսէփ, Յովհաննէս, Յորգանան և նման անունների գրութունը Կ-ով—yordanan և այլն փոխի i-ordanan. նույնպես և հայերեն բառերը՝ յառնեմ, յարգեմ, յիսուն և յառադարձի կիսաձայն Կ-ով՝ yarnem, yargem, yisun, այլ i-arnem, iargem, ilsun:

Յեզ ինչով և ապացուցում Ս. Մ.-ն իր այդ գյուղաը: «Այդ յերևում և հոգեբանական առնված առնուցների տառադարձութան մեջ»: Բայց հունական այբբենարանի շարքի մեջ մեր յ առաի համապատասխան տառ չկա, և ընդհակառակն հունական և տառին համապատասխան և նույն շարքի մեջ մեր ք տառը. ուրեմն տառադարձութունը պիտի անելին՝ Իակոբ, Իովսէփ, Բայց գրելին Յակոբ, Յովսէփ:—Այդ վոչինչ:—Բայց Մեյեն մեր յ տառը, վորի համապատասխան տառ չկա հունարենում, գնում և, ինչպես տեսանք, բառակազմում համապատասխան առնուցան մի տառի, վոր նույն բաղաձայնական և հնչյունն ունի Յոդան—Yordan: Այդ ել վոչինչ. ս. Մեսրոպը մեր յ տառը, վոր հունարենում չկա, ասորերենից չեր կարող առնել. գա համապատասխան և հունարենի և տառին, բայց միաժամանակ և մեր ք տառն և համապատասխան հունարենի և տառին: Ուրեմն ս. Մեսրոպը հունարենի մի և տառի դիմաց անտեղի կերպով յերկու տառ և մտցրել մեր այբբենարանի մեջ և իզուր դնացել և նա Ասորիք մեր այբբենարանը կատարելագործելու նպատակով...

Դարձյալ ինչով և ապացուցում Ս. Մ.-ը մեր յառակ բառի յեռավանկ i-a-tak լինելը:—«Ռուսերեն յեռավանկ Іаков, Іуда, Іосиф»:—Քսաներորդ դարի ռուսերենով ապացուցել հինգերորդ դարի հայերենի արտասանութունը: Արդյոք չէր հաճիլ Ս. Մ.-ը ռուսերենով ապացուցել նաև, վոր Յակոբ անվան վերջի բ տառն ել վ և արտասանվել Ծ-րդ դարի հայերենում- իսկ Յովսէփ անվան մեջ է տառը ք յ արտասանվել, ք տառը՝ ֆ. չէ վոր ռուսերենի Ե=վ, Կ=ի, Փ=ֆ: Յես չգիտեմ ռուսերենում Іаков=Яков, Іуда=Юда(изм) յերկավանկ թե յեռավանկ են արտասանում: Բայց ռուսերենի փոխանակ նա պիտի առներ գոն և հին բուլղարերեն կամ «հին յեկեղեցական սլավոնական» լեզուն: Ահա թե ինչ ենք կարդում ռուս. և տառի մասին Դալի բառարանի վերջին բուլղարական» հրատարակութան մեջ, վոր կատարված և պրոֆ. Бодуэн-де-Куртенэ-ի խմբագրութամբ. «Հին յեկեղեցական սլավոնական այբբենարանում և տառն ունեւ բաղաձայն հնչյուն հաջորդ ձայնավորների հետ միացած, ինչպես վոր այժմ ռուսերենի Կ նշանակում և մի նույնպիսի բաղաձայն ձայնավորներից հետո. հետևաբար այս հին i-ն կատարում եր մոտավորապես նույն դերը, ինչ վոր այժմյան լատինական-գերմանական կամ լատինա-սլավոնական այբբենարանի j տառը: և տառի պատմական աղբյուրն և հունական և («iota», «iota») տառը»...

Հիմա, ինչ և կարծում Ս. Մ.-ը հին յեկեղեցական սլավոնական այբբենարանի համեմատութամբ մեր յ-ն Յակոբ, Յուդա, յակիւթ և նման բա-

ոնրի մեջ—Іаковъ, Іуда, ІакинѠ բառակազմում հաջորդ ձայնավորների հետ միացած ինչ հնչյունն ստացավ:—Դարձյալ ուսուերենի ՚Ն տառի, մտաավորապես լատինա-գերմանական յ տառի, վորոնք առանձին վանկ չեն կազմում և նույնիսկ բաղաձայն» են կոչված, հարկավ, իրենց ֆունկցիայի նկատմամբ, Հետևաբար և մեր «յատակ», «յազգէ», «յառաջ» բառերը չեն արտասանվել իբրև յեռավանկ «ուղ իազգե», «իատակ», «իառաջ», այլ յերկավանկ յսեակ կամ йаеак, յերկավանկ յազգե կամ йаагэ:

Այսպես, ուրեմն, Մ. Մ.-ի այդ ավելորդ գլուար մի կողմ, և իսկուպես, ինչպես կատանենք, ավելորդ:

Ամփոփելով վերևում գրվածները՝ տեսնում ենք, վոր 1) մեր յ տառի հնչյունը հին լեզվի մեջ ամեն տեղ, իսկ նոր լեզվի մեջ բառամիջում և բառավերջում (բառակազմի հնչափոխությամբ առաջ յեկած և արտասանությունը մի կողմ թողած) համարվում և ձայնավոր է կամ բառակազմի բերանա, (հ=իէ հնչյունի սկզբի ի-ն), լատիներեն յ, բաղաձայնական է (у), կիսաձայն է=ուս. ՚Ն, անվանկային է (յերկբարբառների մեջ), անվանկային փակ է յերկբարբառների մեջ, վորոնք բոլորը նույն նշանակությունն ունեն: 2) Յերկու ձայնավորի մեջ և բառակազմում «կիսաձայն» у, տարբեր յերկբարբառների մեջ յեղած հնչյունից (ըստ Հյուբերմանի), նոր գրական լեզվի մեջ, սակայն, ըստ Աճառյանի, յերկբարբառ չկա, և յ-ն ունի «յեզրոպ. у (գերմ. j)» հնչյունը բառամիջում և բառավերջում, իսկ ըստ Ֆինկի՝ միայն բառամիջում յերկու ձայնավորների միջև գերմ. j կամ j, այսինքն մի փակ i և մի j հնչյունների միություն: Մ. Մ.-ն ել նոր լեզվի մեջ մեր յ-ն թե բառամիջում և ին բառավերջում համարում եկիսաձայն ՚Ն=բաղաձայնական կամ անվանկային է:

Յես ուրիշ կարծիքի չեմ յեղել մեր յ տառի հնչյունի մասին, քան վերևում գրվածները: Վորովհետև Մ. Մ.-ն այդ առթիվ իմ Գերականությունը և Ուղղագրությունն և հիշում, յես կսկսեմ իմ Ուղղագրությունից, իմ «Հայոց լեզվի ուղղագրությունից», տպված Քիֆլիսում 1892 թ. «Յ տառը յերկու տեսակ է արտասանվում. բոոի սկզբում բաղաձայն է՝ հ հնչյունով, իսկ բոոի մեջ, ձայնավորից հետո, կես-ձայնավոր է՝ ի տառի հնչյունով»: Ապա թե յերկբարբառը յերկու ձայնավորների բաղաձայնությունն և իբրև մի վանկ: «Մեր արդի գրական լեզվի մեջ յերկբարբառ կազմելու համար է հնչյունն և ծառայում իբրև կես-ձայնավոր, բայց է տառի փոխանակ գրվում և յ կես ձայնավորը» և այլն (յեր. 6 հան.): Նույնը և իմ «Աշխարհարարի քերականության» մեջ, տպ. 1906 թ. «Յ տառի բուն հնչյունն և կիսաձայն է, վոր նախորդ և հաջորդ ձայնավորների մեջ կազմում է յերկբարբառ» և այլն: 1892 թ. իմ «Հայոց լեզ. ուղղ.» գրքի մեջ, ինչպես և «Աշխ. քեր.» մեջ դրել եմ համառոտ կերպով նաև հնչափոխության մասին «երբ, սեննակ, արգեօք, հիւր բառերի մեջ, ըստ արտասանության, է-ն հալսասար է յե-ի կամ յէ-ի, ետ-ն՝ յա-ի, եօն՝ յո-ի կամ յօ-ի, իսկ իւ-ն՝ յու-ի»: Կնշանակի, յեթե յես 1892թ. ուղղագրության սեփորմ առաջարկելի, նույնը պիտի ասելի յերկբարբառների մասին, ինչ վոր 1921 թվին, բայց յես այդ չեյի անում, վորովհետև ուղղագրության փոփոխությունը համարել եմ միշտ իշխանության գործ:

Ուրիշները, սակայն, մասնազիտական գրվածքներում գործադրել են այդ: Այսպես, որինակ, Աճառյանը մեր յ տառի հնչյունն ընդունելով իբրև

յեւրոպայ (գերմ. j)՝ այդ տառով ել զրել ե 1902 թ. «Թուրքերենն փոխա-  
 ոյալ բառեր» գրքի մեջ՝ յախու=եախու, յայ =եայ, յէթիմ=եթիմ, յուլա  
 =իւլա կամ եուլա, յոխուշ=եօխուշ և այլն: Այսպես և իր «Բարբառագիտու-  
 թյան» մեջ ամեն տեղ թե հայերեն և թե ոտար բառերը՝ յէս =ես, լուս-  
 նյակ=լուսնեակ և այլն: Նույնպես Գ. Ասովածատրյոսը (Ասատուր) Սայաթ-  
 Նովայի նոր յերգերի մեջ (Աղգագր. հանգես 1903թ., նաև Սայաթ-Նովա,  
 1914թ.) բառերի սկզբում զրելով չ՝ առաջարկում ե «կարդալ իր նախնա-  
 կան նշանակութամբ, այսինքն ինչպես լատ. յ» և վոչ ինչպես հ. Այսպես,  
 որինակ՝ նա գրում ե՝ յիս, յար=եար, յաղութ=եաղութ, յարա=եարա և այլն:  
 Հիմա դառնանք Ս. Մ.-ի «սխալին», այսինքն իբրև թե սխալ ե ես=  
 յա, իւ=յու դնելը:

## V.

Հին ես, եօ, իւ յերկարբառների գրության փոփոխութունը կատար-  
 վել ե հետևյալ հիմունքներով.

1. Հին գրությունները՝ սենեակ, եօթն, արիւն այլևս չենք արտասա-  
 նում գրության համեմատ իբրև seneak, eothn, arian, կամ ariwn (w = u կի-  
 սաձայնով), այլ արտասանում ենք փոխված ձևով իբրև senyak, գերմ. se-  
 njak, ռուս. сеньяк, seniak (i կիսաձայնով), — yothn, գերմ. jothn (կավեւացնիմ  
 այժմ ռուս. йотн, iothn — i կիսաձայնով), — arjun, գերմ. arjun, ռուս. арjun,  
 arjun (i կիսաձայնով), կամ լատիներեն՝ senjak, jothn, arjun. (տես «Առաջ-  
 նորգ», յեր. 3 հա. 9 «Ջեկուցում» յեր. 12 հտ.)

2. Վերովհետև ուղղագրության ռեֆորմի ժամանակ ամի հնչյունին  
 մի գիր և մի գրին մի հնչյուն» սկզբունքով փոխված հնչյունները պետք  
 ե գրել այն տառերով, վոր մեր այբբենարանում սկզբից իվեր ընդուն-  
 ված են այդ հնչյունների համար, և

3. Վերովհետև կիսաձայն i, y, ռուս. й, գերմ. j հնչյունի համար ու-  
 ենք յ տառը.

Ուստի սենեակ, եօթն, հարիւր և նման բառերի մեջ ես, եօ, իւ կա-  
 րակցութունները պետք ե գրել այժմյան արտասանության համեմատ  
 յ = y, й, i (կիսաձայն), գերմ. j տառով — սենյակ, յոթն, հարյուր:

Ս. Մ.-ն այս գրությունները համարում ե սխալ: Սխալ լինելը ջուրց  
 տալու համար՝ նա պետք ե մերժեր վերևում գրված յերեք կետերից մեկը  
 կամ մյուսը: Յերկրորդ կետը նա ընդունում ե և այդ հիման վրա ընդու-  
 նում ե գրել՝ զվարթ, նավ, փոխանակ հին զուարթ, նաւ գրություններին:  
 Ընդունում ե և յերրորդ կետը. նա մեր յ-ն իր հնչյունով համարում ե,  
 ինչպես տեսանք, կիսաձայն և հավասար ռուսերենի й տառին: Յեզրակապու-  
 թյունը մերժելու համար՝ մնում եր, ուրեմն, նրան մերժել առաջին կետը,  
 այն ե՝ նա պետք ե ասեր, թե սեճեակ, եօթն, հարիւր յեվ ճմաճ բառերը  
 մեճճ այժմ չեճճ առատաճում senyak, senjak և այլն: Յեվ իսկպես նա  
 այս ել ասում ե. բայց ասում ե այնպիսի ձևով, վոր սովորական ըն-  
 թերցողը շատ բան չի հասկանալ և միայն այն տպավորութունը կտանա,  
 թե Ս. Մ.-ը շատ խորը բան ե ասում, հետևաբար և սենյակ և այլն գրու-  
 թյունները սխալ են:

«Յա, յու, յո յերկարբառները գոյություն չունեն մեր լեզվի մեջ»,  
 ասում ե նա: Այդ նշանակում ե, թե մեր լեզվի մեջ չկան անվանկային  
 կամ բաղաձայնական i-ով ia, io, iu (միավանկ) կամ միջնական կիսաձայն

Կ-ով ya, yo, yu կապակցությունները, վորոնք և, ինչպես տեսանք, կոչվում են յերկբարբառ: Յեթե չկան, ուրեմն մենք սեճեակ բառը (յես միայն այս բառն եմ բերում կրկնությունից խուսափելու համար) չենք կարող արտասանել, հետևաբար և չենք արտասանում իբրև seniak (անվանկային i-ով) կամ senyak. ուստի և սխալ և յ, վոր ե՛ անվանկային կամ բաղաձայնական 1, կհասձայն Կ առող գրելը՝ սեճյակ =senyak, seniak:

Մի բույն ընդունենք, թե Ս. Մ.-ը ճիշտ և ասում, թե մեր լեզվի մեջ չկան բաղաձայնական i-ով ia, iu, io միավանկ կապակցությունները կամ միջնական կիսաձայն Կ-ով ya, yu, yo =յա, յու, յո կապակցությունները. բայց արդյոք կա՞ն բաղաձայն j-ով ja, jo, ju կապակցությունները. արդյոք սեճյակ բառը այժմ գերմ. j-ով իբրև senjak չենք արտասանում: Այս մասին լուում և Ս. Մ.-ը. բայց մենք կարող ենք ճիշտ իմանալ նրա կարծիքը: Քանի վոր նա ետ, եօ, իւ կապակցությունները յերկբարբառ և համարում, ուրեմն մի կիսաձայնից և մի ձայնավորից կազմված, և վոչ թե բաղաձայն + ա, օ, ու կապակցություններ, և քանի վոր գերմ. j-ը բաղաձայն և, հետևաբար և ետ, եօ, իւ չեն կարող լինել ja, jo, ju կապակցություններ, և մենք այժմ չենք արտասանում գերմ. j-ով՝ senjak, jothn, arjun: Յեթե վոչ այսպես և վոչ այնպես ենք արտասանում, հապա ի՞նչպես: Այս մասին դարձյալ լուում և նա, բայց մենք կարող ենք դարձյալ ճիշտ յեզրակացնել նրա կարծիքը: Ըստ Ս. Մ.-ի ետ կապակցությունը յերկբարբառ և. հիմա վճիռ ձայնավորի հնչյունով և արտաբերվում դրա առաջին բաղադրիչը—ե ասուր: Մեր ձայնավոր հնչյուններն են ա, ո (օ), ու, ը, ի, ե (է): Նա չի կարող ասել, թե սեճեակ բառն արտասանում ենք անվանկային կամ բաղաձայնական ա, ո (օ), ու, ը հնչյուններից մեկով իբրև սենաակ, սենոակ, սենուակ, սենըակ. և վորովհետև նրա կարծիքով մեր լեզվի մեջ չկա յա=կիսաձայն կամ բաղաձայնական ի+ա կապակցություն, ուստի այդ բառը չենք արտասանում նաև բաղաձայնական ի-ով, սենիակ==seniak (յերկվանկ): Ինչպե՞ս ուրեմն միայն ե (է) ձայնավորը: Կնշանակի այդ բառի մեջ ետ արտասանում ենք, ըստ Ս. Մ.-ի, կլասիկ ձևով, իբրև ea, սենեակ =seneak:

Նույնը նույն ձևով պետք և եօ, իւ յերկբարբառների համար, վորոնք ըստ Ս. Մ.-ի արտասանվում են այժմ վոչ թե io, iu (անվանկային i-ով) կամ yo, yu կամ jo, ju, այլ eo, eu: Ուրեմն եօթն==aethn, բիւր==beur, Բայց beur հին հայերենում գրվում և բիւր, և Ս. Մ.-ը գիտե, վոր հնչափոխության պատճառով հետագայում գրել են բիւր==biur==biwr. և այս վերջին արտասանությունը և դրա համեմատ գրությունը ըստ Հյուբեր-մանի և ուրիշների ծագել և հին բիւր ձևից: Այդ արժեք չունի, մենք այժմ, ըստ Ս. Մ.-ի, նորից վերադարձել ենք հին բիւր==beur, աբելն==areun, արտասանությանը: Անշուշտ անհնարին չե այդ: Կարող և պատահել, վոր մեկը կամ մյուսը վորեւե բարբառի ազդեցությամբ, կամ անհասորեն արտասանելիս լինի՝ beur, ինչպես և seneak: Բայց թե մենք այժմ առհասարակ կլասիկ ձևով beur, areun, seneak չենք արտասանում, այլ biur, arjun, seniak (1 անվանկային), դրան համոզվելու համար՝ կառավարկեմ Ս. Մ.-ին մի շատ առձեռն պատրաստ գործիքով փորձել իր սեփական արտասանությունը և իր ականջով համոզվել, վոր ետ, եօ, իւ յերկբարբառները չենք արտասանում օ (է) ձայնավորով իբրև ea, eo, eu, այլ i ձայնավորով իբրև միավանկ ia, o, iu: Թող նա մեկ կամ յերկու մատը դնելով լեզվի առաջամասի վրա՝

չթողնի վոր լեզուն բարձրանա դեպի վեր՝ առաջաքիմքը, և փորձի արտասանել առաջաքմային շփական յ բաղաձայնը ե առաջաքմային ի ձայնավորը, իսկուն կհամոզվի, վոր չի կարողանում վոչ ի և վոչ յ արտասանել, այլ արտասանում ե օ (=է) ձայնավորը: Ապա թող այդ ձևով փորձի այ (=աի) արտասանել. կհամոզվի, վոր մեր սովորական այ յերկբարբառը չի լսվում, այլ անսովոր աօ յերկբարբառը. մի լավ ապացույց, վոր մենք այ յերկբարբառը կհասձայն ի-ով ենք արտասանում: Ապա թող փորձի դարձյալ աօ, եօ, իւ յերկբարբառներն արտասանել. նույնպես, կարծում եմ, կհամոզվի, վոր մեր սովորական արտասանութեան համեմատ աօ, եօ, իւ չի լսվում, այլ անսովոր յերկբարբառներ օա, օօ, օւ. դարձյալ ապացույց, վոր այդ յերկբարբառները կհասձայն ի-ով կամ շփական յ-ով ենք արտասանում իբրև միավանկ իա, իօ, իւ կամ յա, յօ, յւ կամ յա, յօ, յւ: Բայց գուցե Մ. Մ.-ի այս հասարակ փորձն անաջող անցնի, և նա չհամոզվի ես, եօ, իւ յերկբարբառների միավանկ իա, իօ, իւ արտասանութեան ճշմարտութեանը: Ուստի շարունակենք:

Ինչո՞վ ե նա ապացուցանում, վոր մեր լեզվի մեջ չկան յա, յօ, յւ յերկբարբառներ, այսինքն անվանկային կամ բաղաձայնական ի-ով իա, իօ, իւ, կամ կհասձայն յ-ով յա, յօ, յւ և վոչ ել յ-ով յա, յօ, յւ հնչյունական կապակցութեաններ:—Ե՛վոչ մի հեղինակավոր քերականագետ, հայ թե ոտար աղագի, այդպիսի (յա, յօ, յւ) յերկբարբառներ չե ձանաչում և չե հիշում քերականական գրվածքներում—բացի Մ. Արեղյանից:—Ահա Մ. Մ.-ի ապացույցը:

Մենք վերևում տեսանք, վոր «յերկբարբառ» անբմինը և քնդառեակ և ճեղ մտքով են գործածում, մինչդեռ շատերը միավանկ իա, իօ, իւ, =յա, յօ, յու, ինչպես և միավանկ աի, օի, սի=այ, ոյ, ույ կապակցութեանները յերկբարբառ են դնում, ուրիշները,—վորոնց թվում և Մ. Մ.-ը,—հետևելով հունաց և լատինաց հին քերականութեաններին՝ միավանկ իա, իօ, իւ =յա, յօ, յու կապակցութեանները յերկբարբառ չեն համարում, այլ բաղաձայն շաօ, ս կապակցութեաններ: Մենք վերևում այն ել տեսանք, վոր կան բանասերներ, վորոնք միջնական կհասձայն յ-ով յա, յօ, յւ =յա, յօ, յու և նույնիսկ ալ, օլ, սլ =այ, ոյ, ույ կապակցութեանները, հակառակ ուրիշներին, յերկբարբառ չեն կոչում, այլ համարում են մի բաղաձայնից և մի ձայնավորից կազմված վանկեր, կամ կոչում են կեղծ, թույլ յերկբարբառներ: Ինչի՞ չի կարծում Մ. Մ.-ը, վոր իբ իմացած «հեղինակավոր քերականագետները» կարող են այն կարծիքին լինել, թե անվանկային ի-ով իա, իօ, իւ =յա, յօ, յու կապակցութեանները, ինչպես և միջնական կհասձայն յ-ով յա, յօ, յւ =յա, յօ, յու և նույնիսկ ալ, օլ, սլ =այ, ոյ, ույ կապակցութեանները յերկբարբառ չեն, այլ բաղաձայն շաօ ձայնավոր կապակցութեաններ, և հենց այդ պատճառով ել իրենց քերականական գրվածքներում չեն հիշում այդպիսի յերկբարբառներ: Մ. Արեղյանը իբ Ուղղագրութեան և Քերականութեան մեջ անպատճառ դրամից, այսինքն Մ. Մ.-ի իմացած քերականագետներին պիտի հետևեր, և վոչ թե ուրիշներին: Իմ կարծիքով,— վոր, իհարկե, ինչպես տեսանք, շատ նոր քերականագետներինն ե,—յերկբարբառ ե, ինչպես ամեն ձայնավոր շաօ (անվանկային =յ), աի, օի, սի=այ, ոյ, ույ,— նույնպես և ամեն անվանկային ի (=յ) շաօ, օ, ս =միավանկ իա, իօ, իւ =յա, յօ, յու կապակցութեան: Ինչպես գրում ե Սիվերսը, «վանկերի մեջ հաջոր-

դուրյունը, թե արդյոք ai (= ալ) կլինի թե ia (=յա), դա ընտանաբար նույնքան քիչ նշանակություն ունի, վորքան, որինակ, ai կամ ia, ar կամ ra կապակցությունների մեջ l, r բաղաձայնների յետ ու առջև դրվելը: Իմ կարծիքով, վոր, իհարկե, իմը չե, յերկրարբառ են նակ միջնական y կիսաձայնով կապակցությունները՝ ay, oy, uy և ya, yo, yu: Իսկ Ս. Մ.-ը կարող է հին քերականներին հետևել. դա իր բանն է:

«Յերկրարբառ» տերմինն, ուրեմն, քանի վոր տարբեր նշանակություններով է հասկացվում, մի կողմ պիտի թողնել և ասել պարզապես,—ինչպես և յես իմ «Առաջնորդի» մեջ ասել եմ,—թե արդյոք հին ետ, եօ, իւ կապակցություններն այժմ միավանկ ia, ya, ŷa, ja,—io, yo, ŷo, jo,—iu, yu, ŷy, ju ձևով ենք արտասանում թե չե: Ս. Մ.-ն, ուրեմն, վոչ թե պիտի ասեր՝ յա, յո, յու յերկրարբառներ չեն հիշում, այլ պիտի ասեր, թե վոչ մի հեղինակավոր քերականագետ հին ետ, եօ, իւ յերկրարբառների համար չի ձանձում և չի հիշում ia (միավանկ), ya, ŷa, ja.—io, yo, ŷo, jo,—iu, yu, ŷy, ju=յա, յո, յու արտասանությունը մեր արդի գրական լեզվի մեջ. հետևաբար և չենք կարող հին ետ, եօ, իւ յերկրարբառների գրությունը փոխել յա, յո, յու: Այսպես գրված խնդիրն արդեն ամենքի համար պարզ կլինի, և ամեն ընթերցող կդատեր, թե արդյոք իսկապես ինքը, որինակ, սեճեակ բառը seniak (յերկվանկ) կամ senyak, senjak չի արտասանում, թե ընդհակառակն:

Հիմա Ս. Մ.-ն այս մասին «հեղինակավորներ» կպահանջի: Բայց նախ մի հարց: Շատ հեղինակավոր քերականագետներ կան, վորոնք պարապել են մեր նոր գրական լեզվի հնչաբանությունը: Չպիտի մոռանալ, վոր խնդիրը մեր նոր գրական լեզվի արտասանության մասին է: Կարող է Ս. Մ.-ը մի հինգ այդպիսի հեղինակավորի անուն տալ: Գոյություն չունեցող հեղինակավորներն իրենց գոյություն չունեցող աշխատանքների մեջ, անշուշտ, չեյին կարող ասել, վոր մեր նոր գրական լեզվի մեջ կան բաղաձայնական կամ անվանկային i-ով ia, io, iu կամ միջնական կիսաձայն y-ով ya, yo, yu=յա, յո, յու կապակցություններ (թեկուզ, յերկրարբառներ, յեթե, հարկավ, այգ գոյություն չունեցողները յերկրարբառ տերմինն ընդգրծակ մեծով գործածեյին):

Բայց յես մոռացա, վոր Ս. Մ.-ն ինձնից հեղինակավորներ կպահանջեր, և պետք է, ինչպես ել լինի, գտնել հեղինակավորներ: Հետաքրքիր է իմանալ, թե նա ինքն ինչպես է գրում իր յեռավանկ ազգանունը լատինական տառերով մի յվրոպացու համար. չեմ կարծում, թե ուրիշ կերպ գրեր, բայց յեթե այս յերեք ձևերից մեկով՝ Malxasian, Malxasian, Malxasyan. Յեվրոպայում բոլոր հայերն այսպես են գրում իրենց ազգանունները: Ահա մի հեղինակավոր քերականագետ, վոր իր ազգանվան մեջ ետ յերկրարբառն արտասանում է իբրև ia (միավանկ), ja կամ ya, վոր հայերեն տառերով լինում է՝ յա, յա Մալխասյան: Չեմ մերժում, վոր կարող են պատահել լեզվաբանության հոտ առածներ, վորոնք կարդացած լինելով, վոր յեվրոպացի հայագետ լեզվաբանները ետ = ea են գնում, առանց իմանալու, վոր դա կլասիկ հայերենի համար է,—իրենց ազգանվան վերջը տառադարձեն ea ձևով: Բայց յես դարձյալ մոռացա, վոր Ս. Մ.-ն ինձնից հեղինակավորներ է պահանջում:

Անշուշտ նա շատ անգամ կարդացած կլինի Վիեննայի «Հանդես ամսօրեայ» հրատարակության ամեն մի համարի գլխին լատիններեն տառերով

գրված «Handes amsorya», — ճիշտ նույն բառերը և նույն ձևով գրած, վոր  
յես պատահաբար իբրև որինակ բերել եմ իմ «Առաջնորդի» սկզբում: Ան-  
շուշտ, Վիեննայի միսթարյանների մեջ կան լեզվաբան անհատներ, վորոնք  
դիտեն, վոր Հյուբշմանը, Մեյեն և ուրիշները ամսօրեայ բառը ասադարձում  
են amsoreay, հապա ինչու չեն նրանք այդպես գրել իրենց «Հանդեսի» գըլ-  
խին: Կորովհետև նրանք գիտեն, վոր դա արտահայտում է կլասիկ հայե-  
րենի արտասանությունը, իսկ իրենք ամսօրեայ բառն արտասանում են  
amsorya, ուրեմն հայերեն տառերով՝ ամսօրյա: Իսկ թե նրանք յա = յա կա-  
պակցությունը յերկարբառ կանվանեն, թե կեղծ յերկարբառ, թե բա-  
ղաձայն + ձայնավոր վանկ, — այդ արժեք չունի այս դեպքում, այլ այն, վոր  
հին ամսօրեայ = amsoreay բառի մեջ հին ես յերկարբառն արտասանում  
են իբրև յա = յա և դրում են amsorya = ամսորյա:

Ս. Մ.-ը գիտե, հարկավ, վոր Հյուբշմանը իւր, բիւր, անկիւն և նման  
բառերի իւ յերկարբառը դրում է iur, biur, anktun. Ինչ է այս միավանկ  
iu կապակցությունների մեջ i տառի հնչյունը, յեթե վոչ անվանկային կամ  
բաղաձայնական i, այսինքն մեր յ տառին հատուկ կիսաձայն ի հնչյունը:  
Մեյեն իր «Կլասիկ հայերենի համեմատ. քերակ» մեջ (յեր. 27) գրում է, թե  
եօթն բառի մեջ եօ կապակցությունն արտասանվում է շարքառային ձևով  
io: Ես իր «Հին հայ. դասագրքի» մեջ (յեր. 15) ասում եմ, թե «եա (ea)  
յերկարբառի ավանդական արտասանությունն է ia, որինակ՝ լեռան»  
= liarn. Ինչ է կարծում Ս. Մ.-ը, ինչ է այդ միավանկ io, ia կապակցու-  
թյունների սկզբի անվանկային կամ բաղաձայնական ձայնավորը, յեթե վոչ  
բաղաձայնական i = յ. ուրեմն հայերեն տառերով՝ io = յո, ia = յա: Ինչ  
է կարծում Ս. Մ.-ը, ինչ կարող են լինել յերկու ձայնավորից կազմված ia,  
io, io, = յա, յո, յու միավանկ կապակցությունները. յերկարբառն են գը-  
րանք այդ տեղմինի ընդարձակ իմաստով, թե վոչ:

Մառը մեր յ-ն տառադարձում է, ինչպես տեսանք, Կ-ով = Կ-ով: Ես  
իր «Հին հայերենի քերակ» մեջ (յեր. 18) գրում եմ. «Յերկարբառներ են  
նաև ետ և ետւ (= եօ), վորոնք վուրգար կերպով կարդացվում են յա, յօ  
(ուրեմն = յա, յո. Մ. Ա.), չիք կա ետ-ի այսպես (այսինքն յօ) կարդաց-  
վելը միքանի դեպքերում հին համարելու Բայց այսպիսի արտասանու-  
թյունը յուրացված է նոր հայերենի նորմաներից. գա կապված է ընդհա-  
նուր ձգաման հետ՝ հէն է (= օ (լատ.) հնչյունը փոխելու i ձայնավորի,  
վոր իր հերթին, գտնվելով ուրիշ ձայնավորի առջ, թուլանում և լսվում է  
ինչպես կիսաձայն յ = Կ (Կ)»: — Մառն, ուրեմն, ասում է, թե ետ, եօ յերկ-  
բարբառների սկզբի է ձայնավորը դարձել է կիսաձայն յ (= Կ, Կ). սե-  
ճեակ, եօթն բառերն, ուրեմն, ըստ Մառի արտասանում ենք կիսաձայն յ-ով՝  
սենյակ, յոթն = senyak, yothu, ուուս. сенѣак, ѣотн: Ս. Մ.-ը լավ տեսնում  
է, վոր այսպես ասողը Մ. Արեղյանը չէ, այլ Մառը. թեպետև Մ. Արեղյանն  
էլ Մառից ասաներից տարի առաջ, 1892 իր «Հայոց լեզ. ուղղ.» մեջ (յեր. 7)  
նույնն ասել է, թե մեր արդի գրական լեզվի մեջ ետ, եօ, իւ սենյակ,  
արդեօք, հիւր, բառերի մեջ ետ-ն հավասար է յա-ի, եօ-ն՝ յո-ի, կամ յօ-ի,  
իւ-ն՝ յու-ի: Անշուշտ, Մառը հեղինակավոր քերականագետ է և նրան գտնե  
պիտի հավատա Ս. Մ.-ը:

Հ. Աճառյանը, ինչպես տեսանք, արդի գրական լեզվի մեջ յերկարբ-  
բառներ, իբրև ձայնավոր + ձայնավոր կապակցություններ, չի ընդունում:

ուստի «Հայոց գրերը» գրքի մեջ (յեր. 328 հա.) գրում է. «Արդի լեզվին մեջ ետ կհնչվի յա, այսինքն իբրև մեկ բազաձայն է մեկ ձայնավորն բաղ-կացած ձայնախումբ, ինչ վոր յերկբարբառ չի նշանակեր»: Բայց նա ան-միջապես սահմանափակում է իր ասածը արևելյան հայերի նկատմամբ. «Ասով հանգերձ ետ ունի մեր մեջ զանազան հնչյուններ. այսպես՝ ազա-տուքյան կհնչվի արևմտյան հայոց մեջ azadut-yan, արևելյան հայոց մեջ՝ aza- tu-tian, օետոն յերկուքին մեջ ալ հավասարապես (t) iãrœu, բայց օետա կըլ- լա օօay, իսկ լետոն կտատանի լէտոն և լիտոն հնչյուններուն մեջ: Ըստ այսմ ետ յերկբարբառին արդի հնչյուններն են յա, իա, օա: Առաջինը (այս- ինքն՝ եա=յա արտասանությունը) ընդունելի չէ հին լեզվին համար, վո- րովհեակ այս պարագային հարկ կըլլար գրել յա, ինչպես ունենք Յակոբ, յամոյր»: Այսպես, ուրեմն, ըստ Աճառյանի արևմտյան հայերը հին ետ յերկ- բարբառն արտասանում են Կ-ով (= գերմ. j-ով) իբրև յա=յա, իսկ արևե- լյան հայերը ի ձայնավորով իբրև իա (միավանկ), Ի՞նչ է այդ յա, իա (միա- վանկ) կապակցությունը, յեթե վոչ յա: Իսկ թե Աճառյանը այդ յերկու ձայ- նավորից կազմված միավանկ իա հնչյունական կապակցությունները յերկ- բարբառ կանվանի, թե բազաձայն † ձայնավոր վանկ, այդ դարձյալ արժեք չունի այս դեպքում:

Այժմ տեսնենք՝ ինչ է ասում Աճառյանը իր «Բարբառագիտության» մեջ (յեր. 16). «Գրական լեզուն առհասարակ յերկբարբառներուն հին գրության. ձևը պահած է, բայց անոնց տված է այնպիսի արտասանություն մը, վոր յերբեմն գրաբարին կհամապատասխանե, յերբեմն ներկա բարբառներուն և յերբեմն ալ վոչ մեկին և վոչ մյուսին: Ահա անոնց ձևափոխության համա- ոտտ պատկերը (յես բերում եմ այստեղ՝ ինչ վոր մեզ հարկավոր է).

Գրաբար	Նոր՝ գրական լեզու
այ	այ
եա	յա
եայ	յա
իւ	իւ, * յու, յիւ *
ոյ	ույ

Յեզ Աճառյանն իր «Բարբառագիտության» մեջ ամեն տեղ այդ յ=յ (յ) հնչյունը չ տառով ել գրում է: Այսպես, որինակ՝ իր անունը գրում է՝ Հրաչյա (յեր. 256), նույն տեղում հնչակեան գրում է հնչակյան, ուրեմն Հրաչյա Աճառյան. նույնպես լուսնյակ, քրիստոնյա, յոթ (=եօթ. յեր. 154, 126) և այլն. այլև ոտարագզի բառերը՝ խէրյաթ, յադ, յարալու և այլն. այսպես նաև յէս (ես), յէտ (յետ), յէրբ և այլն:

Յք. Ֆինկը իր «Արևելյան նոր գրական հայերենի դասագրքի» մեջ (յեր. 8 հա.) գնում է՝ եա=յա, եօ=յօ, կեանք—kjanck, եօթն—jothæn. Երա- ղաձայնից առաջ իւ=յւ, ընօճեկաճ խոսակցության ժամանակ, սակայն, բացի զ տառից առաջ, և ութիւն վերջավորությունից, գրեթե միայն ւ, մանավանդ ե-ից և օ-ից հետո. որինակ, օիւն բանախոսության և այլն ժամանակ (beim Vortrag etc.) օյւն, թե չե՛ մե՛ մասամբ օւն, ընդհակա-

\*) իւ = Ֆրանս. u, գերմ. ü, իսկ յիւ = յü. վերջինս, ինչպես յեվ առաջինը Կ. Պոլսի գրականում իւդ, սիւն յիվ նման բառերի մեջ: Ը հնչյունն ունեցող բարբառների աղբյուրայն, այդ հնչյունը պատահում է լսել նայել արեվելյան գրականի մեջ. Մ. Ա.



աակն, որինակ, գիւղ միշտ ցյոցի: Յինկն իր այս դիտողութիւնն արել է, անշուշտ, այնպիսի մարդկանց ընտանեկան խոսակցութեան ժամանակ, վորոնց մայրենի բարբառի մեջ (ինչպես Ղարաբաղի, Վանա, Կ.-Պոլսի) կա և հնչյունը, թե չե՛ հայերի մեծ մասն այդ հնչյունին նույնիսկ վարժվել դժվարանում են ֆրանսերեն ու գերմաներեն սովորելիս: Բայց և այնպես նա յիլ, իր գրքի առաջաբանի մեջ, հայտնում է, վոր շատ բառեր միայն յս ձևով են արտասանում, իսկ բանախոսութեան, քաղղի, ճառի և այլն ժամանակ, յերբ մաքուր գրեկեց լեզվով են խոսում, նույնիսկ օրէն բառն արտասանում են այս, և միայն, ինչպես հակառակ խոսողի կամքի և առանց նրա գիտակցութեան բարբառային ձևով այս են արտասանում:

Այսպես, ուրեմն, կարծեմ բավարարվեց Ս. Մ.-ը. գտնվեցին բավական թիվով քերականագետներ: Հյուբըման, Մեյե, Մառ, Աճառյան, Յինկ հայտնում են, վոր ես արտասանվում է իբրև ia, ya, ha, ja. եօ արտասանվում է իբրև io (միավանկ), yo, ho, jo. իսկ իւ արտասանվում է իբրև iu (միավանկ), yu, hu, ju, վոր հայերեն տառերով լինում են՝ յա, յո, յու, ըստ մեր յ տառի հնչյունի: Յես բացի սրանցից՝ ել ուրիշ հեղինակավոր քերականագետներ չգիտեմ, հայ թե ոտարագրի: Բայց թե սրանք յա=ia (միավանկ), ya, ha, ja կապակցութիւնը յերկբարբառ կանվանեն թե չե, այդ հետաքրքրելի էլ չե այս դեպքում: Միայն հետաքրքիր է, թե ինչո՞ւ Ս. Մ.-ն իմ «Առաջնորդը» քննելիս փոխանակ ես, եօ, իւ յերկբարբառների արտասանութեան մասին խոսելով՝ Նոպոսի լեզվով ասում է, թե յա, յո, յու յերկբարբառներ գոյութիւն չունեն հայերենում: Ըստ Աճառյանի ես, եօ, իւ, այ, ոյ, ու յերկբարբառներ ել գոյութիւն չունեն մեր գրական լեզվի մեջ, բայց ըստ Ս. Մ.-ի այս վեց յերկբարբառները գոյութիւն ունեն: Այս տարբեր հասկացողութեան պատճառը պետք է վոր իմանար նա և չընկնէր «յերկբարբառ» տեքստի յետևից: Յեվ վերջապես՝ Ս. Մ.-ը գրելով ուղղագրութեան ուսման օրէնքի մասին, ինչպես և հեղինակավոր քերականագետների կարծիքին մեր ես, եօ, իւ յերկբարբառների արդի արտասանութեան մասին, վոր է ia, io, iu (միավանկ) կամ ja, jo, ju, ya, yo, yu: Իհարկե, ամենից լափն այն կլինէր, վոր նա ինքն, առանց ուրիշ հեղինակավորների ուղեկցութեան, իբրև մի «հեղինակավոր գրականագետ», իր սեփական լսողութեամբ ըմբռնած լինէր ես, եօ, իւ յերկբարբառների այժմյան արտասանութիւնը: Բայց յերևում է, վոր նա տեսողութեան տիպի անձնավորութիւնն է. միավանկ ia, ya, ja հնչյունի ես=ea գրութիւնը, յերկար տարիների ընթացքում այդ հնչյունական կապակցութիւնը միայն ես ձևով գրված տեսնելուց, այնպես պինդ սեռված է նրա գիտակցութեան մեջ, վոր նա չի կարողանում ես գրութեան կաշկանդանքից ազատվել և այդ յերկբարբառի իսկական հնչյունը և արժեքն ըմբռնել, ինչպես ճիշտ ըմբռնել են Մեյե, Մառ և ուրիշները: Նա անշուշտ մեծակ չե. նրա նման ուրիշներն ել կան: Բայց ուրիշները համեմատաբար հեշտութեամբ վերջիվերջո ըմբռնում են, վոր ես և յա արտասանութեամբ նույն են, այսինքն, միավանկ ia, ya, ja, վորովհետև այդ ուրիշները գրութեան ժամանակ, առանց գիտնականութիւն բանեցնելու, վանկատում են՝ ծառա-յա-կան, հրամա-յած և այլն, վորով և նկատում են, վոր յա գրութիւնը նույն

հնչյունն ունի, ինչ վոր ետ գրությունը: Բայց Ս. Մ.-ն, ինչպես կտեսնենք, արվեստական կերպով յուրացրել է և տարիներ ընթացքում գործագրել ե միայն ծառայ-ական, հրամայ-ած բաժանումը. ուստի և ավելի ևս սեռաված է մնացել նրա մեջ ետ պատկերը, վոր արգելք է հանգիստանում նրան՝ այս յերկբարբառի այժմյան իսկական արժեքն անձամբ իմանալու: Ուստի ավելորդ չի լինիլ, յեթե այստեղ դնեմ հեղինակավոր հնչաբանից հետևյալը.

«Մի վորևե յերկբարբառի (կամ թե կիսաձայն + ձայնավոր կապակցության) իսկական արժեքը վորոշելու առաջին պայմանն է ճիշտ վորոշել նրա բաղադրիչները, այսինքն այն ձայնավոր հնչյունը, վորով սկսվում է յերկբարբառը, և այն ձայնավորը, վորով վերջանում է... Բաղադրիչների վորոշումը, սակայն, առհասարակ բավական մեծ յենթակայական դժվարությունների յե հանդիպում. վորովհետև մենք,—քանի վոր գրությունը յետ է մնացել խոսված յերկբարբառների զարգացումից (այսինքն՝ հնչյունները փոխվել են, իսկ դրությունը հինն է մնացել),—յերկբարբառներին մեծ մասամբ սովորաբար բոլորովին ուրիշ բաղադրիչ մասեր ենք վերագրում, քան իրոք կան... Այսպես, դոնե Գերմանիայի շատ կողմերում, գրության մեջ i-ով և u-ով վերջացած յերկբարբառների մեծ մասը արտասանության մեջ իբրև յերկրորդ բաղադրիչներ ունեն օ, օ. որինակ՝ ai (ae) արտասանվում են իբրև ae... Նմանապես և ձայնավորի առաջից ընկնող կիսաձայնի նկատմամբ: Թեպետև դուցե այս յերկրորդ դրության մեջ ևս i և u ձայնավորներն են ամենից հաճախ իբրև անվանկային գործածվում, բայց և այնպես նույն ֆունկցիայով բավականաչափ նաև ուրիշ ձայնավորներ ևն յերևան դալիս, ինչպես օ, օ (ea, oa): ... Վերջի և սկզբի իսկական հնչյունը ճիշտ լսելը, կամ այդ հնչյունին հատուկ արտաբերության տեղի վրա յերկար կանգ առնելով՝ այդ հնչյունը լսելի դարձնելը, պահանջում է բավական շատ վարժություն, մինչև վոր մարդ սովորում է բոլորովին ազատվել գրության պատկերի զարթեցրած և յերկարատև սովորությամբ սեռաված յերևակայությունից...» (Ն. Սիվերս, Հնչաբանություն, յեր. 150):

Այսպես և Ս. Մ.-ը. «Գրության պատկերի զարթեցրած և յերկար սովորությամբ սեռաված յերևակայությունից», կարծում է, թե ետ յերկբարբառի սկզբի ե տառի հնչյունն ուրիշ է, քան յ տառի հնչյունը ետ, ծառայակաթ, լայն բառերի մեջ: Նրա մեջ տեսողության մտապատկերը խեղդում է լսողության զգայությունը, ուստի և նա չի կարողանում ազատվել գրության կաշկանդանքից և ըմբռնել, վոր ետ, եօ, իւ յերկբարբառների գրությունը յետ է մնացել արտասանության զարգացումից, և դրա հետևվանքն այն և յեղել, վոր միևնույն կիսաձայն i = անվանկային i կամ y հնչյունն արտահայտվում է այդ յերկբարբառների մեջ ե և ի տառերով: Յեթե ինքը չունի այդ լսողությունը, գոնե պիտի հավատա իր պահանջած հեղինակավորների՝ Մեյեյի, Մառի, Աճառյանի և ուրիշների ասածին: Հիշեցնում եմ նրան և այն, վոր Հայկազյան լեզվի մեծ բառգրքի հեղինակները, ինչպես վերևում դրեցի, հարյուր տարի առաջ արդեն, «թերատ ե»-ի հնչյունը համարել են անվանկային ի ձայնավորի հնչյունը «յար և նման յ տառի անկելոյ ի մէջ բառի... և լատ. j», և թե ետ, բայ և նման բառերի վերջի j-ն հնչում է ինչպես «թերատ ե», իսկ թերատ ե-ի հնչյունն է այդ տառի միավանկ իէ՛ արտասանության սկզբի «կիսաձայն ձայնավոր» ի-ի հնչյունը:

Նախքան Մ. Մ.-ի հողավածի ուրիշ կողմերին անցնելը՝ մի նկատողութիւն մեր յերկբարբառների արտասանութեան մասին:

Ինչքան ել Յր. Յինկը մի տարի Եջմիածնում մնացել է մեր արեւելյան գրական լեզուն ուսումնասիրելու համար, բայց և այնպէս նա, իբրև ոտարագրի, ավելի շուտ իր մայրենի լեզվի յ հնչյունին և մոտեցրել մեր եա, եօ, իւ յերկբարբառների առաջին բաղադրիչը: Մենք գերմաներենի յա բառի շփական յ-ով չենք արտասանում մեր յերկբարբառներն իբրև յա, յօ, յս, այլ անվանկային փակ i-ով իբրև իա, իօ, իս. այսինքն իբրև կիսաձայն բանում է փակ i-ն թե այ, ոյ, ույ, եյ յերկբարբառների մեջ, ինչպես ճիշտ գիտել է Յինկը դրանց արտասանութիւնը, և թե եա, եօ, իւ—իա, իօ, իս յերկբարբառների մեջ: Աճառայնի դիտողութեամբ, ինչպէս տեսանք, արեւմտյան հայերը եա յերկբարբառն արտասանում են իբրև բաղաձայն ք (գերմ. j) + a կապակցութիւն, իբրև քա (ja). մինչդեռ արեւելյան հայերը արտասանում են i ձայնավորով. իսկ լեառն, տեառն յերկուսի մեջ ել իբրև liarn, tiarn.

Թե եա, եօ, իւ յերկբարբառները մենք իսկապէս անվանկային i ձայնավորով ենք արտասանում իբրև միավանկ իա, իօ, իս, և վուչ թե գերմաներեն շփական յ բաղաձայնով, այդ կարելի չէ իմանալ բառերի քերականական ձևից: Հայտնի չէ, վոր բազմավանկ անունների հոգնակին կազմվում է Յե մասնիկով՝ քաղաքներ, իսկ միավանկներինը՝ ե մասնիկով՝ քարեր, փայտեր: Այս կանոնով իմանում ենք, վոր մեր նոր լեզվի մեջ բառակազմում չեն կարող իրար հանդիպել յերկու բաղաձայն առանց ջ ձայնավորի. աղա, գրավ, դրած, կռան, բլուր, կղակ, նվագ, նժույգ և այլն միավանկ չեն, այլ յերկավանկ իբրև աղա, գրավ և այլն, քանի վոր դրանց հոգնակին լինում է ազաներ, գրավներ, նվագներ և այլն: Արդ եա, իւ յերկբարբառներն ունեցող բառերի հոգնակին լինում է ե մասնիկով, ինչպէս՝ կեանքեր, լեարդեր, նևարդեր, գիւզեր, նիւթեր, հյուրեր, ձյուններ, սիւններ, դիւտեր և այլն\*. Մեր լեզվական զգացումով, ուրեմն, կեանք, նևարգ, գյուղ և այլն միավանկ են: Բայց լանդիրն այս չէ, այլ այն, վոր այդ բառերի միավանկ լինելը պարզ ապացույց է, վոր եա, իւ յերկբարբառների սկզբի բաղադրիչը շփական յ բաղաձայն չէ, ինչպէս գնում է Յինկը, այլ անվանկային i ձայնավոր: Այդ բառերն, ուրեմն, մե՛ք չենք արտասանում իբրև kjadkb, ljard, gjuugh, gjut, ejut: Շփական յ-ով այսպիսի արտասանութեան փամանակ յերկու բաղաձայն են ընկնում բառակազմում, ուստի յթե այդպիսի արտասանութիւն լիներ, մեր լեզվի ընդհանուր հատկութեամբ այդ յերկու բաղաձայնի մեջ պիտի մտներ ջ ձայնավորը, և այդ բառերը պիտի լինեյին յերկավանկ և հոգնակի ունենային Յե մասնիկով. բայց մեր լեզվական զգացումով, այդ բառերը, ինչպէս տեսանք, միավանկ են: Կնշանակի՝ այդ

\* Այլեր, մասներ, մկներ յեվ այլն բառերի հոգնականի վերջավորութեանն և հնչունը բառի մասն է (ակն, մատն, մուկն), վոր աշխարհարարում դուրս է ընկել (ակ, մատ, մուկ), բայց հոգնակիւմ պահվում է: Միւս բառի հոգնակին լինում է միւսնեք, վորից յերկուս է, վոր միւս բառը յերկավանկ է. յեվ իսկապէս դա կազմված է մի-յեվս բառերից (Մեյե, Կլս. հայ. համ. քեր., յեր. 24), վոր յեվ— ու հնչափոխութեամբ դարձել է միուս, ապա՝ միւս: Գամառ Գաթիպայի 1830 թվականների հրատարակութեան մեջ գրված յերկավանկ «Մի օր ազեղը ասաց միուսին»: Նոր ուղղագրութեամբ գրում են նսեվ յերկավանկ՝ միուս, միյուս:

բառերի մեջ եա, իւ յերկրաբառաներն արտասանում ենք վոչ թե շփական բաղաձայն յ-ով, այլ անվանկային 1 ձայնավորով իբրև kiankh, liard, glogh, giut և այլն: Ինչպես վոր այս միավանկ բառերի մեջ, նույնպես և բաղաձայնակները մեջ եա, եօ, իւ յերկրաբառաներն արտասանում ենք փակ 1 ձայնավորով իբրև ia, io, iu. Լավության lavu-thian, սենևակ se-niak, արդեօք ar-diokh, Լավութիւն lavu-thiun, անկիւն an-khun: Անշուշտ, կան բարբառներ, վորոնց մեջ, ինչպես և Կ.-Պոլսի գրական լեզվի մեջ, իւ յերկրաբառն այլևս իբրև յերկրաբառ չի արտասանվում, այլ իբրև պարզ ձայնավոր օ, բայց մեր գրական լեզվի մեջ արտասանում ենք պարզապես իբրև io յերկրաբառ և վոչ օ. վոչ թե իբրև sūn, այլ giun (միավանկ), վոչ թե lavu-thūn, այլ lavu-thiun (անվանկային i-ով): Բացի այդ՝ քանի վոր, ինչպես տեսանք, հեղուկութեամբ փոխանցում ե լինում անվանկային 1, միջնական կիսաձայն Կ և շփական բաղաձայն յ հնչյունների մեջ, պատահում ե նաև, վոր անվանկային փակ i-ն ավելի ևս փակ ե արտասանվում, իբրև մի միջնական կիսաձայն Կ. բայց գերմաներենի շփական յ բաղաձայնով արտասանութունն, վորի մեջ ազմուկն իշխեր ձայնի վրա, ինձ քիչ անգամ ե պատահել լսել, այն ել կամ բառասկզբում, ուրեմն ավելի ոտարազդի բառերի մեջ (եադ, եար, եարա), կամ բազմավանկ բառերի վերջին վանկի մեջ միայն այն ժամանակ, յերբ եա, իւ յերկրաբառաներից առաջ միայն մեկ բաղաձայն և ընկնում (սենևակ, արիւն), և յերբ սաստիկ ուժով ու ողի մեծ արտամղումով են արտաբերվում այդ յերկրաբառաները. ուստի և այդ բառերը պատահում են նաև այսպես վանկատված՝ նշան-ևան, հետեվ-եալ, արեվիլ-եան, ներբող-եան: Այսպես, սակայն, ավելի արևմտյան գրական լեզվի մեջ: Արևելյան գրականի մեջ եա, եօ, իւ յերկրաբառաները յերկրաբաղաձայնից հետո արտասանվում են միայն իբրև ia, io, iu, ուստի և վանկատվում են՝ ան-ցեալ, ար-դեօք, ան-կիւն, ալ-բիւր:

Այսքանը բավական ե չիմա դառնա՞նք ուրիշ բանի:

Մի անհեթեթութուն:

Յերբ նրան ասում են, թե այսպես, ըստ հեղինակավոր քերականագետների, հին սեճեակ=seneak, եօթն=eothen և այլն գրութուններն այժմ արտասանում ենք յ=i, Կ, յ հնչյունով՝ seniak, senjak, сеньак, senyak, iothn, yothn և այլն, ուստի պետք ե գրել արտասանության համեմատ սեճյակ, յոթն,—Մ. Մ.—ն այդ ժամանակ ել ասում ե՝ այդ կարելի չե, այդ սխալ ե. վորովհետև զմեր լեզվի բոլոր բառամթերքի մեջ և վոչ մի որինակ կա, վորի մեջ բաղաձայնից հետո հաջորդելին յա, յու, յո գրութուններ եա (=յա=Կա, թե՞ ea.—Մ. Ա.) իւ, եօ հնչյունով (ան-յապազ, ան-յուսալի, ան-յողղողղ): Իսկ բառասկզբում գտնվող այդ կապակցութունները նույնպես չեն և չեն ել յեղել յերկրաբառաներ: Յեվ ապա այն գլուտը, վոր վերևում տեսանք, այսինքն՝ յա, յո, յու կապակցութունները յեղել են՝ յերկավանկ, որինակ՝ յատակ արտասանվել ե վոչ թե յերկավանկ yatak, այլ յեռավանկ 1-a-tak, իսկ սեճեակ վոչ թե յեռավանկ anyatak, այլ քառավանկ a-nl-a-tak:

Նրա այս առարկութունն այնպիսի անհեթեթութուն ե, վոր արժեք ստան արամաբանական ձևի վերածել, ինչպես յերբեմն նրա նման անհեթեթութուններն արել եմ... բայց թողնենք: Այդպիսի դատողութունով ամեն բան կարելի յե մերժել և հաստատել: Որինակ՝ ասում օն, թե հին ասու-

ած = астватъ, գրությունն այժմ արտասանում ենք վ=В, Կ հնչյունով astvatъ, астватъ, ուստի պետք է գրել արտասանության համեմատ աստված, —Ս. Մ.-ն ասում է՝ այդ կարելի չէ, այդ սխալ է. վորովհետև բներ լեզվի բոլոր բառամթերքի մեջ և վոչ մի որինակ կա, վորի մեջ բաղաձայնից հետո հաջորդեր վա գրությունը վա (թեկուզ՝ կա, բա, դա, գա...) հնչյունով (ան-վաստակ, ան-վախ)։ Իսկ բառասկզբում գտնվող այդ կապակցությունը նույնպես չէ և չի յեղել յերկրարբան... Բայց Ս. Մ.-ն ամենայն հանգստությամբ գրում է՝ աստված, հատված... և խղճում է միայն գրել՝ սենյակ։

Ինչի յե պետք թե բառասկզբի յա գրությունը հին ժամանակ չի յեղել յերկրարբան կամ յեռարբան կամ յառակ չի արտասանվել յերկավանկ yatak, այլ յեռավանկ i-a-tak: Ասենք հենց այդպես է, բառասկզբի յա-ն չի յեղել յերկրարբան և, դիցուք, յերկավանկ i-a է յեղել: Մթթե այդ մի ավացույց է, վոր մենք այժմ սեռեակ բառի մեջ եա-ն չենք արտասանում ia, Կա-յա: Բառասկզբի յա գրությունը կարող էր վոչ միայն յերկրարբան չլինել, այլ և նույնիսկ չլինել ել, այսինքն գոյություն ունեցած չլինել, իսկ բառամիջի եա = ea հնչյունը կարող էր լինել և յեղել է, և կարող էր արտասանությամբ փոխվել Կա = յա հնչյունի, և փոխվել է: Ինչ կապ կա այդ յերկուսի մեջ: Յեվ ստիպված ես նույնիսկ Ս. Մ.-ին ասելու, թե պետք է տարբերել բառասկզբ և բառամեջ, հին յա և եա գրություն, գրություն և հնչյուն: Յեվ ստիպված ես բացատրելու, թե մեր լեզվի մեջ մինչև ուղղագրության ռեֆորմը մտում էր կլասիկ շրջանի գրությունը, բայց հնչյունները փոխվել են և հաճախ նույնը չեն, ինչ վոր հին լեզվինը: Հին գրության մեջ, վոր ընդունված էր և նոր լեզվի մեջ, չկար բաղաձայն + յա գրություն եա հնչյունով, վորովհետև յա և եա տարբեր հնչյունական արժեքներ ելին հին ժամանակ, մեկը Կա, մյուսը ea: Ուստի յերբ բաղաձայնից հետո (կամ բառասկզբում) գալիս էր յա=Կա հնչյունը, այսպես էլ գրում ելին՝ անյագ (anyag), անյատակ (anyatak). Իսկ յերբ գալիս էր եա = ea հնչյունը, հենց այսպես էլ պետք է գրելին, և գրել են՝ սենեակ (seneak), և շատ անմիտ կլինելին, յեթե նույնը, հակառակ իրենց արտասանությանը, գրելին նաև յա ձևով՝ սենյակ, վորը բոլորովին տարբեր հնչյուն էր արտահայտում: Բայց հենց այդ հին սենեակ = seneak արտասանությունը փոխվելով դարձել է senyak, այսինքն ստացել է նույն արտասանությունը, ինչ վոր առաջ գրությունն ուներ կլասիկ շրջանում— anyag. հենց այդ պատճառով էլ սենեակ բառի այս հին գրությունը դեն պիտի դնենք և մեր արդի արտասանության համեմատ այժմ պիտի գրենք սենյակ = senyak: Իսկ առաջ = anyag բառի արտասանությունն էլ իր կողմից փոխվելով դարձել է անհագ—anhag, և այսպես պետք է գրենք այժմ: Բայց այս շատ յեղավ վերելի անհեթեթության համար. վորովհետև ասողն ինքն էլ չի հավատում իր ասածի արժեքին, ուստի ոգնության է կանչում ուսերինը:

## VI.

Եա, եո, իւ=յա, յո, յու, քառ Ս. Մ.-ի:

Վերջապես Մ. Արեղյանի սխալն (այսինքն սենյակ և այլն գրությունը—Մ. Ա.) ակներև լինի, համեմատեմք վիճելի հնչյունների գրության ձևվերը հայերենում և ուսերինում:

Գրվում է

Հ ա յ ե ր ե ն

այ—այս, բայ

ոյ—նոյ, գոյական

(ույ)—(լույս)

Իսկ օրջված ձեվով գրվում է

եա—կեանք, օգնեա

եօ—եօթն, կարծեօք

իւ—իւր, հիւղ

Ռ ու ս ե ր ե ն

ай—край, тайна

ой—мой, пойте

уй—помилюй

я—пятъ, меня

ѳ—елка, намек

ю—юг, малютка և

վոչ թե ըստ Արեղյանի յա, յո, յու (կյանք, յոթն, հյուղ, йа, йо, йу—пйать, менйа, йолка, намйок, йуг. малйутка)»:

Այս անդամ արդեն Ս. Մ.-ը նախ՝ մի ըստն առում է և ապա ապացուցում: Յեվ զիտեք ինչ: Այն, վոր նրա կարծիքով մեր նոր գրական լեզվի մեջ ետ, եօ, իւ հնչյունով այլևս եա, եօ, ես չեն, այլ հավասար են կամ անվանկային (բաղաձայնական) ի-ով իա, իօ, իս (միավանկ), կամ զա, զօ, զս յա, յօ, յս = յա, յո, յու ըստ Արեղյանի, Մառի, Մեյեյի և ուրիշների: Թող կարամանա նա. այն, հենց այսպես:

Մեր այ, ոյ, ույ յերկրարբառներին իսկապես համեմատ են ուսուերենի ай, ой, уй յերկրարբառները, վորոնք յերկու դեպքում ել կազմված են՝ վանկային а, о, u + անվանկային і, իսկ այս վերջինի նշանն է հայերենում յ տառը, ուսուերենում й. ուրեմն այ, ոյ, ույ = ай, ой, уй (միավանկ): Բայց ինչ են դրանց օրջված ձեվերը՝ եա, եօ, իւ: Համարտելու համար առենք նախ եա-ն: Մեր լեզվի վեր պատմական շրջանի արժեքով է առնում Ս. Մ.-ն այս յերկրարբառը—հնում դա յեղել է еа: Անշուշտ նա այս еа արժեքով չի առնում այստեղ ետ յերկրարբառը, վորովհետև еа-ն չի վարող լինել շրջված ձև ай յերկրարբառի, քանի վոր մեկի մեջ անվանկային ձայնավորն է е, մյուսի մեջ՝ і: Թող նա կարգա նորից Սիվերսից և ուրիշներից վերևում բերած հատվածները և կոտեսի, վոր ай յերկրարբառը շուտ աված լինում է իа: Դե ամեն մարդ ել կհասկանա, վոր ай շրջած իа, ինչպես ай շրջած իа, եսու շրջած ձևով օուѳ: Հիմա, քանի վոր մեր այ = ай յերկրարբառի շրջված ձևն է ըստ Ս. Մ.-ի ետ, կնշանակի, նա մեր ետ յերկրարբառն առնում է վոչ թե հին еа հնչյունով, այլ մի նոր հնչյունով, վոր ուրիշ ըստն չի կարող լինել, բայց յեթե իа. վորովհետև միայն այս իа-ն է ай-ի շրջված ձևը: Յեվ այսպես, ուրեմն, Ս. Մ.-ն ապացուցեց, վոր ետ յերկրարբառն իր հոգվածի այս մասում ինքն արտասանում է վոչ թե հին հնչյունով еа, այլ մի նոր հնչյունով իа, վոր ай-ի շրջված ձևն է: Նա ապացուցեց այս և ընդունեց հեղինակավոր քերականագետներ Մեյեյի, Մառի աածը, իսկ յես ել անվանկային կամ բաղաձայնական і + а յերկրարբառի լատինական տառերի փոխանակ կղնեմ համապատասխան հայերեն տառերը՝ անվանկային կամ բաղաձայնական ի, վորի նշանն է յ ըստ հեղինակավոր քերականագետներ Մեյեյի, Մառի, և Ս. Մալխասյանի, ուրեմն իа = յ + ա = յա:

Յեվ այսպես, ուրեմն, Ս. Մ.-ն այ յերկրարբառի համար շրջված ձև դնելով ետ, ապացուցեց, վոր եա = իа = յա: Կարող է հերքել նա այս յեղրակացութունը, բայց հերքել վոչ թե լոկ հայտարարութուններով:

Ինչ վոր ետ յերկրարբառի համար, նույնը նա ասում է եօ, իւ յերկրարբառաների համար, վորոնք լինելով շրջված ձևեր ոյ=01, ույ=01 յերկրարբառաների, հնչյունով ուրիշ բան չեն կարող լինել, բացի 10=յո, 10=յու: Յեվ այսպես, ուրեմն, Ս. Մ.-ը հասավ նույն յեզրակացութեան, ինչ վոր Մեյեն, վոր գնում է եա=1a, եօ=10, ինչ վոր Մառը, վոր գնում է դարձյալ եա, եօ=у (й, j) + a, օ=ya, yo, ja, jo, ѡa, ѡo:

Բայց մենք շարունակենք:

Ս. Մ.-ը մեր ետ, եօ, իւ յերկրարբառաներին համեմատ է գնում ուսերեն я, ъ, ю. Թե՛նչ կարելի չէ դրանից յեզրակացնել: Դարձյալ այն, վոր նա մեր ետ, եօ, իւ յերկրարբառաներն արտասանում է կամ Աճառյանի և Ֆինիի նման, շփական յ-ով, ինչպես ja, jo, ju կամ անվանկային 1-ով, ինչպես միավանկ 1a, 1o, 1u: Այն, հենց այսպես:

Նա չի կարծում, անշուշտ, ինչպես շատ անհմուտ մարդիկ, թե ուսերենի я, ъ, ю տառերի համապատասխան հնչյունները մի-մի պարզ ձայնավորներ են և վոչ թե յերկու հնչյունի կապակցութուններ: Բայց թե՛նչ հնչյունների կապակցութուններ են դրանք. արդյոք յերկու ձայնավորից կազմված յերկրարբառներ, թե՛ մի բաղաձայն + a, o, y վանկեր: Այս մասին նա խոհեմութուն է համարել լուրի, թույլ տալով, վոր ընթերցողը գուշակի, ինչ վոր կուզի: Այս մասին Ս. Մ.-ն ու յես չենք, վոր պետք է վորոշում անենք: Դիմենք, ուրեմն, ուս լեզվաբաններին:

«Լեզուների մեջ շատ տարածված է միջաքմային շփական ձայնի փակցրած հնչյունի ավելի առաջային\* տեսակներից մեկը, վոր հայտնի չէ յոտ (յ տառը) անունով: Այս յոտը կա, որինտի, գերմաներենում (ja, jener), ֆրանսերենում (yeux)\*\*, Դա կա նաև ուսերեն լեզվի մեջ, բայց ուսերեն գրութեան մեջ առանձին տառով չի արտահայտվում. я=ja, свое=свајо, шью=шју»\*\*\*:

Սույն հեղինակը ուսաց լեզվի ձայնավորների մեջ չի գնում e, я, ю և յեր. 43 գրում է. «Ծանկի մեջ տեղ չեն գտել միքանի տառեր. այսպես ... e, я, ю. վորովհետև 1) բառասկզբում կամ ձայնավորից հետո, կամ Ե, Ե տառերից հետո դրանք նշանակում են ինչ վոր э, а, у տառերը, միայն նախորդող յ-ով, այսինքն մի e, я կամ ю տառով արտահայտում ենք ամբողջ վանկ, վոր կազմված է բաղաձայն յ+э, а, у ձայնավոր. կամ 2) բաղաձայնից հետո արտահայտում են՝ այդ նախորդ բաղաձայնի փափկությունը և նրան հաջորդող э, а, у... երեզված վաճկերի մեջ e, я, ю տառերի հնչյունական նշանակութունն այս է.

я = 1) ja, яма, своя, пьян. 2) բաղաձայնի փափկութուն + а, дря.

ю = 1) ју, юг, свою, пью. 2) բաղաձայնի փափկութուն + у, дюжина.

e = 1) jэ, ель, своёй. 2) բաղաձայնի փափկութուն + э, девять, дело.

\* Այսինքն ավելի դեպի առաջ, առաջաքիմքի կողմ կրտարտաբերվող:

\*\* Գերմաներենի յ-ն ըստ Սլավերի առաջաքմային է: Իսկ ֆրանսերենի յոտը (у), ինչպես տեսանք, ըստ Ռուդեյի առաջաքմային միջնական կիսածայն է, ավելի մոտ վակ 1 հնչյունին, քան թե գերմաներենի շփական յ-ին:

\*\*\* Доц. Ушаков, Краткое введ. в науку о языке, 1910, յեր. 29.

Ѣ = 1) jo, елка, свое, льет. 2) բաղաձայնի փափկություն + 0, деготь, гнезда, седла:

Ж, Ш և Ц հնչյուններից հետո, վորոնք մի ժամանակ փափուկ են յեղել, իսկ այժմ կոշտացել են, е տառը, հասկանալի յե, նշանակում ե միայն Յ հնչյունը, жестъ, шесть, цепь»...

Նույնը և Բոգորոդիցկի\*։ «Я տառը բաղաձայն հնչյուն արտահայտող նախորդ տառի հետ կապակցված՝ նշանակում ե а ձայնավորը, միաժամանակ և նախորդ բաղաձայնի փափկությունը: Առանձին գործածության ժամանակ, ինչպես և մնացած բոլոր գրությունների մեջ, այսինքն բառերի սկզբում, ձայնավոր հնչյուն նշանակող տառերից հետո, նույնպես և Ъ և Ы տառերից հետո, նշանակում ե յերկու հնչյուն. j+а, հմմտ. я, яма, подпоясывать, объяснить, бадья, пьяница»: Նույնն ասում և և е, Ѣ, ю տառերի համար. е=јэ, ель, моему, объединить, гулянье.— Ѣ=jo, елка, чаек, съемка, льем.— ю=ју, юла, поюлить, съюлить, вьюшка:

Նույնը և Պորժեգինսկի\*\*՝ վոր ուսուցիչն յ հնչյունը համարում ե միջաբանային շփական բաղաձայն. «Э, у, а տառերից առաջ ընկած բաղաձայնների փափկությունն արտահայտվում ե е (Ѣ), ю, я տառերի գրությամբ, վորոնք այդ գրության մեջ նշանակում են э, у, а ձայնավորներն ու նախորդ բաղաձայնների փափկությունը: Այսպես, որինակ, пЯ վանկը գրության մեջ па վանկից տարբերվում ե ձայնավորի համար առանձին տառի գրությամբ, մինչդեռ այստեղ եյական տարբերությունն իսկապես բաղաձայնների մեջ ե (առաջին դեպքում բաղաձայնը փափուկ ե, յերկրորդ դեպքում կոշտ)։ սրանով ե բացատրվում և այն, վոր рJa վանկը և նմանները ուսուց ուղղագրությամբ արտահայտվում ե пЪЯ գրությամբ, վորի մեջ Ъ (մասամբ նաև Ы) լոկ գրաֆիկ նշանակություն ունի: Հմմտ. пЪЯНЫЙ, съезд և նմանները»: «Բաղաձայն j կա և ուսուցիչում... Я, ю և Ѣ տառերը բառի սկզբում կամ վանկի սկզբում ձայնավորից հետո՝ արտահայտում են ja, jo, ju, je. հմմտ. я (ja), моя (маја). սրա հետևանքով այնտեղ, ուր j+ ձայնավոր կապակցությունն ընկնում ե բաղաձայններից հետո, գրում են Ъ կամ Ы. հմմտ. пЪЯН (рjan), отъезд (atjest) և նմանները»: Նույնը կարելի յե տեսնել և Դալի բառարանի վերջին հրատարակության մեջ:

Հիմա գանք Մ. Մ.-ի համեմատությանը: Նա համեմատ ե գնում.

я	ю	Ѣ	ю
я	ю	Ѣ	ю
я	ю	Ѣ	ю
я	ю	Ѣ	ю

Ըստ ուսուցիչների՝ я=ja, елка=jolka, юг=jуг. իսկ пять, меня, намек, малютка բառերի մեջ я. Ѣ, ю=а, о, у, միաժամանակ և նախորդ п, н, м, л բաղաձայնների փափկության նշան պայմանորեն: Ռուսերենում այդ բառերից և վոչ մեկի մեջ չկա, ուրեմն, և վոչ մի յերկրորդ բառերն են նշանակի՝ հայերեն բառերի մեջ ևս, ըստ Մ. Մ.-ի, քանի վոր նա

\* Проф. В. А. Богородицкий, Очерки по языковед. и русскому языку, 1910, յեր. 135, հտ.:

\*\* Проф. В. Поржезинский, Введение в языковедение, 1916, յեր. 109, 115, 122:



մեր կյանք, օգնեալ և այլն բառերը համեմատ և գնում առուերենին, չկա յերկբարբառ, և մեր ետ, եօ, իւ յերկբարբառներն այլնս յերկբարբառ չեն, այլ 1) կամ ա, օ, ու, միաժամանակ և նախորդ բաղաձայնների փափկութեան նշան, ինչպես՝ ПЯТЬ — կեանք, МЕНЯ — օգնեալ, НАМЕК — կարծեօք, МАЛЮТКА — հիւզ։ 2) կամ շփական բաղաձայն j + a, օ, u = ja, jo, ju, ինչպես՝ елка = jolka, եօթն = jօթն, юг = jyг, իւր = jուր։

Ահա թե ինչ կնշանակի հայերենի դիմաց մի ոտար լեզու գնել։ Ի՞նչ հանելուկ է սա. կարճի և լուծել Մ. Մ.-ը, Հայերենում փափկացրած հնչյուններ... և այլևս ետ, եօ, իւ յերկբարբառներ չկան, և եօթն = jօթն, իւր = jուր, միջաքմային շփական j բաղաձայնով։ Ետ, եօ, իւ = ja, jo, ju։ «Օգնեալ, կարծեօք, հիւզ» բառերի փափկացրած ն, ծ, հ բաղաձայնները, — և առհասարակ փափկացրած կամ քմայնացրած բաղաձայնները, վոր շատ սովորական են առուերենում և վորոշ դեպքերում միայն յերևան են գալիս նաև հայերենում, — այդ հարկավ պարտական ենք Մ. Մ.-ի «միկրոֆոնիկ» լսողութեանը և մի կողմ կդնենք։ Բայց jօթն, jուր արտասանութիւնը։ Բայց ետ = я = ja, եօ = ъ = jo, իւ = ю = ju։ Ի՞նչ ապացուցեց Մ. Մ.-ը. վնչ ապաքեն, հակառակ իր սպասածի, այն, վոր սենյակ = сен'як = senjak, արգեօք = ард'ѣк = arđjoq, արիւն = ар'юн = arjun։

Յեզ այսպես Մ. Մ.-ը, մեր ետ, եօ, իւ յերկբարբառների վերաբերմամբ հասազ Աճառյանի կարծիքին, վոր ասում է, թե գրանք բաղաձայն y (գերմ. j) + ա, ո, ու վանկեր են = ya, yo, yu կամ ja, jo, ju, «այսինքն մեկ բաղաձայն և մեկ ձայնավոր բաղկացած խումբ, ինչ վոր յերկբարբառ չի նշանակիր» և Աճառյանը հայերեն տառերով գրում է, ինչպես տեսանք, ja, jo, ju, սենյակ, jօթն, արյուն։ Նա հասազ նույնպես Ն. Ֆինկին, վոր դրնում է ետ = ja, եօ = jo, իւ = ju, վորոնց մեջ մեր j-ն ունի գերմաներենի j-ի հնչյունը գերմ. ja բառի մեջ, և նա գրում է եօթն = jot'en, լավություն = lavut'jun։

Բայց դա ի՞նչորի մի կողմն է միայն։ Ինչպես տեսանք, ի ձայնավորի և j բաղաձայնի մեջ փոխանցում կա, և նույն բառը նույն լեզվի բարբառներին մեկի մեջ j-ով է արտասանվում, մյուսի մեջ՝ անվանկային ի-ով (գերմ. jung—iung)։ Նույն Աճառյանը, ինչպես տեսանք, ասում է, թե արևմտյան հայերի մեջ ազատութեան արտասանվում է y (j) բաղաձայնով azadut'-yan, իսկ արևելյան հայերի մեջ i ձայնավորով azatu-t'ian։ «Ռուսերենում կս ֆոնետիկական պայմանների և բարբառների համեմատ տարբերութիւններով j-ի փոխանակ գոյութիւն ունի անվանկային i»\*։ «е, я, ю տառերի գլխավոր դերը առեւտ գրութեամբ նույն է, ինչ վոր շեշտված գրութեամբ, այսինքն կամ արտահայտել j (կամ i անվանկային) + ձայնավորից կազմված մի ամբողջ վանկ»... «Ըստերևութիւն մեզնում (առուերենում) j յերևան է գալիս շեշտված ձայնավորից առաջ, իսկ ուրիշ տեղերում է i (անվանկային)». свая' (своя), мају' (мою'), jej (ей), բայց сва'ја (сва'я), го'стп (госты), јему' (ему)»\*\*. Այսպես j-ով գրված են նաև՝ свajei (своей), жит'јо' (житье), твајо' (твое), пајели (поели), իսկ անվանկային i-ով են՝ важнаја, простаја, гостја, бедное, гостлю, једа, по-

\* В. Порж., Введ., յեր. 109.

\*\* Д. Ушак., Кр. Введ., յեր. 43 հտն.

левага, знау և այլն: Այս անվանկային ի-ի նշանն է, ինչպէս տեսանք, ուսեբենում Կ տառը:

Բողոքողիցիկին\* հավասար գնելով Я = ja, e = jə, ɛ = jo, ю = ju, ծանոթութեան մեջ գրում է յ կամ Կ: Նույնպէս Դալի բառարանում j տառի հետ փակագծում գրվում է Կ, իսկ Я = ja, այլև ja (Կա), ɛ = jo (jo), e = je (jə), ուրիշ խօսքով a, o, ɛ ձայնավորներից առաջ և անվանկային ի և j, իսկ վերջնիս հետ նաև Կ: Այսպէս և յոտ (j) տառի անունը հենց մեկը (Ушак., 29) գրում է ɛт, մի ուրիշը (Порж., յեր. 108) գրում է Կот: Պարզ է, ուրեմն, վոր ուսեբենում ևս Я = ja, ja (միավանկ), ɛ = jo, jo (միավանկ), ю = ju, ju (միավանկ), e = jə, je (միավանկ), ինչպէս գրանց համեմատ հայերեն ես = ja կամ ja (միավանկ), ես = jo կամ jo (միավանկ), իսկ ju կամ ju (միավանկ) և բառակարգի ես = je կամ je:

Ահա թէ ինչ յեզրակացութուն պիտի հաներ Ս. Մ.-ը: Ռուսերենի Я, ɛ, ю տառերի համեմատ գնելով մեր ետ, եօ, իւ կապակցութունները՝ նա պիտի ասեր, թէ ես = Я = ja կամ ja (միավանկ) = յա ըստ Արեգյանի: Ուրեմն սենեակ = սենյակ ըստ արտասանութեան: Այսպէս և մյուսները: Նա այդ համեմատութունից պիտի հանգեր, ուրեմն, կամ Մեյեյի ու Մառի կարծիքին, կամ Աճառյանի ու Ֆինկի. բայց հանգում է անհեթեթութեան:

Մի քոռ անհեթեթութուն:

Փակագծերի մեջ գնելով Կа, Կо, Կу—пйать, менйа, йолка, намйек, йуг, малйутка» գրութունները, նա հասկացնում է հետևյալը. յեթե մենք ետ, եօ, իւ կապակցութունները գրենք յա, յո, յու, ուսեբենի ել Я, ɛ, ю տառերի փոխանակ պիտի գրեն յ-ի համապատասխան Կ տառով՝ Կа, Կо, Կу. և յեթե մենք գրենք՝ «Կյանք, յոթն, հյուղ», ուսեբենի ել պիտի գրեյին пйать, менйа և այլն: Բայց քանի վոր նրանք այդպիսի բան չեն անում, ուրեմն մենք հայերս ել չպիտի գրենք՝ յա, յո, յու—Կյանք, յոթն և այլն: Յեթե Ս. Մ.-ն իսկապէս այդ է ուզում ասել, այդ մի այնպիսի անհեթեթութուն է, վոր չարժեր նույնիսկ այդ մասին խոսել: Այդպիսի բան կարող է ասել մի այնպիսի մարդ միայն, վոր կարծում է, թէ լեզուների հնչյունները մեկ են միշտ, և նրանց այբբենարանները մի ծագում և մի զարգացում ունեն և նույն սխտեմով են կազմված, և կամ թէ յերբ մեկի մեջ մի սեփորմ է մտնում, մյուսի մեջ ևս անպատճառ նույն սեփորմը պիտի կատարվի, այն ել, յերևի, նույն որը և նույն ժամին: Թէ վորքան Ս. Մ.-ի այդ пйать, менйа և այլն անհեթեթ գրութուններն ազդեցութուն են թողել, այդ յերևում է հետևյալից: Յերևանում մեկը կա, վոր հայոց լեզվից և լեզվաբանութունից այնքան է հասկանում, վորքան... բայց հոգով հակառակ լինելով ուղղագրութեան սեփորմին (թեպետ հայերեն ուղիղ գրել չգիտե), այդ пйать, менйа և այլն բառերը մի թղթի կտորի վրա գրած՝ սրան-նրան ցույց եր տալիս... Մի շատ սովորական մարդու համար՝ այ = ай, ես = я, ուստի յեթե մենք ետ փոխում ենք յա = Կа, ուստի ել իր Я-ն պիտի փոխեր Կа. յեթե մենք գրում ենք՝ Կյանք, յոթն, հյուղ, ուստի ել իր բառերը պիտի գրեր՝ пйать, менйа, малйутка և այլն: Բայց քանի վոր ուսը մեզնից ավելի խելոք է, և նրանք «Ակադեմիա» ունեն, և «Ակադեմիան այսպիսի բան չէ արել», ինչպէս գրում է Ս. Մ.-ը, ուստի մենք ել

\* В. Богор., Очерки, յեր. 40:

չպիտի փոխինք և չպիտի գրենք սենյակ, յոթն և այլն: Այդպիսի մեկին զժվար և հասկացնել, թե ոուսաց Ակադեմիան չի արել և չէր կարող անել այդպիսի փոփոխություն, և յեթե նա անելու լիներ այդպիսի անմիտ փոփոխություն, այդպիսի Ակադեմիան հարկ կլիներ վոչնչացնել: Գիտե՞ք ինչու:

1) Ինչպես տեսանք, пять, меня, нарек, малютка բառերի մեջ П, Н, М, Л, տառերից հետո չկա Կ=1 անվանկային հնչյուն և վոչ շփական յ բաղաձայն. այդ բառերի մեջ չկա ուրեմն վոչ ia, io, iu, (միավանկ) և վոչ ja, jo, ju կապակցություն, այլ միայն պարզ a, o, y ձայնավորներ և П, Н, М, Л տառերի փափկություն կամ քմայնացում: Յեթե այդ բառերի П, Н, М, Л տառերից հետո չկա վոչ Կ և յ հնչյուն, — ել ինչու Ակադեմիան այնքան անմիտ կլիներ, վոր հետևելով Ս. Մ.-ի հոգվածին՝ այդ բառերի մեջ հիշված տառերից հետո խոթեր Կ տառը և գրել տար՝ пйать, менйа, намйек, малйутка: Իսկ հայերենի սեճեակ (յես միայն այս մեկ բառն եմ առնում) բառի մեջ ց բաղաձայնից հետո կա անվանկային i կամ j հնչյունը ըստ բոլոր հեղինակավոր քերականագետներին. այդ հնչյունը հին ուղղագրությամբ պատմականորեն արտահայտվում է տառով, վորի տեղ մենք դնում ենք j=i (անվանկային) կամ j: Մենք, ուրեմն, սեճեակ և նման բառերի մեջ մի չեղած հնչյունի համապատասխան տառ չենք մտցնում, բառի հնչյունները չենք փոխում, այլ միայն գրությունը: Մինչդեռ յեթե ոուսը գրե, Ս. Մ.-ի սեցեպտով, менйа, նա այդ բառի մեջ կըմտցնի մի ավելորդ տառ և դրա համապատասխան մի ավելորդ հնչյուն, ինչպես յեթե մենք մեճեակ բառը գրենք՝ մեճյակ կամ հին ուղղագրությամբ մեճեակ: Հասկացով այս բանը Ս. Մ.-ը:

2) Տեսանք, վոր հիշված բառերի մեջ П, Н, М, Л հնչյունները փափկացրած կամ քմայնացրած են. իսկ դրանց փափկությունն արտահայտվում է հաջորդ Я, ъ, ю տառերով, վորոնք միաժամանակ և a, o, y հնչյունների նշան են: Արդ, յեթե ոուսը գրեք менйа, малйутка, վոչ միայն անտեղի կերպով մի ավելորդ տառ և հնչյուն կմտցնեք այդ բառերի մեջ, այլ և Н, Л, П, М տառերի փափկությունն առանց նշանագրելու կթողներ: Հասկանալի յեղով, կարծեմ, թե ինչու Ակադեմիան այդքան անմիտ չե, վոր Ս. Մ.-ի սեցեպտով գրել տար менйа: Ռուս լեզվաբանը, յեթե ուղեհար Վի հնչյունին մի գիր՝ սկզբունքով Я, ъ, ю տառերի ուղղագրության մեջ սեճորմ մտցնել (վորի կարիքը նա չունի), գիտե՞ք նա ինչ պիտի աներ: Այդ տառերի գրությանը դիպչելուց առաջ՝ նա իր այբբենարանի մեջ պետք է մտցնեք 18 նոր տառեր, վորոցից 17-ը փափկացրած բաղաձայնների համար յեզ մեկ էլ j տառը շփական յ հնչյունի համար: Յեզ գիտական ֆոնետիկական գրության ժամանակ այդպես էլ վարվում են. փափկացրած բաղաձայնների համար ստեղծել են նոր տառեր. գրում են համապատասխան բաղաձայնները, գլխին դնելով ստորակետի պես մի նշան: Այսպես գրում են՝ нам'ек, м'ен'а կամ ավելի м'ин'а. իսկ елка, юг շփական յ-ով՝ јолка, југ\*, և վոչ թե հայի հնչյունով և առաջաբկությամբ՝ пйать, менйа..

Կարծեմ սպառվեց Ս. Մ.-ի փակագծերի մեջ գրված ոուսերեն пйать, малйутка բառերի խղիբը ևս, վորով մոլորվել կարող են միայն Յերես-

\* В. А. Богор., Очерки, յեր, 41 և Д. Ушак., Кр. Введ., յեր. 32, 45.

նում ապրող այն մեկի պես անձերը միայն... Կարծեմ և այն պարզվեց, վոր այդպիսի անհեթեթութուններով կարելի չէ լուրջ խնդիրների մասին գրել: Բայց անհեթեթութունը «ավածորիկ» է: Տեսնենք մի ուրիշը:

Դարձյալ մի նոր անհեթեթութուն:

«Այ, ոյ, (ույ) — ай, ой, уй շրջված ձևով՝ դրվում են՝ եա, եօ, իւ — ք, օ, օյ և վոչ թե ըստ Արեղյանի՝ յա, յո, յու» — Սա մի «յերևույթ» է, գուցե և խորհրդավոր յերևույթ, վոր շրջված ձևով չեն լինում հայերենում յա, յո, յու ըստ Արեղյանի, իսկ ուսերենում նա, նօ, նյ, Յեվ թիչ է այս «յերևույթի» պատճառը, — հարց է աալիս ինքը Ս. Մ. — ը: Ու գլխի չի ընկնում դրա պատճառը յուրաքանչյուր լեզվի համար՝ իրեն այդ լեզվի պատմական զարգացման ու գրության պատմության մեջ վորոնելու. և չի մտածում գոնե մի գիրք նայելու և իմանալու, թե ինչու սուսերը միատառ ք, օ, օյ ձևերն են գործածում: Նա գլխի չի ընկնում, վոր հայերենում եա, եօ, իւ սկզբնապես չեն յեղել այ, ոյ, ույ կապակցութունների շրջված ձևերը, այլ յեղել են բոլորովին ուրիշ հնչյունական արժեքներ — ea, eo, iw և հնչափոխությամբ միայն հետագայում ստացել են միավանկ ia, io, iu արտասանութունը և դարձել շրջված ձևեր այ, ոյ, ույ կապակցութունների. բայց գրութունը մնացել է հինը — եա, եօ, իւ: Այս պարզ բանի պատճառը տեսեք թե ինչ անհեթեթությամբ է բացատրում նա:

«Այս յերևույթի պատճառը պարզ է — յ գիրք կիսաձայն է (ձայնավորական բաղաձայն). նախընթաց ձայնավորի հետ նա ձուլվում — միանում է և հնչյուն իբրև յերկրորդառ, իսկ Յախընթաց բաղաձայնի հետ չի կարող ձուլվել: Եթե այսպիսի գրութուն տեղի ունենա՝ ապա աճերածեաբար այդ բաղաձայնի յեվ յ-ի միջով մտնում է կարճ ը հեցուցը (ինչպես՝ վագր, այժմ, ահն բառերի մեջ, վորոնք արտասանվում են ինչպես վագրր, այժրմ, ահրն): Այս իմաց վրա՝ սենյակ, արդյոք, սյուն գրութունները հայերեն կարդացվում են — հեցց յ գրի սկզբնական կիսաձայն հեցուցը պահպանելու գեպում, ինչպես այնքան աշխատում է Մ. Արեղյանը — իբրև սենյակ, արդյոք, սըյան: — Ի՞նչպես չէ, Մ. Արեղյանի այնքան աշխատելով է պահպանվել յ գրի կիսաձայն հնչյունը՝ հայ, ծառայական, գոյական, ձայն և նման բառերի մեջ: Բայց մենք շարունակենք. «Յարութիւնյանը կարդացվում է Յարութըլունըլան. — сен'йак, ард'йок, с'йун, Арут'йун'йан և վոչ թե сеняк, ардек, сюн, Арутюнян, ինչպես այս բառերի իսկական արտասանութունը ներկայումս: — Ահա թե ինչու է այ շրջված ձևով լինում է եա և վոչ յա»:

Յերբ յես կարդում եյի Գր. Նարեկացու մի տաղի մեջ «երգ զարմանալի, երգ շարժվարժենի», այս վերջին բառը չեյի հասկանում: Հիմա հասկացա: Դա նշանակում է «ատիճաղ պատիճաղ, սըտղի խաղի երգով» ինչ կուզես՝ ասա, միայն թե ասածդ կըր լինի և լավ գըրվի: Դե արի գըրած քարը հանիր: Սկսենք սկզբից, բայց նախ միքանի հարցեր Ս. Մ. — ին:

Արդյոք նա գիտե՞, վոր գիր և հեցուց տարբեր բաներ են. գիրը հնչյունի մի պայմանական նշան է, վոր մենք գծագրում ենք ձեռքի շարժումով կամ տպում ենք և ռեսուցում եմք, իսկ հնչյունն արտաբերում ենք խոսքի որգանների շարժումով և լսում եմք: — Իհարկե գիտե:

Արդյոք նա գիտե՞, վոր ձայնավոր և բաղաձայն տերմինները հնչյունների տնտաններն են ցույց տալիս և վոչ թե գրերի: — Իհարկե գիտե:

Արդոք նա գիտե՞, վոր կիսաձայն տերմինը նշանակում է մի ձայնավոր հնչյունն բաղաձայնի ֆունկցիայով:— Իհարկե գիտե:

Յեթե նա այս բոլորը գիտե, հապա թնչ հրաշքով յ գիրը կիսաձայն ե դառնում, այսինքն մի ձայնավոր ԿԵՅՅՈՒՆ քաղաձայնի ֆունկցիայով: Այս անհեթեթութունը բավական չե, նույն յ գիրը նախընթաց ձայնավորի, ուրեմն ձայնավոր ԵՅՅՅՈՒՆԵՐ հետ միանում է, ձուլվում, իսկ ՅԵԽԵՐԵՐԵՐԵ քաղաձայնի հետ չի կարող ձուլվել: Այս ել բավական չե, նույն յ գիրը «հընչվում է իբրև յերկարաբառ»: Ի՞նչ անհեթեթութուններ են սրանք:

Կարող եմ հավատացնել Ս. Մ.-ին, վոր յ գիրը չի «հնչվում իբրև յերկարաբառ», այլ հնչվում է կամ իբրև քաղաձայնական 1 կամ յերեմն իբրև միջնական կիսաձայն Կ և շատ քիչ անգամ իբրև շփական յ քաղաձայն հնչյուն: Կարող եմ հավատացնել նրան, վոր յ գիրը մի գծագրութուն է միայն և չի կարող լինել կիսաձայն ԵՅՅՅՈՒՆ: Կարող եմ հավատացնել նրան, վոր յ գիրը չի կարող միանալ-ձուլվել վոչ մի քաղաձայն թե ձայնավոր հնչյունի հետ. այլ հնչյունի հետ հնչյուն է միանում, գրի հետ՝ գիր: Ե գիրը մի անմեղ գառն է. նա մտքով անգամ չի անցկացնիլ միանալ ու մինչև անգամ ձուլվել վորևե հնչյունի հետ, այլ կարող է ամեն գրի կողքին առաջից ու յետևից ցցվել, ամեն թղթի կտորի և ամեն բանի վրա գծվել, մրտավել: Յեվ վերջապես, կարող եմ հավատացնել, վոր յերեքը այնպիսի անհեթեթ բան չի կարող լինել, «այնպիսի գրութուն տեղի ունենալ», վոր քաղաձայնից հետո յ գիր լինի, և այդ բավական չե, այդ անհնարին կապակցության ժամանակ քաղաձայնի և յ-ի մեջ «անհրաժեշտաբար» մտնի և հնչյունը:

Շատ հասկանալի յե, վոր Ս. Մ.-ը յ հնչյունի տեղ գլորել է յ գիրը: Թողնենք ուրեմն յ գիրը հանգիստ և առնենք յ ԵՅՅՅՈՒՆ, այսինքն անվանկային կամ քաղաձայնական 1-ն, վորին, ինչպես տեսանք, բարբառային ձևով յերեմն փոխանակում է գերմ. յ հնչյունը: Չպիտի մոռանալ նախ՝ այն, վոր միևնույն հնչյունը գրության մեջ կարող է արասհայտվել և մեկ և միքանի տարբեր տառերով և մեր յ հնչյունը,—անվանկային 1-ն, ինչպես տեսանք, հին ուղղագրությամբ արտահայտվում է յերեք տառով՝ յ, ե, ի, և ապա՝ այն, վոր հնչյունների կապակցութունը միմյանց հետ ք-ով կամ առանց ք-ի՝ կախված է հնչյունների բնավորութունից և վոչ թե այդ հնչյուններն արտահայտող պայմանական գծագրութունից:

Հիմա Ս. Մ.-ը հայտարարում է, թե նախընթաց քաղաձայն հնչյունի և հաջորդ յ հնչյունի, այսինքն անվանկային 1 և ձայնավորի միջև, անհրաժեշտաբար մտնում է ք հնչյունը: Բայց Ս. Մ.-ը, հարկավ, չպիտի նեղանա, յեթև կարդացողները վոչ միայն չհավատան նրա այս խոսքին, թե քաղաձայնի և ձայնավորի մեջ մտնում է ք, այլև մի լավ ծիծաղեն դրա վրա: Նա թույլ պիտի տա, վոր կարդացողները ժպտան նաև փակագծի մեջ բերված վագր, այժմ, ակն բառերի ապացույց-որինակների վրա, վորոնց վերջի ր, մ, ց հնչյունները վոչինչ չեն ասում ք=անվանկային 1 ձայնավոր հնչյունի համար: Նախ՝ նա ապացույց-որինակները յ=անվանկային 1 ձայնավորով պիտի բերեր և վոչ թե դրա տեղ սահեցներ ր, մ, ց հնչյունները. ապա՝ դրանք ընկել են բառերի վերջը և վոչ թե մեջը, ձայնավորից առաջ, մինչդեռ յ կիսաձայնը=անվանկային 1-ն ընկնում է բառամիջում, քաղա-

ձայնից հետո, ձայնավորից առաջ և վու թե բառավերջը, բաղաձայնից հետո (սենակյ, արգոք)։ Յերրորդ՝ նույնիսկ այդ ր, մ, ց հնչյունների և նախորդ բաղաձայնների միջև բառամիջում «անհրաժեշտաբար» չի մտնում ք հնչյունը, յերբ այդ ր, մ, ց հնչյուններին հաջորդում են ձայնավոր հընչյուններ. վագրակերպ, այժմուս, ակնաբուժ, անասնական, նպատակներ, պատենը, մտածմունք, արարմունք և հազարավոր այսպիսի բառեր «անհրաժեշտաբար» չենք արտասանում և իսկի չենք ել արտասանում ք հնչյունով՝ վագրակերպ, այժմուս, ակնաբուժ, անասնական, նպատակներ, պատենը, մտածմունք, արարմունք։ Յեվ վերջապես՝ նույնիսկ ազմկավոր և պայթական բաղաձայն հնչյունների միջև, յերբ զրանց վերջինից հետո մի ձայնավոր հնչյուն և գալիս, «անհրաժեշտաբար» չի մտնում ք հնչյունը. Ս. Մ.-ը և վոչ վոք ապտակ, պատշաճ, մարդկանց, պատվեր և այլն բառերը «անհրաժեշտաբար» չի արտասանում ապրտակ, պատրշաճ, մարդրկանց, պատրվեր։

Մրանից ել մեծ անհեթեթ հայտարարության։ Կոշտ շփական և պայթական հնչյունների մեջ «անհրաժեշտաբար» չի մտնում ք հնչյունը, իսկ մի բաղաձայն հնչյունի և հաջորդ անվանկային 1 ձայնավոր հնչյունի և կամ նույնիսկ յ-ի միջև, յերբ վերջիններից հետո գալիս և մի ձայնավոր, ըստ Ս. Մ.-ի, «անհրաժեշտաբար» մտնում և ք հնչյունը։ Պառկաց բառն «անհրաժեշտաբար» չենք արտասանում պառկաց, բայց յերբ պայթական բաղաձայն կ հնչյունի տեղ լինի անվանկային 1 ձայնավոր հնչյունը և կամ յ բաղաձայնը, այն ժամանակ և հնչյունի և զրա մեջ «անհրաժեշտաբար» մտնում և ք հնչյունը և մենք պառեաց = patian կամ patjan բառն «անհրաժեշտաբար» արտասանում ենք՝ պառեաց։ Այդպես ել արբուց չի լինում արբուց, բայց թ-ի տեղ անվանկային 1 ձայնավորով կամ յ-ով արիւց = artun կամ artun պիտի արտասանենք արբիւց։ Նույնիսկ պարբով չի լինում պարբով, իսկ անվանկային 1 ձայնավորով արգեօք = ardiokh կամ ardjokh բառն «անհրաժեշտաբար» պիտի արտասանենք արգեօք։

Մի գուցե Ս. Մ.-ը կարծում և, թե ուրիշ ազգերն «անհրաժեշտաբար» մեջ մտած ք-ով են արտասանում իրենց բաղաձայն + յ, բաղաձայն + ք կամ բաղաձայն + ի (անվանկային) կապակցությունները, objekt, subjekt, adjutant, adjunkt.—об'ехать=объехать, от'езд=атjest, житье=житъе, житье=житъе, —гостья, гостью=гостя, гостю (т փոփուկ և 1 անվանկային) և շատ-շատ բառեր ոռուսերենում։ Բայց գուցե Ս. Մ.-ը կարծում և, թե Ֆրանսիացիք իրենց լեզվի մեջ շատ հաճախված կիսաձայն + ձայնավոր կապակցությունների և նախորդ բաղաձայնի մեջ մտցնում են ք հնչյունը (վոր իր կողմից շատ կա Ֆրանսերենում) և այդ «անհրաժեշտ» ք-ով են արտասանում իրենց բառերը՝ gibier=gibjer, passion=passjon, il ya=il ja և այլն, նույնպես chien, piano = chjen և այլն (ըստ գիտական ֆոնետիկական տառադարձության) \*։

Այս բոլորը գիտե Ս. Մ.-ը, բայց և այնպես նա աղատ կերպով հայտարարում և. «Յեթե այդպիսի դրություն տեղի ունենա, ապա անհրաժեշտաբար այդ բաղաձայնի և յ-ի միջև (այսինքն անվանկային 1 ձայնավորի կամ յ-ի միջև, այն ել յերբ յետևից մի ձայնավոր և գալիս) մտնում և կարճ

\* В. Богород, Очерки... յեր. 111:

ը ձայնավորը: Մենք ել ազատ կերպով կծիծաղենք ողից առած այդ հայ տարարութեան վրա և կավելացնենք՝ յերբ նրա այդ հայտարարութեան մեջ հիշված «յ գիւր» բառացի՝ գիւր ենք հասկանում՝ անհեթեթութուններ են նրա ասածները, իսկ յերբ ԽՅԿՈՒՑ ենք հասկանում՝ մի ուրիշ անհեթեթութունն է. վորովհետև վոչ վոք չի արտասանում սենըեակ, արըլեն, սըլեն:

Դե վոր մարդ մի անգամ ազատ կերպով մի անհեթեթութունն ասի իբրև ընդհանուր դրութուն, նա կարող է այդ անհեթեթութունն ել ազատ կերպով իբրև հիմք ծառայեցնել և գրել. «Մ.յս Խիմեց վրա՝ սենյակ, արդյոք, սյուն դրութունները Խայրեմ կաբգացվում են—Խեցց յ գրի սկզբը— ցակեց կիսածայց Խեցցուցը պահպանելու գեղգում... իբրև սենյակ, արդյոք, սըլուն... Հարութըլունըլան»:

Հասկանում եք, թե ինչ է ասում նա: Հնչյունների կապակցութունը միմյանց հետ ք-ով կամ առանց ք-ի՝ կախված է վոչ թե հնչյունների բնավորութունից, այլ այդ հնչյուններն արտահայտող պայմանական գծագրութունից: Որինակ՝ յերբ կիսաձայն ի (—անվանկային ի) հնչյունն արտահայտելու համար գործածում ենք Խ կամ Խ տառը և գրում ենք սեցեակ, սիւց, այն ժամանակ նա չի կարողում սեցըեակ, սըլուց, այլ կարողում է ուղիղ senlak կամ senyak, siun. բայց յերբ նույն կիսաձայն ի (անվանկային ի) հնչյունն համար գործածում ենք յ տառը,—վորի հնչյունը և հին և նոր լեզվի մեջ է նույնիսկ ըստ Ս. Մ.-ի կիսաձայն ի,—և գրում ենք սեցյակ, այդ ժամանակ նա այլևս չի կարողանում կարդալ senyak, senlak (1 անվանկային), այլ «անհրաժեշտաբար» կարողում է սեցըլակ, այն ել «հենց յ գրի սկզբնական (և այժմյան) կիսաձայն հնչյունը պահպանելու դեպքում»:

Ի՞նչ հանելուկ է այս: Ինչու է տառը կարողանում է, որինակ, այս սեցեակ գծագրութեան մեջ իր այս Ե ձևի տեսողական զգայութեամբ Ս. Մ.-ին հիշեցնել տալ իր՝ (այդ տառի) ըմբռնումի հետ զուգորդված՝ խոսքի որդանների վորոշ մկանային շարժման մտապատկերները և հարկավոր շարժումները կատարել տալով՝ արտաբերել տալ նրան կիսաձայն կամ անվանկային ի հնչյունը, բայց յ տառը, որինակ, սեցյակ գծագրութեան մեջ չի կարողանում նույնն անել տալ նրան՝ առանց ք տառի ոգնութեան, չնայելով, վոր այդ յ-ն կիսաձայն ի-ի նշանն է: Բայց յեթե այդ տառի տեղ դենք իր յեվրոպացի փոխանորդներից մեկը կիսաձայն ց և կամ նույնիսկ բաղաձայն յ և գրենք սենյակ կամ սենյակ, այս դեպքում Ս. Մ.-ը արդեն դարձյալ կարտասանի կիսաձայն ի-ն կամ յ-ը—Դե մեր յ տառն ել արդեն գրեթե յեվրոպացի յե դարձած, գլխի մի կետն է պակաս, վոր լատ. յ դառնա:

Վորպեսզի վոչինչ պակաս չմնա, առենք և ուսներեն տառերով դրութունները: «Сеняк, ардек, сюн, Арутюнян... է այս բառերի իսկական արտասանութունը ներկայումս», գրում է նա: Բայց մենք, հարկավ, պարտավոր չենք նրան հավատալու, թե այդ ուսներեն դրութունները, վոր սովորաբար գործածում են, ճշտութեամբ արտահայտում են հայերեն բառերի իսկական արտասանութունը: Թող նա նորից կարդա վերևում բերվածները ուսու լեզվաբաններից. «Я տառը (ինչպես և Ә, Ю) բաղաձայն հնչյունն արտահայտող նախորդ տառի հետ կապակցված՝ նշանակում է а ձայնավորը (Ә, Ю տառերը՝ о, ы ձայնավորները) միաժամանակ և նախորդ

բաղաձայնի փափկութիւնը: Յերկի Ս. Մ.-ը գիտե բաղաձայնները ոռւտի պես փափկացրած արտասանել. դէ թող փորձի հիմա նա իր բերած բառերը a, o, y ձայնավորներով և նախորդ փափկացրած H, D, C, T, H բաղաձայններով արտասանել: Ինչ և կարծում, հայերէն արտասանութիւն կլսի նա իր բերանից, թէ ոռւտի և ոռւտացած հայերի, յերբ նրանք փորձում են հայերեն խոսել: Իսկի պատահել և նրան տեսնել հայ ազգանուններէ—ЯН վերջավորութիւնից առջ Ե տառը դրված՝ Абгарьян, Абелян, Абежьян, գուցե և Малхасьянц: Ինչի համար այսպես—վորպեսզի Я տառն առնվի j + a նշանակութեամբ և չկարգացվի իբրև a նախորդ բաղաձայնի փափկացումով և այդ ազգանունները կարգացվին՝ Абгарян, Абелян, այսինքն գոնե արևմտյան հայի արտասանութեամբ, վոր ըստ Աճառչանի և Abel-yan, Գիտե արդյոք Ս. Մ.-ը, վոր Я, ъ, ю տառերից առաջ, «վորտեղ բաղաձայնից հետո ընկնում և j բաղաձայնը, անհրաժեշտ և առանձին նշանագրում. ժամանակակից ուղղագրութիւնը գրում և այդտեղ Ե տառը, սակալ անգամ Ե (վորի փոխանակ այժմ նոր ուղղագրութեամբ գնում են \* ապաթարց—Մ. Ա.), հմմտ. пью, пьян, съезд, отъезд (с'езд, от'езд)=рју, рјан, сјест, атјест, ад'ютант, (ад'ютант, ад'юнкт)=adjutant, adjunkt: Կնշանակի՝ հայերեն բառերը պէտք և գրվելին сенъяк (сен'як), ардъек (ард'ек), Арутъюнъян (Арут'юн'ян): ад'юнкт: Բայց այս կլինի ըստ Աճառչանի և Ֆինկի, թե մեր ես, եо, իւ հավասար են ja, jo, ju, այսինքն շփական j բաղաձայնով են արտասանվում իբրև senjak, ardjak, Haruthjunjan: Իսկ մեր արևելյան հայերի սովորական կիսաձայն կամ անվանկային i-ով արտասանութիւնը ոռւտերենում ձիշտ արտահայտելու համար միայն մի միջոց կա, և տառը, վոր թեպետ յերբեմն նույնացնում են j հնչյունի հետ, բայց և այնպես դա կիսաձայնի նշան և. сенйак, ардйок և այլն գրութիւնները հասարակ գրագետ ոռւտը կգծվարանա կարգալ (ինչպես Ս. Մ.-ը սենյակ, արդյոք գրութիւնները), բայց լեզվաբանը կկարգա կամ կիսաձայն և-ով կամ բաղաձայն j-ով: Իսկ մեր յերկբարբառներով կազմված միավանկ բառերի արտասանութիւնը ոռւտերենով ձիշտ արտահայտել կարելի չե. сЮН գրութիւնը ցույց և տալիս փափկացրած с+УН, վոր հայերեն չե. сЬЮН, сЬЮН, с'ЮН գրութիւնները հավասար են сЈУН գրութեան (ըստ Ֆինկի), վոր, ինչպես տեսանք, մեր արտասանութեան համեմատ չե. վորովհետև մենք 8-ից հետո շփական j բաղաձայն չենք արտասանում, այլ անվանկային i ձայնավոր, թե չե սիւճ կլիներ յերկավանկ և կարտասանվեր սըիւն=сըЈУН. сЙУН գրութիւնն ել յերկգիմի կլիներ, վորովհետև ոռւտերեն ել յերբեմն և=j են գնում:

Հիմա անցնենք Ս. Մ.-ի վերջին ասութեանը:

## VI.

Ես, եо, իւ=յա, յո, յու ըստ Ս. Մ.-ի:

«Ես, յո, յու և այլն յերկբարբառներ չկան, այլ կան ալ, ոլ յերկբարբառներ, վորոնց կարող են հեռուել թե բաղաձայններ և թե ձայնավորներ. հայ, հայց, հայ-երեն, հայ-ութիւն, Հայ-աստան, հայ-ոց, հայ-ի, գոյ (յերկի Ս. Մ.-ն արտասանում և՛ гоЙ—Մ. Ա.), գոյր (յերկի Ս. Մ.-ն ար-

\*В. Порж., Введ., յեր. 109, 115, 123:



տասանում ե՛լ ԳՕԻՐ—Մ. Ա.), գոյ-ական, գոյ-ություն, գոյ-ի. այսպէս և ծառայ-ական, ծառայ-ություն: Բազմական ե Մ. Արեղյանի պես սխալվել և բառը բաժանել ծառայ-ական, ծառայ-ություն, և անմիջապէս կատարել ծառայ-եակաճ, ծառայ-իություն հնչյունը և գրութունը, վորը Մ. Արեղյանը համարում ե սխալագրություն, բայց վոր հայերեն ճիշտ գրութուն ե ծառայ-եակաճ, ծառայ-ութուն տրամաբանութեամբ:

Գիտե՞ք այստեղ ինչ ե ասում Ս. Մ.-ը:— Այն, վոր կան յա, յո, յու յերկարբառներ այս տերմինի ընդարձակ մտքով, և վոր եա=յա, յո=յու, իւ=յու, այսինքն նա գալիս ե Մ. Արեղյանի, ապա նաե զարձայլ Մառի, Մեյեյի և ուրիշների կարծիքներին:

Մի րոպե ընդունենք, վոր Արեղյանը և ուրիշները Արեղյանի պես սխալվելով՝ են բաժանում, բայց շարունակ բաժանում են՝ ծառայ-ական, ծառայ-ություն: Թնչ ե լինում դրա հետևանքը,—այն, վոր անմիջապէս ստացվում ե ծառայ-եական, ծառայ-իություն հնչյունը, ասում ե Ս. Մ.-ը: Ուրեմն, թեկուզ սխալ՝ բաժանման հետևանքով, առաջ են գալիս յա, յու վանկեր, վորոնք հնչվում են եա, իու (միավանկ), կամ, ուրիշ խոսքով, այդ բառերի մեջ սխալ՝ վանկատման հետևանքով առաջ յեկած յա, յու վանկերը հնչյունով նույն են եա, իու (միավանկ) վանկերի հետ: Բայց յեթե յերկարբառ են եա, իու (միավանկ) կապակցութունները, անպայման նույն յերկարբառներն են և սխալ՝ վանկատման հետևանքով առաջացած նույնահնչյուն յա, յու կապակցութունները:

Այս ե ասում առողջ գատողությունը: Վորովհետեւ յա հնչյունական կապակցությունը (թեկուզ սխալ՝ առաջ յեկած) հնչյունով նույն ե եա հնչյունական կապակցության հետ, և վորովհետեւ եա հնչյունական կապակցությունը յերկարբառ ե, ապա ուրեմն յերկարբառ ե և նույնահնչյուն յա հնչյունական կապակցությունը: Կարող ե հերքել այս Ս. Մ.-ը:

Նա վոչ միայն չի հերքում այդ, այլ և իր ասության վերջում նույնիսկ պնդում ե այդ յեզրակացության վրա՝ ավելացնելով թե ծառայ-եական... գրությունը... ճիշտ գրություն ե ծառայ-եական... արտասանության: Ուրեմն ինչ վոր ե յա-ի արտասանությունը, նույն արտասանությունը, ճիշտ գրությամբ, արտասանում ե եա գրությունը: Ուրիշ խոսքով՝ եա գրությունն արտասանությամբ նույն ե յա-ի հետ: Կարող ե հերքել այս Ս. Մ.-ը: Այսպես, ուրեմն, նույնիսկ Մ.-ի արտասանությամբ և ասելով եա=յա և յա=եա, միայն... յա-ն սխալ՝ բաժանմամբ ե առաջ յեկած: Այսպէս, ուրեմն, Ս. Մ.-ն ել վերջիվերջո ընդունում ե Այտնյանի ասածը, թե վկայություն և նման բառերի մեջ յ-ն հնչում ե բաղաձայն «եչի» պես, ինչպէս և Հայկ. լեզվի մեծ բառաքերի հեղինակների կարծիքը, թե ձայնավոր յ-ն ե «վորպես» սկզբնավորություն հնչմանցս ե և ի, «վորպէս ե», «վորպէս թերատ ե», իսկ վերջինս ե «յար. և նման յ տառի անկելոյ իմեջ բառի և յար յ»:

Յեթե այդպէս ե Ս. Մ.-ն ընդունում իմ ասածը, ել ինչք դեմ ե առարկում նա,— Վանկերի «սխալ» բաժանման դեմ, վոր հարկավ խնդրին չի վերաբերում. բայց մենք այդ ել կտեսնենք, միայն միքիչ հետո: Նախ թե ինչու նա ընդունեց իմ ասածը:— Բացատրենք: Արդյոք ծառայ-եակաճ և ծառայ-ութուն յերկու տարրեր բաժանումների ժամանակ յ տառի հնչյունը նույն ե մտում, թե՞ փոխվում ե: Այս հարցին պիտի պատասխանի Ս. Մ.-ը: Դրա համար առնենք զստուրաճ և պատիվ և բաժանենք նախ Ս. Մ.-ի պես ըու

դիզ» ձևով՝ դաս-արան, պատ-իվ և առա Մ. Արեղյանի պես «սխալվելով»՝ դաս-արան, պատ-իվ: Ի՞նչ է կարծում նա, յերկու դեպքում էլ օ և օ հնչյունները նոյն են մնում, թե՞ յերկրորդ դեպքում այլևս օ և օ չեն, այլ ուրիշ հնչյուններ: Կարծում եմ, դրա պատասխանը տալու համար հարկավոր չեմեն լեզվաբանական ուսում. ամեն աշակերտ էլ կասի, թե դաս-արան, պատ-իվ, ծառայ-ական կրթմաննք, թե դաս-արան, պատ-իվ, ծառայ-ական, յերկու դեպքում էլ նույն օ, օ, յ հնչյուններն են մնում, միայն մի դեպքում նախորդ ձայնավորի հետ միացած, մյուս դեպքում՝ հաջորդ: Բայց և այնպես քանի վոր Ս. Մ.-ը չի հավատալ վոչ-հեղինակավոր աշակերտներին, ուստի թող նա նորից կարգա վերևում հեղինակավորից բերված հետեվյալ հատվածը կիսաձայն ի-ի մասին. «Վանկերի հաջորդությունը ալ (=այ) կլինի թե իա (=յա), քնականաբար նույնքան քիչ նշանակություն ունի, վորքան, որինակ, ալ կամ իա, աք կամ րա կապակցությունների մեջ բաղաձայնների յետ ու առաջ դրվելը»: Յեթե այդքանը բավական չե, թող նա կարգա նաև հետևյալը յերկու ձայնավորի միջև ընկած կիսաձայն ի-ի մասին. «Յերբ մի բաղաձայնական ձայնավորը (=կիսաձայն) ընկնում է յերկու ուրիշ ձայնավորների միջև. որինակ, ալա (=այա ծառայական բառի մեջ: Մ. Ա.), այդ ժամանակ սմբողջպես արտաշնչություն բաշխումից է կախված, թե այդ հնչյունական հաջորդությունը իբրև ալ—ա կգագնվի, թե իբրև ա—ա, կամ վերջապես ալ—ա: Առաջին դեպքում ի-ն արտաբերվում է շնչի միևնույն արտամղումով, ինչ վոր փռաջին ա-ն, և միանալով սրա հետ կազմում է յերկբաբաբ, յերկրորդ դեպքում արտաշնչության թուլացումը տեղի յե ունենում արդեն առաջին ա-ից հետո և ի-ն կազմում է յերկբաբաբա առաջին առաջին ա-ից առաջ, յերրորդ դեպքում ավելի յերկաբ արտասանվող ի-ի առաջին մասը արտաբերվում է շնչի առաջին արտամղումի հետ, յերկրորդ մասը՝ յերկրորդի հետ»\*:

Այսպես, ուրեմն, ծառայ-ական կրթմանվի թե ծառայ-ական, յերկու դեպքում էլ մնում է նույն յ կիսաձայնը. յեթե առաջին դեպքում դա միանում է նախորդ ա-ի հետ և կազմում է իջնող յերկբարբաբ ալ=ալ, յերկրորդ դեպքում միանում է հաջորդ ա-ի հետ և կազմում է բարձրացող յերկբարբաբ ալ=ալ: Իսկ այս վերջինիս հետ իր հնչյունով նույն է ետ յերկբարբաբը, և հենց այդ է պատճառը, վոր ուղղագրություն չսովորած մարդիկ գրում են նաև ծառայեպաբ, վոր Ս. Մ.-ը «սխալ գրություն» չի համարում և իր աշակերտների տետրակներն ուղղելիս հենց այդպես էլ թողել է այդ գրությունն իբրև ռուզիզ, ինչպես և ծառայեպաբը, ծառայեպաբով կամ ծառայեպաբի, ծառայեպաբ գրությունները... Բայց այդ յա=եա կապակցությունը, յա յերկբարբաբը, «սխալ» բաժանումից, այսինքն «սխալ» վանկատումից է առաջ գալիս, ասում է Ս. Մ.-ը:

Գանք հիմա այս խնդրին:

Ինչի վրա յե հիմնում Ս. Մ.-ը, թե Մ. Արեղյանը և ուրիշները նրա պես «սխալվելով» են բաժանում ծառայ-ական, ծառայ-ություն: Նա լուկ հայտարարում է այդ իբրև պատգամ: Իսկ յես ասում եմ, վոր այսպիսի նա դեռ կաշկանդված է մի հին գիտնական ավանդության մեջ: Ինչպես տեսանք, հին բերականագետները, ինչպես և Ս. Մ.-ը, յերկբարբաբների մա-

\* E. Sievers, Grundz. d. indogerm. Phonetik, յեր. 149:

սին այն կարծիքի ելին, թե կան միայն այ, ոչ յերկբարբառներ և վոչ յա, յո. և վորովհետև, որինակ, հայ բառի մեջ այ կապակցութունը յերկբարբառ ե, և նույն յերկբարբառն ելին ընդունում և հայոց, հայութուն, Հայաստան բառերի մեջ, ուստի ասում ելին, թե պետք ե բառն այնպես բաժանել վանկերի, վոր այդ յերկբարբառն անբաժան մնա, միաժամանակ և յերևան գա բառի կազմութունը. գոյ, գոյ-ակ, գոյ-ի գոյ-ութիւն և այլն: Այսպես բաժանված գտնում ենք արդեն Հայկ. Լեզ. նոր Բառգրքի մեջ: Այտնյանն ավելի ընդարձակելով այս տեսութունը՝ պատվիրում ե. Աւ, եւ, իւ, ով, այ, ոյ երկբարբառները, թէև վերջի ծայրերնին բաղաձայնի նման հնչէ (վելի կամ եչի), պէտք չէ քակել. այսպէս կըբաժնվի՝ զօրաւ-որ, ցաւ-ալից, երեւ-ակ, բով-անդակ, վկայ-ել, հայ-երէն և ոչ զօրաւ-որ, վկայ-ել, բով-անդակ, Յով-վաթամ, հայ-երէն: Մեր հեղինակավոր քերականագետի այս տեսութայնը հետևում են Վիեննայի մխիթարյանները, վորոնք Այտնյանի աշակերտներն են, և Ս. Մ.-ը. բայց վերջինս չի բաժանում զօրաւ-որ, բով-անդակ, այսինքն մասամբ միայն հետևում ե Այտնյանին: Ինչո՞ւ: Նա, յերևի, այս հարցին կպատասխանի այսպես.—Արդարև, Այտնյանը հեղինակավոր քերականագետ ե, բայց այդ մասում նա սխալվում ե. բովաճգաղ բառի մեջ ով յերկբարբառ չկա, և վ-ը բաղաձայն ե. նույնպես և զօրաւոր բառի մեջ այժմ էլ ե. յես այդ մասին մինչև անգամ մի գիրք ունեմ շարադրած—«Վեկվագրութուն», և շատ եմ վիճել Վիեննայի մխիթարյան վարդապետ Մենելիշյանի հետ: Բայց վկայ-ել, հայ-ութուն բաժանումն ընդունում եմ. գա «ուղիղ»-ն ե: Կարծեմ, ել ուրիշ բան չի ստի Ս. Մ.-ը: Հն, մի բան ել կարող ե ասել նա.—Այտնյանը շփոթում ե լեզվի զարգացման տարրեր շրջանները, մի ժամանակ «գրում ելին աւագաճ, վորովհետև արտասանում ելին մոտավորապես աօղան» (Մի հնչ. մի գիրք, յեր. 12) ուստի պետք ե բաժանելին աւ-աղան: Բայց այժմ արտասանում ենք ավաղան, ուստի ա-վաղան: Իսկ ծառայութուն բառն արտասանում ենք ծառայ-ութուն, և Մ. Արեղյանի պես «սխալվելով» են միայն արտասանում և բաժանում ծառայ-ութուն, այսինքն յ-ն անցկացնում հաջորդ վանկին:

Իհարկե, Արեղյանի պես սխալվելով են բաժանել.

#### Վեճեկում.

- 1825 թվին. վա-յել (Վրթ. Ասկերյան, Թեսալոսի իմաստ. բարոյ, յեր. 168).
- 1878 թ. Նսա-յեայ, Ա-յաս, Հա-յաստան, վրա-յէն, Հա-յոց և այլն (Չարրհանայան, Հայկ. հին դպր., Բ. հատոր, յեր. 379, 203, 205, 222, 286).
- 1886 թ. Հա-յաստան, գիշերա-յին, խալիֆա-յին, կա-յին, հեղահայ-յեաց, Ուռհա-յեցի (նույն, Ա. հատոր, յեր. 234, 264, 333, 466, 496, 725, 738, 579, 681 և այլն).
- 1897 թ. Հա-յաստան, ներկա-յացնեն. (Հ. Գեղեցիկի Հետազոտ. հայ գից., թրգմ. Յ. Թորոսյան, յեր. 73, 108, 97).
- 1904 թ. Թէոդոսիո-յում, տղա-յին, հա-յերի, սրիկա-յական (Լէօ, Ռուս. գրակ., յեր. 54, 278, 282, 322).

Ի՞նչ է տեսնում Ս. Մ.-ը. նույնիսկ վենետիկում չի պահված մեծ բառ-  
գրքի հեղինակների ավանդությունը: Բայց յես շարունակեմ:

**Կ.-Պոլսում.**

1874 թ. նոյին, վա-յելուչ, հա-յեր, ջրա-յին (Գ. Սրվանձո., Գրոց-  
բրոց, յեր. 43, 71—72, 93).

1907 թ. Հա-յերուն, նա-յելով, մա-յանոցի, մարգկա-յին, վկա-յին  
(Հ. Գ. Մամբյան, Հին որեր. պուեսո նաչ. Մխաթ., յեր. 13, 61,  
64, 65, 86).

**Թիֆլիսում.**

1865 թ. աղգա-յին, ջնա-յելով, Հոոմա-յեցոց, Հա-յաստան, Հա-յերին,  
հա-յոց, փիլիսոփա-յութիւն, բարո-յական (Ս. Պալաս., Պատմ. հ.  
գրական., յեր. 34, 9, 24, 8, 210, 189, 41, 47, 60, 107, 142,  
70, 202, 237, 238).

1881 թ. զՀա-յաստանյայս, Հա-յոց, զԱրամա-յիս, հոոմա-յեցւոց, վա-  
յելուչ, հրամա-յեաց, ամա-յանայր, ծառա-յութիւն, յաստուածա-  
յին (Մ. Խորեն., Հայ. պատմ., սրբագրությունն արել է Մկրտիչ  
Պալյան, սովորած վենետիկում. յեր. 3. 85. 106. 138. 184. 40.  
179. 255. 335. 377. 378. 400. 405).

1892 թ. վկա-յեց, հաճո-յանալ (Կ. Կոստան., Թոմա Մեծոփ. յիշատ.,  
յեր. 30, 47).

1892. հրամա-յեց, միջաղգա-յին, խնա-յում էյին (Հ. Աբարատ. կեան-  
քը. Թարգմ. Պ. Պոռյանի, յեր. 17. 28. 36).

1909. թ. հա-յոց, քահանա-յին, հա-յերէն. (Կիրակ. Գանձ., պատմ.,  
յեր. 22. 33).

1910. Հա-յոց, հա-յերի, Հա-յաստան, վա-յելած (Վրթ. Փափազ., Հա-  
յոց գրակ., յեր. 178, 205, 207, 257).

1914. վկա-յին, զգո-յություն, հա-յեցեալ, հրամա-յեաց (Եզն. Կողբ.,  
Եղծ, յեր. 10. 12. 15, 133. 134).

**Պարիզում.**

1912 թ. աստուածա-յին (Ա. Չոպ., Հայ էջեր., յեր. ԻԵ).

**Վաղարշապատում.**

1898 թ. գո-յութիւն, հա-յերն (Կ. Կոստանյան, Մկրտ. Նաղաշ, յեր.  
Ժ2. ԽԸ. հեղինակն ինքն է արել սրբագրությունը).

**Մոսկովայում.**

1832 թ. վկա-յին, ծառա-յութիւն, հա-յոց, աա-յին (Նկար. գաղթ.  
հայոց, յեր. 5. 28. 29. 38. 61. 103. 104).

1856 թ. վա-յելուցի, հա-յոց, արքա-յին, արքա-յէն, չկշանա-յին,  
հա-յինակ, (Մմբ. Սպար. պատմ, յեր. Ա. 26. 45. 64. 12. 20.  
74. 111).

1861 թ. ծառա-յում են, հա-յեցողութեանց, անբարո-յական, հա-յեացք,  
արքա-յազն, վա-յելիտ, ծառա-յութիւն, (Հիւսիսափայլ, հունվար  
ամիս, յեր. 4. 5. 13. 140. 168. 184. 174. 176. 197).

**Պետերբուրգում.**

1897 թ. մա-յիս, հա-յերի. Ամասիա-յին, երկրա-յին, մարդկա-յին, Տրա-յեանոս (Մ. Խոր., Հայ. պատմ., թարգմ. Խոր. Ստեփանե, յեր 5. 45. 13. 106. 127. 156).

**Կոթ. Զուղայում.**

1880 թ. վա-յելչահիւս, վա-յել, քահանա-յից, հրամա-յեաց, շուղա-յեցոց, հրամա-յել, (Պատմ. Նոր Զուղայու, յեր. Դ. 13. 53. 65. 74. 81).

**Յերուսաղեմում.**

1871 թ. վրա-յօք, Սահարա-յի, կա-յին (Սափրիչ, Երկամ. պանդխտ. ի Հապեշ, յեր. 7. 12. 19).

«Մատակուշ» 1924 թ. № 11. յեր. 4-րդ. հարավ-յին, կա-յարան-նեքում:

Այս ինչպես ե լինում, վոր 1825 թվից սկսած մինչև մեր որերը, մինչև նույնիսկ «Մարտակոչի» այն համարը, վորի մեջ տղազրված են Ս. Մ.-ի այդ տողերը, աշխարհի բոլոր կողմերում, «Մ. Արեղյանի պես սխալ-վելով» ք հնչյունն անց են կացնում հաջորդ ձայնավորին և կազմում յա, յո, յու, յն յերկբարբառներ, վորոնք նույնիսկ ըստ Ս. Մ.-ի ունեն եա, եօ, իւ, (իու) հնչյունները:— Նրանից միայն, վոր այդ գրքերի սրբագրիչները գիտնականութուն և գիտնական տեսութուն չեն բանեցնում, ինչպես Ս. Մ.-ը, և գուցե չգիտեն ել, թե այդպիսի տեսութուն կա, այլ վանկերը բաժանում են՝ պարզապես հետևելով իրենց արտասանությանը:

Մենք խոսելիս բառերը գիտնական տեսութուններով չենք բաժանում վանկերի, ուզենք՝ բարոյ-ական, գով-ական. ուզենք՝ բարոյական, գո-վա-կան: Բառերի վանկատումը մի բնախոսական յերևույթ ե, վոր խոսելիս տեղի յե ունենում մեր կամքից անկախ և կախված ե հնչյունների վորա-կից ու բաղակցութունից և արտաբերության յեղանակից: Այստեղ, իհարկե, չպիտի խոսենք վանկերի կազմության մասին մեր լեզվի մեջ, բայց վոր-պեսզի առաջադրված խնդիրը պարզ լինի, առնենք միայն այս դեպքում հարկավոր մասը: Յերբ յերկու ձայնավորի մեջ ընկնում ե մի բաղաձայն, այս մի բաղաձայնը, ինչպես հայտնի յե, մենք միշտ հաջորդ ձայնավորի սկիզբն ենք անցկացնում: Ինչ՞ու այսպես:—Ամեն վանկ կազմվում ե արտա-ջնչած ողի առանձին մղումով, և վանկերը միմյանցից տրոհվում են ար-տաջնչության կամ դադարումով կամ քուլպացումով: Յերբ յերկու ձայնա-վորի մեջ ընկնում ե մի վորեւե փակվածքի բաղաձայն (մ, ն, բ, գ, դ, պ, կ, տ, փ, ք, թ, ծ, ձ, ց, ճ, ջ, չ), վորոնց արտաբերության համար պետք ե բերանի վորեւե տեղում փակվածք կազմվի,—ինչպես, որինակ՝ պ-ի արտա-բերության համար պետք ե շրթունքները կպչեն իրար,—այդ ժամանակ առաջին ձայնավորի արտաբերության համար անհրաժեշտ արտաջնչության մղումը հետգնեաե թուլանալով շարունակվում ե մինչև փակվածքի կազ-մվելը և փակվածքի վայրկյանին դադարում ե: Այդ դադարը հենց կազ-մում ե յերկու վանկի սահմանը. փակվածքը բացվելուց հետո արտաբեր-վում ե բաղաձայնը, վոր անցնում ե հաջորդ ձայնավորին, ինչպես՝ ա-պա, պա-տիվ: Իսկ յերբ յերկու ձայնավորի մեջ ընկնում ե մի նեղվածքի շվա-

կան բաղաձայն (վ, ֆ, դ, ս, փ, շ, ղ, լս, լ, ու, ր), այդ ժամանակ բերանի վորեկ տեղում փակվածք չի առաջ գալիս, այլ մի նեղվածք, և արտաշնչութեան մղումը չի դադարում, և յեթե բաղաձայնը ձայնեղ ե (վ, դ, փ, ղ, ու, լ), չի դադարում նաև ձայնը, այսինքն ձայնալարերի հնչումը. որին նսեղ՝ վ-ի արտաբերութեան համար պետք ե մի նեղվածք կազմվի վերին տտաձների և ներքին շրթունքի միջև: Այստեղ ել առաջին ձայնավորի արտաբերութեան համար անհրաժեշտ արտաշնչութեան մղումը հետզհետե թուլանալով շարունակվում ե մինչև վ-ի համար հարկավոր նեղվածքի կազմվելը. այդ ժամանակ լինում ե արտաշնչութեան ամենամեծ թուլացումը, վոր և կազմում ե յերկու վանկի սահմանը: Հենց վոր հարկավոր նեղվածքը պատրաստ ե լինում, արտաշնչութեան սկսում ե ուժեղանալ և արտաբերվում ե վ հնչյունը, վոր և անցնում ե հաջորդ ձայնավորին՝ դա-վտկ, ա-սեկ\*:

Ի՞նչ ե յերկու ձայնավորի միջև ընկած յ-ի հնչյունը գոյական, ծառայական և նման բառերի մեջ: Դա, նայելով բարբառային աղբյուրութեան, կարող ե լինել, ինչպես տեսանք, կամ անվանկային ձայնավոր փակ յ, կամ միջնական կիսաձայն յ և կամ շփական յ բաղաձայն: Արդ, այս վերջինը, նեղվածքի շփական յ բաղաձայնը, բնականաբար, միևնույն յեղանակով հաջորդ ձայնավորին ե անցնում, ինչ վոր նեղվածքի մյուս շփական բաղաձայնները (վ, դ, շ և այլն): Կնշանակի՞ այն ամենքը, վորոնք գոյական, ծառայական և այլն բառերը յ-ով են արտասանում (ըստ Հ. Աճառյանի), այդ հնչյունն ել իբրև մի բաղաձայն անհրաժեշտորեն անց են կացնում հաջորդ վանկին՝ գո-յական: Բայց այս վանկատումը տեղի յե ունենում և այն ժամանակ, յերբ յերկու ձայնավորի միջև ընկած յ-ն արտաբերվում ե իբրև անվանկային փակ յ կամ միջնական զ կիսաձայն, քանի վոր սրանց արտաբերութեան համար ևս բերանի մեջ կազմվում ե մի նեղվածք, մի ավելի նեղ անցք, քան պետք ե վանկային ի ձայնավորի համար: Նախորդ բաց ձայնավորի (մեր բոլոր վանկային ձայնավորները բաց են) արտաբերութեան դրութեանից ղեպի այդ նեղվածքի դրութեան անցնելու ժամանակ արտաշնչութեան մղումը բնականաբար թուլանում ե, և նեղվածքի պատրաստ լինելու վայրկյանին լինում ե արտաշնչութեան ամենամեծ թուլացումը, վոր և կազմում յերկու վանկի սահմանը, ապա արտաբերվում ե նեղվածքի բաղաձայնական փակ յ-ն կամ միջնական զ կիսաձայնը, վոր և, ինչպես մի նեղվածքի հնչյուն, անցնում ե հաջորդ ձայնավորին:

Թե հին ժամանակ ևս գրական լեզվի մեջ արտաբերել են գո-յական, ծառայական, այդ պարզ յերևում ե այն տարբեր հնչափոխութեանից, վոր յ հնչյունը կրել և մի կողմից՝ բառասկզբում ու բառավերջում և բառամիջում բաղաձայններից առաջ, մյուս կողմից՝ բառամիջում ձայնավորներից առաջ. որինակ՝ հին գրական լեզվի մեջ մարդոյ—mardoy դարձել ե մարդո—mardo, լոյս—loys դարձել և լույս—luys, մարդոյն—mardoyn դարձել և մարդույն—marduyn, իսկ գոյական—goyakan նույն ե ֆնացել: Հնչափոխութեան այս տարբերութեանը տարբեր պայմանների աղբյուրութեամբ ե առաջ յեկած: Ճառավերջի յ-ն դառնում ե հազադային հնչյուն և ապա կորչում ե\*\*:

\* Прив. доц. Д. Н. Ушаков. Кр. введ., յեր. 37:

\*\* Н. Hübschmann, Zur Chronologie der Arm. Vocalgesetze, յեր. 158:

Նույնը լինում է և բառասկզբի յ-ի վերաբերմամբ, վոր դարձել է և հագագ և բարբառներն մեջ մնացած բառերի մեջ մեծ մասամբ կորած է, իսկ գրական-դպրոցական լեզվի մեջ պահվում է իբրև և հագագ, գրաբարի կարդալու ավանդությամբ: Բառասկզբի և բառավերջի յ-ի այս փոփոխությունը նրանից է առաջ գալիս, վոր բառասկզբում ուշանում է կողորդալարերի ձայնի-մասնակցությունը, իսկ բառավերջում բառը դեռ չվերջացած՝ դադարում է ձայնի մասնակցությունը:— մի յերեույթ, վոր սովորական է: Ուստի և սկզբի կիսաձայն յ-ն անձայն դառնալով՝ մնում է ինչպես մի հագագ, բայց վոչ ինչպես դերմաներենի անձայն ich—հնչյունը, ձայնեղ յ հնչյունի անձայն տեսակը, վոր և իր կողմից ապացույց է, վոր մեր յ հնչյունը բառասկզբում և բառավերջում չի արտասանվել ինչպես գերմ. շփական յ բաղաձայնը, այլ ինչպես մի կիսաձայն հնչյուն:

Բառամիջում բաղաձայններից առաջ ոյ—ոյ կապակցությունը դարձել է ույ—ույ. լոյս—loys, մարդոյն—mardoyն դարձել են լույս—luys, մարդույն—marduyն: Այս ձայնաշրջումը կաարված է յերկբարբառների փոփոխության սովորական սրենքով, այն է՝ յերկբարբառի իրարուց անբաժան բաղադրիչ մասերի արտաբերության տեղի մերձեցման ձգտումով: Ոյ=ոյ անբաժան կապակցության առաջին բաղադրիչը ո (=o) վերջնաբային միջին բարձրությամբ ձայնավոր է, իսկ յերկրորդը՝ յ-ն=անվանկային է (i), առաջաբանային վերին բարձրությամբ ձայնավոր է. այս յերկուսի արտաբերության տեղի մերձեցումը նրանով է առաջ գալիս, վոր ո (o) ձայնավորի արտաբերությունը ձգտելով մոտենալ է (i) ձայնավորի արտաբերությանը, պահելով իր վերջնաբային արտաբերության տեղը՝ դառնում է վերին բարձրությամբ մի հնչյուն, վոր է ու (u) ձայնավորը. վորով և ոյ=ոյ անբաժան կապակցությունը դառնում է ույ (ույ): Այս ձայնաշրջումն իր կողմից ցույց է տալիս, վոր լոյս և նման բառերի ոյ (ոյ) կապակցությունը յեղել է իսկապես յերկբարբառ: Ինչպես բաղաձայնից առաջ, նույնպես և բառավերջում ոյ (ոյ) կապակցության յերկու հնչյուններն իրարուց անբաժան են՝ մարդոյ—mardoy, և բնականաբար պիտի սպասեյինք, վոր այստեղ ևս առաջ դար նույն ոյ=ույ ձայնաշրջումը: Յեվ իսկապես, մինչդեռ հին գրական լեզվի մեջ բառավերջի ոյ (ոյ) կապակցությունը, ինչպես տեսանք, ուրիշ ձայնափոխություն է կրել, վերջի յ-ն դուրս է ընկել,—բարբառների մեջ առաջ է յեկել ոյ=ույ շրջումը, մարդոյ—mardoy դարձել է մարդույ—marduy և ապա նոր, յ-ն դուրս ընկնելով, մարդու: Այսպես և գնալոյ—գնալու և այլն: Այս ձայնաշրջումն ևս իր կողմից ցույց է տալիս, վոր բառավերջում ոյ կապակցությունը, գոնե վորոշ բարբառների մեջ, արտասանվել է իբրև յերկբարբառ:

Բառամիջում ձայնավորից առաջ ոյ (ոյ) կապակցությունը փոփոխություն չի կրել. յ-ն այստեղ մնացել է. գոյական—goyakan: Յեթե այս և նրման բառերի մեջ ևս յ-ն նախորդ ձայնավորի հետ անբաժան արտասանվելիս լինել իբրև ոյ (ոյ) յերկբարբառ, անպայման դա ևս յերկբարբառներին հատուկ նույն ձայնաշրջումը պիտի կրեր, ինչ վոր մարդոյ (mardoy), լոյս (loys) և նման բառերի մեջ: Հնչափոխության այս տարբերությունը ցույց է տալիս, վոր «գոյական» և նման բառերի մեջ չի յեղել ոյ (ոյ) յերկբարբառ, իբրև գոյ-ական, այսինքն յ-ն հին գրական լեզվի մեջ (վորի մասին է այստեղ խոսքը) արտաբերվելիս չի յեղել նախորդ ձայնավորի հետ միացած:

այլ նրանից արոհված և միացած հաջորդ ձայնավորին, իբրև գո-յական. ուստի և այդպիսի բառերի մեջ չի առաջ յեկել վերևում դրված շրջումը:

Այսպես, ուրեմն, գոյական և նման բառերի մեջ յերկբարբառներին հատուկ ձայնաշրջութուն առաջ յեկած չլինելը հենց՝ ցույց է տալիս, վոր վոչ միայն 19-րդ դարում, այլև դարեր առաջ, յերբ գործոնն է յեղել ոչ ու շրջումը, մեր եթե գրապատ լեզվի մեջ ել «Մ. Արեղյանի պես սխալվելով» գոյական և նման բառերն արտաբերության ժամանակ վանկատել են՝ գո-յական և այլն, վորոնց մեջ յ-ն անցել է հաջորդ ձայնավորին: Նույնը յե-ղել է և այ, աւ, իւ, եւ կապակցութունների նկատմամբ, բայց այդ կթողնեմ:

Մի գուցե այս ամենը համոզիչ չեղան Ս. Մ.-ի համար: Այն ժամա-նակ մեկ անգամ ել յես դիմեմ ուսուսերենի ոգնությանը: Ս. Մ.-ը, վանկա-գրության կողմնակից լինելով (դէ, «մի հնչյունին մի գիրը» նա վաղուց է մոռացել), նույն հողվածի մեջ նա առաջարկում է մեր ետ, իւ յերկբարբառների համար միտառ նշանագրեր ստեղծել: Ինչու ստեղծել. առնենք ուսաց Յ, իՕ տառերը և գրենք՝

Bajazzo, բայացցո, паяц, բայցցո.

Bajadere, բայադեր, баядер, բայդեր.

Kajüte, կայուտա, каюта, կայուտա:

Ո՛ւր կորան գերմաներենի յ-երը և հայերենի յ-երը.—մտան ուսուսերենի միատառ Գ-ի և իՕ-ի մեջ. բայց այդ յ-երն ու յ-երը նախորդ ձայնավորի հետ են արտաբերվում, թե՛ հաջորդ.—Անպայման հաջորդի հետ: Գրենք և հետե-վյալները.

Կայուն, kajun, каюн, баяун, կայուն.

Կայան, kajap, каян, баян, կայան.

Կայարան, kajaran, каяран, կայարան.

Ի՞նչ յեկավ այդ նախորդ ա-ից անբաժանելի յ-ի գլխին. նա մտավ ուսու-սերենի միատառ Գ-ի մեջ, վոր հավասար է յա կամ իա (միավանկ), հայերեն՝ յա: Ի՞նչպես են արտասանում ուսուսերենի важная, важную է նման բառե-րը.—բայտ Ուշակովի անվանկային i=յ ձայնավորով իբրև важная, важ-нуюի=վաժնայա, վաժնույու: Ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը. վոր վանկին է անցնում յերկու ձայնավորի միջև գտնված այդ անվանկային i=յ հնչյու-նը.—Անպայման հաջորդին, այն աստիճանի հաջորդին, վոր ուսուսերը նույն իսկ միատառ Յ, իՕ գրերով են գրում:

Այսպես սպառնից և վանկերի բաժանման ժամանակ յ կիսաձայնի հաջորդ վանկին անցնելու խնդիրն ևս, վոր իսկապես չի վերաբերում ետ, եՕ, իւ յերկբարբառների յա, յա, յու ձևով գրելուն. բայց քանի վոր Ս. Մ.-ն առանձնապես խոսել եր այդ մասին ևս, չուղեցի անպատասխան թողնել:

Ի՞նչ է ընդհանուր յեզրակացութունը:

Մտադիր ընթերցողը կհասնի, վոր Ս. Մ.-ի առերկութունները կամ լուկանհեթեթութուններ են, կամ, հակառակ նրա կարծիքին, ցույց են տա-լիս, վոր հին ետ, եՕ, իւ յերկբարբառներն այժմ արտասանում ենք յ կի-սաձայնով իբրև յա, յո, յու=անվանկային i-ով՝ իա, իօ, իւ, կամ յա, յօ, յւ, ուստի ուղղագրու-թյան ակֆորմի ժամանակ մենք պետք է գրելինք՝ սենյակ, արդյոք, արյուն. իսկ թե՛ յա, յո, յու կապակցութունները յերկբարբառ կանվանեն, թե՛ բա-



դաձայն յ+ա, ո, ու կապակցութիւնն, այդ արժեքը չունի մեր ուղղագրութեան տեսակետով:

Ինչի՞ Մ. Մ.-ը չի հասնում իր նպատակին:—Վորովհետև նա լեզվական իրակութիւնները (ֆակտերը) չի առնում այնպես, ինչպես կան, այլ առաջուց մտադրվում է հերքել մի ընդհանուր իրապես գոյութիւն ունի. ուստի և բնականաբար պիտի ընկնեն զվարճալի անհեթեթութիւններ մեջ և կամ այն ապացուցել, ինչ վոր հերքել էր ուզում:

VIII.

«Յ տառի փոխանակ գրել է բառերի սկզբում, յերբ յ-ն արասանվում է իբրև հ»:

Այս փոփոխութիւնը կատարված է հետևյալ հիմունքով.

1. Ամեն ձայն պետք է նշանակվի միայն մեկ տառով.

2. Ամեն գիր պետք է ունենա միայն մեկ հնչյուն:

«Որինակի համար... հայ. յ տառը բառին սկիզբը ն, մեջը ք... համարելը յերկրորդ պայմանին հակառակ է... Ի ձայնին համար արդեն է տառն ունենալով՝ պետք չէ վոր յ տառին ալ նույն հնչյունը տանք ... յ տառին համար կմնա մեկ իրական արժեքը, այն է ք ձայնը»\*:

Մ. Մ.-ն այս յ=հ փոփոխութեան դեմ յեղծում է միջանի ձևերով:

«Էնդինակին (Աբեղյանին) շատ լավ հայտնի յե, վոր ժողովրդական կենդանի արտասանութեան (—բարբառներին. Մ Ա.) ոտար է յ=հ ձայնափոխութիւնը. ժողովուրդը (=բարբառները. Մ. Ա.) բառակցքի յ-ն... յերբեք չէ փոխում հ-ի:—Իսկ իմ «Ձեկուցման» մեջ գրված է. «Բառերի ըսկըզբում գրական լեզվի, ինչպես և շատ բարբառների մեջ, յ կիսաձայնը կամ գուրս է ընկել, կամ մեծ մասամբ նույնացել է ն հագագի հետ, վորից և առաջանում է այս յերկու տառի ուղղագրութեան դժվարութիւնը»:

Ինչպես կարելի յե տեսնել, ինձ վոչ միայն ըշատ լավ հայտնի յե, այլ նույնիսկ հայտնի չի յեղել, թե բառակցքի յ-ն բարբառների մեջ յերբեք չի փոխվում հ-ի: Մ. Մ.-ն իր կարծիքը վերագրում է ինձ: Ինձ, ընդհակառակն, հայտնի յե, վոր բարբառների մեջ կա յ=հ հնչափոխութիւնը: Առեք թեկուզ Սայաթ-Նովա 1914 թ. հրատ. և բացեք վերջի բառարանը և կգտնեք հիդ անել=յետ անել, հիդ քաշվել=յետ քաշվել. հիդ քերած=յետ քերած: Բացեք Ս.Ամատունու «Բառ ու բան»-ը և կգտնեք արարատյան բարբառով հետ անել=յետ անել, հետ ածել=յետ ածել, յետ քշել. հողոց քաշել, հողոց հանել=յողուց հանել. հայ տալ=գրաբարի յայ առնել, յայ կարդալ, հոռ, հոռանալ, հոռութիւն=յոռի, յոռանալ, յոռութիւն (գրաբարի և առաջին և յերկրորդ նշանակութեամբ). հեղ=յեղ. բայց բայը նոնն գրքի մեջ յեղել (գրաբար՝ յեղուլ), վարը՝ վարածը շուռ տալ, կրկին վարել:

Թեթե ժողովրդական բանահավաքների գրվածքների մեջ յ=հ հնչափոխութեամբ շատ բառեր չկան, դրա պատճառը նախ՝ այն է, վոր բարբառների մեջ յ-ով սկսվող բառերը, սակաւ բացառութեամբ, մեռել են, գոյութիւն չունեն. ապա բանահավաքները սովորաբար բանեցնում են հին, այսինքն գրաբարի ուղղագրութիւնը. նրանք գրում են յ տառով, վորովհետև այս էլ գրական լեզվի մեջ է հնչյունով են կարգում: Այսպես, որինակ՝

\* 2. Ամատուն «Բարբառագիտութիւն», յեր. 6 հոմ.:

նույն բանահավաք Ամատունին գրում և նաև յետ դալ, յետ ընկնել և այլն (առնելով ավելի Գ. Գոռչյանից)։ Բերած որինակներն ել, սակայն, բավական են վոչնչացնելու Ս. Մ.-ի սխալ կարծիքը և նրան «սարտեցնելու» հետանել, հոգոց հանել, հոռանալ գրություններով։ Հին լեզվի մեջ ևս կա յ և և տառերի փոխանակութուն. որինակ՝ յետդիտէ—հետդիտէ, յետագայ—հետագայ, յովտակ—հովտակ, յօտ—հօտ, յօտել—հօտել (Արարկերի բարբ. հերթիլ—\*հեթիլ—\*հեթիլ, արարատ. բարբ. հտել)։

Յենթադրենք թե վոչ մի բարբառի մեջ ել չկա յ= հնչափոխությունը, միթե դա կարող Ե վորևե նշանակութուն ունենալ բառակցի 3-ի փոխանակ և գրելու նկատմամբ։ Մի գոցե Ս. Մ.-ը կարծում Ե, թե ուղղագրության ռեֆորմը բարբառների համար Ե կաարված Ե վոչ թե գրական-դպրոցական լեզվի համար։ Այս վերջին արտասանությամբ բառակցի յ-ն Ե Ե։ Յեթե նա ինչ չի հավատում, պետք Ե վոր հավատար գոնե հեղինակավոր քերականագետներին։ «Յ վոր հնապես ամեն տեղ յ ձայն ունեի... գրական յեզվի մեջ վերածված Ե» (Աճառչյան)։ «Բառակցում յ-ն այժմ արտասանվում Ե Ե շատ վաղ արտասանվել Ե իբրև հ» (Մեյի)։ «Բառակցում յ-ի արտասանությունը նույնանում Ե հ-ի հետ» (Մառ)։ «Յ-ն բառակցում արտասանվում Ե Ե» (Ֆինի)։ Այսպես և Այտնյան և ուրիշները։

Այս դիտի, իհարկե, Ս. Մ.-ը, բայց դրա դեմ Ել մի պատրաստի դեկլարացիա ունի. «Գրական-դպրոցական արտասանության մեջ, յ= ձայնափոխությունը արվեստակետեմ Ե մոցված, այն Ել վոչ ասեցուեի?։ Յեվ, վերջացավ։ Սերեն բառակցի յ= արտասանությունը բարվեստական Ե, բոլորովորական կենդանի արտասանությանը ոտար» և կարելի չե յատակ բառը գրել հատակ։

Բայց Ս. Մ.-ը մի հարց անգամ չի տալիս իրեն, թե յերբ և ինչպես են «արվեստականորեն» մտցրել բառակցի յ= շտար» արտասանությունը մեր գրական յեզվի մեջ, և ինչպես Ե յեզվի, վոր այդ բարվեստականությունը» յեղություն Ե ունեցել։ Ձե վոր նա գրում Ե, թե «ժողովուրդը (=բարբառները. Մ. Ա.) բառակցի յ-ն կամ դուրս Ե ձգում կամ (Ե-ից առջ) արտասանում Ե բուն յ-ի հնչյունով (այսինքն՝ կիսաձայն ի հնչյունով. Մ. Ա.), կամ փոխում Ե նուրբ՝ հազիվ լսելի հազազի (spiritus lenis), բայց յերբեք չի փոխում Ե-ի»։

Ահա խնդիրներ, վորոնց մասին Ս. Մ.-ը վորոչ գաղափար չունի, բայց այնպիսի վտանգությամբ հայտարարություններ Ե անում, վոր միամիտ ընթերցողը կմոլորվի։

Բացատրենք նախ, թե ինչ Ե այդ ճնուրբ, հազիվ լսելի հազազը։

Իմ «Ջեկուցման» մեջ գրված Ե. «հան բարբառներ, վորոնց մեջ բառակցի յ-երը վերածվել են գրական լեզվից և մյուս բարբառներից տարբեր մի նոր օստակի հագագայից հեցուցի, վոր վոմանք դնում են իբրև «յերկար հագագ», բայց ավելի ճիշտ կլիներ ասել՝ ձայնեղ հագագ, այսինքն նույն Ե հնչյունն Ե, միայն հետը միացած կոկորդալարերի ձայնը, մինչդեռ մեր սովորական Ե հնչյունն անձայն Ե, այսինքն հետը միացած չունի կոկորդալարերի ձայնը (ինչպես բ, դ, դ, ղ ձայնեղ են, իսկ համապատասխան պ, կ, տ, խ անձայն են)»։ Աճառչյանն այս նոր հնչյունի համար գրում Ե. «Թրթուուն շնչավորներուն (=ձայնեղ հագագավորների)

նման հնչում մոռնի նաև՝ Կարնո բարբառին հատուկ է ձայնը, վոր Մշո բարբառին մեջ ալ կա և զոր հարմար կդատենք նշանակել է ձևով\*։ Այս ձայնը կգտնենք հին հայերենի է ձայնին դեմ, ինչպես՝ շարութ—Յարու-թյուն, շակո—Յտկոր և այլն։ Ասով այս բարբառը կունենա չեկու օեսակ հագագայից ձայն՝ յ, հ» (Բարբառագիտ., յեր. 106)։ «Կարնո բարբառին նման Մուշն ալ ունի յերկու տեսակ հագագ, վորոնք են է և հ. ասոնց գործածությունը կարենցոց հետ նույն է, բայց Մշո բարբառը սովորություն ունի ձայնավորով սկսվող բազմաթիվ բառերու սկիզբը է ավելացնել ինչպես՝ յէժան—աժան, յախոո—ախոո, յախբուր—աղբուր, յըմէն—ամենայն, յամբուր—ամուր, յանգան—անագան և այլն (Բարբ., յեր. 117)։ Այս սովորությունը, սակայն, ունի նաև Կարնո բարբառը. տես Բարբ., յեր. 114 յիմացեք—իմացեք, յաչքերդ—աչքերդ, յընգեր—ընկեր, յէլէի—ելէի և այլն։ Նույնը կարելի է միշտ դիտել Կարնո բարբառի մարդկանց խոսվածքի ժամանակ»։

Յես այս նոր հնչյունի, այս ձայնեղ հագագի ծագումը հին է (Կ, ի) հընչյունից՝ կասկածելի յեմ համարում. ուստի իմ զեկուցման մեջ գրել եմ, թե «գեռես քննելի յե, թե արդյոք դա հին կիսաձայն է-ից և առաջացել թե չե»։ Իսկ 1913 թ. գրած իմ զեկուցման մեջ\*\* ասել եմ, վոր այդ հնչյունը կարող է և հին է-ից ծագած չլինել, այլ «հին է-ն բառասկզբում դուրս է ընկել և ապա այդ բարբառների մեջ ձայնավորներից առաջ ավելացել է այդ ձայնեղ հագագային հնչյունը, վոր հին է-ի հետ կազ չունի. վորովհետև այդ հնչյունը նախ՝ չի յերևում բոլոր հին է-երի տեղ և ապա՝ շատ անգամ յերևում է նաև այնպիսի բառերի սկզբում, վորոնք հին լեզվի մեջ է-ով չեն սկսվում»։ Յեվ իսկապես, յերբ խնդիրը դալիս է Կարնո և Մշո բարբառների ձայնեղ հագագով, է-ով սկսվող բառերին, վորոնք հին լեզվի մեջ է ունեն, միշտ որինակ բերում են շակոր, շարութ և մի յերկու ուրիշ բառ կամ անուն. մինչդեռ բազմաթիվ ուրիշ բառերի սկզբում, վորոնք հին լեզվի մեջ է-ով չեն սկսվում, ավելացել է ձայնեղ հագագը։ Բացի այդ՝ վոր գլխավորն է, ուրիշ բարբառների մեջ ևս բառասկզբի ձայնավորներից առաջ ավելանում է անձայն է հագագը, ինչպես՝ Մշո և Կարնո բարբառներում է՝ յըմեն, յընգեր, յամոթ, յընտիր, իսկ ուրիշ բարբառներում՝ հըմեն, հընգեր, համոթ, հընտիր։ Այս ցույց է տալիս, վոր լեզվի մեջ ընդհանուր ձևը-տում կա բառասկզբի ձայնավորներն արտաբերելու վոչ թե արտաշնչության սկզբի հետ միաժամանակ, այլ նրանից հետո. միայն Մշո և Կարնո բարբառների մեջ այդ սկզբի հագագի հետ, նախ քան թե կազմված է լինում ձայնավոր հնչյունի հարկավոր դրությունը բերանի մեջ, միանում է ձայնավորների հնչումը, ուստի և հագագի ազմուկը քիչ է զգալի լինում. մինչդեռ ուրիշ բարբառների մեջ այդ հագագն անձայն է մնում, և ձայնալարերը հնչում են այն ժամանակ, յերբ բերանի մեջ արդեն կազմված է լինում ձայնավորի արտաբերության համար հարկավոր դրությունը։ Այս է ահա հընկեր և յընկեր արտասանության տարբերությունը։

Յեթե ընդունենք նույնիսկ, վոր Կարնո և Մշո բարբառների միջանի բառերի մեջ այդ ձայնեղ հագագը հին է (Կ) հնչյունի հնչափոխությամբ է

\* Լատ. f շուռ. տված։

\*\* «Արարատ» ամսագիր, № № 41 յեվ 42, յեր. 4452։

առաջ յեկած, դա դարձյալ մեր լեզվի մեջ մի բոլորովին նոր հնչյունն է, վոր չի յեղել հին լեզվի մեջ, ինչպես է, որինսակ, և հ-ի հնչափոխությամբ առաջ յեկած Պ հնչյունը միքանի բարբառների մեջ՝ հողի—ֆողի, հող—ֆող, հոտ—ֆոտ և այլն։ Այդ ձայնեղ հագագը կիսաձայն կամ բաղաձայնական յ (γ) հնչյունը չէ. բայց Կարնո և Մշո բարբառների գիտնական մարդկանց մեջ, մի առասպել կա տարածված, թե իբր դա յ-ի բուն հին հնչյուննն է, և թե յերբ իրենք յավոք են արտասանում, իբր յ-ի հնչյունով են արտասանում, դա «ուղիղ» արտասանությունն է, գուցե և ս. Մեսրոպի նման։ Լավ իմանալով, վոր հնության հավատը, թեկուզ առասպելի վրա հիմնված, մարդկանց ավելի ևս հնասեր է դարձնում, իսկ ուղղագրության նկատմամբ ավելի ևս կաշկանդում է նրանց՝ յես իմ «Չեկուցման» մեջ մանրամասն կանգ եմ առել այդ ձայնեղ հագագի վերաբերմամբ, դնելով հետևյալ դրությունները.

1. Յեթե այդ ձայնեղ հագագը հին յ-ից էլ առաջ յեկած լինի, դա դարձյալ արգելք չպիտի լինի, վոր գրական լեզվի մեջ արդեն և դարձած յ-երը և տառով էլ գրվեն, քանի վոր վորոշ բարբառների այս ձայնեղ հագագը վոչ թե հին կիսաձայն յ (=ն, γ) հնչյուննն է, այլ զուս բարբառային մի ցօր հեցուց, և ով վոր մանկությունից իր մայրենի բարբառից չի վարժվել դրա արտասանությանը, նա նույնիսկ դժվարությամբ է կարողանում լսել, ըմբռնել և յուրացնել այդ հնչյունը:

2. Գրական լեզվի մեջ կարիք չկա այս տոանձին տեսակի նոր հագագը մտցնելու և կարելի յել չե մտցնել:

3. Բայց յեթե հարկ լինի այս նոր հագագային հնչյունը նշանագրել, դրա համար պետք է ծառայի վոչ թե կիսաձայն հնչյունի յ (ն, γ) տառը, այլ բոլորովին նոր մի նշանագիր պետք է ընդունել: Աճառյանը, ինչպես տեսանք, գործածում է յ նշանագիրը (շուս տված լատ. է):

4. Գրական լեզվի համար, սակայն, բավական է մի հագագային հնչյունի և տառը, և յեթե կան մարդիկ, վոր գրական լեզվով խոսելիս, իրենց մայրենի բարբառի ազդեցությամբ, վորոշ քով բառերի սկզբի հագագը ձայնեղ են արտասանում, այդ վոչ մի ազդեցությունն չպիտի ունենա մեր ուղղագրության վրա. վորովհետև նախ՝ դա զուս բարբառային արտասանությունն է, ապա՝ այգպիսի բառերի քովը ցօս փօր է, քանի վոր յ-ով սկսվող բառերի կեսից ավելին (այժմ կգրեյի՝ բացի 10—15 բառից) գրարարից են անցել աշխարհաբարին և այդ բարբառների մարդիկն էլ այդպիսի բառերը միակերպ անձայն և հագագով են արտասանում, ինչպես՝ հաճախ, հատակ, հողտուել, հող, հորդ, հոխորտալ, հողնակի, հարդարել, հարատե, հավակնություն, հանդիմանել և այլն:

5. Մեր բաղաձայնների մեջ սովորական յերևույթ է նույն կարգի ձայնեղ և անձայն բաղաձայնների միմյանց փոխանակելը, և կան բարբառներ, վորոնց մեջ բ, գ, դ ձայնեղ հնչյուններն արտասանվում են իբրև մի նոր տեսակի հնչյուններ, իբրև բհ, գհ, դհ, ինչպես Յերևանի բարբառի մեջ բօրի արտասանվում է բհօրի, բայց... մենք գրում ենք բօրի, մի բարբառի մարդ արտասանում է բարի, մի ուրիշ բարբառի մարդ կարող է արտասանել բհօրի... նույնպես կգրենք հիմաբ, մեկը կարող է արտասանել անձայն և հագագով հիմար, մյուսը՝ ձայնեղ հագագով (իրև յիմար):

6. Այսպիսի գրությունը վոչ վոքի համար վոչ մի ուղղագրական դժ-

վարության չի պատճառիլ, քանի վոր հազագային հնչյունի համար միայն մի և տառը կուեննանք, և ամեն անգամ հազագային հնչյունը, լինի ձայնեղ թե անձայն, այդ մի և նշանագրով կարտահայտվի:

Ս. Մ.-ը փոթանակ այս վեց գրությունների վրա լրջորեն մտածելու, բավականանում է միայն մի դեկլարացիայով, թե գրական-դպրոցական արտասանության մեջ ՝ և ձայնափոխությունը արվեստականորեն է մըտցըրած, այն էլ վոչ ամենուրեք, այնպիսի ուսուցիչների միջոցով, վորոնք լեհեցց մայրենի բարբառից չեն վարժվել դրա (չ-ի նուրբ հազագով) արտասանությանը, և նույնիսկ դժվարությամբ են կարողանում լսել, ըմբռնել և յուրացնել այդ հնչյունը: Յեվ ապա ծանոթության մեջ շնորհ է անում հայտնելու, թե լինքը Մ. Արեղյանը պատկանում է այս ուսուցիչների շարքին... այս պատճառով էլ նա յուր հայերենի քերականության և ուղղագրության մեջ առաջադրում է սկզբնագիր չ-ն արտասանել իբրև և, ինչպես ինքն է արտասանում: Յեվ ապա Ս. Մ.-ը միքիչ հետո արդեն հոգով վրդովված՝ բացականչում է. «Յեվ հանուն ինչի՞ կատարվում է այս բռնությունը ժողովրդակամ արտասանության վրա: Վորովհետև չ-ով սկսվող մոտ 100 բառ վոմաճի գլուխ են արտասանում իբրև և և կարող են սխալ գրել...»

Նախ՝ իմ Հայերենի քերականության և նույնիսկ 1892 թ. Ուղղագրության մեջ, վոր հիշել է Ս. Մ.-ը, յես այդպիսի անմտություն չեմ արել, վոր առաջադրեմ բառասկզբի չ-ն արտասանել իբր և. իմ քերականության մեջ (յեր. 31) գրված է. «Բառասկզբում չ տառն այժմ աբսոլուտում է սովորաբար իբրև և»: Իսկ իմ Ուղղ. մեջ (յեր. 10)՝ «Յ կես ձայնավորը բառի սկզբում գաբնի է հազագային նուրբ և բաղաձայն և... արդի գրական լեզվի մեջ աբսոլուտում է ինչպես և»...

Ապա՝ Ս. Մ.-ը շատ է սիրում «ժողովուրդ», «ժողովրդական արտասանություն» բառերը, և կարծում է, թե այն բարբառները, վորոնք չունեն այդ ձայնեղ հազագը, դրանք ժողովրդի մաս չեն և «ժողովրդական արտասանություն» չունեն, այլ «վոմաճի» «ուսուցիչներ» են, վորոնք «սխալ» արտասանություն ունեն: Ս. Մ.-ի համար մի կողմում է, ուրեմն, «ժողովուրդը» և «ժողովրդական արտասանությունը», այդ «նուրբ, հազիվ լսելի», «ուղիղ», «զեղեցիկ», «փափուկ», «բնական», «զեղեցիկ ու կանոնավոր», «ժողովրդական» և դարձյալ «ժողովրդական», նաև «բակաս զեղեցիկ արտասանությունը» այդ նոր հնչյունի, ձայնեղ հազագի, — իսկ մյուս կողմում են այդ վոմաճի ուսուցիչներն իրենց «հակաժողովրդական», «արվեստական», «սխալ», դարձյալ «արվեստական, տգեղ ու անկանոն» արտասանությամբ անձայն և հազագի: Տեսնճւմ եք, Ս. Մ.-ը զործնական տեսակետով՝ ժլատ չէ յերկու կողմի արտասանություններին էլ հարմարավոր, իսկ լեզվաբանի վայել, բնորոշ ածականներ նվիրելու: — Բայց զալում վոմաճի ուսուցիչները կարողացել են գրական-դպրոցական լեզվի մեջ «արվեստականորեն» մտցնել իրենց «հակաժողովրդական» չ-ն արտասանությունը, վորովհետև իրենք չեն կարողանում այն «զեղեցիկ» ձայնեղ հազագն արտասանել:

Ժողովրդի անունից խոսողը, սակայն, նեղություն չի կրում մտանալու ժողովրդին, դոնե Աճառյանի «Բարբառագիտությունը» բանալու և տեսնելու, թե քանի հոգի յես այդ վոմաճի, վորոնք Արեղյանի պես անձանոթ են այդ «ուղիղ», «զեղեցիկ» ու «կանոնավոր» հնչյունին: Այսպես՝ այդ ձայնեղ հազագը չունեն.

1. Արարատյան բարբառը, վոր Աճառյանը կոչում է Յերևանի բարբառ, և նրա յենթաբարբառները՝ Բայաղետի, Աստապատի և Թավրիզի.
2. Ղարաբաղի բարբառը և նրա յենթաբարբառները՝ Ղազախի, Գանձակի, Ղարաբաղի.
3. Զուղայի բարբառը.
4. Ագուլիսի բարբառը, ինչպես և Մեղրիի.
5. Շամախու բարբառը.
6. Թիֆլիսի բարբառը.
7. Աստրախանի բարբառը և Ղզլարի:

Այսպես, ուրեմն, բոլոր տրեվելյաճ կոչված բարբառները չունեն այդ նոր հազագային հնչյունը. Լուսնայ բարբառի մասին միայն տեղեկութուն չկա Բարբառագիտ. մեջ, բայց անձամբ հարցրել եմ միքանի ընդհանրի, վորոնց վկայությամբ լուսնիք ել անձանոթ են այդ նոր հնչյունին, և այլպես չեր կարող լինել. Լուսնայ բացառություն չպիտի լիներ արևելյան բարբառների մեջ: Բայց Ս. Մ.-ը չկարծի, թե այդ «ժողովրդական» նոր հնչյունն ունեն մյուս բոլոր բարբառները: Զուսնեն դարձյալ՝

8. Խրիմի և Նոր Նախիջևանի բարբառը.

9. Տրապիզոնի բարբառը, վորով խոսողներն այժմ գետեղված են Սոխումի կողմերը.

10. Կ.-Պոլսի, Թրակիայի և փոքր-ասիական բարբառները, ինչպես և Սեբաստիա, Պարբերդ և այլն, վորոնք այժմ անարժեք են, վորովհետև այդ բարբառներից չնչին մնացորդներ միայն կան. միայն Արաբկերի այժմ վոչընչացած բարբառն ուներ ձայնեղ հազագ.

11. Վանա և Մուկաց բարբառները, վորոնցով խոսողները գաղթած են Հայաստան.

12. Խոյի, Սալմաստի և Մարաղայի բարբառները, վորոնք վոչ միայն Պարսկաստանում են, այլ և Հայաստանում:

Հապա ել վոր բարբառը մնաց, վոր ունի այդ «գեղեցիկ» հազագը:— Կարնո և Մշո բարբառները, վորոնք նույնպես դժբախտաբար վոչնչացան, բայց հարյուր տարի առաջ և վերջին պատերազմի ընթացքում դրանցից հատվածներ անցել են այժմյան Հայաստանի շրջանը և ուրիշ կողմեր: Այսպես՝ Մշո բարբառի յենթաբարբառներ մնում են՝ ալաշկերտցիք և Մուշից, Մասունից ու Բուլանուխից գաղթականներ Ապարանում, Արագածի ստորոտներում և Նոր Բայաղետի քաղաքում (Ձ1 գյուղեր). իսկ Կարնո բարբառից, վորին պատկանում են և Բասենն ու Կարսը, գաղթականներ գետեղված են Շիրակում, Ախալքալաքում և Ախալցխայում: Այսպես, ուրեմն, բոլոր հայերից այդ «ժողովրդական» հազագն արտասանել դիտեն միայն շիրակցիք, ապարանցիք, ախալքալաքցիք, ախալցխացիք և մեկ ել Նոր Բայաղետի գավառի Ձ1 գյուղացիք ու սասունցիներ և ալաշկերտցիների մնացորդները: Այդ բարբառներն ել, սակայն, միակերպ չեն, և նույնիսկ կասկածելի յե, թե ամենքն այդ նոր ձայնեղ հազագն ունենան:

Հիմա ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը. քանի՞ «վոմաճ» են նրանք, վոր Արեղյանի պես իրենց մայրենի բարբառից չեն վարժվել այդ ձայնեղ հազագին, չգիտեն դրա գոյությունը և նույնիսկ չգիտեն, թե ի՞նչ է դա: Արդյոք հասկացածի նա, վոր ինքն անհիմն կերպով խոսում է ժողովրդի անուսնից և «ժողովրդական» ու «հակաժողովրդական», «սխալ» և «ուղիղ» բա-

ոները գործածում: Մթթե ժողովրդական լեզվի, բարբառների մեջ «սխալ» և «ուղիղ» ասածը կա մի լեզվաբանի համար: Իսկ գրական լեզվի մեջ գիտե՞ք, թե վորն է սխալը.—այն, վոր ընդհանուր ընդունված չէ:

Այսպես, ուրեմն, գրական լեզվի մեջ բառասկզբի յ-ն արտասանվում է իրրև և: Յեվ այլապես ել չեր կարող լինել: Մի հնչյուն, վոր գոյութուն չի ունեցել հին լեզվի մեջ, չկա հայոց ազգի ամենամեծ մասի մեջ, չկա նոր գրական լեզվի հիմք կազմող բարբառների մեջ, զա չեր կարող մտնել մեր գրական-դպրոցական արտասանության մեջ, այն ել համարվել յ-ի «ուղիղ» հնչյուն, մանավանդ վոր Կարնո և Մշո բարբառների մեջ ել հին յ-ով սկսվող բառերից վոչ ավելի քան 10—15 բառ միայն այդ ձայնեղ հագագով են արտասանվում: Ս. Մ.-ը շատ լավ գիտե, վոր յերը ինքը դըրում է «յ-ի և հ-ի հնչյուններ», կարդացողները հասկանում են, թե վորն է հ-ի հնչյունը, իսկ յ-ի հնչյուն ասելով նրանք հասկանում են կամ դարձյալ և հնչյունը բառասկզբի յ-երի համար, կամ կիսաձայն Ի հնչյունը, վոր ունի յ տառը բառամիջում (ձայն, գոյական): Քանի հողի կլինեն հայ գրագետներից, վորոնք յ-ի հնչյուն ասելով հասկանան ձայնեղ և հագագը, վոր բոլորովին տեղական հնչյուն է: Ժամանակ է դեն դնելու կարնեցի և մշեցի գիտնականների հանած այդ առասպելը, թե իրը ձայնեղ հագագը յ-ի հընչյունն է, այն ել «ուղիղ» հնչյունն է, իսկ անձայն հագագը յ-ի «սխալ» հնչյունն է: Ժամանակ է, վոր կարնեցի գիտնականները իրենք չմոլորվեն և ուրիշներին ել չմոլորեցնեն, թե իբր իրենք բառասկզբում պահել են յ-ի սկզբնական հնչյունը, և թե իբր ձայնեղ հագագն է յ-ի այդ սկզբնական «ուղիղ» հնչյունը: Ժամանակ է, վերջապես, վոր Կարնո և Մշո բարբառների մարգիկը նոր առասպելներ չտարածեն, թե «գրական-դպրոցական արտասանության մեջ յ=և ձայնափոխությունը արվեստակերպ են մտցված, այն ել վոչ ամենուրեք»:

Յ=և ձայնափոխությունը յերկնքից չի ընկել հանկարծ ձայնեղ հագագին անվարժ միջանի ուսուցիչների մեջ և, ինչպես հայտարարում է Ս. Մ.-ը, այդպիսի ուսուցիչների միջոցով արվեստականորեն մտցվել գրական-դպրոցական արտասանության մեջ: Ինչպես վերևում տեսանք, բառավերջի և բառասկզբի յ-ն անձայն մնալով վերածվում է հագագի և ապա դուրս ընկնում բարբառների մեծ մասի մեջ, բայց և բարբառների մեջ յ-ով սկսվող բառերն իրենք, սակավ բացառությամբ, միռնում են: Ինչպես բարբառները, նույնպես և գրական լեզուն, քանի զեռ կենդանի յե, ունենում է իր հնչափոխությունը, յերբեմն բարբառների հետ նույն ուղղությամբ, յերբեմն ել բարբառներից տարբեր: Բարբառների հետ զուգընթաց նույն յ=և հնչափոխությունն ունեցել է և մեր հին գրական լեզուն, միայն մի խոշոր տարբերությամբ բարբառներից, այն է՝ գրաբարում, իբրև գրական լեզվի մեջ բնականաբար կան և պահվում են բազուր յ-ով սկսվող բառերը և նրանց բառասկզբի յ գրությունը: Բառասկզբի այս յ=և հնչափոխության մասին Յ. Կարստը\* իր «Նիլիկյան հայերենի պատմական քերականության» մեջ (յեր. 34) գրում է. «Դրաբարում բառասկզբի յ-ն արտասանվում է և բառարդի հայերենի. այսպես, որինակ, ըստ Այտն. II. 371 յարմար, յապաղել, յույս, գյակոք, անյապաղ, թերայոյս կարգացվում են՝ հարմար, հապաղել,

\* J. Karst, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, 1901:

հույս, գհակոր, անհապաղ, թերահույս և այլն: Այս արտասանութիւնը պետք է իրոք գոյութիւն ունեցած և ուղիղ յեղած լինի վոչ իսկական հին հայերենի համար, այլ ավելի ուշ—կլասիկական և յետ-կլասիկական և միջին հայերենի շրջանում: Առանձնապէս կիլիկյան հայերենի համար՝ բառասկզբի Յ-ի իբրև և արտասանվելը հաստատ և անկասկած է հետևյալ կրկին գրութիւններով՝ հետ—յետ, հետի—յետի, հայրենէթիւութիւն և յայրենեթըփիւմ... վորոնց յերկուսի յել առաջին բաղադրիչը պարզապէս նույն է: Այս բառերը պարզապէս կազմված են «հայրենիք» բառից, «հայրենաթափ լինել» այժմ էլ սովորական է: Ապա Կարստը նույն հնչափոթութիւնը գրտնում է և միջանի բարբառների մեջ, ինչպես՝ լեհահայոց և այլն, և կիլիկյան հայերենի բառասկզբի յ-ն տառադարձում է միշտ և-ով, ինչպես՝ յայանի=հայտնի, յեմել—հեմել (գրար. յամել) և այլն:

Մինչդեռ բարբառների մեջ յեթե յ-ով սկսվող բառերը չեն մեռնում, դրանց սկզբի յ-ն և զառնալուց հետո դուրս է ընկնում, հին գրական լեզվի մեջ այս վերջին զարգացումը չի ընդհանրանում: Բայց վոր գրաբարում էլ կան վորոշ թվով բառեր, վորոնք գրվել են և սկզբի յ-ով և առանց յ-ի, այդ կամ բարբառների ազդեցութեան հետևանք է, կամ ավելի այն բանի, վոր գրաբարում էլ մի ժամանակ կատարվելիս է յեղել յ-ից ծագած հ-ի դուրս ընկնելու հնչափոթութիւնը, և յեղել է ժամանակ, յերբ լսառն արտասանել են և յ=հ հնչյունով և առանց դրանց: Բայց և այնպէս քանի վոր բարբառների մեջ այս հնչափոթութեան վերջնալու ժամանակ, նոր հայերենի սկզբում, գրաբարն այլևս խոսվող լեզու չէր, այլ միայն մեռած գրական լեզու, այս զարգացումը, այսինքն բառասկզբի յ-ի դուրս ընկնելը, գրաբարում կանգ է առնում և այս յերկու տեսակի արտասանութեան մրցման մեջ, յ-ով սկսվող բաղադրիչ մեռած, լոկ գրական բառերի ազդեցութեան տակ,—վորոնք բարբառների մեջ չլինելով՝ չեյին կարող առանց սկզբի յ=հ հնչյունի կարգացվել,—ընթացաւորապէս ժամանակ իշխող է հանդիսանում և հաստատվում այս հնչափոթութեան միջին՝ յ=հ աստիճանը: Յեւ վայնուհետև բառասկզբի այս յ=հ արտասանութիւնը ավանդաբար հարատևում է դպրոցներում իբրև կտրուկու մի յեղանակ մինև 19-րդ դարը, և ապա ինչպէս գրաբարի կտրուկու ամբողջ յեղանակը, նույնպէս և բառասկզբի այս յ=հ արտասանութիւնը կարգալիս, գրաբար բառերի և գրութեան հետ, հասցնում է և մեր նոր գրական լեզվին և աշխարհաբարին:

Ահա թե ինչպիսի ծագում ունի բառասկզբի յ=հ արտասանութիւնը մեր նոր գրական-դպրոցական լեզվի մեջ: Գա վոչ թե այս կամ այն բարբառից է ծագում, այլ գրաբարի կարգալու յեղանակից: Գրաբարից վորտ առած յ-ով սկսվող բաղադրիչ լոկ գրական բառերը՝ յաճախ, յադենալ, յապագել, յանգ, յարկ, յորելեան և այլն, վորոնք չկան բարբառների մեջ, նույն ձևով գրվելով՝ աշխարհաբարում չեյին կարող այլ կերպ կարգացվել, քան գրաբարում: Այս կամ այն բարբառի մեջ, արդարեւ, կան սակավաթիվ բառեր, վորոնց սկզբի յ-ն դուրս է բնկել, ինչպէս՝ ախաել (յաղթել), արդ (յարդ), անկարծակի, իսուն (իցցուն), իստակ (հստակ), իշել, իշատակ, օրանջել, տջող, գուցե և միջանի ուրիշները. բայց այդ բառերը բարբառներից չեն մտած մեր նոր գրական լեզվի մեջ, այլ գրաբարից, ուստի և գրանց համար պահված է գրաբարի յ-ով գրութիւնը՝ յաղթել, յիշել, յարդ և այլն, հետևաբար և յ=հ կարգալու յեղանակը: Յաջող, յառաջ բառերը,



գուցե ե մի յերկու ուրիշը վերջին տասնամյակներում միայն գրում են ավելի առանց յ-ի, բայց և այնպես դեռ ավելի անյաջող, քան անաջող: Մի յերկու բառ ել, ինչպես յեա (դառնալ) արտասանվում են թե յ=ն ձայնափոխությամբ իբրև հեռ (դառնալ) և թե սկզբնական ձևով yet. ուստի ուղղագրության սեփորմից առաջ գրում եյին կամ յեա (դառնալ) և կարգում եյին հեռ, կամ եա (դառնալ) և կարգում եյին yet. իսկ այժմ առաջին տեսակ արտասանողները նոր ուղղագրությամբ գրում են հեռ դառնալ, իսկ յերկրորդ տեսակ արտասանողները՝ յեա (=yet):

Այսպես, ուրեմն, ինչպես յ-ով սկսվող բառերն իրենց գոյությամբ, նույնպես և յ=հ արտասանությունը վոչ թե արվեստականորեն և մտքած մեր նոր գրական-դպրոցական լեզվի մեջ, այլ դա մի ժառանգությունն է՝ մնացած հին գրական լեզվից: Այդ բառերը չեյին կարող յերրեք արտասանվել դրաբարում, վորից և նոր գրական լեզվի մեջ, նայեցե՛ք հազաքսով, վորովհետև այս հնչյունը չկար հին լեզվի մեջ, չկա նաև բարբառների մեջ, բացի Մշո և Կարնո բարբառներից: Այս ձայնեղ հազաքս, իբրև մի տեղական հնչյուն, ոտար և անծանոթ է հայության ամենամեծ մասին:

Բայց չնայելով դրան...

Ս. Մ.-ը, «գործնական տեսակետից» քննելով նոր ուղղագրությունը, հարկավ չի մոռանում այս տեսակետը և մի շատ «գործնական» առաջարկ է անում:

Յ-ով սկսվող բառերի «այժմյան (յ-ով) ուղղագրությունը յուրացնելը այնքան ել դժվար չէ, մանավանդ յերբ ուսուցիչները հոգ առնեն յեյեթաներին ուղիղ արտասանությունը ցույց ապու (ընդգծումը հեղինակինն է), և վոչ թե, ինչպես մինչև այժմ լինումե, իրենք պատվաստեն աշակերտների մեջ հ-ով արտասանությունը»:

Իրտեք ինչ է առաջարկում նա:—Շատ պարզ բան: Հայոց ազգի մեջ, ամեն տեղ, ուսուցչության իրավունքը մենաշնորհ դարձնել շիրակեցիների, ալաշկերտցիների, ու ախալքալաքցիների, իր հայրենակից խալցեդոնացիների, ապարանցիների ու մեկ ել նոր Բայազետի գավառի 21 գյուղացիների համար: Իբրևք պետք է բոլոր կողմերի հայերին ուսուցիչներ մատակարարեն և Հայաստանում, և Հայաստանից դուրս ամեն տեղ: Այլպես ել ինչպես կարելի յե գործադրել Ս. Մ.-ի սեցեպտը յ-ի «ուղիղ» արտասանության նկատմամբ այնպիսի ուսուցիչների միջոցով, վորոնք անծանոթ են այդ ձայնեղ հազաքսին: Դհուրս, ուրեմն, ուսուցչությունից բոլոր արևելյան բարբառների մարդիկ: Բոլոր խոյեցիներ ու սալմաստցիներ, կ-պոլսեցիներ, զարաբաղցիներ և առհասարակ բոլոր բարբառների մարդիկ, վորոնք չգիտեն, թե ինչ է այդ ձայնեղ հազաքս:

Յերևակայեցեք, թե այդ մենաշնորհը տրվեց Կարնո և Մշո բարբառների մարդկանց, բայց արդյոք համոզված է Ս. Մ.-ը, վոր դրանք կկարողանան ամեն տեղ հայ ազգի մեջ «պատվաստել» այդ «ուղիղ, գեղեցիկ, փափուկ արտասանությունը», այն ել բնականորեն և վոչ «արվեստականորեն»: Կարելի յե, գուցե, հարցնել Ս. Մ.-ին, թե արդյոք ինքը, վոր մանկությունից դիտե այդ «ժողովրդական հնչյունը», յերբեիցե փորձել է գործադրել իր առաջարկը, և ինչ աշոյություն է ունեցել իր յերեմանամյա ուսուցչության շրջանում իր հավլաբարցի աշակերտների վերաբերմամբ. չե՞ վոր ինքը շատ լավ և տարբեր կերպով արտասանում է «յար և հար, յօնք

ե հօնք և այլ բառերի մեջ յ ի և հ-ի հնչյունները: Դե ասացեք հիմա հավ-  
լաբարցիներն ել բախասովոր են ելի, և չեն զրկվիլ հայ աղգի մեջ ուսուց-  
չութիւնն անելու մենաշնորհից:

Կներեն ընթերցողները, վոր այստեղ անեմ «հաչաղակ» կոչված լու-  
սանդիւի Հովհաննես յեպիսկոպոսի պատմութիւնը, վոր յեղեղութիւնն եւ Դա  
մի ծեր, կորաքամակ մարդ եր, բարակ ու սուր ձայնով: Չեմ հիշում, թե  
վորաեղացի յեր, բայց Եջմիածնի վանքի յեկեղեցում աղոթքներն ասելիս  
շատ լավ արտասանում եր յերկարաբառային ուսուց (ու) և ե=քե (ե) հըն-  
չյունները: Դե որդ Դ. կաթուղիկոսը շատ եր հավանել նրա արտասանութիւնը,  
և վորովհետեւ կարծում եր, թե այդ յեպիսկոպոսը եւ և ու տառերի համար  
ունի 5-րդ դարի հին արտասանութիւնը, ուստի 1879 թ. նրան կարգեց  
Եջմիածնի ճեմարանում արտակարգ ուսուցիչ ուսմանուստի արտասանու-  
թյան, վորպեսզի աշակերտների մեջ պատվաստի այդ «ուսմանուստի»  
արտասանութիւնը: Յեկավ նա. ասում եր մեզ. «Ասեք՝ ունդորմուհղ»: աշա-  
կերտներն ասում էին՝ «վորմուհղ»:—Չ ի եղավ. մին ել ասեք՝ ունդորմու-  
հղ:—Աշակերտներն այս անգամ՝ ունդորմուհղ:—Եղ թնչ եք ասում, քանոն-  
դաջներ. ունդորմուհղ չի,—ունդորմուհղ:—Աշակերտներն ասում էին՝ «օղորմուհղ»  
Յեվ այսպես չարհարվեց խեղճ ծերունին յերեք որ միայն, ու հեռացավ,  
«ուսմանուստի» արտասանութիւնն ել հեռը տարավ: Աշակերտներին մեջ  
մի հիշատակ ֆնաց. «քանոնդաջներ, կաչաղակը թուով», մեկ ել՝ մեր սովո-  
բական «վորմուհղ» արտասանութիւնը:

Չի վախենում արդոք Ս. Մ.-ը, վոր իր բարբառակից ուսուցիչներն  
եւ «քանոնդաջ» աշակերտների հանդիպեն և «հաչաղակ» Հովհաննես յե-  
պիսկոպոսի պես թոչեն՝ առանց սովորեցնելու յ-ի կարծեցյալ «ուղիղ», «գե-  
ղեցիկ» արտասանութիւնը: Յեվ մարդ հասկանա, թե ինչի համար ե կա-  
մենում Ս. Մ.-ը կատարել «այս բանութիւնը»՝ պատվաստելու մի հնչյուն,  
վոր չի յեղել մեր հին լեզվի մեջ, չկա նոր դրական լեզվի մեջ, չկա և բար-  
բառների ամենամեծ մասի մեջ, մի հնչյուն, վորի համար նույնիսկ տառ  
չկա: Ասենք, այդ առաջարկն անողն ինքն ել գիտե, վոր այդ դուռն գալու  
բան չե: Նա այդ ասում և միայն նրա համար, վոր ուղղագրութիւնն ու  
ֆորմի ժամանակ մեր յ տառը պահենք յերկու տարբեր հնչյունի համար,  
մեկ՝ իր բուն բաղաձայնական ի հնչյունի համար, մեկ ել՝ բառասկզբի  
հազարի համար, վորպեսզի նախ՝ մեր աշակերտները «գործնական տեսակե-  
տով» միշտ դործ ունենան անելու և չզրկվեն յ-ով սկսվող բառերն անգիր  
անելու կարևոր աշխատանքից... և ապա՝ ինքը Ս. Մ.-ը չզրկի...

Թե չե՛ յեթե յ-ի փոխանակ ե գրվի, այն ժամանակ լինչ պետք ե անի  
այն ընթերցողը, վոր ժողովրդական հնչյունով (այսինքն՝ Մշո և Կարնո  
բարբառների ձայնեղ հագագով) ե արտասանում յ-ով սկսվող բառերը,—  
'ափշտակել, 'անկարծ ե այլն» (այսպիսի ձեով և գրում ինքը Ս. Մ.-ը): Յեվ  
պատասխանում ե ինքն իր հարցին. «Նա ստիպված պետք ե լինի ամեն  
անգամ զգվաճեով կորգուր հ-ով գրութիւնը—հափշտակել, հանկարծ,  
հոտնկայա»: Ս. Մ.-ը չգիտե, վոր իր զգվաճեղ դեռ վոչինչ չի ասում. յե-  
թե նա զգվում ե մեր ամբողջ լեզվի մեջ գոյութիւն ունեցող ե հնչյունից,  
ուրիշներն ել կարող են այդ դուռ տեղական հնչյունից, անձայն հագագից  
զգվել, և կան զգվողներ: Մի որ Յերվանդ Լալայանն այդ հնչյունի համար  
այս բառերով արտահայտվեց. «Այդ զգվելի վոչխարային ձայնը:—Դե հիմա

վորի զղվանքն և համոզիչ, Ս. Մալխասյանցթ, վորի մայրենի բարբառի մեջ, յերևի, կա այդ հնչյունը, թէ Յեր. Լալայանի, վորի մայրենի բարբառի մեջ գրտեմ վոր կա այդ հնչյունը: Այս տողերը կարգացողների ամենամեծ մասը, հարկավ, գաղափար չունի Ս. Մ.-ի այդ սիրեցյալ հնչյունի մասին և չի կարող իմանալ, թե արդյոք Լալայանն և ճիշտ բնորոշել այդ անծանոթ հնչյունը, թէ Ս. Մ.-ը: Բայց մենք շարունակենք Ս. Մ.-ի սուգը.

«Բայց ինչպես պետք է վարվեն այն ուսուցիչները կամ գրողները, վորոնք բառասկզբի Յ-ն չեն արտասանում ինչպես Ե... Պատասխանը պարզ է—նրանք պետք է ստիպված լինեն իրենց ուղիղ, գեղեցիկ, փոփուկ արտասանությունը փոխել և յուրացնել արվեստակա՞ն, սխալ արտասանությունը:—

Սեղճ ուսուցիչներ ու գրողներ, վորոնց թիվը լեզեոնն է. իսկպես ծանր և նրանց վիճակը—թողնել իրենց տեղական արտասանությունը և յուրացնել ընդհանուր տարածվածը, հրաժարվել այն հին գիտնական առասպելից, թե ձայնող հագագը Յ-ի հնչյունն է, «ուղիղ» հնչյունը... այդ նրանց համար սուկալի հարված կլինի:

«Բայց վորեւ լեզվի մեջ տեսնված բանն է, վոր ուղղագրությունը բռնադրոսն խոսողի արտասանությունը, ստիպել նրան թողնել իր բնական, գեղեցիկ ու կանոնավոր արտասանությունը և յուրացնել արվեստականը, տգեղն ու անկանոնը»,—հարցնում է Ս. Մ.-ը, վշտահար սրտով ցավելով, վոր «հափշտակել» գրությամբ պետք է կորչի «հափշտակել» արտասանությունը: Բայց միևնույն Ս. Մ.-ը քիչ հետո ուրիշ առթիվ գրում է. «Յես համոզված եմ, վոր այդ միկրոֆոնական ուղղագրությունը (գնացել եմ և գնալու յեմ) չի ազդի խոսող մարդու վրա. է-ով արտասանողը կշարունակե արտասանել ըստ իր սովորության, Ե-ով արտասանողն էլ նույնպես»:—Թող համոզված լինեն, ուրեմն, նաև մյուս ախալցխացի ու ապարանցի ուսուցիչներն ու գրողները, վոր «հափշտակել» գրությունը չի ազդի իրենց բնական «հափշտակել» արտասանության վրա, և իրենք կշարունակեն արտասանել «հափշտակել»: Յեվ իսկպես, Ս. Մ.-ն էլ գրտե, վոր 1500 տարուց ի վեր գրում ենք՝ մարգ, ոս, յազիկ և այլն, բայց այս ուղղագրությունը իսկի չի բռնադրոսել և չի բռնադրոսում խոսողի արտասանությունը, և նա կարդալիս արտասանում է՝ մարք, վոս, ախչիկ, կամ ախնիկ: Բայց միևնույն Ս. Մ.-ը չի կարողանում «հափշտակել» տեսնել և «հափշտակել» կարդալ: Չէ վոր Ե տառը, դա ուրիշ բանն է, գրա տեսողական զգալությունն այնքան զորեղ է, վոր խեղդում է խոսողի մկանային շարժման մտապատկերը և թույլ չի տալիս նրան արտասանել ձայնող Յ հագագը... և խոսողը կորցնում է իր բնական» արտասանությունը: Ի՞նչ հանելուկներ են սրանք: Ինչ՞ու կարող ենք մարգ—mard գրել, և մարք—marth կարդալ, կարող ենք բարի գրել, և յերեանցին կարող է բարի արտասանել, իսկ յերբ հափշտակել ենք գրում, Ս. Մ.-ն այլևս չի կարողանում 'ափշտակել—արտասանել. բայց յերբ գրում ենք յափշտակել—չափշտակել, ըստ Ս. Մ.-ի իափշտակել—իափշտակել, դարձյալ նա կարողանում է արտասանել 'ափշտակել: Չէ վոր վոչ հափշտակել և վոչ էլ յափշտակել գրությունները չեն արտահայտում 'ափշտակել արտասանությունը:

Թող հանգիստ մնա Ս. Մ.-ը, յեթե 'ափշտակել արտասանությունը բնականն է նրա համար, հափշտակել գրությունը յերբեք չի բռնադրոսիլ

նրա 'ափշտակել արտասանությունը խոսելիս: Բայց այդպիսի գրությունը գպրոցը կազաաի ափելորդ ուղղագրական նեղությունից. վորովհետև հագագային հնչյունի համար միայն մեկ է աաան ունենք և ամեն անգամ ել հագագային հնչյունը՝ լինի ձայնեղ թե այնձայն, գրելիս այգ մի տառով կարտահայալի, իսկ կարդալիս մենք կարտասանենք անձայն հագագով, իսկ Մ. Մ.-ի բարբառակիցները՝ ձայնեղ հագագով (յեթե այս և ընականը նրանց համար), ճիշտ ինչպես սենեակ (= սենյակ) և այլն գրությունները մենք արտասանում ենք բագաձայնական Խ-ով իրրև seniak, իսկ ուրիշներն, ինչպես տեսանք, արտասանում են նույնիսկ շփական յ-ով՝ senjak,—և այս՝ վոչոքի համար վոչ մի ուղղագրական դժվարություն չի պատճառում: Այս և այս ինդրի բանական լուծումը, և դրանով նույնիսկ բավարարություն արված կլինի մշեցիների ու կարնեցի տեղական հնչյունասիրությանը: Թե չե՛ անհեթեթություն և ասել, թե չ աաաը պետք և պահել մեկ՝ իր- բուն կիստձայն ի կամ ջ հնչյունի համար (ձայն, գոյական), մեկ ել՝ բարբառային ձայնեղ չ հագագի համար. և վորովհետև հայ ազգի մեջ միայն Մշո և Կարնո բարբառի մարդիկը գիտեն, թե ինչ և այդ ձայնեղ հագագը, ուստի ուսուցչությունը պիտի դարձնենք դրանց միջնորդը, վորպետքի ճոգ տանն ենն յերեխաներին ուղիղ (այսինքն ձայնեղ հագագով) արտասանությունը ցույց տալու... և մոռացնել տալու ընդհանուր տարածված արտասանությունը անձայն հագագով:

Ահն թե ուր և հասցնում տեղական հնչյունասիրությունը, Դա վոչ միայն իրենը ճուղիդ» և կարծել տալիս, այլև ուզում և այդ կարծեցյալ ճուղիդը» բունի կերպով մտցնել հայ ազգի մեջ: Բայց դա մի ցնորք և միայն: Գրական-գպրոցական լեզուն ունի իր յ=հ արտասանությունը, և այդ արտասանության հիման վրա մենք ուղղագրության սեփորմը կանենք գրելով՝ հատակ, հարմար, հափշտակել՝ առանց ուշադրություն դարձնելու, թե Կարնո կամ Մշո բարբառների մեջ ինչպես են արտասանում միջանի այս կամ այն բառերը: Գրական լեզվի ուղղագրությունը պետք և բավարություն տա գրական-գպրոցական արտասանությանը և չի կարող միշտ միաժամանակ բավարարություն տալ, նաև և այս և այն բարբառին: Յեթե Մ. Մ.-ի պես մտածելու լինեյինք, մենք այժմ շատ բան պետք և գրաբարի ձևով գրեյինք, վորովհետև բարբառների մեջ տարբեր կերպով են արտասանում: Որինակ, անցյալ դերբայը, դիցուք, հին մեծալ ես ձևը քանիքանի տեսակ են արտասանում բարբառների մեջ՝ մտել ես, մտել աս, մտալ ըս, մտիեր իս, մտիլ իս, մտեր ես, մտեր իս, մտիր իս, մտիր ես և այլն: Բայց Մ. Մ.-ը գրում և մեղ ես ու չի բողոքում, թե պետք և պահվի հին մեծալ ես գրությունը, վորովհետև ճայդպիսի բառերը ժողովուրդն արտասանում և ամեն մեկն ըստ իր դավառի արտասանության, այն ինչ յեթե Խ-ով (մտել) գրելու լինենք, բոլորն ել ստիպված պետք և լինեն Խ-ով արտասանել, այսինքն վորոշ դավառների ժողովրդական արտասանությունը պետք և բանազատվի իրան ոտար մի հնչյուն ընդունելու: Անթուլյատրելի յե այդպիսի դավառների փափուկ ու ճիշտ արտասանությունը զոհ բերել ուրիշների նորամուլծ և տգեղ արտասանությանը: Բայց այս չի ասում Մ. Մ.-ը, նա հանգիստ գրում և՛ մեղ ես, և հագարավոր ուրիշ բառեր վորփոխված ուղղագրությամբ, առանց ուշադրություն դարձնելու, թե դրանով բանադատում են դավառական արտասանությունները: Իսկ յերբ ինդիրը

գալիս և բառասկզբի հին  $\text{յ}=\text{յ}$  գրությունը գրական արտասանութեան համեմատ հով գրելուն, այստեղ արդեն վերևի բողոքը մեջ և գալիս և իբրև հիմք ծառայեցվում, թե պետք և պահել հին յարմար= $\text{յարմար}$  գրությունը: Այդ հիմքը, սակայն, մեզ համար, հարկավ, նույնքան արժեք ունի յարմար= $\text{հարմար}$  գրութեան նկատմամբ, վորքան և մտեալ ես= $\text{մտել}$  ես գրութեան: Յեւ վորքան Ս. Մ.-ը կարող և նոր ճոնել ես գրությունը շուռ տալ հին մտեալ ես գրութեանը, վորպետի վորոշ գավառների տեղական արտասանությունը չբռնադատվի, նույնքան ել նա կարող և նույն նպատակով նոր հարմար գրությունը շուռ տալ հին յարմար= $\text{յարմար}$  գրութեանը:

Բայց այս համեմատությունը դեռ ճիշտ չե. վորովհետև հին մտեալ= $\text{մտել}$ , մտալ, մտիլ, մտեր, մտի, մտի ձևերն իրենց մեջ ունեն հազարավոր բայերի շատ գործածական անցյալ դերբայները, իսկ քանի՞ բարբառներ ունեն ձայնեղ չ հագագը, և այդ բարբառների մեջ յով սկսվող քանի՞ բարբառային բառերի սկզբում և յերևան գալիս այդ  $\text{յ}=\text{յ}$  հնչյունը: Յես հավատում եմ, վոր Ս. Մ.-ը այդ և հար, յօնք և հօնք գրությունները տարբեր արտասանել գիտե, բայց պնդում եմ, վոր նա այդ բառերի տարբեր արտասանությունները արվեստականորեն և յուրացրել և պատվաստել իր մեջ և վոչ թե յերեսա հասակից իր մայրենի բարբառից յուրացրել: Կարծիք և նա արդոք ապացուցել, վոր Ախալցխայի բարբառի մեջ կան հին լեզվի յով սկսվող բառերն իբրև բուն ժողովրդական բառեր (և վոչ իբրև գրական փոխառություններ) իրենց սկզբի  $\text{յ}=\text{յ}$  ձայնեղ հագագով, և ինքն այդ բարբառից և սովորել այդ յով բառերը տարբեր արտասանութեամբ: Կան այդ բարբառի մեջ, որինակ հենց՝ յար, յօնք (այսպես և վոչ՝ վոնք), յափշտակել, յօշոտել, յապաղել, յամել, յապավել, յածել, յագենալ, յակիթ, յամուլը, յաճախ, յամառ, յամրաքայլ, յայբատ, յանդիմանել, յառել, յաչազանք, յարդարել, յարկ, յավերժ, յղկել, յղփություն, յոգնակի, յորելեան, յօդ, յախուռըն, յոխորտալ, յորձանք, յովաղ և յով սկսվող ուրիշ շատ բառեր, վորոնք այդ բարբառի մեջ ապրելիս լինելին իբրև բուն բարբառային բառեր իրենց սկզբի  $\text{յ}=\text{յ}$  ձայնեղ հագագով: Յես դարձյալ պնդում եմ, վոր ինչպես ուրիշ բարբառների մեջ, նույնպես և Կարնո բարբառի մեջ, յով սկսվող բառերը, սակավ բացառութեամբ, սեռել եմ, և կենդանի մնացածներից կամ սկզբի յ-ն գուրս և ընկել, և կամ գուցե մի 10—15 բառ միայն ունենան սկզբի  $\text{յ}=\text{յ}$  ձայնեղ հագագով արտասանությունը: Յեւ սգալ մեկ ու կես տասնյակ բառերի տեղական արտասանութեան համար... Նա վոր այդքան սիրահար և պաշտպան և այդ տեղական հնչյունին, թող նեղություն կրի լրջորեն ցույց տալու, թե քանի այդպիսի բառեր կան իր մայրենի բարբառի մեջ: Դա, իհարկե արժեք չի ունենալ ուղղագրութեան աեֆորմի տեսակետից, բայց կարևոր կլինի լեզվի զարգացման պատմութեան համար, և մեկ ել, մանկավարժական տեսակետով. որինակ, Ախալցխայում աշխատող ուսուցիչը կիմանա, թե քանի բառի տեղական  $\text{յ}=\text{յ}$  ձայնեղ հագագով արտասանությունը պետք և աշխատի մոռանալ տալ ախալցխացի յերեսաներին և պատմաստի նրանց մեջ հով արտասանությունը, այսինքն ընդհանուր գրական արտասանությունը:

Ս. Մ.-ի շղթանքը՝ հիմա չափ ու ռահմանից անցավ իմ այս խոսքի վրա—իզուր. վորովհետև հենց այդ և նպատակը ամեն գրական-դպրոցական լեզվի, վոր գրի ու դպրոցի միջոցով պետք և ազգի բոլոր բարբառներ

րի վրա և սովորեցնել տարբեր բարրառաններով խոսող մարդկանց միակերպ խոսել, միակերպ արտասանել: Նա պետք է բարբառաները մոտեցնի իրեն և վերջիվերջո, աջող դեպքում, իշխի բոլոր բարբառաների վրա և բարբառաների միացում առաջ բերի, և ինքը դառնա ընդհանուր լեզու: Այս է դրական-դպրոցական լեզվի գլխավոր նպատակը, և սրան պիտի ձգտի դպրոցը: Իսկ այս նպատակին հասնում է գրական լեզուն ամենից առաջ միակերպ արտասանութան շնորհիվ: Յեւ Ս. Մ.-ն էլ դպրոցում, հարկավ, թույլ չեր տալիս, վոր իր թիֆլիսցի աշակերտները այս խոսքերը ճորդի, թագաւորը որ շատ ծերանում է... կարգային կամ խոսելիս արտասանելին՝ «վորթի, թաքաուրը վուբ շատ ծիրանում է»: Նույնպես էլ Ախալցխայում ուսուցիչը չպիտի թույլ տա, վոր աշակերտները տեղական յ=չ ձայնից հագագով արտասանեն միքանի բառերը, յեթե վոր այդպիսիները կան տեղի բարբառի մեջ: Այսպես և ամեն կողմում, ամեն տեղական հնչյունների նկատմամբ: Գրական-դպրոցական լեզուն իր արտասանութամբ պիտի իշխե, հենց վոր դրականութունն ու դպրոցը մտնում է մի տեղ: Յես ուսուցիչներ գիտեմ և ճանաչում եմ, վորոնք մանկութան ժամանակ Կորնո կամ Մշո բարբառով են խոսել, բայց այժմ մտքներով անգամ չի տնցնում կարգալիս կամ խոսելիս յ=չ ձայնից հագագով արտասանել, և նրանք բնավ չեն էլ շղթավում» հափշտակել, հավերժական, հոտնկայս, հապաղել և նման բառերը Խ-ով արտասանելուց: Յեւ ինչո՞ւ պետք է շղթային: Այդ և նման բառերը գոյութուն չունեն նրանց մայրենի բարբառաների մեջ. նրանք դպրոցում են սովորել այդ բառերը, և սովորել են բնականորեն այնպես արտասանել, ինչպես դպրոցում ամեն տեղ արտասանում են: Իսկ Ս. Մ.-ը միքանի բառի իր տեղական հնչյունասիրութամբ այնքան տարվում է, վոր նույնիսկ կարծում է թե «հոտնկայս», «հավերժական» և այլն արտասանութամբ գործադրվում և բռնութուն ժողովրդական արտասանութան վրա», իբրև թե «ժողովրդի» մեջ, այսինքն Մշո կամ Կարնո բարբառներում, կան այդ բառերը յ=չ ձայնից հագագով, և այդ բարբառաների մարդկանց բռնութամբ ստիպում են թողնել իրենց «ուղիղ» արտասանութունը և «սխալը» սովորել: Բառերը գոյութուն չունեն այդ բարբառաների մեջ, իսկ այդ գոյութուն չունեցող բառերի սկզբի յ-ն ըստ Ս. Մ.-ի գոյութուն ունի և այդ սկզբի յ-ի արտասանութունը բռնադատվում է:

Յեւ յերևակայեցեք, վորպեսզի այդ բռնադատութունը չլինի, և ինքը շղթայի, նա մի լավ միջոց է գտել: Նա յակինթ, յաճախ, յամույր, յանգ և այլն, ավելի քան 30 յ-ով սկսվող բառերի սկզբի յ-երը «առանց վորև թյուրիմացութան» դեն է ձգում և մեզ էլ առաջարկում, վոր գրենք՝ ալինթ, աճախ, ամույր, անգ, արձակվել (այսինքն՝ հարձակվել), ավերժական և այլն: Ափսոս այդ «փափուկ», «գեղեցիկ» և «ուղիղ» յ-երը: Բայց վորև լեզվի մեջ տեսնված բան է, վոր մեկը քմահաճորեն ավելի քան 30 բառերի սկզբի հնչյունները դուրս ձգի: Ասում են՝ «աճախ ունվարին, ունիսին և ուլիսին անդուզն կերպով ոխորտալով, արձակվում են սիրելիի վրա, փրշտակում են նրան և ոշոտում մի ավերժական թյուրիմացութամբ, բայց ազենալուց ետո ոգոց են հանում»... Շատ սիրելուցն է, ուրեմն: «Յեւ հանուն ինչի՞ կատարվում է այս բռնութունը» մեր ամենքիս, նույնիսկ իրեն Ս. Մ.-ի արտասանութան վրա: Մինչդեռ յես դժվարանում եմ լեզվի մեջ կրկին առասանուրյուն յեւ կրկին գրութուն ունեցող վորոշ թվով բա-

ոճրի յերկու տարբեր ձևերի մեջ ընտրութիւնն տնել և ասում եմ միայն, թե հաճախ բաւասկզբի չ տառը նաև դուքս ե ընկնումս, և թե ապա բա-  
 ուերը կտուելի յե առանց սկզբի ե տառի ևս գրել՝ ախճապակի, ախուռն, աղ-  
 րի, ամպար, այրատ, աչաղանք, ապավել, աշոգ, արգոս, ինչպես վոր դըր-  
 վում ել են, — Ս. Մ. -ը ուղղագրութեան սեփորմը վարկաբեկելու նպատակով  
 այդ գրութիւնները, վոր նոր չեն, իմ մտքրածը չեն, բացառութիւնս ե  
 համարում, բայց և միաժամանակ բարկանալով, վոր մեր լեզուն բոլոր բա-  
 ուերի սկզբի յ-երը դուքս չի ձգել, ինքը կացինն առնելով ուղղակի գլխա-  
 տում ե յ-ով սկսվող այնպիսի բառերը, վորոնք յերբեք առանց յ-ի չեն  
 արտասանվիլ և գրվիլ և վորոնք զգլում են, վոր մեռած տեղից հարութիւն  
 են առել... Յեզ ինչի միայն ավելի քան 30 այդպիսի բառի դեմ միայն  
 թշնամութիւնն անել և չգլխատել նաև բոլոր չ-ով սկսվող բառերը. և ինչի  
 «զգվելիս» ե-ով սկսվող բառերն ել չգլխատվեն, չի վոր դրանց համար ել  
 «որինակներ» կան՝ հավատալ—ավատալ, համբարձում—ամբարձում, հաճար  
 —աճար:

Իգեպս. Ս. Մ. -ն ինչպիսի ե առաջարկում կարդալ իր գլխատած բառե-  
 րից մի յերկուսը՝ ոգոց հանել, օխորտալ: Կարող են դրանք չկարդացվել՝  
 վորոց հանել, վխորտալ. թի վարպեսգի այսպիսի չկարդացվեն, պետք ե  
 գրել՝ օգոց հանել, օխորտալ:

Ս. Մ. -ը մի բան ել ե ասում, վոր կարող ե մի բոլոր մուրեցնել ան-  
 տեղյակներին:

«Բարեփոխված բառերի ցուցակում ղետեղված ե և հոտնկայս (այ-  
 օինքն՝ յ-տոտն-տկայ-տս, վտաքի վրա կանգնած): Սրա հետեղութեամբ ու-  
 րեմն պետք ե այսուհետև գրենք ու արտասանենք՝ ցուցակում չբերված այս  
 բառերն ել. համենայն դեպս, հոգուտ (=յօգուտ), հանպատրաստից, հակա-  
 մայից, հանուն մեր բարեկամութեան և այլն, վորոնց մեջ ե տառը փոխա-  
 րինելու յե չ նախդիրը»:

Այն, հենց այդպիս. ճիշտ ե հասկացել Ս. Մ. -ը: Բայց նա իզուր յե-  
 րեակայում ե, թե ինքը դեռ գրաբարի ուսուցիչ ե և աշակերտներին սովո-  
 րեցնում ե չ նախդիրը՝ գրատախտակի վրա գրելով և բացատրելով «յոտըն-  
 կայս» բառի կազմութիւնը: Անշուշտ, դժվար ե ուսուցն սկսել գրաբարով,  
 շարունակ գրաբար գրել ու կարգալ և 30 տարի գրաբար սովորեցնել և  
 հանկարծ տեսնել՝ հոտնկայս, հոգուտ, հանուն գրութիւնները: Բայց այդ-  
 պես միայն գրաբարագետ մարդկանց համար. իսկ մեզ նմանները, վոր  
 գրաբար չեն սովորել, յերբ այժմ Յերեանի Արոյան փողոցում պատերի  
 վրա հաճախ տեսնում ենք «հոգուտ» բառը, յերբեք ել չենք ըմբոստանում  
 դրա դեմ և այդպիսի՝ արտասանութեան համեմատ գրելը շատ ել բնական  
 ենք գտնում:

Մի ժամանակ մեր լրագրներում շատ գործածական եր Ավետարանի  
 այս խոսքը. «Ձայն բարբառոյ յանապատի»: 1921 թ. ամառը յես առիթ ու-  
 նեցա Ռազմական Ժող. կոմիսարի շտաբում կարդալու Ղամարլուից յեկած  
 մի գանգատ, վորի մեջ գրած եր՝ «Մեր խօսքը մնում է ձայն բարբառօ հա-  
 նապատի»: Այդ գանգատը գրողն, անշուշտ, շատ անգամ եր կարդացած այդ  
 խոսքը ճիշտ գրաբար գրութեամբ. բայց ինչ ե կարծում Ս. Մ. -ը, ինչի  
 գրված եր բարբառօ»: — Շատ հասկանալի յե, կպատասխանի Ս. Մ. -ը.  
 վորովհետև բարբառոյ» բառի վերջի չ-ն անձայն ե մնում և դուքս պիտի

ձգվի, յես ել համաձայն եմ զրան. իսկ ա և օ արտասանությամբ նույնսնման են, և յես առաջարկում եմ բառերի վերջում ա-ի փոխանակ օ գրել. ուրեմն այն մարդը շատ ուղիղ և գրել բարբառօ:—Բայց այն ժողովրդի մարդը գրել եր նաև «հանապատի»: Ս. Մ.-ը զրան պատասխանում ե.—Այն, այդ ժողովրդի մարդը բանեցրել և հակաժողովրդական սխալ ուղղագրությունն, վորովհետև նրա մեջ «պատվաստել են» հ-ով սխալ արտասանությունն: Բավական էր միայն, վոր այդ դամարուեցուն, վորի բարբառի մեջ չկա յ=ձ ձայնից հազազը, այսինչ տային ուղիղ արտասանությունը» և մեկ ել՝ ասելին, թե յ-ն նախդիր և, այդ «հակաժողովրդական» սխալն այլևս չեր լինիլ, և այն դամարուեցին կգրեր մեր նախնիքների սրբազան, վոր և բուն ժողովրդական ուղղագրությամբ «յանապատի»:

Ս. Մ.-ը, յերևի, չգիտե, վոր յ նախդիրը գոյությունն չունի մեր նոր լեզվի մեջ, և «յոսնկայս, յօգուտ, յանուն» և այլն բառերը զբարբարից տուած պատրաստի քարացած բառեր են միայն, մակըայ կամ նույնիսկ նախադրություն դարձած, և ով վոր զբարբար չգիտե, նրա համար այդ բառերի սկզբի յ=հ հնչյունը վոչնչից վոչինչ չի ասում նրան: Մի անգամ վոր յ-ն իբրև նախդիր գոյությունն չունի նոր լեզվի մեջ, ել ինչո՞ւ չպիտի ընդունվի յ=հ գրությունը:

Բայց յ նախդիրը, ինչպես կարող և ըստ ասող փոխարինել յ նախդիրը, այ դամարուեցի «հակաժողովրդական» գանգատ գրող: Յ նախդիրը կարող և հնչափոխությամբ մեռնել ու կորչել և գրությունից դուրս ընկնել (յաջող—աջող, յառաջ—առաջ), կարող և նաև կաջնով գլխատվել ու գե՛ն ձգվել (յարձակվել—արձակվել), բայց իրավունք չունի ու դառնալու և և գրվելու, վորովհետև դա նախդիր և:

Բայց մի հարց Ս. Մ.-ին: Ինչպես և յեղել, վոր մեր նախնիքը գրել են՝ ի քաղաք, բայց յաւաճ, ի վճաս, բայց յագուտ: Այդ ինչպես և յեղել, վոր թույլատրվել և յ տառին փոխարինել ի նախդիրը: Ինչ ապորինի ծընունդ և, ուրեմն, հենց ինքն այդ յ նախդիրը: Ինչ իրավունքով դա գրվել և ի նախդիր տեղ:—Այդ կարելի յ. յերբ կենդանի ի նախդիրը հաջորդ ձայնավորից առաջ դառնում եր յ, կարող եր յ տառով ել գրվել և գրվել և. բայց յերբ մեռած քարացած յ նախդիրն ինքն և գարձել և, դա չի կարող և տառով գրվել, վորովհետև մեր պապերի լեզվի մեջ դա նախդիր և յեղել:

Բայց մի ուրիշ հարց ել Ս. Մ.-ին: Արդյոք միայն մեռած յ նախդիրն և նա իրավունք տալիս, վոր իր գրությամբ Էանչարժ եղիցի մինչ ի գուտստն Գրիստոսի, թե՛ նաև մյուս մեռած նախդիրներին:—Ս. Մ.-ը պատասխանում է՝ միայն յ նախդիրն. մյուսները զրկված են այդ իրավունքից: Յե՛վ այդ պատճառով նա հանգիստ սրտով գրում է՝ ըմբերանել, ընկճել, ըմբռնել, սքողել, սփածանել և նմանները և յերբեք չի մտածում՝ զրանց սկզբնական ձևի վրա՝ ընդ-բերանել, ընդ-դճել, ընդ-բռնել, գ-քողել գ-փածանել:—Յ նախդիրը, դա մի ուրիշ բան, դա բոլոր նախդիրների մեջ մի արտոնադիր ազնվական և, ուստի մեռած տեղն ել այնպես պիտի գրվի, վոր յերևա զրա պատմական ազնիվ ծագումը...

«Մեր նախնիքը, առանց յերկար ու խոր մտածելու, հետեւել են այս պարզ մեթոդին. թե բառը պետք և գրել այնպես, ինչպես հնչվում և, և պետք և հնչել այնպես, ինչպես գրվում և. այս սկզբունքին հետեւելով՝ առաջ գրում եյին Էաննել, յերբ այդպես ել արտասանում եյին. իսկ յերբ բառի



արտասանութիւնը փոխուից՝ միջին դարերում սկսեցին գրել նոր արտասանութեան համաձայն՝ «այնել»։ այս արտասանութիւնն էլ իր հերթին սղվեց և վերածվեց յերկու ձևի՝ «անել» և «էնել» և այս գրութեան ձևերն էլ մտան գործածութեան մեջ»։ «Հայերեն ուղղագրութիւնը... շարունակ փոփոխել է ուղղագրութեան ձևերը՝ հարմարեցնելով արտասանութեան, այնպես վոր գրութիւնն ու հնչյունը միմյանց համաձայն լինեն։ Ուրիշ խոսքով ասելով՝ հայերենը ուղղագրութեան մեջ հետևում է հնչական սիստեմին (գրում է այնպես, ինչպես հնչվում է բառը), իսկ ֆրանսերենը՝ պատմականին, վոր մենք կոչում ենք ավանդութեան ուղղագրութիւն»։ այս խոսքերն էլ Ս.Մ.-ինն են. բայց 14 տարի առաջ գրված։ Այժմ նա թողել է ուղղագրութեան հնչական սիստեմը և կողմնակից է դարձել պատմական կամ ավանդական սիստեմին, վոր կոչվում է նաև ստուգաբանական սիստեմ։ Գիտե՞ք՝ ինչո՞ւ համար, Վորպեսզի ուղղագրութիւնը «հակափողովըզական» չլինի և ժողովուրդն իմանա «յստնկայս, յանուն, յօգուտ» բառերի ստուգաբանութիւնը, և այն, վոր դրանց սկզբի յ=հ հնչյունը մի հին նախդիր է, — մի կարևոր գիտելիք ժողովրդական լայն խավերի համար։

Յե՛վ այս նշանակում է «անկեղծ կողմնակից լինել մեր ուղղագրութեան արմատական ուժերին»։ Ս. Մ.-ը մի բան մոռանում է. «Ստուգաբանական հիմունքն ուղղագրութեան մեջ մի տեսակ հակակշիռն է հնչաբանական հիմունքին. դրանով հաճախ առաջնորդվում են ուղղագրութեան մեջ փոփոխութիւններ մտցնելու հակառակորդները։ Ստուգաբանական հիմունքով, վոր սիրելի յե առանձնապես գիտնականներին ու բանասերներին, պահանջում են, վոր բառերը պահեն իրենց հին պատկերը \*... Բայց ու՛մ համար հարկավոր է հոսեցալս բառի ստուգաբանական գրութիւնը. գիտնականը, վոր գնում հասնում է հնդերոպական մայր լեզվին, առանց դրան էլ կիմանա, վոր այդ բառի է հնչյունը հին յ նախդրից է ծագում, ինչպես և գիտեն, վոր այս յ-ն էլ իր կողմից է նախդրից է, իսկ է նախդրը մի վորեւէ ուրիշ բառից. իսկ սովորական գրագետներին շատ պետք է, թե հոսեցեցալս բառի սկզբի է հնչյունը մի ժամանակ նախդրի է յեղել իր վորոշ ձևական նշանակութեամբ, ինչպես և Ս. Մ.-ի շատ պետք է, թե ըմբռնել, ընկրկել, զայրույթ, զգուշ, զգեստ, սփռել բառերի սկզբի ըմ, ըն, օ, ս հնչյունները մի ժամանակ նախդր են յեղել։ Ո՞վ ունի այժմ այդ մեռած տարրերի լեզվական զգացումը, և կամ գրաբար չիմացող մարդկանցից վճիռ մեկն ունի այժմ յանուն, յանցալս, յօգուտ բառերի սկզբի յ հնչյունի ձևական նշանակութեան զգացումը, վոր նույնչափ մեռած է, վորչափ և սփռելի բառի ս=զ նախդրի ձևական նշանակութիւնը։

Մեռած, քարացած կազմութիւններ, մակբայներ են նաև իդեպս, համենայն դեպս, վոր վերջիվերջո պետք է միացած դրվեն, ինչպես և այս վերջիվերջո բառը, և առնվին իբրև մի բառական միութիւն, ինչպես և վաղուց միացած գրում ենք վորովհետև, այնուհետև։ Իսկ ինչ վերաբերում է յակամայից, յանպատասօից բառերին, ո՞վ է այժմ դրանք մտածում իբրև հոգնակի բացառական հոլով. շատ-շատ՝ դրանք, էջ վերջավորութեան պատճառով շփոթում են աշխարհաբարի յեզակի բացառականի հետ, և յեթե

\* Տես իմ հոդվածը «Մեր ուղղագրութեան մասին». «Արարտ», 1913, № № 11 յեվ 12, յեր 1066 հուն.։

Ս. Մ.-ը հետևելիս լինե՞ր ժամանակակից լեզվին, նա նկատած կլինե՞ր, վոր նույնիսկ Ներսիսյան դպրոցն ավարտողներն այդ բառերը գրում են ակամայից, անպատրաստից, վոչ թե յ=հ հնչափոխությամբ, այլ ըմբռնելով իբրև յեղակի բացառական:

Այսպես, ուրեմն, Ս. Մ.-ի բոլոր առարկությունները յ=հ արտասանության և գրության նկատմամբ վոչ մի արժեք չունեն վոչ գիտական և վոչ գործնական տեսակետից. յերբեմն նույնիսկ դվարճալի յեն: Նա ուղիչուղի՝ պիտի հաշտվի այն մտքի հետ, վոր-գրական-դպրոցական լեզվի մեջ իշխում է յ=հ արտասանությունը, վոր բառակղբի յ=չ ձայնը հազազը մի տեղական բարբառային հնչյուն է, այն ել յ-ով սկսվող սակավաթիվ բառերի սկզբում: Նա պիտի հաշտվի այն մտքի հետ, վոր այսուհետև այլևս կարելի չէ վերականգնել բառակղբի յ-ով գրությունը և հնչյունով: Դա մեռավ: Յ տառը պիտք է մնա միայն անվանկային Ի կամ Յ (յ) հնչյունի համար:

IX.

«Յ տառը բառին սկիզբը կարժե յժ, բառին մեջը՝ օ (լատիներեն. Մ. Ա.)... սակայն յժ կրկին ձայնեբու խառնուրդ մը բլլալով՝ պետք չէ վոր մեկ տառով նշանակվի... ուրեմն պետք է գրել էրէկ=etek, յէրէկ=yerek և այլն»:

«Յ կկարգացվի բառին սկիզբը յժ, մեջը՝ օ... յժ բլլալով կրկին ձայն՝ իրավունք չունենք մեկ տառով գրելու... պետք է գրել օսկի=oski, վօսկի=voski»: «Գրականը կզանազանե միայն բառակղբի ո և օ (հիշա ինչպես է և է), վորոնցմե առաջինը կհնչե ՎՕ, յերկրորդը Օ»\*:

Ահա գրական արտասանությունը, վոր գիտե ամեն գրագետ մարդ, և գիտալան ուղղագրությունը: Կարծում էք Ս. Մ.-ը տարբեր կերպով է արտասանում. բնավ վոչ: «Ողորմող բառի առաջին ո-ն լավում է ինչպես Վօ» —ասում է նա: «Այսպես նաև որ=վօր... ոտք=վտք»\*\*: Յեթե այդպես է, հապա ել ինչ՞ու նա հակառակ է արտասանության համեմատ գրելուն՝ վորորմոյ, վոխ, վտք:

Մի հին առասպել կա, վոր ամեն գյուղացի գիտե: Ասում են, վոր յերբ Լուսավորիչը խոզացած Տրդատ թագավորին բժշկելով նորից մարդ դարձրեց, նրա մի ականջը խողի թողեց ի հիշատակ Տրդատի խող դառնալուն: Ս. Մ.-ն ել յերբ փորձեց մեր Վ հնչյունի խոզացած ուղղագրությունը բժշկել իր Վվավագրությամբ, մի խողի գլուխ թողեց բառերի սկզբում. այն է՝ չնայելով վոր ինքն ել, մենք ել արտասանում ենք՝ վտք, վորորմած, վոխ, բայց չուզեց այսպես գրել:

Ս. Մ.-ի իրեն ձեռով գրած մի թերթիկի մեջ, վոր 1922 թվից հիշատակ է մնում ինձ մոտ, ի միջի այլոց կարդում եմ. «Ընդունելի յեմ համարում և հանձնարարելի հետևյալ փոփոխությունները.

1. Բառերի մեջ և վերջը բոլոր օ և է տառերի փոխանակ գրել ո և ե.
2. Բառերի մեջ և վերջը Վ հնչյունն այս տառով միայն գրել՝ ավար,

\* Հր. Աճառյան, Բարբառադիտ. յեր. 8 հտ., 16:

\*\* Ս. Մալխ., Մի ճեչ. մի գիր, 20:

զվարթ, թիվ: Բառասկզբում, վորտեղ ուից առաջ լսվում է վ՛ թուլլատրելի յե գրել զ և չգրել—առք կամ վոտք:

Այս ել Ս. Մ.-ի կարծիքը 1922 թվին: Իսկ այժմ, 1924 թվի սկզբին լինչ սլատահեց, վոր այլևս թուլլատրելի չե համարում վոտք գրել և պահում և բառերի վերջի է և Օ գրությունները:

Նոր ուղղագրություն մտցնելու շեկրեալի մեջ պատվիրված է. «Ո տառից առաջ բառերի սկզբում, յերբ տրտասանությամբ ավելացնում է վ՛ հնցյունը, գրության մեջ ավելացնել վ՛ տառը՝ վոտք, վոտ, վոտիք, վորդի, վորդի»:

Իսկ իբրև ծանոթություն գրված է. «Ենթե բառասկզբում ո տառից առաջ չի ավելանում վ՛ հնչյունը, այլ ո տառը արտասանվում է իբրև Օ, պահել լոկ ո առավ գրությունը, ինչպես՝ վորջունել, բայց կք և չք մասնիկներին հետո առանց վ՛ տառի՝ կողջունեն, չողջունենց. նույնպես բառակազմության ժամանակ՝ անորոշ, բնորոշ, անգործ և այլն. այլ և այն գավառական բառերը՝ ոլորան, ոքմին, ոչով, ողորմակոթ և այլն, վորոնց սկզբի ո տառն արտասանվում է իբրև Օ»:—Այս մեկնույնը նաև բառասկզբի է տառից առաջ յ ավելացնելու համար, յերբ արտասանությամբ ավելանում է յ հնչյունը: Նույնը և իմ «Առաջնորդի» մեջ. «Ենթե բառերի մեջը կամ սկզբում ավելացել են ցոր հնցյուններ, պետք է գրության մեջ ել ավելացնել դրանց համապատասխան տառերը, ինչպես... ոտ, եկ... վոտ, յեկ»: «Ո տառից առաջ բառերի սկզբում ավելացվում է անկայուն վ՛ տառը ամեն անգամ, յերբ տրտասանվում է»: Իսկ զբնույլի վերջում առաջին ծանոթության մեջ. «Առանձին ուշադրություն պիտի դարձնել, վոր յերբ բառասկզբում ո յեվ է ցառերից առաջ չեն ավելացնում վ՛ յեվ յ հնցյունները, այլ ո և է արտասանվում են իբրև Օ, է (լատ. Օ, Ե, ուս. Օ, Զ), այն ժամանակ պահվում են լոկ ո յեվ է ցառերով գրությունները»: Յեվ ապա ճերմած են այդպիսի ղեպքերի համար որինակներ՝ թվով հինգ:

Ինչպես կարելի յե տեսնել, կանոնը շատ պարզ կերպով պատվիրում է հետևել արտասանությանը, գրական-դպրոցական արտասանությանը, վորի վրա հիմնված է բարեփոխությունը. բառասկզբում ո-ից առաջ յերբ տրտասանվում է վ՛ հնցյունը, պետք է ավելացնել վ՛ տառը, չի արտասանվում՝ չպետք է ավելացնել: Թե վորքան այս բարեփոխությունը համապատասխան է գրական-դպրոցական արտասանությանը, այդ շատ լավ կարելի յե տեսնել դրա հեշտ ու ճիշտ գործադրությունից լրագրների և զբեքի մեջ: Ամեն կարգացող, որինակ, ով բառը միշտ ՕԵ (օՅ) է կարգում, գրելիս ել բնականաբար, այդ բառի ո տառից առաջ վ՛ չի ավելացնիլ և գրել վո՛վ: Իսկ որ կարգալիս արտասանում են սկզբից ավելացած վ՛ հնչյունով. ուստի և նոր ուղղագրությամբ կավելացնեն և ավելացնում են վ՛ տառը և գրում վոր: Վոչ մի թյուրիմացություն չկա, վոչ մի «ոայթաքում» և «կամայականություն», վորովհետև վոչ մի բացառություն չի արված հակառակ տրտասանության, վորով առաջնորդվում է ամեն գրող: Բայց Ս. Մ.-ին հենց այդ գյուր չի գալիս, թե ինչու ինքը պետք է «խողի ականջ» թողներ, իսկ նոր ուղղագրության մեջ այդ «խողի ականջն» այդպիսի հեշտությամբ կտրվեր ու դեն ձգվեր: Այդ պատճառով նա «գործնական տեսակետով» քննելով նոր ուղղագրությունը՝ դիմում է մի գործնական միջոցի և գրում է. «Մ. Արեղյանը առաջարկում է ուրիշ միջոց— ո-ով սկսվող բառերի սկզբից ավելացնել վ՛ (10-րդ կետ) Ուրեմն օղը գրել օզ, իսկ ոտը գրել վոտ

(10-րդ կետ): Բայց այս կանոնի դեմ բողոքում ե կենդանի՝ ժողովրդական և դպրոցական գրական լեզուն, վոր շատ և շատ տեղերում և տարբեր պայմաններում ուից առաջ ձ չե հնչում: Յե՛վ Մ. Արեղյանը իրեն հարկադրված ե դում գիտումներ անել յե՛վ բուլլ ալ մի օտր բացառութուններ իր ստեղծած կանոնի դեմ:

Հիմա, վժրն եր լավ, մյն, վոր Մ. Մ.-ը պարզապես ասեր, թե ինքը ավանդական ուղղադրության կողմնակից ե, թե նա այս սողերը գրեր: Ձեն բերում մեկի ասածը՝ միջից դուրս ձգելով մի մասը, ուրե՛ն և մի նոր բան վերագրելով նրան, և ապա չեն դառնում մեկի ասածի պակասությունը ցույց տալիս հենց այն բանով, վոր դուրս ե ձգված: Վճրտեղ ե Մ. Արեղյանը առաջարկել «ո-ով սկսվող բառերի սկզբից ավելացնել Վ»: Բացեք թեկուզ յերկու անգամ հիշված 10-րդ կետը և կկարդաք, թե պետք ե ուից առաջ ձ ավելացնել լատեն անգամ, յերբ արտասանվում ե: Ինչի՞ դուրս ե ձգված էրբ արտասանվում ե խոսքը: Իհարկե ամեն ընթերցող գլխի չեր ընկնի, վոր Մ. Մ.-ն իրենից մի կանոն ե ստեղծում—«ո-ով սկսվող բառերից առաջ ավելացնել Վ»—այդ կանոնը վերագրում ե Արեղյանին և առա դառնում այդ կանոնի պակասավորությունը ցույց տալիս: Գրական-դպրոցական արտասանության բողոքն, ուրե՛ն, վոչ թե Արեղյանի դրած կանոնի դեմ ե ուղղված: այլ հենց այս կանոնի դեմ, վոր Մ. Մ.-ն ինքը բարեհաճում ե ստեղծել իրենից և վերագրել Արեղյանին: Մի անդամ, վոր այս հնարիմաց գյուտը պարզվում ե, այն ժամանակ ողն են ցնդում նրա բազմաթիվ ու բազմատեսակ, կամ լավ կարգի կամ լավ շարք բացառություններ» ասածը: վորովհետև դրանք ուրիշ բան չեն, բայց յեթե այն, վոր խստիվ պետք ե պահել նոր ուղղադրության հիմնական կանոնը, վոր ե՛ գրել գրական-դպրոցական արտասանության համեմատ, վորակող արտասանվում ե ուից առաջ ձ հնչյունը՝ գրել Վ տառը, իսկ վորեկ չի արտասանվում՝ չգրել ե գրել:

Այսպես, ուրե՛ն, լավ կարգի բացառությունները Մ. Մ.-ին իրեն պիտի վերագրանել իբրև դյուտի արտադրություն: Բայց նա այդ կարծեցյալ բացառություններին մասին խոսելիս՝ ուրիշ հետաքրքիր և զվարճալի բաներ ել ե ասում. ուստի վորպեսզի վոչ մի բան պակաս չմնա, հետե՛վ վենք նրա ասածներին: Իմ «Առաջնորդի» հիշած ծանոթության կետերի կարգով, վորոնց մեջ բերված են որինակներ, թե յերբ բառասկզբի ուից առաջ չի ավելանում ձ հնչյունը, ուստի և չպիտի ավելացնել Վ տառը:

1. «Պետք ե գրել՝ վողջունել, վորոշել, յերգել, բայց կը և չը մասնիկներից հետո առանց ձ և յ տառերի՝ կողջունեն, կորոշվի, չողջունել, չորոշել. նա յեկավ, նա չեկավ. յեղավ, չեղավ. պիտի վողևորվի, կողևորվի, չողևորվի»:

Այս կետի համար Մ. Մ.-ը բարեհաճում ե միայն այս հարցը տալ. «Բայց յերաշխավորում ե արդյոք Մ. Արեղյանը, վոր վողջունել, վորոշել գրության ընտելացողները չեն արտասանի յե՛վ չեն գրի նաև կվողջունեն, չվորոշել և այլն»:—Տեսնում եք, Մ. Մ.-ը մեր լեզվի ազագայի համար ե հոգում և ազագայի համար յերաշխավորություն պահանջում: Կարող եմ Մ. Մ.-ին յերաշխավորել, վար հայերեն լեզվի մեջ 1500 տարուց ի վեր գրել են վորոշել, վողջունել (=որոշել, օղջունել ըստ հին արտասանության), բայց և այնպես այդ ողջունել, որոշել գրությանը շատ վաղուց ընտելացող-

ներք՝ շատ վաղուց արտասանել են և արտասանում են վողջունել, վորոշել: Կարող եմ Ս. Մ.-ին այն ել յերաշխավորել, վոր յեթե նա շատ չնչին չափով մեր նոր գրական լեզվին հետևած լիներ, կիմանար, վոր առանց վողջունել և վորոշել գրություններ շատ շատերը, վորոնց թվում և Լեոն, վաղուց արդեն արտասանում են՝ կը վորոշեն, կը վողջունեն. այդ պատճառով և հաճախ գրում են՝ կը ողջունեն, չը որոշել, կը երգի և վոչ թե կողջունեն, չորոշել, կերգի: Այսպիսի լեզվական դիտողությունների ընդունակ մարդիկը, վորոնք տարբերում են գիր և հնչյուն, շատ լավ գիտեն այդ: Ե՛ման վոմանք, վոր բարդ ու ածանց բառերու մեջ ալ, հոն ուր յերկրորդ բառը կսկսի ու տառով, կհնչեն ՎՕ և վոչ Օ. այնպես վոր՝ անողորմ—անվողորմ, առողջություն—աւվողջություն և այլն: Ծիշտ ինչպես վոր ո և ե գրերով սկսող բառերն ալ խոնարհման ժամանակ առաջ կհնչեն՝ կը վողջա, կը վորոնե, կը Կերգե, կը Կիբե և այլն, իբր թե ասոնք բաղաձայնով սկսած բառեր ըլլային: Ասիկա սարգիսեակ նորմալություն մե, վոր կըզտնենք ռուսահայ գրագետներու մեջ, և վոչ միայն չեր կրնար գոյություն ունենալ հին լեզվին մեջ, այլ և նորերու համար ալ շատ խորթ կհնչի»\*:

Այստեղ («տարրինակ») վոչինչ չկա. արտասանության այդ ընդմուծությունը բնական հետևանք է վողջունել, վորոշել արտասանության և արդեն գոյություն ունի լեզվի մեջ և վոչ թե, ըսա Ս. Մ.-ի, նոր առաջ պիտի գա վորոշել, վողջունել գրության արդեցությամբ: Ս. Մ.-ը անշուշտ գիտե, թե ինչ է լեզվի հոգեբանությունը, և թե ինչպես անալոգիական նոր կազմությամբ առաջ են գալիս այգպիսի ձևերը: Դանի վոր ասում են՝ վազել, կը վազի, չը վազել, դրա անալոգիայով, վորովհետև արտասանում են վողջունել, պիտի ասեն նաև կը վողջունե, չը վողջունել, և արդեն վաղուց այդպես արտասանում են: Նույնպես՝ քանի վոր ասում են՝ վախ—անվախ, դրա անալոգիայով, վորովհետև արտասանում են վոտ, վորդի, պիտի ասեն նաև, և վաղուց արդեն ասում են, անվոտ, անվորդի: Դրանք անալոգիական նոր կազմություններ են, վորոնք վառ, վորդի գրության հետ կալ չունեն և անխուսափելի յեն լեզվի մեջ. բայց դեռ համարվում են նորմալություն և դրական լեզվի համար անուղիղ ձևեր, վորովհետև չեն ընդհանրացած: Իսկ յեթե պատահի, վոր այդ արտասանությունը ապագայում մի որ ընդհանրացած լինի գրական լեզվի մեջ, այն ժամանակ կըրույաւորվի գրել՝ կը վողջունեն, չը վորոշել, և այս կլինի լեզվի դարգացման արդյունքը և ուղիղ գրությունը. չե՞ վոր «հայերենը ուղղագրության մեջ հետևում է հնչական սխտեմին, (գրում է այնպես, ինչպես հնչում է բարդ)», և «շարունակ փոփոխում է ուղղագրության ձևերը՝ հարմարեցնելով արտասանությանը», —գրում է Ս. Մ.-ը:

Ահա իմ յերաշխավորությունը:

2. «Քառակագմության ժամանակ միշտ պիտի դուրս ձգել սկզբի անկայուն վ և յ տառերը, ինչպես՝ ըստորում, վոչոք, բնորոշ, աներկյուղ, բազմերանգ»:

Այս կետի համար Ս. Մ.-ն ասում է. «Ըստայում՝ միլեվնուլն բառը սարբեր գրության նեվ պիթ ստառա, կախված այն հանգամանքից, թե բառի սկզբում է գտնվում, թե՛ միջում (վորոշ, բայց բնորոշ)»:—

\* Հր. Անտոյան, Հայոց գրերը. յեր. 506 հոտ.:

Բայց յես մի կտոր ել բերեմ նույն Ս. Մ.-ի գրածից. «Յերկրորդ առարկութունն այն է, վոր յեթե ընդունվի ամենուրեք վ-ով գրութունն, շատ անգամ բառի ուղղագրական կերպարանքը ետեկ կլինի փոխել... որինակ՝ կատու, բայց կատվի, կատվանման... դա ընական յերևույթ է,— յերբ փոխվում է հնչյունը, պե՞տք է փոխվի և գրութայն ձևը: Մենք գրում ենք սէր, բայց սիրուն, սիրելի... սրգի, որգեսեր, որդու»\*:

Ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը. բավարարվեց իր գրածով: Ուրիշներից լսած առարկութունը, վոր ինքն անարժեք է համարել, կարճը ենք արդյոք մենք ել անարժեք համարել: Գուցե այժմ նա այլևս թույլատրելի չի համարում բառակազմութայն ժամանակ գրել միևնույն բառը տարբեր գրութայն ձևերով՝ ձու—ձվաձև, յերկինք—յերկնային, բարի արար—բարեբար, կը բերի—կատի., անցեալ (տարի), անցել է և այլն: Այս բոլորը հնարավոր և թույլատրելի յեն ըստ Ս. Մ.-ի, միայն կարելի չէ գրել՝ վորոշ—անորոշ, բնորոշ: Հանգուցյալ Մ. յեպիսկոպոս Որմանյանի համար, վոր մի տարի Եջմիածնի շեմարանում յեղել է աստվածաբանութայն և բնութասացութայն ուսուցիչ, իր աշակերտները պատմում էյին, թե նա պարծանքով ասելիս է յեղել՝ Յեթե ուզենամ՝ աստժու գոյությունը և կապացուցանեմ և կժխտեմ: Հիմա Ս. Մ.-ինն և. ուզում է՝ ընդունում է բառակազմութայն ժամանակ բառի կրկին գրութայն ձևը (ձու—ձվաձև, յերկինք—յերկնավոր, բարի արար—բարեբար), ուզում է՝ մերժում է և ասում՝ կարելի չէ վորոշ գրել, վորովհետև կա բնորոշ:

3. «Առանց սկզբի վ և յ տառերի պետք է գրել այն գավառական բառերը, վորոնց սկզբի ո և է տառերն արտասանվում են իբր օ և է, ինչպես՝ ոյորան, ոքմին, ոչով, ողորմածհոգի, ողիկ գալ, ոճորք, ողորմակոթ, երինջ (խաղողի մատ), երնեկ, երնջնակ»:

Ս. Մ.-ը ծանոթութայն այս կետի համար հետևյալ խորիմաստ բանն է ասում. «Ուրեմն ամեն մի գրող, լինի նա նոր գրագիտութուն սովորող յերիխա՝ թե չափահաս և գրագետ, օրեօր է նախապես գիտեցա, թե այս-ինչ բառը գավառակա՞ն է քե վոչ, և ըստայնմ գրի վ-ով կամ առանց վ-ի: Հետաքրքրական է իմանալ, թե ոչխար բառը գավառակա՞ն է, թե՞ գրական, և ինչպես պետք է նրան գրել»:

Ընդունում եմ, վոր Ս. Մ.-ն ճամեն մի գրողի՞ հոգան է տանում լըր-ջությամբ, իմիջի այլոց և իրենը: Ուստի յես կսկսեմ իրեն Ս. Մ.-ի հոգաից: Նա գիտե, իհարկե, վոր ուղղագրական ուեֆորմը նրա համար չէ, վոր նախապես գիտեանան բառերի գավառական լինել-չլինելը և ըստայնմ գրեն, բայց նա յերեք տարրական բան չգիտե. 1) Այն, վոր ուղղագրութայն ուեֆորմը լինում է արտասանութայն համեմատ գրելու համար, 2) Այն, վոր մի բառ գրելու համար՝ հարկավոր է նախապես գրելիք բառն իմանալ, իսկ բառն իմանալ՝ նշանակում է նաև բառն արտասանել իմանալ, քանի վոր բառը հնչյուններից է կազմված: Յեթե այս յերկու՝ բանն իմարար Ս. Մ.-ը, այն ժամանակ նա ընոր գրագիտութուն սովորող յերեխայի և չափահասի՞ հոգան այնպես պարզամտորեն չեր քաշիլ, թե նրանք «պիտք է նախապես գիտեանան, թե այս-ինչ բառը գավառական է թե վոչ, և ըստայնմ գրեն վ-ով կամ առանց վ-ի»: վորովհետև նա գլխի կընկնեն, վոր յեթե, գիցուք, վորևե

\* Ս. Մ. Մի հնչյունին մի գիր, յեր. 21 հտ.:

յերեխա գիտե գավառական բառերը՝ ոքմին, ոչով, ուրբան և այլն, ուրեմն գիտե և նրանց արտասանությունը առանց սկզբի վ-ի իբրև օչով, օքմին, օւրբան, և այդ յերեխան յերբ գրելիս լինի այդ բառերը, շատ բան բնականորեն կգրե ըստ նոր ուղղագրութեան (ո=օ)—ոքմին, ուրբան, ոչով, առանց իմանալու թե այդ բառերը գավառական են, թե վոչ:

Գանք հիմա յերրորդ տարրական բանին, վոր չգիտե Ս. Մ.-ը. այն, վոր շատ գրագեօճեք կան, վորոնք իրենց բազում գիտութեամբ շատ անգամ չեն հասկանում իրենց կարգացածը և կարող են կարծել, թե նոր ուղղագրությունը պատվիրում է, առանց արտասանութեանը ուշադրութեան դարձնելու, և ուղղագրութեանը սկզբից ավելացնել վոչ: Ինչհետև Ս. Մ.-ը,—վոր պարապել է «վեզագրութեամբ», յեղել է ուղղագրութեան հանձնատողութեան անգամ Յերեխանում և Թիֆլիսում և քննադատում է նոր ուղղագրութեանը, —կարող եր չհասկանալ արտասանութեան համեմատ գրելու պատվերը, իսկ ուրիշ գրագետներ, վորոնք չեն պարապել այդպիսի խնդիրներով, ինչհետև նրանք չեն կարող նրա պես մտածել և կամ հենց նրանից կամ ուրիշներից ազդվելով կարծել, թե իբր նոր ուղղագրութեանը պատվիրում է և ուղղագրութեանը բառերի սկզբից ավելացնել վոչ: Հիմա յերեւակայեցեք մի գավառագիտուն գրագետ (վոչ յերեխա), վոր գիտե գավառական ոչով, ոքմին, ուրբան բառերի ստուգարանութեանը և շատ գավառական բառեր, վոր գործածական չեն գրական լեզվի մեջ. միթե նա չի կարող հանկարծ Ս. Մ.-ի պես մտածելով կամ նրանից ազդվելով՝ կարծել, թե պետք է և ուղղագրութեանը բառերի սկզբից ավելացնել վոչ, և գրել վոչով, վոքմին, վուրբան և այլն: Ազդու, ասում է ծանոթութեան այդ կետը այդպիսի գրագետներին. գավառական բառերի համար ևս հետեցեք արտասանութեանը: Դուք ոչ բառը պիտի գրեք արտասանութեան համեմատ՝ վոչ. բայց ինչքան ել գիտուն լինելով՝ գիտեք, վոր գավառական ոչով բառը կազմված է նույն ոչ բառից, չգրեք վոչով, այլ պիտի գրեք արտասանութեան համեմատ ոչով, առանց սկզբի վ տառի—Հասկանալի յե, կարծեմ, վոր ծանոթութեան այդ կետն ուղղված է հենց իր «ստեղծած կանոնի» դեմ և գրված է, ինչպես և ամբողջ «Առաջնորդը», վոչ թե շնորհ գրագիտութեան սովորող յերեխաների» համար, ինչպես կարծում է Ս. Մ.-ը, այլ գավառական գրագետների համար, վորոնք գիտեն գավառական բառերը, հաճախ և նրանց ստուգարանութեանը:

Գանք հիմա Ս. Մ.-ի զվարճալի հետաքրքրութեանը՝ իմանալ, թե ոչ-թուր բառը գավառական է, թե գրական, և ինչպես պետք է ճշտել (այսինքն՝ վոչխար. բառը) գրել:—Այդ հարցին կարելի յե պատասխան տալ այն, վոր ինքը վոչխար անասունը միայն չգիտե այդ. իսկ մեր յերեխաներն անգամ գիտեն այդ և գրա գրութեանը. յերբ նրանք վոչխար են արտասանում, գրում են նոր ուղղագրութեամբ հենց այսպես. իսկ յեթե իրենց բարբառում Օչխար են արտասանում և դեռ չեն վարժված գրական արտասանութեանը, նոր ուղղագրութեամբ գրում են օչխար. մինչդեռ խոզի ականջ թողնելով՝ նրանք յերբ արտասանում են վոչխար, գրում են յերեք կերպ՝ ոչխար, վոչխար, վոչխար: Կարծեմ բավականութեան ստացալ Ս. Մ.-ի հետաքրքրութեանը, և նոր ուղղագրութեանը շնորհակալ տեսակետով՝ քննողը տեսալ, վոր գրական վոչխար արտասանութեան համար նոր ուղղագրութեամբ միայն մի վոչխար գրութեանը կա, իսկ հին ուղղագրութեամբ նույն գրական արտասանութեան համար՝ յերեք տեսակ գրութեան:

4. «Առանց սկզբի անկայուն Վ (և յ) տառերի պետք է գրել ամեն անգամ, յերբ ցանկանում ենք արտասանել կամ արտասանում ենք ժողովրդական ձևով առանց Վ (և յ) հնչյունների, ինչպես՝ ողորմի աստված, քս հորն ողորմի, թեղն ոլորք ընկավ, յերկինքն որոտ-որոտ ընկավ. [Երեխք: Իմ գարդըս վոր ձերն հղներ. Իսահակյան: Քսան յերեսուն երե շալակած. ծառի ճղներից երեսներ կախած. Աղայան: Նույնպես հատուկ անունները՝ Երևան, Երզնկա, յերբ արտասանում ենք կամ պետք է արտասանել ժողովրդական ձևով իբրև Էրևան, Էրզնկա]»:

Ս. Մ.-ը բերելով այս կետը՝ փակագծերի մեջ դրածները, վոր վերաբերում են յ հնչյունին և տառին, դուրս է ձգում: Նույնպես վարվում է նա և մյուս կետերի վերաբերմամբ, վորպեսզի նույնը մի յերկրորդ անգամ կրկնի յ-ի համար և իր կարծեցյալ «բացառություններին» թիվը շատ ցույց տա: Ապա նա ընդգծում է միայն այբբե ցանկանում ենք արտասանել կամ արտասանում ենք» բառերը, իսկ առանց ընդգծելու թողնում է շարունակության մեջ ժողովրդական ձևով» բառերը, վոր անպատճառ պետք է ընդգծեր մյուսների հետ, քանի վոր խնդիրը ժողովրդական ձևով» արտասանելու մասին է: Միքիչ հետո նույնը յ-ի մասին գրելով կրկին անգամ, Աղայանի «քսան յերեսուն երե շալակած» բառերը բերելուց հետո, նկատում է՝ «Այստեղ՝ սովորողը (չերեվի կարգացողը. Մ. Ս.) պետք է հասկանա, վոր «երե» ժողովրդական արտասանությամբ է գրել հանդուցյալ Դ. Աղայանը, իսկ «յերեսուն» գրական արտասանությամբ: Ուրեմն Ս. Մ.-ը գիտե, վոր խնդիրը ժողովրդական արտասանությունն արտահայտելու մասին է: Բայց և այնպես տեսեք, թե ինչ յեզրակացություն է հանում նա. «Այս կետի հիման վրա ամեն մի բառ կտեղի յե գրել թե վ-ով յեվ թե առանց վ-ի (ընդգծումը Ս. Մ.-ինն է), բավական է միայն հայտարարել, թե յես ցանկանում եմ բառն արտասանել ժողովրդական ձևով: Թե վորպիսի կամայականություն յեվ խառնափոփություն (ընդգծումը Ս. Մ.-ինն է) կմտնի սրանից մեր ուղղագրության մեջ՝ ըստինքյան հասկանալի յե:—

Ըստինքյան միայն մի բան է հասկանալի ինձ համար, թե ինչպես նա գիտե կամայական դատողություններ տալը—Արդյոք իր պաշտպանած մեր հին ուղղագրության մեջ կամ վորեք է կամայականություն և խառնաշփոթություն:—Վնչ, կպատասխանե նա: Բայց արդյոք նա մեր նոր գրականությունը կարգացել է և առհասարակ նոր գրքեր կարդում է:—Վնչ, կպատասխանեմ յես. վորովհետև յեթե նա կարգացած լիներ մեր նոր գրականությունը, կտեսներ, վոր մեր բոլոր դրոշմերն էլ հենց այդպես են վարվում, և այլպես էլ կարելի չէ վարվել. նրանք գրաբարի ուղղագրությունը չեն պահում ամեն մի բառի համար էլ, յերբ ցանկանում են տրտահայտել բառի ժողովրդական արտասանությունը:

Վերևում, 4-րդ կետի մեջ բերված որինակներն առնված են մեր հեղինակներից, վորոնց յերկուսի՝ Իսահակյանի և Աղայանի անունները հիշված են: Ինչի՞ համար է Իսահակյանն իր յերկերի մեջ գրում՝ «Իմ գարդըս վոր ձերն հղնէր» և վոչ թե եղնէր (հին ուղղագրությամբ). միթե Իսահակյանը չգիտե եղայ, եղար, եղաւ և նույնիսկ գրաբարի եղանիմ, եղանէր և այլն գրությունը սկզբի է տառով:—Միմիայն նրա համար, վոր ինքն արտասանում է հղնէր և ցանկանում է, վոր կարգացողներն էլ այդպես տրտաւանեն. մինչդեռ յեթե գրեր եղնէր (հին ուղղագրությամբ), ուրիշները կկարգա-



յին յեղծեք. իսկ այս վերջին արտասանությամբ լեզուն կկորցնեն իր ժողովրդական բնույթը: Աղայանը, անշուշտ, շատ լավ գիտեր եւէ բառի այս հին ուղղագրութիւնը, բայց գրել է էւէ, միմիայն նրա համար, վոր ինքն այդպէս է արտասանել և ցանկացել է, վոր կարդացողներն ել (վոչ սովորողը) այդպէս արտասանեն: Յերբ Մուրացանը, Պոսոյանը և ուրիշները գրում են՝ Օղորմածհոգի, Օղորմի աստված, քո հորն Օղորմի, թելն օլորք ընկավ, երկինքն օրոտ-օրոտ ընկավ, էրեխէք և այլն, նրանք այդպէս գրում են միայն նրա համար, վոր ցանկանում են, վոր կարդացողներն այդ բառերը առանց սկզբի վ հնչյունի արտասանեն, մինչքեռ յեթե սովորական գրական ուղղագրությամբ գրեյին՝ ողորմել, որոտ և այլն, կարդացողները կկարդային. սովորական գրական ձևով՝ վողորմել, վորոտ, վոլորք, յերեսեք:

Հիմա ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը, մեր հիղինականները ժողովրդական արտասանութիւնն արտահայտելու համար զործադրած օղորմած, օլորք և այլն գրութիւններով «կամայականութիւն և խառնաշփոթութիւն» են մտցրել մեր հին ուղղագրութիւն մեջ.— Ո՛ր, վոչ. այդ միայն նոր ուղղագրութիւն մեջ այդպէս կլինի, յերբ գրական արտասանութիւն համեմատ վողորմել գրութիւն հետ՝ ժողովրդական արտասանութիւնն արտահայտելու համար գրեն առանց սկզբի վ-ի, ողորմածհոգի, քո հորն ողորմի և այլն: Այդ նշանակում է, վոր Մ. Աբեղյանը «թույլ է տալիս յեկու ճեսակ գրութիւն այո բառերի և ուրիշներին»: Իսկ վոր ինքը Ս. Մ.-ը հին ուղղագրությամբ գրում է և ռզորմած և Օղորմած, այդ չի նշանակում, վոր Ս. Մ.-ը թույլ է տալիս «յերկու տեսակ գրութիւն այս բառի և ուրիշներին»: Չարմանում է Ս. Մ.-ը. թող ընավ չգրմանա, թող կարդա իր իսկ գրածը հենց իր այդ հոգիվածի մեջ քիչ ներքևում. «Շատերի գովառակա՞ն կամ սովորական տրտառնութիւնն է առանց վ-ի, իբրև Օղորմած»: Ինչո՞ւ նա ինքն այս վերջին բառը չի գրել սովորական հին ուղղագրությամբ ռզորմած. միջ ապաքեն միայն այն պատճառով, վոր ռզորմած գրութիւնը հին ուղղագրությամբ կկարդան վողորմած, իսկ նա ցանկանում է, վոր կարդան գովառական արտասանությամբ առանց սկզբի վ հնչյունի, իբրև Օղորմած: Ի՞նչ կասե սրան Ս. Մ.-ը. ինքն իրավունք ունի այդպէս վարվելու առանց «կամայականութիւն ու խառնաշփոթութիւն» մտցնելու, իսկ ուրիշները չունեն այդ իրավունքը: Բայց ուրիշները, հարկավ, այնքան միամիտ չեն, վոր նրա այդպիսի կամայական դատողութիւնը մտիկ տան:

Ծ. Բեռասկզբի անկայուն վ (և յ) հնչյունները, մանավանդ վոսանավորի մեջ, գուրս են ընկնում, յերբ ո (և ե) տառերով սկսվող բառերը սերտ կերպով միանում են բաղաձայնով վերջացած նախորդ բառին, վորի վերջում վանկի սղում է իննում. որինակ՝ (գարունը յեկավ, աղջիկը վողբաց. բայց գարունն եկավ), լարերն ողբաձայն, (վորոնք արտասանվում են իրրև գարունն-նեկավ, լարեր-նողբաձայն, և վոչ իբրև գարունըն յեկավ, լարերըն վողբաձայն: Այսպէս նաև՝ խուռն-երամով տանջող պատկերներ... Արևի վոսակի) փալլոյն-ողողված... Թմրած հողիքն-ողջունեն)... Թեկերն-ոսկեհուռ...

Ս. Մ.-ը ծանոթութիւն այս կետը չակերտների մեջ բերելով՝ դուրս և ձգում փակագծերում գրված մասերը և որինականները մեջ գրված միացման գծերը, վորոնք հարկավոր են բացատրութիւն համար, և նկատում է. «Ահա մի կանոն, վոր միանգամայն անմատչելի յե գրագիտութիւնն և սովոր-

րողի՞ն և ամեն անգամ սայթաքումներ և սխալադրություններ պատճառւում էր։ Մ. Մ.-ը այնպես է գրում, վոր իբր դա, ինչպես և ամբողջ «Առաջնորդ» գրված է «գրագիտություն նոր սովորողի» համար։ Յերևի նա իր յերես նամյա ուսուցչության միջոցին գրագիտություն նոր սովորողների ձեռքը, ուղղագրություն սովորեցնելու համար, «Առաջնորդի» նման գրքեր է ավելու նա պիտի հասկանա, վոր շնոր ուղղագրության առաջնորդն» իրեն Ս. Մ.-ի նման գրագիտների համար է, վորպեսզի իմանան, թե ինչ փոփոխություններ են յեղել նոր ուղղագրության մեջ և նոր ուղղագրությամբ գրելիս կամ տպագրելիս գրանով առաջնորդին։ Իսկ «գրագիտություն նոր սովորողներն» իրենց ձեռքին ունենում են իրենց դասագրքերը, վոր կարդում են, ինչպես գրված է, և վորոնցից սովորում են գրել-կարդալ։ Այս ուղղագրության անֆորմը նրա համար չի յեղել, վոր «գրագիտություն նոր սովորողը» ուղղագրությունը կաճոցներով սովորի, այլ առանց կանոնների. կանոնները, ինչպես կտեսնենք, իրեն Ս. Մ.-ի սիրած բաներն են։ Յեզ վերջապես նա պետք է վոր հասկանար, թե ինչի համար և ում համար է գրված ծանոթության այդ կետը։ Բայց վորովհետև չի հասկացել այդ, բացատրեմ։

Ինչպես հայտնի յե, բանաստեղծները վոտանավորի մեջ հաճախ սղում ասածն են անում, այսինքն բառի մեջ մի վանկ պակաս են համարում. այսպես, մեղնում սղում են հաճախ ը ձայնավորով կաղմված վանկերը, առանձնապես բառավերջում վորողող հոգի ը ձայնավորը, ինչպես՝ աղջիկն, լաբերն և այլն հաշվում են յերկու վանկ։ Այս սղումը բնական կերպով տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ հաջորդ բառը ձայնավորով է սկսվում և յերկու բառը սերտ կերպով ըստ իմաստի, վորով և ըստ արտաբերության միանում են իրար հետ իբրև մեկ հնչյունական կապակցություն. ինչպես՝ աղջիկն—ասաց, վորի մեջ վերջի Յ հնչյունն արտասանությամբ անցնում է մյուս վանկին. մինչդեռ յերբ հաջորդ բառը բաղաձայնով է սկսվում, ինչքան ել յերկու բառն իմաստով սերտ միացած լինեն իրար հետ, սղումն անբնական է. որինակ՝ «աղջիկն գնաց» կապակցությունը կարող է կարգացվել միայն իբրև «աղջիկն գնաց», ուստի և դառնում է և «աղջիկը գնաց»։ Այս միևնույնը լինում է և այն ժամանակ, յերբ հաջորդ բառն ըսկըսվում է նոր ավելացած յ (յ) և Վ հնչյուններով, ինչպես վերևում գրված է՝ «գարունը յեկավ», «աղջիկը վողբաց»։ Բանաստեղծները, սակայն, սղումներ առաջ բերելու համար յերբեմն դիմում են նաև «բանաստեղծական ազատություն» ասված միջոցներին, վորոնք հաճախ իսկապես ուրիշ բան չեն, բայց յեթե հնացած կամ բարբառային լեզվական ձևեր։ Այսպես, որինակ՝ ձայնավորով վերջացող բառի վերջի ձայնավորը սղում են, յերբ հաջորդ բառը ձայնավորով է սկսվում. ինչպես՝ «կըխորհիմ թիւնձմե վերջ մարգերուն մեջ ծաղիկներ բուրհն միշտ» (Ա. Չոպանյան). կամ հաջորդ բառի սկզբի ձայնավորն են սղում, ինչպես՝ «Ոհ, չեր նա՛ յնպես վեհ երեցած տեսօք» (Ալիշան). «Պիտի վառի՛ նչպես ցայտք մ՛արեգական» (Ա. Չոպանյան). «Ըլլա՛ նաարբեր՝ ւանխելահաս» (Թ. Թերզյան)։ Բառասկզբի հնչյունների այսպիսի սղումները, վոր կոչվում են *apherese* կամ *synaloephe* և ընդունված են նաև ուրիշ հին և նոր լեզուների մեջ, մեր արևելյան բանաստեղծները չեն գործածում. բայց նրանք հաճախ կիրառում են նման անսակի մի սղում. այն է՝ նրանք գուրս են ձգում բառասկզբի Ն և ո հնչյուններից առաջ ավելացած յ և Վ հնչյունները, վորով և հնաբավոր է դառնում բնականորեն

նախորդ բառի վերջում Թ հոգի, ինչպես և միջանի Թ-ով վերջացած  
 ուրիշ (դառն, սառն, խառն, խուռն, վահանձն) վերջին վանկի ձայնավոր-  
 ւր։ Ուրիշ խոսքով՝ նրանք բանաստեղծական ազատութեամբ ոգավոր մ են  
 բարբառային արտասանութիւնից վտանավորի մեջ մի վանկ պակաս հաշ-  
 վելու համար։ Որինակ՝ հին գրութեամբ ողբ, ողբալ, ոսկի, ողջոյն բառերը  
 գրական արտասանութեամբ կարգում ենք միայն վողբ, վողբալ, վոսկի,  
 վողջույն, բայց յերբ բանաստեղծը (Հովհ. Հովհաննիսյան) գրում է՝ շա-  
 րերն ողբաձայն, «թեքն ոսկեհուռ», «հոգիքն ողջունեն», նա սղում և  
 անպայման առաջին բառերի վերջի ք ձայնավորը և յերկրորդ բառերի  
 սկզբի նոր ավելացած վ հնչյունը, թե չե՛ վտանավորի մեջ մի վանկ կավե-  
 լանա և հինգ վանկի փոխանակ, կարգալիս, առաջ կգա վեց վանկ՝ «հոգի-  
 քն վողջունեն», մինչդեռ սղումով դառնում է «հոգիքն-նողջունեն»։ Այսպի-  
 սով նա միաժամանակ անում է և synkope (բառամիջի ձայնավորի դուրս  
 ձգելը) և aphaerese ասածը։— Հիմա դառնանք Ս. Մ.-ին։

Ինչքան ել ծանոթութեամբ այդ կետը վատ շարադրված լինի (և իսկա-  
 պես աջող չի շարադրված), Ս. Մ.-ը պիտի հասկանար, վոր դա չի ուղղված  
 «գրագիտութիւնն նոր սովորող» յերեխաներին, այլ վտանավորներ տպա-  
 գրողներին և տպարանական սրբագրիչներին, վորպեսզի վերջիններս չլինի  
 թի հետեւելով Ս. Մ.-ի ստեղծած կանոնին՝ «ո-ով սկսվող բառերի սկզբից  
 ավելացնել վ»—մեքենայաբար ավելացնեն ո-ից առաջ վ, և ե-ից առաջ յ, և  
 այդպիսով ազճաանն վտանավորների ութմը։ Բերեմ մի որինակ։ Հովհան-  
 նես Թումանյանի մահվան սգահանդեսի առթիվ մի առանձին թերթի վրա  
 տպագրված եր յերեխաներին բաժանելու համար՝ նրա «Հին սրհնութիւնը»  
 նոր ուղղագրութեամբ, բայց «Մըռայլ թամագեն բեղերն ոլորեց» աողը տը-  
 պագրված եր այս և վոչ թե «բեղերն վոլորեց»։ Սրբագրիչն, ուրեմն, հաս-  
 կացել եր, թե ինչո՞ւ «ոլորեց» պետք է թողնի և վոչ թե դարձնի «վոլոր-  
 րեց»։ Հիմա ի՞նչ է կարծում Ս. Մ.-ը, կարճից է վորեք ասայթաքում պատ-  
 ճառելը նույնիսկ «գրագիտութիւնն նոր սովորողին» այդ գրութիւնը, վոր  
 նա նոր ուղղագրութեամբ կարգալով կարտասանի իբրև մի հնչյունա-  
 կան միութիւն՝ «բեղերնոլորեց», մինչդեռ իր «խողի ականջով»,  
 այսինքն բառասկզբի ո=վա գրութիւնն անփոփոխ թողնելով, թե յերեխա-  
 ները և թե չափահաս գրագետները, վորոնք չեն ուսումնասիրել վտանա-  
 վորներ հորինելու արվեստը, «բեղերն ոլորեց» գրութիւնը կկարդան ըստ  
 սովորականին «բեղերն վոլորեց», վորով կոչնչանա վտանավորի ութմը,  
 և նույնիսկ լեզուն կազճաավի, վորովհետև բաղաձայն հնչյունից առաջ  
 դրված կլինի Թ հոգը փոխանակ ք հոգի։ Այսպես, ուրեմն, այս դեպքում ել  
 «սայթաքումներ պատճառում են» վոչ թե նոր ուղղագրութիւնը, այլ հինը։  
 Ծանոթութեամբ այս կետի առթիվ Ս. Մ.-ը, ըստ իր սովորութեան, մի  
 հարց ել է տալիս. «Հետաքրքրական է, ըստ այս կանոնի, ինչպես պետք է  
 գրել. «չենք ողբում», թե՛ «չենք վողբում», քանի վոր «չենք» բառի ք հնչյունը  
 սերտ կերպով միանում է «ողբում»-ի հետ, բայց վանկի սղում չի լինում»։  
 —Վորովհետև նա միշտ հետաքրքրվում է նոր բաներ սովորելու, ուստի յես  
 նրան չեմ գրկիլ գրանից։ «Ըստ այդ կանոնի», պետք է գրել «չենք վող-  
 բում», ինչպես և կարգում և արտասանում ենք միշտ գրական լեզվի մեջ։  
 Ապա՝ «չենք» բառի ք հնչյունը նույնչափ սերտ կերպով է միանում հաջորդ  
 «վողբալ» բառի սկզբի վ հնչյունի հետ, վորչափ «չենք վազում» բառերի  
 մեջ նույն ք հնչյունը հաջորդ վ-ի հետ։

Այսպէս տեսանք, թե ինչ արժեք ունին Ս. Մ.-ի հնարագետ միջոցով գտած «բացառութիւնները» և նրա զվարճալի դատողութիւնները այդ կարծեցյալ «բացառութիւններին» առթիւ, վորոնք նպատակ ունեն ասանադին տպավորութիւն թողնելով՝ վարկաբեկել ուղղագրութեան սեփորմը. ուստի և նա շարունակ կրկնում է նույն և նման բառերը և, կարծեցյալ «բացառութիւններին» թիվը շատ ցույց տալու համար, իրենից ել մի կես և ավելացնում, այսինքն իմ «Առաջնորդին» ծանոթութեան հինգ կետերը դարձնում է վեց: Բերելով «Առաջնորդին» (յեր. 12) մի կտոր, վորի մեջ ասված է մի քանի ու-ով սկսվող բառերի համար, թե «հաճախ արտասանվում են նաև առանց սկզբի վ հնչյունի, ինչպես՝ ոլոռ, ոլորել, ոլոք, հհ, ողողել, ողորմել, ոռնալ, ործկալ, որոճալ, որոտալ և ուրիշներ»,—Ս. Մ.-ը գրում է. «Ուրեմն նա թույլ է տալիս յերկու տեսակ գրութիւն այս բառերի և ուրիշներին համար, վորոնք անծանոթ են վոչ միայն աշակերտին, այլև ուսուցչին և առհասարակ գրողին»:—Նախ Ս. Մ.-ը կտեսնի, վոր այդ կտորի մեջ բոլոր այդ բառերի համար վ-ով գրութիւնն է ընդունված՝ վորոք, վորորել, վորոք, և այլն: Ապա՝ այստեղ խոսված է միայն դրանց առանց վ-ի արտասանութեան մասին. իսկ գրութեան մասին խոսված է ծանոթութեան 4-րդ և 5-րդ կետերում, վոր տեսանք: Յե՛վ վերջապես նա յերկու անգամ սիրով ընդգծում է «ուրիշներ» բառը, վորպեսզի զվարճանա, թե այդ «անծանոթ» ուրիշ բառերը ինչպէս պետք է գրեն աշակերտն, ուսուցիչը և առհասարակ գրողը, և ինքը Ս. Մ.-ը նա ուզում է, վոր այդ ուրիշ բառերն ել բերված լինեյին, վորպեսզի ինքը նոր կարողանար գրել: Մի անգամ վոր ստիպված եմ բավարարել նրան, պետք է ասեմ նրան «ուրիշներից» մեկը գոնե, որինակ, «ոչիլ» բառը: Կարծում եմ՝ նա կարող է գրել այս բառը կամ գրական արտասանութեան համեմատ «ոչիլ» ձևով, կամ յեթե գետ չի վարժվել դրական արտասանութեանը, «ոչիլ» (հին ուղղագրութեամբ «օշիլ») ձևով: Կարծեմ հասկանալի յեղով նրան «ուրիշներ» բառը. իսկ այս բառի հոգնակին պարզելու համար՝ նա կարող է իրեն վոչ անծանոթ մի «ուրիշ» բառ ել ինքը գտնել:

Կարծում եք՝ սպասվեց Ս. Մ.-ի դիտողութիւնը «բացառութիւններին» մասին: Ամենևին վոչ: «Այս (այսինքն բառակցքի յ=հ) ուղղագրութիւնն ընդունելով՝ հեղինակն (այսինքն Մ. Աբեղյանը) ստիպվում է սակայն գիջումներ անել և տեղիք է տալիս մի քանի տեսակ տեսակ բացառութիւններին: Այսպես՝ 1. «Առօջ, առաջաբան, առաջադիմութիւն յե՛վ այլն (ընդգծումը Ս. Մ.-ինն է) առանց սկզբի յ (հ) տառի պետք է գրել»:—Վերտեղ է այստեղ գիջումն ու «բացառութիւնը». միթե թույլատրված է այդ բառերը գրել հին ձևով՝ յառաջ, յառաջաբան և կարգալ հառաջ, հառաջաբան, վոր կլինեք իսկապես գիջում ու բացառութիւն, թէ ընդհակառակն: Մի գուցե Ս. Մ.-ը չի հասկանում «գիջում» և «բացառութիւն» բառերը: Ընդգծած «և այլն» բառն ել չի հասկանում նա. թող շարունակի «առաջ» բառով կազմվածները մտիկ տալ Առձեռն բառարանի մեջ:—«Յ. Մի շարք բառեր, —շարունակում է Ս. Մ.-ը,—կարելի յե յերկու տեսակ գրել, հ-ով (փոխանակ յ-ի) և առանց հ-ի (առանց յ-ի). այսպես՝ ախճապակ, ախուռն, ալրի, ամպար, այրատ, աչաղանք, ապավել, աջող, արգո, իրավի, ուշիկ, իստակ, ունք, ուռութ յե՛վ այլն (ընդգծումը Ս. Մ.-ինն է), այսպես և հատուկ անունները՝ Ակոր, Ովանես, Ոսեփ յե՛վ այլն» (ընդգծումը Ս. Մ.-ինն է):—

Յեթե Մ. Մ.-ն ամբողջապես բերած լինե՞ր այդ ծանոթությունը, և վոչ լին սկզբի մասը դուրս ձգած լինե՞ր, այն ժամանակ ընթերցողը կիմանար, վոր այդ բառերի սկզբի չ-ն ընակ դուրս ե ընկնում», և Մ. Աբեղյանը չե, վոր կարելի չե համարում այդ բառերն առանց սկզբի յ=հ տառի ևս գրել, այլ վաղուց, շատ վաղուց հենց այդպես ել են գրվում. հին ուղղագրությամբ դրանք ունեն կրկին գրության ձևեր՝ յախճապակ = հախճապակ և ախճապակ և այլն: Ապա յեթե Մ. Մ.-ը ծանոթ լինե՞ր մեր նոր գրականությանը, կիմանար, վոր մեր հեղինակները հաճախ ժողովրդական ձևով գրում են՝ Ակոր, Օվանես = Ովսնես, Օհան = Ոհան, Օսեփ = Ոսեփ: Ուրեմն դարձյալ Մ. Աբեղյանը չե, վոր կարելի չե համարում յերկու տեսակ գրել: Մ. Աբեղյանը նույնիսկ կարելի չի համարում առաջարկել՝ այդ յերկու տեսակ գրություններէջ մեկն ու մեկն ընտրել: Բայց զվարճալին այն ե, վոր Մ. Մ.-ն ինքը միջիչ ներքևում ընդունում ե այդ բառերի առանց յ-ի գրությունը և իր կողմից, ինչպես տեսանք, քմահաճորեն կարելի չե համարում առանց սկզբի յ տառի գրել նաև 30 այնպիսի բառեր, վորոնք առանց յ-ի գրված չկան (ափշտակել, աճախ, ուլիս (ամիսը), անդուզն): Բայց մենք շարունակենք:— «Յ. Պետք ե պահել յետև, յետք, յետինք, յետ դառնալ... յետանալ, յեսան յեվ այլն գրությունները և սկզբի յ տառն արտասանել իր բուն հնչյունով իբրեւ կիտաձայն ի»:— Մ. Մ.-ն իր սովորությամբ դարձյալ դուրս ե ձգում այս ծանոթության սկզբի մասը, վորից ընթերցողը կիմանար, վոր «յետին, յետոյ, յետ դառնալ, յեսան բառերն արտասանվում են՝ հետին, հետ դառնալ, հեսան, բայց նաև ժողովրդական ձևով յ տառը պահում ե իր բուն հնչյունը (yetin, yeto, yet, yesan. գերմ. jeto, jetin, jet. ռուս. ЙЭТИН, ЙЭТО, ЙЭТ): Այս արտասանության պատճառով գրեկտն լեզվի մեք հաճախ գրում եմ նաև՝ ետև, ետո, ետք, ետ դառնալ, ես ընկնել, ետ մնալ, ետանալ, եսան և այլն»:— Յեթե Մ. Մ.-ն այս մասը դուրս ձգած չլինե՞ր, այն ժամանակ ընթերցողը կիմանար, վոր Մ. Աբեղյանը գրական լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող յերկու տեսակ արտասանությունից ընտրում ե յերկրորդը, այսինքն հին ուղղագրությամբ ես դառնալ արտասանությունը և ըստ այնմ յ=y տառով յես դառնալ = yet darnal գրությունը: Բայց ռւր ե այստեղ «զիջումն» ու «բացառությունը», վոր կլինե՞ր այն ժամանակ, յերբ առաջարկված լինե՞ր պահել այդ բառերի սկզբի յ-ով հին գրությունը՝ յետ դառնալ, յեսան և կարգալ հետ դառնալ, հեսան: Մտրդ գալիս ե դարձյալ այն մտքին, թե Մ. Մ.-ը «զիջում» և «բացառություն» բառերը մի իրատեսակ նշանակությամբ ե հասկանում:

Վորպեսզի ե այդ համբավվոր բացառություններին պատմությունը սղառվի, նկատեմ և հետևյալը: Նա առանձին սիրով ընդգծում ե յեվ այլն բառը, ինչպես քիչ առաջ ուրիշները բառը, և ապա վերջում գրում ե իբրև յիզրակացություն. «Յերեք կարգի բացառություններն ել պերճախոս և և այլն»-ով ոժտված, վոր ամեն մի ուսուցչի և գրողի համար գայթակղության ու տարակուսանքի առիթ պիտի գառնա:— Ընթերցողը չկարծի, թե Մ. Մ.-ի ասելով այդ կարծեցյալ «բացառություններն» են դառնալու «գայթակղության և տարակուսանքի առիթ». ամենևին վոչ, այլ սիրով ընդգծած յեվ այլն բառը: Բառեր կարելի չե՞ր բերել այս յեվ այլն բառը Մ. Մ.-ին հասկացնելու համար:

Յեվ այսպես փակվեց կարծեցյալ «բացառություններին» այս ձան-

ձրալի մասը: Գանք այժմ նրա բացատրություններին, այսինքն տեսական կողմին, վոր ավելի հետաքրքիր է:

«Յեւ վինչից են առաջ գալիս այս բոլոր անհեթեթությունները», հարց է տալիս նա, «տնհեթեթություն» համարելով բառասկզբի վ հնչյունն արտասանության համեմատ ավելացնելը՝ վոտ, վողր, վողջւայն, վոճ և այլն: —Նրանից են առաջ գալիս, վոր Մ. Աբեղյանը շրիմել է ձախող և սխալ միջոցի: Փոխանակ հետեւելու միակ առողջ սկզբունքին— «մեր այժմյան լեզվի համար մեր այժմյան այբուբենը»—տարվել է հակառակ ուղղությամբ— մեր այժմյան լեզվի ուղղագրությունը հիմնել է մեր եթե այբուբենի վրա (վոր այժմ փոփոխվել է), ներկա գեպքում աշխատելով վերականգնել ու-ի հնչյունը: Ուստի հիշյալ յերկու նմանահնչյուն գրերից գուրս է ձգում Օ գիրը. նրա պաշտօնը հատկացնում է ու-ին ըստ սրա եթե արտասանության, իսկ սրա ճարտասանությունը փոխարինում է վո գրությամբ:—Դարձյալ ուրիշ տեղ. «հարելի յեր անհամեմատ հեշտ կերպով հասնել հեղինակի առաջագրած նպատակին, յեթե հիմնվելինք մեր այժմյան այբուբենի վրա և զգուշանայինք այբուբենի ռեֆորմից յետեւյաց ուղղությամբ» (բոլոր ընդգծումները Մ. Մ.-ինն են):

Մ. Մ.-ին հայանի յե, վոր մեր ո տառի հին արտասանությունն է Օ. բայց վիճին է մեր այդ տառի ճարտասանությունը: Դրա նոր արտասանությունն է վո, ասում է նա: Բայց հասկանալի չէ, թե ինչու նա լռում է այն մասին, վոր յեթե ո տառն այժմ մոտ հարյուր բառի սկզբում գրական լեզվի մեջ իբրև վո վանկ ենք կարդում, նույն ո տառը գրական լեզվի հազարավոր բառերի մեջ արտասանում ենք իբրև պարզ ձայնավոր Օ, իսկ բարբառների մեջ յերբեմն նաև բառասկզբում իբրև Օ, այն աստիճանի, վոր նա ինքը նույնիսկ «խոզի ականջ» է թողնում, և ազգվելով գուցե իր մայրենի բարբառից, չի ուզում գրել վոտ, վոճիր... վորովհետև ախալցխացիք ասում են սոսցոք=Օտացո մեռնիմ: Նա ինքը ողորմել (հին ուղղագրությամբ), անոխակալ բառերն արտասանում է՝ վՕղՕրմել, անՕխակալ\*: Նա գիտե անշուշտ, վոր գրական լեզվի «համար ո և Օ նույն հնչյունն ունին... գրականը կզանազանի միայն բառասկզբի ո և Օ (ճիշտ ինչպես ե և է), վորոնցմե առաջինը կհնչե վո, յերկրորդը օ»\*: Յեւ յեթե այդպես չլինեք այժմ, ո=օ չլինեք, իսկի կարող եր պատահել, վոր Մ. Մ.-ը համաձայներ ընդունել բառամիջի Օ տառի փոխանակ ո գրել՝ անոթ, մոտ, տոթ, արոր, ակոս: Յեթե ո տառի ճարտասանությունը վո վանկ է, ուրեմն Մ. Մ.-ն, վոր ընդունում է այդ բառերի ո-ով գրությունը, այդ բառերը պիտի արտասանի՝ ամվոթ, մվոտ, տվոթ, արվոր, ակվոս, այսպես և ձոր, ողորմել=ձվոր, վօղվօրմել: Այսպես, ուրեմն, Մ. Մ.-ը շատ լավ գիտե, վոր ո գիրը նախառեֆորմյան շրջանում ունեւր մեր գրական լեզվի մեջ յերկու տեսակ արտասանություն.

1. Վո=vo, միայն վորոշ թվով բառերի սկզբում.

2. ո=օ հազարավոր բառերի մեջ:

Նա շատ լավ գիտե, ուրեմն, վոր այժմ ել, այժմյան արտասանությամբ ո-ն նույն հնչյունն ունի, ինչ վոր օ-ն, բայց և այնպես նա տարածում է

\* Տես Մի հնչյունին մի գիր, յեր. 20:

\*\* 2. Աճառյան, Բարբառագիտ., յեր. 16:

մի առասպել, թե իբր Մ. Աբեղյանը Օ գիրը դուրս ձգելով՝ ընրա պաշտոնը հատկացնում է ու-ին ըստ սրա հից արտասանության»։ Իսկ ինքը Մ. Մ.-ը, վար ընդունում է ամօթ, ակօս գրելու փոխանակ՝ գրել ամոթ, ակոս, արդյոք նա ինքը Օ գիրը չի փոխարինում ու-ով և արդյոք ու-ն դուրս ձգելով շարա պաշտոնը չի հատկացնում ու-ին ըստ սրա շեխն» արտասանության»... Արդյոք ինքն ընդունելով ռեֆորմի այդ մասը, «յետահայաց ուղղությամբ» չի վարվում... ինչից է առաջանում նրա այդ դատողությունը։ Բացատրեմ այդ՝

Նա գիտե, վոր այբուբենի արժեքը, այսինքն տառերի համապատասխան հնչյունները ժամանակի ընթացքում փոխվում են. նա այն էլ գիտե, վոր ուղղագրությունը հետևելով հնչափոխության, շարունակ փոփոխվում է, հարմարվելով նոր արտասանությանը. բայց նա այն չգիտե, վոր հնչյունները բազմազան յեզանակներով են փոխվում, ուստի և ուղղագրության փոփոխության համար համապատասխան վերաբերմունքներ են պահանջվում։

1. Մի հնչյուն բոլոր դեպքերում փոփոխվելով դառնում է մի բոլորովին ուրիշ նոր հնչյուն, վոր առաջ գոյություն չուներ լեզվի մեջ և նոր է առաջ դալիս, իսկ հինը մոռացվում, մեռնում է, դրա համապատասխան տառն էլ բնականաբար նոր արժեք է ստանում։ Այսպես՝ մեր Պ տառի հնչյունը հնումը յեղել է Ղ-ի մոտիկ մի հնչյուն, բայց փոխվելով դարձել է այն հնչյունը, վոր լսում ենք, որինակ, աղաղակել բառի մեջ։ Այսպիսի հնչափոխության դեպքում բնականաբար մենք չենք դիպչում հին ուղղագրությանը. վորովհետև հարկ չկա փոխելու մի տառի գրություն, վորի համապատասխան հնչյունը ամեն դեպքում նույն փոփոխությունն է կրել. հին հնչյունը մոռացվել գնացել է, և նրա տեղը անցել է մի նոր հնչյուն, և տառն էլ մի նոր արժեք է ստացել։ Մ. Մ.-ը չգիտե, վոր այսպիսի դեպքերի համար է ստաձ իր չա-կերանների մեջ բերած (յերևի մի գրքի մեջ կարդացած) սկզբունքը թե՛ «մեր այժմյան լեզվի համար մեր այժմյան այբուբենը»։ Մեր այժմյան այբուբենի մեջ Պ տառը կատկային (կոկորդային) շփական ձայնից հնչյունի նշան է, այդպես էլ պիտի առնվի։ Այլ ինչից է, հարկավ, վոր այս նոր հնչյունը վորտեղ դեպքերում, մի յերկրորդ հնչափոխությամբ, դարձել է արդեն համապատասխան կարգի անձայն խ հնչյուն։

2. Մի հնչյուն փոխվելով վերածվում է ուրիշ մեկ կամ ավելի հնչյունների, վորոնք արդեն գոյություն ունեն լեզվի մեջ, և վորոնց համապատասխան տառեր կան. ուստի և հին փոխված մեռած հնչյունի համապատասխան տառն ավելորդ է դառնում։ Այսպես՝ մեր Ղ տառի համապատասխան հին հնչյունը, վոր է բաղաձայնական ու (w) հին աւ, եւ, իւ յերկբարբառների մեջ, այլևս գոյություն չունի մեր նոր լեզվի մեջ. ուստի և Ղ տառն իբրև ավելորդ դուրս է ձգվում մեր այժմյան այբուբենարանից, վորովհետև ուղղագրությունը հետևում է հնչափոխությանը, ուստի հին աւաւք գրվում է ամօթ, իսկ այժմ ամոթ, հին աւաւք գրվում է այժմ ավաւ, հին բեւեւ՝ այժմ բեվեւ, հին եիււեւ՝ այժմ եիվեւ. իսկ եաւիւք՝ այժմ եաւոյուք։—Մ. Մ.-ն այստեղ էլ ասում է՝ «մեր այժմյան լեզվի համար մեր այժմյան այբուբենը», և հետևելով հնչափոխությանը՝ հին բաղաձայնական ու (ւ, w) հնչյունը, վոր վերածվել է շփական վ բաղաձայնի, գրում է վ տառով. հին աւ յերկբարբառը, վոր դարձել է պարզ օ=ո ձայնավոր, այդպես էլ գրում է, ամաւթ=ամօթ=ամոթ։ Բայց նա դարձյալ թողնում է այստեղ մի շխտի ալանջ»։ Հին իւ=iw յերկբարբառի մեջ լ-ը դարձել է վանկային ու (u) ձայնավոր, հա-

րիւր = harlwr դարձել ե հարլւր (յերկվանկ) կամ harjur, նա մերժում ե նարյուր = harjur գրությունը միմիայն նրա համար, վոր դեռ գլխի չի ընկել, թե այստեղ ել պիտի ասենք, թե «մեր այժմյան լեզվի համար մեր այժմյան այրուբենը»:

3. Մի հնչյուն վորոշ դեպքերում միայն վերածվում մի ուրիշ հնչյունի, վոր կա լեզվի մեջ, և վորի համապատասխան տառ ել կա այբբենարանի մեջ. իսկ ուրիշ դեպքերում պահվում են անփոփոխ: Բնականաբար վորտեղ հնչյունն անփոփոխ ե մնացել, ուղղագրության դիպչելն անմտություն ե. իսկ վորտեղ փոխվել ե լեզվի մեջ գոյություն ունեցող մի հնչյունի, ուղղագրությունն ել համապատասխան կերպով փոխվում ե: Այսպես՝ ու (u) հնչյունը գու, ջուր ե այլն բառերի մեջ անփոփոխ ե մնացել, բայց գուարթ, աստուած բառերի մեջ դարձել ե վ: Մ. Մ.-ն ընդունում ե գրել զվարթ, աստված: Բայց յ = y (յ) հնչյունը բոլորովին նման ձևով մի դեպքում անփոփոխ ե մնացել (այո, գոյական), իսկ ուրիշ դեպքում վերածվել ե հազագային հնչյունի, ինչպես՝ յարմար այլևս արմար չե, այլ հարմար (Մ. Մ.-ը կարող ե ձայնեղ հազագով արտասանել): նա չի ուզում լսել այս մասին, վորովհետեւ զգովում ե: Բայց չե վոր յարմար բառի սկզբում յ տառի հնչյունը փոխվել ե—Մյդ արժեք չունի. Մ. Մ.-ն այստեղ կարող ե ասել «մեր այժմյան լեզվի համար մեր եի՞ն այբուբենը»:

4. Մի հնչյուն վորոշ դեպքերում դուրս ե ընկել, ուստի գրության մեջ ել դրա համապատասխան տառն իբրև ավելորդ պետք ե դուրս ձգել: Այս շատ շուտ ե հեշտ ե ըմբռնում Մ. Մ.-ը, վոր ընդունում ե գրել հին գեացեալ, ծառայ գրությունների փոխանակ՝ գեացել, ծառա:

5. Վորոշ դեպքերում ավելացնում ե մի հնչյուն, վոր կա լեզվի մեջ, և վորի համապատասխան տառն ել կա, ուստի և գրության մեջ դրա համապատասխան տառն ել պետք ե ավելացնել, ինչպես հին որք = orh դարձել ե հորք, հին ազանել դարձել ե հազանել, հին մեք դարձել ե մեք և այլն: Մ. Մ.-ն այս ել ընդունում ե և գրում ե հանդիստ սրտով ավելացնելով համապատասխան տառերը՝ հորթ, հազանել, մենք և ուրիշ շատերը, և այստեղ նազըլի չի ընկնում ասելու, թե «մեր այժմյան լեզվի ուղղագրությունը հիմնված ե մեր եի՞ն այբուբենի վրա», և թե ուի ընոր արտասանությունը փոխարինված ե հո գրությամբ: Հին որք կարելի յե գրել հորք և այս չասել, իսկ յերբ հին որք, որդի գրենք վորդ, վորդի, ավելացնելով ավելացած վ հնչյունի համապատասխան տառը, այդ դեպքում պետք ե ասել դա «յետահայաց ուղղությամբ ու՞րոք» ե, վորից պետք ե զգուշանայինք», գրանով «վերականգնվում ուի հնչյունը»: Իսկ յերբ Մ. Մ.-ին ասում են, թե դրանով մի ու դիրք պահվում ե միայն մի հնչյունի համար, և թե ուն հազարավոր բառերի մեջ ո հնչյունն ունի այժմ ել,—այն ժամանակ նա պատասխանում ե. այո, բայց յես լսել եյի այդ մասին. ինչո՞ւ իմ լռությունը խանգարեցիք: Մ. Մ.-ը, փոխանակ այդպիսի առասպել տարածելու, թե ուղղագրության ու՞րոքը «յետահայաց ուղղությամբ» ե կատարված, պետք ե առներ իրողությունը պարզապես այնպես, ինչպես կա. այն ե՝ յերբ հնչափոխությամբ նոր հնչյուն ե ավելացել բառի սկզբում կամ մեջը, դրա համապատասխան տառն ել ավելացրած ե գրության մեջ, հին ու = ot դարձել ե արտասանությամբ վոտ = vot, այսինքն սկզբից ավելացրած ե վ հնչյունը, պեսք ե ավելացնել սկզբից վ: Յե՞լ այդպիսի մեջ այդ դեպքում ուրիշ կերպ ել



չեն վարվում և չի կարելի վարվել, յերբ չեն ուզում հին ուղղագրութիւնը պահել, և ինքն Ս. Մ.-ն ել գրում ե՛ հորթ, հագնել, մենք, մերոնց և այլն և վոչ թե որթ, ազանել, մեք, մերոց և կարգում հորթ, հագնել, մերոնց...

X.

Են առից հետո բառերի միջում ավելացվում և չ տառը, յերբ յետևից մի ձայնավոր և գալիս. բոպեյական... բոպեյով, բոպեյում, քրիստոնեյութիւն... բոպեյի... Այսպես և բայերի մեջ. եյի, եյիր, եյինք, եյիք, եյինք. գրեյի, գրեյիր, գրեյինք, գրեյիք, գրեյինք:

ԵՄան. Յերբ և ձայնավորից հետո չ հնչյունը չի արտասանվում, չպետք և գրել. ինչպես՝ բարե՛ապաց, բարե՛ախորժ, հոգե՛առ, քնե՛ած... ովկեան, իդեա, Նույնպես՝ Թեոդոր, Թագեոս, Մատթեոս, Լեոն, յերբ չեն արտասանվում Վ բաղաձայնով իբրև Թեվոդորոս, Թագեվոս, Մատթեվոս, Լեվոն, ինչպես և պետք և գրել ըստ արտասանութեան:

Ս. Մ.-ն այսպիսի մի իմաստութիւն և ասում այս դեպքում. «Այս կետն ըստինքյան կոչնչանա, յեթե մեր այրուքնի մեջ պահվի է տառը, վոր միակ գործածական տառն և այս կետում հիշված պայմաններում: (Մենք ունենք էա, էի, էու գրութեան ձևեր, բայց վոչ եա (յերկվանկ), եի, եու, վորոնց մեջ կարիք լինել ավելացնել չ)»:—Այդ նշանակում ե՛ յեթե հին ուղղագրութիւնը պահվի, այլևս նոր ուղղագրութիւնը չի լինիլ, կամ յեթե հին էա, էի, էո, էու գրութիւնները պահվին, այլևս եյա, եյի, եյո, եյու գրելու կարիք չի լինիլ: Անշուշտ, յեթե հին գուաք գրութիւնը պահվի, այլևս զվաք գրութիւնը չպիտի ընդունվի:

Ս. Մ.-ը չի ըմբռնում նախ այն, վոր յերբ է տառը պահվի, մի հընչյունին յերկու գիր և լինում, ուստի և այդ է տառը իր գլուխը խոթում և ամեն տեղ, ուր պետք չե, և ուղղագրութիւն չսովորած մարդիկ գրում են՝ բէրէլ, տնէր, տեղէր և այլն և այլն: Ապա՝ նա կարծում և, թե չ տառն ավելացվում և այն պատճառով, վոր է տառը չի պահվում: Դիցուք պահեցինք է տառը բառամիջում էա, էո, էի, էու, կապակցութիւնների համար. ինչ և կարծում նա, չ տառն իր գլուխը կխոթի՞ այդ կապակցութիւնների մեջ թե չե: Յեթե նա շատ չնչին չափով ուշադրութիւն դարձրած լինել ուսումնասիրելու մեր հնչաբանութիւնը և գրութիւնը, նկատած կլինել՝ բոպէյի, բոպէյում, բոպէյական և նման գրութիւններն արտասանութեան համեմատ և կիմանար, վոր նույնիսկ առանձին «ձայնակապ» տերմինը կա (Ղազարոս Աղայանից մտցրած) յերկու ձայնավորների մեջ մտնող այս նոր չ հնչյունի համար:

Ինչից և առաջանում այս չ հնչյունը: Իմ Զեկուցման մեջ գրված և. «Առհասարակ մեր նոր լեզվի ընդհանուր հատկութիւնն և, վոր միևնույն բառի մեջ յերկու ձայնավոր իրար չեն հաջորդում հորանջով (=hiatus). յերկու ձայնավորի մեջ մտնում և չ կիսաձայնը. այսպես միշտ ա, ա(=օ), ե(=ե,թ) ձայնավորներից հետո հաջորդ ձայնավորից առաջ մտնում և չ. իսկ ու ձայնավորը դառնում և Վ (լեզու, լեզվի): Ի ձայնավորի գրութիւնը միայն դեռ տատանվում և այս նկատմամբ, այն ե՛ ի ձայնավորը հաջորդ ձայնավորի հետ միանում և կամ չ կիսաձայնով, կամ թ ձայնավորն ինքն իրրև կիսաձայն չ արտասանվելով՝ միանում և հաջորդ ձայնավորի հետ. այսպես, որինակ՝ միաթալ, ձիով բառերն արտասանվում են կամ իրրև միաթալ,

ձիոյով կամ մյաճալ, ձյով. այսպես և Իտալիա, միլիցիա և այլն վրում են իբրև Իսպայա, միլիցյա: Հենց այդ պատճառով մեր բանաստեայսպիսի բառերը մի վանկով և ավելի և պակաս են հաշվում. նայելով զին, միաճալ համարում են յերկու կամ յերեք վանկ: Աչքի առաջ ունենալով հաջորդ ձայնավորի հետ ի ձայնավորի միացման այս աստանվող դրությունը՝ այս կարգի բառերի ուղղագրությունն անփոփոխ պետք է թողնել. մինչդեռ ա, ո, և ձայնավորների և հաջորդ ձայնավորների մեջ միշտ պետք է յ գրել:

Իմ Զեկուցումն ուղղված էր մասնագետներին, վորոնք, հարկավ, պետք է իմանային մեր լեզվի այս հատկությունը: Բայց ինչպես յերևում է, նույնիսկ Ս. Մ.-ը չգիտե այդ. ուստի յես ստիպված եմ մի փոքր կանգ առնել այդ մասին: Նախ՝ ինչ է հորանջ (hiatus) ասածը:—«Հորանջով իրար հաջորդում են յերկու ձայնավորներ, յերբ սրանցից յուրաքանչյուրը պահում է իր անկախ անհատականությունը, մեկն ընկնում է նախորդ վանկի վերջում, մյուսը՝ հաջորդ վանկի սկզբում: Շատ լեզուների մեջ ձգտում կա ավելի կամ պակաս չափով խուսափելու հորանջից: Հորանջ չսիրող լեզվի մեջ յերկու ձայնավոր այդպես հորանջով կարող են մեկը մյուսին հաջորդել զանազան պատճառների հետևանքով, ինչպես են՝ խոսքի մեջ յերկու տարբեր բառերի, տարբեր տարրերի (բաղադրիչ մասերի) իրար հանդիպում, փոխառած ոտար բառեր և այլն»: Այսպես հայերենում հորանջով իրար հանդիպում են բառավերջի և բառասկզբի ձայնավորները՝ նա ասաց, դու իմացար և նմաները. նույնպես բարդության մեջ՝ ամենա-անջնաս, ամենա-ուգտակար և նմաները. այլև ոտարագրի բառերի մեջ՝ կառուչուկ, կակաո, կլուակ, կլուուն, բոա: «Մնացած գեպքերում հորանջից հաճախ խուսափում են ինքնաբերաբար զանազան յեղանակներով, վոր քերականագետները վաղուց դիտել են, և վորոնց նրանք զանազան անուններ են տվել»: Իհրենք մեզ համար կարևոր. միքանի այդպիսի յեղանակները: Այսպես՝ «synizèse կամ syneresèe է կոչվում այն փոփոխությունը, յերբ իրար հաջորդող յերկու ձայնավորը իրար միանալով կազմում են մի բարձրացող յերկբարբառ, ինչպես i-a դառնում է ya»: Այսպես առաջանում են Ֆրանսերենում և ուրիշ լեզուների մեջ ya, ye և այլն յերկբարբառներ, վորոնք Ֆրանսերենում ավանդական ուղղագրությամբ արտահայտվում են ia, ie և այլն գրությամբ: Նույնը չինում է, ինչպես տեսանք, և հայերենում. միլիոն արտասանվում է միլյոն Իտալիա = Իտալյա, պատանիակ = պատանեակ, այժմ պատանյակ և այլն:— «Epenthèse ասվում է, յեթե յերկու ձայնավորի մեջ մտնում է մի բաղաձայն»: «Ընդմիջարկական epenthèse-ի մի առանձին ձևն է y, w (≡j, ւ) կիսաձայնների զարգացումը համապատասխան i, u (≡ի, ու) ձայնավորների և հաջորդ ձայնավորների միջև: Ֆրանսերենում բավական հաճախ այս յերևույթը տեղի յե ունենում i-ից հետո, ինչպես՝ prier=pri—yé, Lia=li—ya: Միևնույնը, թեպետ ավելի պակաս չափով, պատահում է և u (≡ու) ձայնավորից հետո, ինչպես clouer=clu—wé»\*: Այսպես և հայերենում՝ ձիավոր = ձի-յավոր, Սառուղ, Աբրտեամ: Աբքեզայոս:

Մեր լեզուն ամենահին ժամանակներից ձգտել է խուսափել հորանջից. ինչ լեզվի մեջ արդեն = տիպի բայերի անցյալ անկատար ժամանակի մեջ

\* L. Roudet, Elements de Phonétique Générale, յեր. 171 հան.:

յ (y). եմ—էի (=ei), լնում—լնուի (=lnui), բայց լամ—լայի (=layi)\*: Տ հին լեզվի մեջ հորանջը դեռ բոլորովին վերացած չէ յեղել, ուստի և լրվել է՝ եի, եիր, եաք, եիք, եին (=ei, eir, eakh, eikh, ein), այսպես և բերեի, բերեիր, բերեաք, բերեիք, բերեին (=berei, bereir, bereakh, bereikh, berein=bere—in). «Հետադարձ, սակայն, այս յերկու ձայնավորի մեջ ևս հորանջը վերացել է, ինչ վոր հատուկ է մեր նոր լեզվին, և յերկու ձայնավորներին մեջ մտել է յ կիսաձայնը, իբրև եյի, եյիր, եյաք, եյիք, եյին. բայց վորովհետև հին ուղղագրությամբ եյ=է, ուստի ասալ է յեկել միջնագաղթան էի, էիր, էաք, էիք, էին գրութեանը: Այս վերջին միջնադարյան գրութեան ձևը, սակայն, այժմ այլևս համապատասխան չէ մեր արտասանութեանը, վորովհետև այժմ է=եյ չէ, վոր եյի գրելու փոխանակ էի գրենք. ուստի պիտի վերադառնանք հին ուղղագրութեանը (այսինքն ե-ով գրութեանը), միայն, քանի վոր հորանջը վերացել է, պետք է գրել եյի, եյիր, եյինք, եյիք, եյին ձևով, ինչպես վոր հաճախ գրում են ուղղագրութիւն չսովորողները\*\*:

Ահա թե ինչո՞ւ գրեյի և նման բառերի մեջ ե-ից հետո պետք է ավելացնել յ տառը: Ընթերցողը վերևում գրածից կտեսնի, վոր հնագույն գրութեան ձևն է գրեի, գրեիր և այլն. միջնադարյան գրութեան ձևն է գրէի, գրէիր, իսկ գրեյի, գրեյիր և այլն ձևը բոլորովին նոր է, ուղղագրութեան անփորձի ժամանակ միայն առաջարկված և ընդունված: Իսկ Ս. Մ.-ը, ինչպես ուրիշ դեպքերում, այս դեպքում ել բարեհաճում է հայտարարութիւն անել. «Միջնագաղթան գրութեան ձևով է գրեյի, բոլորովին, վորը լեզուն իր դարավոր մշակումով վերածեց այժմյան գրէիր, բոլորովին ձևին: Ուրեմն այս Թ-ը կետը վոչ այլ ինչ է, յեթե վոչ գաղթալ վերագործ գեղի հինը, գործածութեանը գուրգ վառվածը»:<sup>1</sup>—Կարելի չէ հնասիրութեամբ հակառակ լինել ուղղագրութեան անփորձին, բայց վոչ այդպես հեղաշրջել իրողութիւնները: Անցյալ անկատար ժամանակի շեի, եիր և այլն ձևերի է տառի փոխանակ, վոր գործածված է բոլոր հնագույն ձևագրերի մեջ, սիջից գառում գրվել է է, վոր է անցել է արդի տպագրութիւնների մեջ», գրում է Մեյլէն\*։ Հասկացածով արդոք Ս. Մ.-ը, վոր էի, գրէի ձևն է հենց ամիջնադարյան գրութեան ձևը», վոր Մ. Արեղյանը դուրս է վտարել տալիս, վորովհետև այդ է-ով գրութիւնն այլևս չի համապատասխանում մեր արտասանութեանը: Հասկացածով արդոք նա, վոր յ տառով գրեյի ձևը հինը և դուրս վտարվածը չէ, այլ նորագույնը: Սակայն մենք շարունակենք:

Ինչ վոր մի հայ լեզվաբանի համար անծանոթ է, մի ոտարագլի գիտնական շատ հեշտութեամբ գիտում է: Յ. Կարսը «Կիլիկիայի հայերենի պատմական քերականութեան» մեջ (յեր. 110 հա.) խոսելով հորանջի վոչնչացման մասին կիլիկիայի հայերենի մեջ վորոշ դեպքերում, մի ծանոթութեան մեջ գրում է. «Նոր հայերենում, վորի մեջ հորանջի վոչնչացման սկզբունքը նաև բառամիջում է տեղի ունենում, է բայի անցյալ անկատար ժամանակի մեջ հին է-ն, վերջավորութիւնից առաջ, դառնում է էյ կամ եյ: Այսպես, որինակ՝ Նոր Նախիջևանի, Թիֆլիսի, Ախալցխայի, Ալանի և ուրիշ բարբառների մեջ: Վերջին բարբառի համար որինակներ կարելի չէ գտնել ձայնիկային»

\* A. Meillet, Gramm. comp. de l'arménien classique, յեր. 95.

\*\* Մ. Արեղյան, Զեկուցում Հայ. լեզ. ուղղագ. անփորձի մասին, յիր. 5:

«Հնությունք Ակնա» գրքի մեջ. առեյից, յեր. 294 (հին՝ առնէին). իւնեյից, յեր. 295 (հին՝ ունէին), հիւաէյին, յեր. 303 (հին՝ ուաէին), խըրկեյին, յեր. 295 (հին՝ յուղարկէին), հեծնեյին, յեր. 295 (հին՝ հեծանէին), պագնեյին, յեր. 298 (հին՝ պագանէին), չէյին, յեր. 294 (հին՝ չէին) և այլն: Նոր հայերէնում շատ տարածված այս յերևույթը կիլիկերենի համար դեռ կարելի չէ ապացուցելը:

Ով վոր ծանոթ է մեր նոր լեզվին, գիտե, վոր հորանջի այս վոչնչաուսն իսկապես ամեն դեպքում յերևան է դալիս մեր նոր գրական. լեզվի մեջ և կա առհասարակ բարրառնների մեջ ևս: Բայց այդ արժեք չունի Ս. Մ.-ի համար. նա կարող է գրել: «Сма емаеѣм артаասанում են գրէի (грѣи), բողէակաѣм (рорѣакаѣм), առանց չ հնչյունի, վորոնց արտասանության վրա չպեաք է բռնանալ այդ յ-ի հավելումով»: Ս. Մ.-ի լեզվի մեջ ըշատ շատերը քառը պեաք է հասկանալ ըշատ քչերը», յերևի այն մարդիկը, վորոնք արտասանում են նաև աբխազերէն, ծառաում ե. ըստ Ս. Մ.-ի, այդպիսի արտասանությունն ունեցողների վրա չպիտի բռնանալ յ-ի հավելումով. բայց թող փորձի Ս. Մ.-ն ինքն առանց յ-ի, այսինքն հորանջով, խոսել դրական լեզվով և այն ժամանակ կտեսնի, թե ինչպես ստիպված կլինի ձեռք քաշել ըշատ շատերից» և հետեւ գրական և ընդհանուր արտասանությանը, վորպեսզի ծիծաղելի չդառնա: Կան բարրառններ ել, վորոնց մեջ ու-ձայնավոր կապակցության մեջ հորանջը վերացել է մեջ մտած չ կամ վ հնչյունով. այսպես կ-պղսեցիք, նոր նախիջևանցիք արտասանում են՝ լեզույի, լեզույով, բայց և այնպես Ս. Մ.-ն այդ դեպքում «բռնանալու» մասին չի խոսում և գրում է լեզվի, լեզվով... «Բնությունը» պատրաստ մի առարկութուն է միայն այն դեպքի համար, յերբ հարկավոր է նոր ուղղադրության դեմ խոսել:

«Ավելորդ բարդություն և գրության գուր յեկատրումն է չ ավելացնելը վերոհիշյալ գրության մեջ»:—Ըուր յերկաբումը կուղարկենք իր ընկերների մոտ, վոր տեսել ենք: «Առանց յ-ի դրությունը, գրէի կամ գրի (ըստ Յոր (!) արտասանության ե տառի) միտնգամայն բավական է ընթերցանության համար և հեշտ՝ գրության համար, քան չ հավելվածով... Վորոնք վոր, արագ խոսակցության ժամանակ, յ-ով են արտասանում՝ այնպես ել կարտասանեն, թեկուզ յ-ն գրված լինի կամ չլինի»:—Ահա թե ինչու, ըստ Ս. Մ.-ի, ավելորդ է յ-ն ավելացնել: Իհարկե ավելորդ է նաև ու-ի փոխանակ վ գրել: Վորոնք վոր արագ (թեկուզ դանդաղ) խոսակցության ժամանակ, լեզուի քառը վ-ով են արտասանում՝ այնպես ել կարտասանեն, թեկուզ վ-ով գրված լինի (լեզվի), կամ ու-ով գրված (լեզուի):—Այս առարկությունն, ինչպես տեսնում ենք, այնպիսի մի դորավոր հիմք է, վոր կարելի չի բերել ամեն ուղղագրական փոփոխության դեմ: «Առանց յ-ի գրությունը... հեշտ է գրության համար», յերևի այն պատճառով վոր «կարճ» է: Ս. Մ.-ը չի կարողանում ըմբռնել՝ 1) վոր հնչյունական գրությունը հեշտ է միայն նրա համար, վոր գրվում են բոլոր հնչյունների համապատասխան տառերը, 2) վոր սխալներն առաջանում են նրանից, վոր մի դեպքում մի հնչյուն գրվում է (ծառայական), իսկ մի ուրիշ նման դեպքում (բողէական) նույն հնչյունը չի գրվում, ուստի և ուղղագրության անվարժները գրում են նաև՝ բողէական, բողեյական, և 3) վոր ընդունելով վերջինը՝ բողեյակաѣм, գրությունը միակերպության ենք վերածում և սխալների դուր փակում:—

Բայց ի՞նչ հարկավոր են այս խոսքերը, քանի վոր Ս. Մ.-ի համար, ուզած ժամանակ, գրեթե գրության մեջ և առոի արտասանությունն էլ ըստ նոր արտասանության է. հապա ի՞նչ է յեղել նրա երև արտասանությունը. յերևի վոչ է—Յ, Յ, այլ մի ուրիշ հնչյուն... Յեզ վերջապես Ս. Մ.-ը գրեթե գրության կողմնակից է թե գրեթե, Բայց շարունակենք:

«Ուղղագրությունը միկրոֆոնական հնչյունները, անհատական արտասանության նյութանսներն արտահայտելու վոչ պարաք և վոչ հնարավորություն ունի, այլապես կընկնի անելանելի լարիրինթոսի մեջ»։—Կատարելապես համաձայն էմ նրա այս խոսքի մեջ արտահայտված մտքին ըստ ինքյան: Բայց ո՞վ ասաց, վոր, որինակ, բովեյակա՞ն րառի մեջ ՚ հնչյունը «միկրոֆոնական» է կամ «անհատական արտասանություն», այսինքն այս կամ այն անհատի արտասանությամբ է այդպես, և վոչ ընդհանրական մի արտասանություն: Յեթե դա «անհատական արտասանության նյութանս» է, հապա ինչու նա քիչ վերևում գրում է. «շատ շատերն արտասանում են... առանց ՚ հնչյունի»: Այդ դեպքում նա կգրեր՝ «բացի այս կամ այն անհատից՝ արտասանում են»...: Ուզած ժամանակ «անհատական արտասանության նյութանս» է դարձնում Ս. Մ.-ը մի հնչյուն, վոր կա մեր գրական լեզվի մեջ, և վոր ինքն էլ լավ լսում և արտասանում է. և ահավասիկ գրա ապացույցը Ս. Մ.-ի իրեն ձեռով գրածը, վոր հիշատակ է մնում ինձ մոտ.

«Ազատ թողնել՝ բառերի մեջ և տառից հետո, յերբ յետևից գալիս է մի ձայնավոր՝ ավելացնել ՚ տառը—այսպես գրեթե կամ գրեթե, քրիստոնեություն կամ քրիստոնեյություն. բայց գրել բովեյակա՞ն, վորպեսզի «եհա» յերկբարբառ չկարդացվի»: «Բովեյական» գրության կողմնակից էր նա և իբրև Ուղղագր. Հանձնատողովի անդամ. վորովհետև նա այդ ժամանակ վորդեգրել էր բառամիջում և բառավերջում միշտ և գրել է-ի փոխանակ:—Տեսնում եք, Ս. Մ.-ը յերկու տարի առաջ լսում էր այդ «միկրոֆոնական» և անհատական» հնչյունը, իսկ այժմ այլևս չի լսում այդ, վորովհետև թիֆլիսի «ազգային ջոջերը» թունդ են պաշարել նրան:

Գիտե՞ արդոք Ս. Մ.-ը, թե վոր հնչյուններն են «միկրոֆոնական», այսինքն աննկատելի յեն մնում ականջի համար, ուստի և գրության մեջ աննշանակելի մնում:—Դրանք «անցման հնչյուններն» են, վորոնք արտաբերվում են յերկու հիմնական հնչյունների մեջ՝ ինչպես ամ վանկի ամ և մ հնչյունների մեջ. ինչպես և ամենա-նգտակար բառի մեջ ա—ո (ա—ո) հնչյունների մեջ յեզած անցման հնչյունը: Դե թող նա միքանի անգամ արտասանի «ամենա-նգտակար, ծառայ-ո-ով, բովե-յ-ով» բառերը և նոր կիմանա, վոր առաջին բառի ա—ո ձայնավորների մեջ յեզած հնչյունն աննկատելի յե, իսկ մյուս յերկու բառերի ա—ո, ե—ո ձայնավորների մեջ յեզած չ (չ) հնչյունը շատ պարզ լսելի յե, և ինքը Ս. Մ.-ն էլ յերկու տարի առաջ, ինչպես յերևում է իր ձեռքով գրածից, և իբրև Հանձնատողովի անգամ հայտնած կարծիքից, լավ լսում էր այդ յ (չ) հնչյունը: Յեզ վերջապես կարելի յե, ինչպես տեսանք, միմյանց հետ շփոթել անվանկային Ի (1) ձայնավորը, միջնական չ կիսաձայնը և շփական յ բաղաձայնը, բայց չլսել այդ հիմնական հնչյունը, դրա համար խուլ պիտի լինի: Յեզ վորովհետև Ս. Մ.-ը կարծում է, թե հայերը մեծ մասամբ խլացած են այդ հնչյունը լսելու համար, իբրև վերջին մի ապացույց տալիս է այս ճարտասանական հարցը. «Յեզ հնարավոր է արդոք այսպիսի նրբության զանազանություն պահան-

ջել ճորուճներից և նույնիսկ բացատրել նրանց:--Նրանք, վորոնց տեսողութայն զգայությունից խեղդված է լսողութայն զգայությունը, կպատասխանեն՝ անշուշտ վե՛հ: Յե՛վ Ս. Մ.-ն ել համոզված կմնա, թե մեր նորուսները չեն զանազանել յ (j) հնչյունը մյուսներից, և մեր ուսուցիչները չեն կարող յ (j) հնչյունը բացատրել նրանց: Աշխարհի մեջ հայերն այս դեպքում մի յեզակի բացառություն կկազմեն, չնայելով վոր մենք մեր լեզվի մեջ մեծ առատությամբ ունենք յ (j) հնչյունը և նույնիսկ տառ ունենք դրա համար և լսում ու գրում ենք գոչական, ծառայական և նման բառերի մեջ, բայց չենք կարող լսել ու գրել միայն՝ բոպեյական և նման բառերի յ-ն: Ծառայականի յ-ն կաբելի յե բացատրել նորուսնն ( ., իսկ բոպեյականի յ-ն անկարելի յե... Ահա թե ինչպիսի հայտարարությունն է տնում Ս. Մ.-ը և յեզակի տեսակետով: Մի հայտարարությունն էլ յեսանեմ, բայց վոչ լոկ խոսքերով, ինչպես նա յե տնում, այլ հիմնված վիճակազրական տվյալների վրա:

1924 թ. ապրիլի 3-ին այցելեցի Յերեանի I աստիճանի № 6 դպրոցը. լսեցի դասերը և թերթեցի գրավորները: Այդ որը 3-րդ խմբակի ուսուցիչը աշակերտներին հենց նոր գրել էր ավել դասարանում մի ինքնուրույն շարադրություն՝ «Մի եքսկուրսիա դեպի Գանաքեռ», վոր նրանք կատարել էին մի յերկու որ տատջ: Այդ խմբակը նոր կազմված էր, ուսուցիչի ասելով, զանազան դպրոցների աշակերտներից, վորոնք և զանազան տեղերից են՝ յերևանցի, վանեցի, գյուղացիներ և այլն, ինչպես են այժմ Յերևանի բնակիչներն ընդհանրապես. աշակերտներն այդ տարի միայն ունեցել են հայերենի համար դասագիրք նոր ուղղագրությամբ, ուրեմն, ընդամենը մի վեց ամիս. նախորդ տարիները սովորել են հին ուղղագրությամբ: Հետաքրքիր էր տեսնել, թե այդ յերեխաներն ինչպես են գրել Ս. Մ.-ի «միկրոֆոնական հնչյունն ու անհատական արտասանության նյութանսը»: Յես կառնեմ միայն անցյալ անկատարի էյի, էյիր, էյինք և այլն (գրեյի, գրեյիր և այլն) և բոպեյի, բոպեյից և նման ձևերը. վորովհետև յեթե յ հնչյունը կարող է պարզորոշ լսելի չլինել, այդպես կարող է լինել միայն նույն կարգի ի ձայնավորից առաջ. իսկ բոպեյական, բոպեյով, բոպեյում և նման կապակցությունների մեջ ա, ո, ու ձայնավորներից հետո յ-ն լավ լսելի յե: Ծարադրություն գրող աշակերտների թիվն էր 29, բայց նրանցից 6-ի գրվածքի մեջ գործածված չկար էյի և այլն կապակցությունը. իսկ 23-ի շարադրությունները տալիս են հետևյալ պատկերը (շարադրություններն այժմ ինձ մտա են):

Այս էյի կապակցությունը պատահում է 81 անգամ (յուրաքանչյուր աշակերտի գրվածքի մեջ գործածված 1—10 անգամ). 76 անգամ ուղիղ է գրված, յ-ով՝ էյիք, և միայն 4 անգամ առանց յ-ի և 1 անգամ էլ յեթեք ձևով: Միայն անող աշակերտների թիվն է 4, իսկ մնացած 19 աշակերտն անսխալ են գրել: Միայն անող 4 աշակերտներից մեկը 7 անգամ ուղիղ է գրել (էյին) և միայն 1 անգամ յեթեք, այսինքն յ տառի տեղափոխությունն է արել, ինչ վոր հաճախ պատահում և յերեխաներին. յերկուսը մի-մի անգամ ուղիղ են գրել՝ յ-ով, և մի-մի անգամ էլ առանց յ-ի (էինք, նայեիր). ուրեմն լսում են յ-ն, բայց դեռ ազդվում են հին ուղղագրությունից. մեկ առակերտ միայն 2 առգառն էլ առանց յ-ի (էին, չեին): Ուրեմն այս վերջին մեկ առակերտի նկատմամբ միայն Ս. Մ.-ը կարող է ասել, թե չի լսում «միկրոֆոն-

նականձ 3 հնչյուննր. բայց դա այնպիսի աշակերտ ե, վոր շատ ուրիշ հընչյուններ ել լավ չի լսում և տառեր ե բաց թողնում, որինակ գրում ե՝ Գանառքեռ (2 անգամ), Ժա (փոխանակ ժառք), չորորդ, յերորդ, հհեռ (հ կըրկնած), գնացին (փոխ. գնացինք), Աբովանի (2 անգամ), տեռ (փոխ. տեղ) մատմեց (փոխ. պատմեց), կորոցաի (փոխ. կորուստի), Լենի (փոխ. Լենինի), արծաներ (փոխ. արձաններ), մմեջ (մ կրկնած), այդեղ (փոխ. այդտեղ), բարվել (փոխ. բացվել), վորովհետև և այլն: Այսպիսի մեկից, իհարկե, չի կարելի պահանջել, վոր եի, չեի չգրեր. վոր նա է-ով չի գրել, այդ ել շատ ե վեց ամսվա համար:

Ի՞նչ ցույց տալիս այս վիճակագրություննր. այն, վոր «նորուսները» նույննր. ալն դեպքում, յերբ հին ուղղագրությամբ են սովորել յերկու լեբք տարի և դեռ հին ուղղագրությամբ են կարգում, բաղի հայերենի գասագրքից, արդեն միքանի ամսվա մեջ մոռացել են հր. ուղղագրությունը և եյի ձեն ուղիղ գրում են: Յեվ յերևակայեցեք, այդ յերեխան, վոր լավ գանազանում ե Մ.Մ.-ի «միկրոֆոնական» 3 հնչյունը և 8 անգամից 7-ը ուղիղ գրում ե եյին(ք), 1-ը միայն յեինք (յ-ն առաջ ձգած), նա այսպիսի սխալներ ե անում ուրիշ հնչյունների նկատմամբ՝ դերի (2 անգամ), չորեքշապտի, դրբոցի, յերկերով (փոխ. յերգերով). դուրս կալով, կնալով, յերկել (փոխ. յերգել), կնացինք (2 անգամ), կլխավորապես (2 անգամ), պաճառով, անպաճառ, դաստերակը, կաղափար, դայլիճ (փոխ. դահլիճ, հին ուղղագրության յհ հաղեցությամբ), հոտվածներ, այկի և այլն. թողնում եմ խափել, կարթալ և նմանները:— «Միկրոֆոնական» 3 հնչյունը 10 անգամ լըսող և ուղիղ գրող մի ուրիշ աշակերտ անում ե հետևյալ սխալները. եկսկուրսիյա, եկսկուրսյա, հաջախեցինք, հայդնի, դերի, դպրոցիճ, յերևած, դյաստիրակներից, դյաստերակ, ճանապարհին (թեև և թե յհ), աչկերը, վերադառցել ե, վորով հեղև, ինճ, հայ-գնեց, աչկիս, սրփությ-անփ, այնրիսի, դարցրել և այլն:

Ի՞նչ կասի Մ. Մ.-ը. «հնարավոր ե յեղել արդյոք այսպիսի նրբության զանազանություն պահանջել նորուսներից և նույնիսկ բացատրել նրանց»: Ինչ վոր յերեսնամյա փորձառություն ունեցող մի ուսուցչի համար անհընարին ե,—վորովհետև նրա մեջ տեսողության զգայությունից խեղդվել ե լսողությունը,—յերեխանների և յերիտասարդ ուսուցիչների համար վոչ միայն հնարավոր ե, այլև բնական ե: Յերեխաններն իրենք արգեն ապացուցում են յերեսուն տարվա ընթացքում սխալներ չնկատող և չհիշող ուսուցչին, վոր ըուպեյական, գրեյինք և նման բառերի մեջ յ-ն լավ լսվում ե և ճանհատական արտասանության նյուանս՝ չեի Բայց Մ. Մ.-ը կասի, թե մի դասարանի գրությունը դեռ բավական չե:

Նույն ապրիլի 24-ին այցելիցի Յերևանի մի ուրիշ թաղի I աստիճանի թ 1 դպրոցը, վորի 3-րդ, 4-րդ և 5-րդ խմբակների աշակերտները գնացել եյին Նորք զբոսանքի: Յես հետաքրքրվեցի 2-րդ խմբակի աշակերտների կարգալով ու դրելով և հետս առա նույն որը դասարանում գրված մի ինքնուրույն շարագրություն: Պատկերը հետևյալն ե՝ Նրանցից 22 աշակերտի շարագրության մեջ կա գործածված եյի և այլն կապակցությունը, յուրաքանչյուրի մեջ 1—8 անգամ, ընդամենը 70 անգամ. 17 աշակերտ ամեն դեպքում ել գրել են յ-ով. առանց յ-ի գրություն (եի) կա միայն 10 անգամ այսպես՝ 1 աշակերտ 1 անգամ եյիճ, 1 անգամ եիճ, 1 աշակերտ

2 անգամ Եյիճ, 3 անգամ Եիճ, 1 անգամ Էլ յեի, 1 աշակերտ 1 անգամ Եյի, 4 անգամ Եիճ. միայն 1 աշակերտ 2 անգամն Էլ Եիճ և 1 աշակերտ Էլ 3 անգամ յեի, այսինքն յ-ն շուռ տված: Ուրեմն միայն մեկ առակերտ ընդամենը 2 աճգամ գրել և առանց յ-ի Յես բացատրությունները և այդ աշակերտի ուրիշ սխալները բերել ավելորդ էմ համարում:—

Մի յերկու որ հետո դարձյալ զնացի նույն դպրոցը, նայեցի մյուս դասարանների գրություններն ու լսեցի ընթերցանությունը, և խնդրեցի 3-րդ, 4-րդ և 5-րդ խմբակների աշակերտներին դասարանում գրել տալ իրենց դեպի Նորք կատարած զբոսանքի մասին: Այդ շարագրություններն Էլ այժմ ինձ մոտ են, և դրանց մեջ գտնում եմ հետևյալ գրությունը. 3-րդ խմբակի 14 աշակերտի շարագրությունների մեջ միայն կա Եյիճ կապակցությունը 1-6 անգամ, ընդամենը 38 անգամ գործածված, բոլորը Եյին(ք) գրված, միայն 1 աշակերտ 1 անգամ ունի շուռ տված ձևով Եիճ:— 4-րդ հիմնական և զուգընթաց խմբակների 34 աշակերտի շարագրությունների մեջ կա այդ կապակցությունը 1—14 անգամ գործածված, ընդամենը 169 անգամ, վորից 10 անգամ միայն գրված առանց յ-ի (Եին), այսպես՝ 1 աշակերտ 5 անգամից 1 անգամ Եյիճ, 3 անգամ առանց յ-ի Եիճ, 1 անգամ Էլ շուռ տված յ-ով յեիճ, 1 աշակերտ 3 անգամից 1 անգամ յ-ով, 2 անգամ առանց յ-ի. 1 աշակերտ 6 անգամից 3 անգամ յ-ով, 1 անգամ առանց յ-ի. 3 աշակերտ միայն ընդամենը 4 անգամ առանց յ-ի: Բացի դրանից 1 աշակերտ 8 անգամից 7 անգամ ուղիղ Եյիճ, 1 անգամ շուռ տրված յ-ով՝ յեիճ. 1 աշակերտ Էլ 2 անգամից 1 անգամ շուռ աված յ-ով յեիճ, 1 անգամ Էլ ավելորդ յ-ով յեիճ: 54 աշակերտից, ուրեմն, յեբեք առակերտ ընդամենը 4 աճգամ առանց յ-ի, իսկ 46 աշակերտ ամեն դեպքում ուղիղ են գրել:—5-րդ խմբակի միայն 22 աշակերտի շարագրությունների մեջ կա Եյի կապակցություն 1—5 անգամ գործածված, ընդամենը 47 անգամ, վորից առանց յ-ի (Եի) միայն 6 անգամ այսպես՝ 2 աշակերտ յերկերկու անգամից մի-մի անգամ յ-ով, մի-մի անգամ առանց յ-ի, 2 աշակերտ ընդամենը 4 անգամ առանց յ-ի. բացի այդ՝ 1 աշակերտ Էլ ավելի յ-ով (յեյինք) 1 անգամ: Ուրեմն 22 աշակերտից 17 աշակերտ ամեն դեպքում ուղիղ են գրել, և միայն յերկու առակերտ ընդամենը 4 աճգամ առանց յ-ի: Այս պատկերի ամփոփումը հետևյալն է. դասարաններն են՝ մեկ 2-րդ, յերկու 3-րդ, յերկու 4-րդ և մեկ 5-րդ խմբակներ, ուրեմն առաջին աստիճանի դպրոցի ուսման բոլոր տարիները, բացի առաջին տարուց. աշակերտների ընդհանուր թիվը 135. Եյի կապակցության դեպքեր թվով ընդամենը 405: Առանց յ-ի գրության դեպքեր ընդամենը 30 անգամ, բայց այս թվից 18 անգամն այնպիսի աշակերտների յեն պատկանում, վորոնք ունեն նաև յ-ով գրություններ, և միայն 12-ը այնպիսի աշակերտների, վորոնք միայն այս գրությունն ունեն: Այս վերջին աշակերտների թիվն է ընդամենը 7. Բացի այդ՝ յ-ի շուռ աված գրություն կա 9 անգամ և ավելի՝ 2 անգամ: Տառերի տեղափոխությունն ու ավելի գրությունը սովորական է յերեխաների համար. բայց դա չի վերաբերում խնդրին. վորովհետև այդպես գրողները յ-ն պարզ լսում են: Սակայն 7 աշակերտի ընդամենը 12 անգամ առանց յ-ի գրությունն Էլ կարելի է ասել թե յ-ն չլսելուց է անպայման. վորովհետև դա կարող է լինել նաև հին ուղղագրության ազդեցությամբ և կամ պատահական պատճառներից, ինչպես դասերին բացակայած լինել և նման-



ները. վերջապես ինչպես տառերի տեղափոխութիւնը և ավելի գրութիւնը, նույնպես և տառերի և նույնիսկ վանկերի պակաս գրութիւնը շատ սովորական և յերեսանների համար. վերեւում արդէն տեսանք, թե վորքան այդպիսի սխալներ և անուճ յերկու անգամ առանց յի գրող մեկ աշակերտու նույնպես և ուրիշները:

Յեղրակացութիւնը շատ պարզ և «նորուս» յերեսանները,—վորոնք սովորել են հին ուղղագրութեամբ և միայն այս ասարի ունեն, այն էլ միայն հայերենի գասագիրքը, նոր ուղղագրութեամբ,—գալիս են ապացուցելու յերեսանամյա ստաֆ ունեցող ուսուցչին, վոր իրեն շատ լավ լսում և գանադանում են յ հնչյունն ելի և նման կապակցութիւնների մեջ, և վոր Մ. Մ.-ն անհիմն կերպով հակառակ և կանգնում ուղղագրութեան սեփորմին:

## XI.

Նախորդ հատվածի մեջ տեսանք, վոր հայերենում բառամիջի յերկու ձայնավորի մեջ վերացած և հորանջը: Մեր նոր գրական լեզվի մեջ ճայս միևնույն ընդհանուր հատկութեամբ և ե՛մ վերջահար բայը, յերբ բաղաձայնով վերջացած բառերից հետո յի գալիս, արտասանվում և իբրև էմ (em, ЭМ), իսկ յերբ ձայնավորով վերջացած բառերից հետո յի ընկնում, քանի վոր իբրեւ վերջաճար բառ մտնում և իբրեւ մի բառ, յերկուսի մեջ մտնում և յ կիսաձայնը. յես եմ (=yes em), բայց՝ դու յես (=du yes), նույնպես նա յի, վորդի յիմ: Այս կիսաձայն յ-ն ծառն յիմ, ներքո յիմ և այլ բառերի կապակցութիւնների մեջ անշուշտ նախորդ բառերի վերջի անձայն յ-ն և, վոր հաջորդ ձայնավորից առաջ պահվում և, բայց քանի վոր արտասանութեամբ միանում և վերջահար բային և յերեսան և գալիս նա և և, ի, ու ձայնավորներից հետո՝ մարդարն յիմ, դու յես, վորդի յիմ. ուստի ավելի գործնական և գրել բայի վրա» (Ձեկուցում, յեր. 14):

Այս հիման վրա՝ նոր ուղղագրութեամբ ընդունված և ե՛մ բայի միավանկ ձևերը գրել այսպես՝ յես եմ, դու յես, նա յի, մենք ենք, դուք եք, նրանք են. գնալու յիմ, գնալու յես, գնալու յի, գնալու յենք, գնալու յեք, գնալու յին. բայց՝ գնում եմ, գնում ես, գնում և, գնում ենք, գնում եք, գնում են. գնացել եմ, գնացել ես, գնացել և և այլն. նստած եմ, նստած ես, նստած և և այլն. նույնպես՝ ծառա յիմ, ծառա յես, ծառա յի» և այլն (Առաջնորդ, յեր. 13):

Ուղղագրութեան սեփորմին այս կետի նկատմամբ Մ. Մ.-ը գրում և. «Այ՛քի առաջ պետք և ունենալ, վոր ըստ յերկրորդ կետի՝ ե-ը է-ի հնչյուն պետք և ունենա, ուրեմն մենք արտասանելու յենք (մեր նախկին գրութեամբ) գնացել էմ, գնացել էս և այլն, վորով բռնագրուվում և մեր միտ առատասանութիւնն և гнацел ем և վոչ гнацэл эм, ինչպես առաջադրուում և Մ. Մ. բեղյաճը կարգալ և գրել»:—

Կարելի յի հակառակ լինել ուղղագրութեան սեփորմին, բայց կարելի է և ասել ընթերցողներին, թե իբր Մ. Արեղյանն առաջարկում և գրել, «գնացել եմ» ձևը, մի գրութիւն, վոր հնուց կա, վոր և Մ. Մ.-ի և ամենքի գրութեան ձևն և և նոր ուղղագրութեամբ չի փոխվել: Այա՛մ քանի վոր գնացել եմ, գնացել ես և այլն ձևերի ուղղագրութիւնը մնացել և հինը, հետևաբար,

դրանց կարծեցյալ «ընդհանրացած և ճիշտ արտասանության բռնադրոսով-  
լու» մասին խոսք անգամ չի կարող լինել:

Յեղ վերջապես՝ Ս. Մ.-ը դարձյալ անտեղի կերպով մեջ ե խաղացնում  
վոչ միայն «բռնադրոսում ե», այլ և «ընդհանրացած և ճիշտ արտասանու-  
թյուն» բառերը: Ըստ Ս. Մ.-ի «գնացել» բառի «ընդհանրացած և ճիշտ ար-  
տասանությունն» ԵՄԱՍԵԼ, այսինքն փափկացրած ց հնչյունով, ինչպես պետք  
և կարգալ ուսերեն ԵՄԱՍԵԼ գրությունը: Կրաշխի նա, յեթե մենք նրան չը-  
հավատանք. գնացել, գտել, մեռել, տեսել և այլն բայական ձևերի մեջ ե-ից  
տուաջ մենք չունենք ուսերենի փափուկ կամ քմայնացրած կոչված բաղա-  
ձայնները: Կան միքանի բարբառներ, վորոնց մեջ վոչ թե այդ ե-ից առաջ  
ընկնող բաղաձայնները փափկանում են «գնացել» և նման բառերի մեջ,  
ինչպես կարծում ե Ս. Մ.-ը, այլ ինքն այդ ե ձայնավորը յերկբարբառվել ե  
և արտասանվում ե կիսաձայն ի-ով իբրև լե, ին—«գնացել»: Բայց ինքը Ս.  
Մ.-ն ել գրական լեզվի մեջ բառամիջի այս շեղված ե-ն իբրև լե, ին չի ար-  
տասանում, այլ Մ. Աբեղյանի պես իբրև Յ=է, ապա թե վոչ յեթե ե=է  
չլիներ, նա թնչպես կհամաձայներ, որինակ, այսպես ճվէր. պէտք, պտովէր  
և նման բառերը գրել ե-ով՝ այսպես, նվեր, պետք, պատվեր, այսինքն՝ է-ն  
փոխարինել ե-ով:

Գնացել եմ և նման ձևերի մեջ եմ, ես, եմք, եմ բայական ձևերի «ընդ-  
հանրացած և ճիշտ արտասանությունն» ե, ըստ Ս. Մ.-ի, ուսու. ԵՄ=ՅՅՄ, յեմ,  
այսինքն այդ ձևերն սկզբից ունեն յ=յ հնչյունը. գնացել եմ=գնացել յեմ,  
հետևաբար գնում եմ=գնում յեմ. իսկ գնացել էմ (ՅՄ) արտասանությունը  
«սխալախոսություն» ե, և իբրև թե Մ. Աբեղյանն «առաջարկում ե» գը-  
նացել եմ «կարգալ» գնացել էմ: Յես, հարկավ, այդպիսի բան չեմ առաջար-  
կում, այլ ասում եմ, վոր «գնացել եմ» հենց այդպես ել արտասանում ենք՝  
գնացել էմ: Տեսնենք՝ ինչ են ասում բարբառները եմ ոժանդակ բայի ար-  
տասանության մասին բաղաձայնից հետո:

1) Յերեմիայի բարբառը.—այսպես կոչում ե չ. Աճառյանը արտա-  
սանում բարբառը.—գրեթե անփոփոխ պահած ե հին հայերենի ձայնական հա-  
րըստությունը: Ձայնավորներու մեջ ե—է և ո—օ շփոթված են իրարու հետ,  
յերկուքն ալ հավասարապես վերածվելով է և օ (Աճառ., Բարբ., յեր. 38).  
Այսպես նույն գրքից՝ սիրում էմ, սիրում էս, սիրում ա, սիրում էնք, սի-  
րում էք, սիրում էն. սիրել էմ, սիրել էս և այլն: Թավրիղի յենթաբարբա-  
ռը՝ թռէր էն, էկէր էն:—Ղազարի՝ ուզում էն. Շամախի՝ մնացալ էս. . .  
Ասարախանի՝ էմ, էս, ա, էնք, էք, էն, Սարրերգ-Յերդնկայի՝ մորթէր էն. . .  
Կ. Պալսի՝ սիրէր էմ, էս, է, էնք, էք, էն: Խոյի՝ խասիր էմ. . .:—Գարգ ե,  
վոր այս բարբառների մարդիկը գրական լեզվով խոսելիս արտասանում են  
գնում էմ, գնում էս, գնում է, գնում էնք, գնում էք, գնում էն. գնացել  
էմ, գնացել էս, գնացել է և այլն:

2) Բայազետի յենթաբարբառը՝ սիրում լեմ, սիրեր լեմ. Կարմա գյու-  
ղացիների՝ եմ=լեմ. բայց քաղաքացիների բարբառով ե=է. Սխալաբառ  
հնիկ-մարթ էմ. Պաճա բարբառ՝ ուզիր լեմ, ուզիր լես, ուզիր ի, ուզիր ինք,  
ուզիր էք, ուզիր լեն, այլև իմ, իս, ի, ինք, իք, ին: Բացի Բայազետի յեն-  
թաբարբառից՝ մյուսները ներկայի գնում լեմ ձևը չունեն:

3) Թիֆլիսի՝ սիրում իմ, իս, է, ինք, էք, ին. սիրել իմ, սիրել իս և  
այլն: Ղարաբաղի՝ սիրում ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն. սիրալ ըմ, սիրալ ըս. . .

Աստագտտի և Ջուղայի՝ սիրում ամ, աս, ա, անք, աք, ան: Մշո բարբառ՝ տեսեր իմ, իս, ինք, իք, ին. Նոր Բայազետի գյուղացիների՝ գացեր իս, առեր ինք. այլ և յերկրէն է՞ն էկե: Տրապիզոնի՝ սիրիբ իմ և այլն. գրիբ չիս, ընդոր իք: Խրիմի և նոր Նախիջևանի՝ սիրիլ իմ, իս, է. ինք, իք, ին: Մարաղայի՝ ուզիր իմ...

Այսպես տեսնում ենք, վոր ոժանդակ եմ բայը բաղաձայնից հետո արտասանվում է բարբառների մեջ՝ 1) էմ, էս... 2) իմ, իս... 3) իմ, իս... ըմ, ըս... ամ, աս... Ս. Մ.-ն ասում է, թե այդ բայի ընդհանրացած է ճիշտ արտասանությունն» և գնացել եմ կապակցության մեջ իբրև գնացել յիմ: Այս արտասանությունը, սակայն, կա միայն Նոր Բայազետի յենթաբարբառի, Կարնո գյուղացիների, մեկ էլ Վանա բարբառների մեջ, թեկուզ նաև մի յերկու ուրիշ յենթաբարբառների մեջ. իսկ սիբում լեմ կապակցության մեջ միայն Նոր Բայազետի յենթաբարբառի մեջ:

Հիմա կարճից ե Ս. Մ.-ը պնդել, թե առաջին խմբի, ալյսինքն էմ, էս. արտասանություն ունեցող բարբառների՝ արարատյան, Կ.-Պոլսի և մյուս բարբառների մարդիկը, գրական լեզվով խոսելիս, թողնում են իրենց ընական արտասանությունը՝ գնացել էմ և ընդունում են Նոր Բայազետի, Կարնո գյուղացիների և Վանա բարբառի լեմ արտասանությունը՝ գնացել լեմ: Կարճից ե նա պնդել, թե առաջին խմբի՝ արարատյան և մյուս բարբառների մարդիկը գրական լեզվով խոսելիս թողնում են իրենց ընական սիրում էմ արտասանությունը և հետևում Նոր Բայազետի յենթաբարբառի արտասանությանը՝ սիրում լեմ. կամ առաջին և յերրորդ խմբերի այն բարբառների մարդիկը (Կ.-Պոլսի, Նոր Նախիջևանի և այլն), վորոնք ներկայի համար սիրում եմ՝ ձևը չունեն, բայց չունեն նաև լեմ արտասանություն, կամ յերրորդ խմբի նույն բարբառներինը (Ղարաբաղի, Թիֆլիսի, Նոր Նախիջևանի և այլն), վորոնք լեմ ձև չունեն, այլ ամ, քմ, իմ, դրանք բոլորը գրական լեզվով խոսելիս հետևում են Նոր Բայազետի յենթաբարբառին, վորի մեջ միայն կա սիրում լեմ արտասանությունը, իսկ գնացել եմ՝ ձևի համար հետևում են Նոր Բայազետի, Վանա և Կարնո գյուղացիների բարբառներին: Կարճից ե Ս. Մ.-ը պնդել այդ բանի վրա՝ նա, յերևի, չգիտե, վոր վոչ Նոր Բայազետի, վոչ Վանա և վոչ էլ Կարնո գյուղացիների բարբառներն են հիմք կազմում մեր գրական լեզվի համար, այլ մեր արևելյան գրականի համար՝ Յերևանի կամ արարատյան բարբառը, իսկ արևմտյան գրականի համար՝ Կ.-Պոլսի բարբառը, վորոնց մեջ եմ ոժանդակի միավանկ ձևերը բաղաձայնից հետո արտասանվում են իբրև էմ, էս. սիրում էմ, սիրէլ էմ (սիրէր էմ): Արևելյան գրականի մեջ ներկա ժամանակի ձևերը մի ժամանակ նույնիսկ միացած իբրև մեկ բառ ելին գրում և տպում սիրումեմ, սիրումես և այլն: Ել սր մնացին, ուրեմն, Ս. Մ.-ի ընդհանրացած և ճիշտ արտասանությունն», բռնազբոսվում եմ և «սխալախոսությունն» բառերը, վոր պետք է ուղարկել իրենց ընկերների մոտ:

Ընդհակառակն, յերբ յես լսում եմ մեկի արտասանությունը սիրում լեմ ձևով, ասում եմ՝ ահա Նոր Բայազետի յենթաբարբառի մի մարդ, իր տեղական արտասանությամբ, կամ Կարնո գյուղական կամ Վանա բարբառների մի մարդ, վոր իր բարբառի սիրել լեմ, ուզիր լեմ ձևերից եմ բայի լեմ արտասանությունն անց է կացնում նաև արևելյան գրական լեզվի սիրում եմ=սիրում էմ ձևի վրա: Այդպիսի մարդիկը նոր ուղղագրությամբ

գրելիս՝ հետևելով իրենց արտասանութեանը՝ գրում են նաև «սիրում յեմ», «գնացել յեմ»։ Բայց կան այսպես արտասանողներ ու գրողներ էլ, վորոնց համար հայերենը դեռ բնական մի լեզու չէ, այլ սովորած լինելով արվեստականորեն ու իմանալով, վոր բառակզրի և տառը արտասանվում է իբրև յե, այդպես էլ արտասանում են և գրում են նաև ռօանգակ եմ բայը։ Կան նաև այնպիսիները, վորոնք խոսելիս արտասանում են սիրում էմ, բայց նոր ուղղագրութեամբ գրում են սիրում յեմ։ այդպիսիներն էլ դեռ հետևում են Ս. Մ.-ի ստեղծած կանոնին՝ ե-ով սկսվող բառերից առաջ մեքենայաբար ավելացնում են յ։

Այսպես, ուրեմն, սիրում եմ, գնացել եմ ձեռքը վոչ թե Մ. Աբեղյանի առաջարկութեամբ է վոր պետք է կարգացվեն սիրում էմ, գնացել էմ, ինչպես գրում է Ս. Մ.-ը, այլ հենց այդպես էլ արտասանվում են արարատյան, Կ.-Պոլսի և այլ բարբառների մեջ, վորոնք և միայն որինակելի յեն, դարձած և պիտի լինեն Ղարարաղի և այլ բարբառների մարդկանց համար գրական արտասանութեամբ խոսելիս, և վոչ թե Նոր Բայազետի սիրում յեմ, սիրեր յեմ և Կարնո գյուղացիների և Վանա բարբառների սիրիբ յեմ ձեվերը։

Գնաք հիմա բուն խնդրին, գնալու յեմ, գնալու յես և այլն գրութուններին, այսինքն յերբ եմ բայից առաջ նոր ուղղագրութեամբ ավելացվում է տառը՝ ըստ արտասանութեան։ Ս. Մ.-ն այս մասին հետևյալ դարձյալ իմաստուն նկատողութունն է անում. «Այս կետը ուղղագրութեան հետ վոչ մի կապ չունի։ Յեթե առաջարկվում է գրել գեալու յեմ, բայց գեացել եմ—սա լոկ մի ցուցումն է, թե առաջին դեպքում պետք է արտասանել ՅՄ, իսկ յերկրորդ դեպքում ՅՄ.—սա ուղղագրական կանոն չէ, այլ ուղղախոսութեան (իսկապես ասած՝ սխալախոսութեան...)»։ «Սխալախոսութունն» արդեն ուղարկեցի իբր անդր, իսկ մնացածի նկատմամբ՝ Ս. Մ.-ի հերքման յեղանակը փորձում եմ հետևյալ ձևով. «Այս կետը ուղղագրութեան հետ վոչ մի կապ չունի։ Յեթե առաջարկվում է գրել լեզու, բայց լեզվի—սա լոկ մի ցուցումն է, թե առաջին դեպքում պետք է արտասանել լՅՅՅ, իսկ յերկրորդ դեպքում լՅՅՅՅ.—սա ուղղագրական կանոն չէ, այլ ուղղախոսութեան (իսկապես ասած՝ սխալախոսութեան...)»։ Ինչ կասի Ս. Մ.-ն այս իմաստութեան մասին. լեզու և լեզվի գրութունն ուղղագրութեան է վերաբերում, թե ուղղախոսութեան, կամ գուցե և «սխալախոսութեան»։ վորովհետև կ.-պոլսեցիք և ուրիշներն արտասանում են լեզույի Ս. Մ. ն այս տարբերական բանն էլ լավ չի ըմբռնում. հնչյունական գրութունը լինում է արտասանութեան համեմատ, ուստի և վերաբերում է թե ուղղագրութեանը և թե արտասանութեանը. յեթե գրվում է լաց, լեզվի, այդ նշանակում է, վոր այդ գրութուններով ցուցում է լինում, թե պետք է կարգալիս արտասանել լաց, լեզվի և վոչ թե հաց, կամ լեզուի կամ լեզույի։ Այդպես էլ գնալու յեմ և գնացել եմ գրութունների նկատմամբ, քանի վոր այս գրութուններն էլ արտասանութեան համեմատ են։

Ընդունում է արդյոք Ս. Մ.-ը գնալու յեմ, գնալու յենք, գնալու յեն արտասանութունը.—Այո. վորովհետև այդ եմ բայի այդ չորս ձևերի «ընդհանրացած և ճիշտ արտասանութունն» է, նրա ասելով, նույնիսկ գնացել եմ, ես, ենք, են կապակցութունների մեջ յեմ, յես, յենք, յեն։ Այդ պատճառով և նա այդ ձևերի արտասանութեան մասին նկատողութունն էլ անում, այ

միայն հին «գնալու է», «գնալու էք» ձևերի գնալու յե, գնալու յեք գրության մասին և խոսում այսպես. «Ըստ այս կետի դարձյալ մենք արտասանելու յենք՝ գնալու յե, յեք (այսինքն հին գրությամբ է, էք), վոր նույնքան հակառակ և ընդհանուր արտասանության»։—Նախ է, էք բառերը չպետք և առանձնացնել նախորդ բառից, վորովհետև դրանք յե, յեք արտասանվում են միայն այն դեպքում, յերբ իբրև վերջանաբ նախորդ բառին և յերկուսը միասին կազմում են մի հնչյունական կապակցութուն։ Ապա՝ Ս. Մ.-ը այստեղ ել սխալվում և, ասելով թե գնալու է, գնալու էք կապակցութունների ընդհանուր արտասանությունն» և հորանջով իբրև ԴՊԱԿՄ՝ Յ, ԴՊԱԿՄ՝ ՅԿ (gnalú e, gnalú ekh)։ Յեթե նա մի փոքր ուսումնասիրեք մեր բարբառները, կտեսնեք, վոր հոգնակի Յ-րդ դեմքը անալոգիայի որինքով արդեն միակերպության և վերածված, այսինքն այդ դեմքն արդեն նույն ձայնավորով և, ինչ վոր մյուս դեմքերը՝ սիրում ինք, սիրում իք, սիրիլ իք, սիրում ընք, սիրում ըք, սիրալ ըք. սիրում անք, սիրում աք, սիրել աք, տեսեք ինք, տեսեք իք. ուղիւ ինք, ուղիւ իք. այսպես և միակերպ արտասանվում և ե=Յ հնչյունով գնում էնք, գնում էք։ Նույնպես և յեզակի Յ-րդ դեմքը (է) անալոգիայով նույնացած և մյուս դեմքերի հետ. «սիրել է», «գնում է» ձևերի մեջ է ձայնավորը նույն է (Յ) հնչյունն և, ինչ վոր «սիրել էմ» (սիրելք էմ), գնում էմ ձևերի մեջ. ապա՝ կան բարբառներ, վորոնց մեջ դա միակերպ և դարձած մյուս դեմքերի ի, և ձայնավորների հետ՝ ուղիւ իմ, ուղիւ ի. գնում ամ, գնում ամ, սիրել ամ, սիրել ամ, արևելյան բարբառների մեծ մասի մեջ միայն այս վերջին՝ գնում ամ, սիրել ամ և նաև ամ ձայնավորով չի ընդհանրացած մյուս դեմքերի համար։ Մի անգամ վոր լեզուն խտրություն չի գնում հոգնակի Յ-րդ և յեզակի Յ-րդ դեմքերի (բացի սիրում ամ, սիրել ամ և նախ) ձայնավորի և մյուս դեմքերի ձայնավորների մեջ, բնականաբար այդ յերկու դեմքերի ձայնավորների մեջ կս հորանջ չպիտի լինի և չկա, ինչպես և մյուս դեմքերի ձայնավորների մեջ. ինչպես վոր արտասանվում է՝ գնալու յեմ, գնալու յես, նույնպես գնալու յե. ինչպես գնալու յենք, գնալու յեն, նույնպես գնալու յեք. վորովհետև բոլոր դեմքերի մեջ ևս նույն ե=Յ (Յ) ձայնավորն և, ճիշտ ինչպես միակերպ արտասանվում և գնացել էմ, գնացել էս, գնացել է, գնացել էնք, գնացել էք, գնացել էն (խնդիրը, հարկավ Ս. Մ.-ի տեղական արտասանության մասին չե)։ Յեվ այլպես ել չեր կարող լինել. ու + և կապակցության մեջ հորանջը պետք և վերանար կամ ույե ձևով (ինչպես կ.-պոլսեցիք արտասանում են՝ հեռույէն. Աճառ., Բարբ.), կամ վե ձևով (ինչպես արարատ. բարբառի յենթաբարբառների մեջ շուր էլ) արտասանում են՝ շուրվէլ)։ ուստի «գնալու է», «գնալու էք» ձևերն ևս պետք և լինելին. կամ գնալու-յ-է, գնալու-յ-էք, ինչպես վոր և իրոք, կամ «գնալվէ», «գնալվէք» և յերեք հորանջով իբրև ԴՊԱԿՄ՝ Յ, ԴՊԱԿՄ՝ ՅԿ։

Թե իրոք միակերպ չկիսաձայնով ենք արտասանում ինչպես գնալու-յեմ, գնալույես, գնալույենք, գնալույեն, նույնպես և գնալույե, գնալույեք, —այդ ըմբռնելու համար պետք և մարդ կարողանա կարվել հին առբեր գրության է, էք ձևերի տեսողական պատկերից, վորով խեղդվում և լսողության զգալությունը։ Մանավանդ հայերենի ուսուցիչները դժվարությամբ են կարողանում լսել այդ, վորովհետև նրանք, ուղղագրության նկատուումով, տարիներ շարունակ իրենք կրկնել են և աշակերտներին կրկնել են տվել, եմ բայի խոնարհման ժամանակ, այդ բայի ձևերը գրու-

թյան համեմատ տարբեր արտասանությամբ իբրև յեմ, յես, և, յենք, եք, յենս: Բայց բավական ե միայն, վոր նրանք մի առժամանակ ուշադրություն դարձնեն իրենց և ուրիշների բնական խոսվածքին, և շուտով կհամոզվեն, վոր եմ բայի բոլոր միավանկ ձևերի և նախորդ ձայնավորի մեջ միակերպ մտնում ե յ կիսաձայնը՝ առանձնապես թող ուշադրություն դարձնեն յերգեցողության ժամանակ, յերբ ինչպես մյուս ձայնավորները, նույնպես և յ հնչյունը յերկարում ե. այսպես, որինակ՝ Ինտերնացիոնալի մեջ ասնյե, և կամ Մեր Հայրենիքի «մահը մի յե» կաղակցությունները, վոր յերբեք չեն արտասանում հորանջով իբրև ca' Յ, Mx' Յ:

Ինչպես գնալու յեմ և այլն բայական ձևերի մեջ չկտ հորանջ, նույնպես և յերբ այդ եմ բայը միանում ե ձայնավորով վերջացած մի ուրիշ բառի հետ իբրև մի հնչյունական կապակցություն: Բերեմ միքանի որինակներ չ. Աճառայնի Բարբառագիտությունից թե մեկի և թե մյուսի համար: Կ.-Պուլի բարբ.՝ ջամբա, բայց ջամբա—յ—է (յեր. 256), վոր արտաբայան բարբառով լինում ե՝ ճա՛մբա, բայց ճա՛մբա—յա, Ղարաբաղի բարբառով՝ ավալ ըմ, բայց՝ մա՛րթու—յ—ըմ տվալ (յեր. 72), վոր արարատյան բարբառով լինում ե՝ մա՛րդու—յեմ տվել. տղա, բայց՝ տղա—յ—ա (յեր. 72). նույն և արարատյան բարբառով. ըտի, բայց՝ ըտի—յ—ա (յեր. 72). համապատասխան ձևով՝ արարատ. բարբ.՝ վա՛րդի—յա (վարդի ե):—Մարդու գահլա եա. (=յա) քընըմ (Կոստ. Մելիք Շահնազար., Ղլցի կնան. պեն ու փեղակը, յեր. 12), վոր արարատ. բարբ. լինում ե՝ գահլա—յա գնում: Մառա, բայց՝ ծառայ ըմ, տղա, բայց՝ աղայ ա (նույն, յեր. 21, 27), վոր և արարատ. բարբ.՝ ծառա—յեմ, տղա—յա: Մարտղայի բարբ.՝ տղա—յը (Աճառ., յեր. 286) =տղա—յե: Փուժամբարի բարբ.՝ խէյ ըն տալի, վոր արարատ. բարբ.՝ լի—նում ե՝ խի—յեն տալի. քրիստոնյա, բայց՝ քրիստոնյայ—ըս (Բարբ. 260. Աճառ.), վոր արարատ. բարբ. լինում ե՝ քրիստոնյա—յես: Ասորթաթի բարբ.՝ կարելի—յա (յեր. 85), քանի տարի եա (=յա). նույն և արարատ. բարբառով: Նոր Բայազետի ր.՝ դո՛ւյ ես (յեր. 48). Արտառ. բարբ. Աշտարակի, կա՛ սայ ա, չիկա՛ սայ ա (Պռոշ., Սոս և Վարդիթեր. յեր 47): Փուժավայի բարբ.՝ հինքշափթի յե,—քանի՞ յե սհաթը (Աճառ., Բարբ., յեր. 273, 275):

Այսպես տեսնում ենք, Մ. Արեղյանը չե վոր հակառակ ընդհանուր արտասանությանն առաջարկում ե 3-րդ դեմքի է բայից առաջ և նախորդ ձայնավորից հետո արտասանել յ հնչյունը. դա կա և գրական լեզվի և բարբառների մեջ, և մինչև անգամ առանձնացած հեռավոր գաղութների բարբառների մեջ, վոր և ապացույց ե, վոր այդ լեզվական դրությունը կամ զարգացումը վաղուց ե տեղի ունեցել մեր լեզվի մեջ, քանի վոր սուժավացին արտասանում ե՝ հինքշափթի յե, մարաղեցին՝ տղա յը (=տղա—յե), աստրախանցին՝ կարելի—յա=կարելի—յե, ինչպես և Կ.-պոլսեցին՝ ջամբա—յ—է, արարատցին՝ սայ ա=սա—յե. Յեթե Ս. Մ.-ը կարողանա տառից կտրվել, նա կնկատի, վոր Կարնո բարբառի մեջ ել կա նույն արտասանությունը. յես հաճախ առիթ եմ ունենում լսելու խոսվածքը մի ախալցիխացի (քաղաքացի) պառավ կնոջ, վոր արտասանում ե՝ բաստուրմա—յե, հադնի—յե (=հայանի—յե) և նմաններ:

Բացի եմ բայի միավանկ ձևերից, իբրև վերջահար բառ նախորդ բառին միանում ե հաճախ նաև եղ (հին ուղղագրությամբ էլ) բառը: Չնայե-

լով վոր ուղղագրութեան դեկրետի մեջ այդ բառի ուղղագրութեան մասին բան չկա ասված, բայց և այնպես հաճախ արդեն լրագրութեան մեջ կարելի յե տեսնել այդ բառը նախորդ ձայնավորից հետո սկզբի չ տառով գրված, ինչպես՝ նա յել, հետո յել և այլն, նույնիսկ «Մարտակոչ»-ի մեջ Ս. Մ.-ի հոգվածում «թեկուզ հնչվի յել»։ Այսպես գրողները ընկանարար հետևում են իրենց արտասանութեանը, վորովհետև ել (էլ) բառն առանց հորանջի, չ կիսաձայնով և միանում նախորդ ձայնավորին, ինչպես, որինակ՝ Նոր Նախընկալի բարբառի մեջ՝ բէլի յալ չէ (ալ=ել, էլ), նա եալ=նա յալ (Աճառ. Բարբ., յեր. 263, 269)։

Ս. Մ.-ը չի կարող առանց ուսուցիչի մնալ. ուստի նա իբրև մի վերջին ամենագործի փաստ գրում է. «Ի՞նչ կասեյինք, յեթե ուսաց Ակադեմիան նոր ուղղագրութեան մեջ նույնպիսի մի կետ մտցնելը ետև բայի նկատմամբ (վորովհետև ուսուցիչն է տառն ունի հայերենի ե-ի բոլոր հատկությունները), այսինքն վոր ուսուցիչն զրեն ՕН ЕСТЬ, բայց ОНА ЙЕСТЬ. Ակադեմիան այսպիսի բան չի արել, և չեր կարող անել, բայց դժբախտաբար Մ. Աբեղյանն արել է»։— Ուրիշ անգամ ել, կարծեմ, զբել եմ, վոր Ս. Մ.-ը լավ կաներ, իրեն համար, յեթե ուսուցիչն մեջ չբերեր և հայերենի հետ համեմատութեան չգնելու նախ՝ ուսուցիչն է տառը չունի մեր ե տառի բոլոր հատկությունները, ինչպես կարծում և նա։ Ռուս լեզվաբաններից արդեն տեսանք, վոր նրանց е-ն = 1) յՅ, ель = յЭль, своёй = сваяѣй. 2) բաղաձայնի փոփոխություն — 3, девять, дело, իսկ մեր ե տառն ըստ հին ուղղագրութեան բառի սկզբում է յՅ, յերբեմն և 3, իսկ բառի մեջ 3. Ս. Մ.-ը լսած կլինի հայի բերանից ДЭЛО, ДЭВЯТ. դա հայերենի ե=3 արտասանությունն է առանց նախորդ բաղաձայնի փոփոխման։ Այսպիսի յերբ մեկն ուտար լեզվից որինակ է բերում, պետք է նման կամ համեմատ բաներ բերի. ուսուցիչն էСТЬ բառը միշտ և ամեն դեպքում արտասանվում է սկզբից շփական յ բաղաձայնով јесть. ուրեմն ОН јесть, она јесть, Կնշանակի՝ Ակադեմիան շատ անմիտ կլինի, յեթե առաջարկել զբել ОН ЕСТЬ, բայց ОНА ЙЕСТЬ. և, ինչպես ուրիշ անգամ ել առիթ եմ ունեցել գրելու, ուսանիչը կարիք ել չունեն փոխելու ինչպես Я, Ե, Ю տառերի, նույնպես և Ե տառի գրությունը, վոր վոչ մի գծավորություն չի պատճառում նրանց և սխալների առիթ չի գառնում. իսկ յեթե հարկ է լինում գիտական-ֆոնետիկական ուղղագրություն բանեցնել, նրանք գրում են միակերպ ј=Й տառով ОН јесть, она јесть, Բայց յեթե ուսուցիչնում ԵСТЬ է միշտ јесть, հայերենում եմ բայի միավանկ ձևերը, ինչպես տեսանք, նայելով գրութեան՝ արտասանվում են կամ պարզ է=3 (լատ. е) ձայնավորով կամ սկզբից յ=Й, յ հնչյունով իբրև յե=јѢ (јѣ). մի դեպքում արտասանում ենք՝ յես եմ=yes em, јес em, јѢС ЭМ, մյուս դեպքում՝ դու յես=du yes, du јес, ду јѢС, նա յի=na ye, na јѣ, на јѢ. մի դեպքում արտասանում ենք՝ նա տեր ե=ter e, тѢр э, մյուս դեպքում՝ նա ծառա՝ յե=tsara—ye, tsara—јѣ, царя՝ јѣ։ Յեզվ վերջապես՝ յեթե ուսաց Ակադեմիան այս կամ այն փոփոխությունը չի մտցրել ուսուցիչն ուղղագրութեան մեջ, այդ դեռ բնավ ապացույց չի կարող լինել, թե մենք ել այս կամ այն փոփոխությունը չպիտի մտցնենք մեր լեզվի ուղղագրութեան մեջ։

Ս. Մ.-ը փոխանակ ուսուցիչից անտեղի որինակը բերելու, կարող եր ֆրանսերենից շատ հարմար որինակներ բերել բառերի կրկին գրություն

ձևերի համար: Վերևում տեսանք, վոր յերկու ձայնավորի մեջ յեղած հորանջի վերացման յեղանակներից մեկն է épenthese ասածը, յերբ յերկու ձայնավորի մեջ մտնում է մի բաղաձայն: Այսպես այս յեղանակով վերացվում է նաև յերկու տարբեր բառերի մեջ յեղած հորանջը: Այդ պատճառով հեան լեզուներ, վորոնք ունեն բառերի կրկին նեվեր, մեկը ձայնավորով վերջացած, վոր գործածվում է բաղաձայնից առաջ, մյուսը բաղաձայնով վերջացած, վոր գործածվում է ձայնավորից առաջ, ինչպես, որինակ՝ հունարենում ou, ouk. Ֆրանս. va, vas—y: Բաղաձայնով վերջացածը սովորաբար լինում է հին բառաձևը: Վերևում միևնույն յերևույթն է ֆրանսերենի liaison ասածը. այն է՝ յերբ ֆրանսերենում անձայն բաղաձայնով վերջացած մի բառ խոսքի մեջ ընկնում է ձայնավորով սկսվող բառից առաջ, բառավերջի բաղաձայնն արտասանվում է, ինչպես՝ trop étroit: Այս միևնույն է թե ասել, վոր այս կարգի բառերը յերկու հեցուցեակաճ նեվ ունեն, մեկը՝ ձայնավորով վերջացած, մյուսը՝ բաղաձայնով\*:

Ֆրանսերենում սովորաբար գրվում է բառավերջի անձայն բաղաձայնը, վոր հաջորդ բաղաձայնից առաջ արտասանվում է. բայց կան լեզուներ, ինչպես մասամբ նաև ֆրանսերենը, վորոնք վոչ միայն բառերի յերկու հեցուցեակաճ նեվ ունեն, այլև յերկու գրութայն նեվ. ինչպես ֆրանս. va, բայց vas-y. il a, բայց a-t-il. il parle, բայց parle-t-il? և այլն: Այս s, t տառերն արտասանվում և գրվում եյին միշտ հին ֆրանսերենում՝ il at, il parlet:

Այս միևնույն լեզվական յերևույթը գտնում ենք և հայերենում առանձնապես այն դեպքում, յերբ յերկու բառը միանում են իբրև մի բառական միություն. որինակ՝ ասում են՝ յես մեղա, բայց հին մեղա, բառի վերջի յ-ն պահվում է արդին հնացած «մեղայասու» կամ «մեղայասձու» կապակցության մեջ, վոր առնվում է իբրև մի բառական միություն: Արարատյան և ուրիշ բարբառներում սովորական են «չեմ տես», «չեմ գնացե» և այլն ձևերը, այսինքն վերջի և բաղաձայնը դուրս է ընկնում. բայց՝ տեսել եմ, գնացել եմ: Այսպես և գրական լեզվի մեջ արդեն հաճախ գրում են՝ չեմ տալի, չեմ գալի, չեմ գալի, այսինքն վերջի և բաղաձայնը դուրս է ընկնում. բայց տալիս եմ, գալիս եմ, գալիս եյի: Նույնպես վորոշող հոդը, որինակ, հին մտրդն=մտրդն լինում է՝ այն մարդը գնաց, բայց այն մարդն է, և յերբեք՝ այն մարդը է: Այս միևնույն յերևույթն է նաև յ-ով վերջացած բառերի նկատմամբ. հին ուղղագրությամբ ալ, ոլ վերջացած յեսոլ, ծառալ և նման բառերի մեջ մենք ունեյինք նույն բառի յերկու հեցուցեակաճ նեվ. այդպիսի բառերի վերջի յ-ն անձայն է մտնում, բայց եմ բայի վերջահար միավանկ ձևերից առաջ արտասանվում է. այսպես, որինակ՝ արտասանում ենք՝ մի ծառն է, բայց՝ նա ծառայ է, (կուռնկ, ուստի կուգաս, ծառայ էմ ձայնիդ), վորի յ-ն վանկատման ընդհանուր կանոնով անցնում է հաջորդ է ձայնավորին: Ծառն-յեմ, ծառն-յես, ծառն-յե, ծառն-յենք, ծառն-յեք, ծառն-յեն կապակցությունների մեջ յ-ն ծառա բառի վերջի անձայն մնացած յ-ն է, վոր հաջորդ վերջահար եմ բայից առաջ, հորանջի պատճառով, պահվում է, և վոչ թե եմ բայից առաջ նոր զարգացած կիսաձայն է-ն (ինչպես յեկ, յես, յեղեզն և այլն բառերի սկզբում): Այս պատճառով արտասանում են՝ յես ձեր ծառան էմ, բայց յես ծառա-յեմ, նա ձեր ծառան է՝, բայց

\* L. Roudet, Elements de Phonet., յեր. 171 հտն.:



նա ծառայեալն ունիւնալեալ և՛ ձեր ծառայան ըմ, բայց՝ ծառայ յըմ, քրիստոնյա լըստոր ուղղագրութեամբ արտասանութիւննը, հարկով, քնում ե նույնը, բայց դրութեան ձևը փոխվում ե. ծառայ բառի վերջի յ-ն գուրս ե ձգվում ե գլբրվում ե միայն այն ժամանակ, յերբ հորանջ չառաջացնելու համար արտասանվում ե, բայց վոչ թե այլևս ծառայ բառի վերջում, այլ հաջորդ եմ բայի սկզբում: Այսպես գրվելը իմ Զեկուցման մեջ, ինչպես վերևում գրեցի, «ա-վելի դործնական» ե համարված այն պատճառով, վոր այդ յ-ն «արտասանութեամբ միանում ե վերջահար բային և յերևան ե գալիս նաև ե, թ, ու ձայնավորներին հետո՝ մարգարե յեմ, դու յես, վորդի յեմ»: Բացի այդ՝ յ-ն եմ բայի վրա գրվելով՝ միայն այդ բայի վեց կամ յոթ ձևերը պետք ե ունենան կրկին գրութիւնն. եմ-յեմ, ես-յես և այլն: Բառերի յերկու հնչյունական ձևը փոխվում ե, ուրեմն, յերկու գրութեան ձևի (ինչպես Ֆրանսերենում il a, բայց a-t-il, va, բայց vas-y), միայն կրկին գրութեան ձևը տրվում ե վոչ թե բազմաթիւ գոյականների և ածականների, այլ եմ բայի վեց-յոթ միավանդ ձևերին:

Ս. Մ.-ն, անշուշտ, կարող ե պատթոսով բացազանչել. «Վերջան ավելորդ բարդութիւնն ուղղագրութեան, վորքան նոր դժվարութիւններ հենց այս մի կետում, եմ-ի նման ամենահաճախ գործածվող բառի գրութեան մեջ: Գրողն ամեն անգամ պիտի կանգ առնե մտածելու համար, թե չ պիւլացնելու յեքեմ (?) պայմանները կմն տվյալ դեպքում թե վոչ»:—Անշուշտ, Ս. Մ.-ը չի կարող հասկանալ, վոր գրողը ծառայ յեմ, գնալու յես, սա յե, կարելի յե և այլն գրելու ժամանակ այնքան միայն պիտի կանգ առնի մտածելու, թե չ պետք ե գրել թե վոչ, վորքան նա եաց գրելիս կանգ ե առնում մտածելու, թե ց պետք ե գրել թե վոչ, կամ այս մտազն ե գրելիս կանգ ե առնում մտածելու, թե մտազ բառի վերջին ց պետք ե գրի թե վոչ Դեռ յերեխան սա յե, ծառայ յեմ, գնալու յեմ, գու յես գրելիս ավելի քիչ բան ունի անելու, քան մտազն ե գրութեան ժամանակ. վորովհետե յեթե Ս. Մ.-ը սովորութիւնն ունեցած լիներ յերեխաների արած սխալները «նկատելու» և «հիշելու», նա կիմանար, վոր յերեխաները հաջորդ եմ բայի հետ են միացնում ըստ արտասանութեան և գրում են՝ այն մարդ-նե, մանավանդ տողադարձի ժամանակ, և բավականաչափ վարժութիւններից հետո միայն, արտասանութեան անհամապատասխան ձևով, գրում են «այն մարդն ե»: մինչդեռ գնալու յեմ, նա յե, ծառայ յեմ և այլն գրութիւնները կատարելապես համապատասխան են արտասանութեան, այսինքն՝ յ-ն արտասանվում ե եմ բայի սկզբում ե այնտեղ ել գրվում ե: Ապա՝ թող Ս. Մ.-ը միտթարվի նրանով, վոր եմ բայի հաճախ գործածութեան պատճառով հենց՝ արագ կըվարժվեն դրա ճիշտ գրութեանը: Իսկ թե ինչ յեքեմ պայմանների մասին ե խոսում նա, յես այդ չեմ հասկանում. գուցե այն՝ վոր վերջահար եմ բայի սկզբին չ պիւլանում ե, յերբ այդ եմ-ը ձայնավորին հետո յե գալիս. բայց դա մեկ պայման ե և վոչ յեքեմ, ինչպես ե մեկ պայման ե արտասանութեան համեմատ գրելը:

Այսպես, ուրեմն, յեթե Ֆրանսերենում և ուրիշ լիզուների մեջ կարող են լինել բառերի կրկին գրութեան ձևեր ըստ արտասանութեան՝ va, բայց vas-y, il a, բայց a-t-il և այլն, նույնը կարող ե լինել և հայերենում և նույնիսկ կա՝ չեմ գալի, բայց՝ գալիս եմ. մտազը գնաց, բայց՝ այ՝ մտազն ե. այսպես և՛ գնում եմ, գնացել եմ. բայց՝ գնալու յեմ, տղան ե, բայց նա յե:

Շատ ուսուցիչներէց արդեօն լսած եմ, վոր նոր ուղղագրությունը սկըզբում միայն իրենց խորթ ու դժվար եր թվում, բայց շուտով համոզվել են, վար գա իսկապես ազատում ե յերեխաներին ուղղագրություն սովորելու համար գործ դրած ավելորդ և անպետք շատ աշխատանքից: Կան ուսուցիչներ ու գրագետներ ել, վորոնք հայտնել են ինձ, թե իրենք կարճ ժամանակում վարժվելով նոր ուղղագրությամբ գրելուն՝ այլևս չեն կարողանում հին ուղղագրությամբ գրել: Ուսուցիչներէ վկայությամբ՝ յերեխաները հեշտ և արագ յուրացնում են նոր ուղղագրությունը և վորքան ավելի ստորին խմբերում են,— ուրեմն դեռ շատ չեն կաշկանդված հին ուղղագրությամբ,— այնքան ավելի հեշտ ու արագ: Կարողալու համար ել դժվարություն չի պատճառում նոր ուղղագրությունը, բացի հին գրագետներից, վորոնք ընականորեն սկըզբում դժվարանում են կարդալ կամ սխալ են կարդում: Թիքանի ուսուցիչներ հայտնել են ինձ, թե լավ կլինի, յեթե գծով միացած գրվելին իբրև մի բառական միություն այսպիսի ձևերը՝ գնալու—յեմ, գնալու—յե, գնալու—յե, կարելի—յե և այլն. գա կարգելեր յերեխաներին կարդալիս այդպիսի բառերն անջատել միմյանցից: Այս դիտողությունը շատ ճիշտ ե: Շնագնում եքադաք» և Շնագնալու յեքադաք,— այս յերկուսն ել անընական արտասանություն են, և յերկրորդն ավելի անընական, քան առաջինը. վորովհետև մինչ առաջին դեպքում անընականությունն առաջանում ե միայն նրանից, վոր ե բառն արտասանությամբ նախորդ բառին միացվելու փոխանակ՝ միացվում ե հաջորդին, յերկրորդ դեպքում բացի այդ՝ անընականությունն առաջանում ե և նրանից, վոր այդպիսի անջատման պատճառով ավելորդ ե գառնում հորանջի վերացման համար անհրաժեշտ չհնչունը և նրա գրությունը: Նույնը լինում ե և այն ժամանակ, յերբ յերեխաները բառերը դեռ հատ-հատ են կարդում և վերջահար եմ բայը նույնչափ հեռացնում և անջատում են նախորդ բառից, վորչափ և հաջորդից. Շնա | գնում | ե | քադաք», Շնա | գնալու | յե | քադաք»: Հասկանալի յե, վոր յեթե գնալու—յե, հայտնի—յե, կարելի—յե և այլն գծով միացված լինեն, այդպիսի անընական արտասանությունը տեղի չի ունենալ. վորովհետև այդպիսի բառերը յերկուսը միասին կառնվեն, իբրև մի բառ կամ հնչյունական միություն, ինչպես վոր են իրոք— Շնա | գնալու—յե | քադաք»— և յերեք այլևս յե վերջահար մասը չի բաժանվիլ նախորդ բառից, ուստի և անընական ընթերցանություն առաջ չի գալ: Այս ե ահա այդպիսի ձևերը գծով միացնելու նշանակությունը:

Բայց հակառակ չլինելով գծով միացնելուն (Աճառյանը, ինչպես վերևի որինակներից կարելի յե տեսնել, սովորաբար գծով միացրած ե այդպիսի բառերը, ինչպես և ֆրանսերենում են վարվում), յես կարծում եմ, թե ավելորդ ե այդ. վորովհետև յերեխաները պետք ե վարժվեն վոչ միայն այդպիսի կապակցությունները, այլև ուրիշները, վորոնք իմաստով իրար հետ միացած են, կարդալիս իրար մոտեցնել, և ընդհակառակն, իմաստով միմյանցից հեռու բառերը պետք ե հեռացնեն միմյանցից: Իսկ յեթե սկըզբնական շրջանում նրանք բառերը հատ-հատ կարդալիս հորանջով կարտասանեն և նույնիսկ կգրեն, որինակ՝ հայտնի ե, սեղանի վրա ե իմ գիրքը,— այդ առանձին արժեք չպիտի ունենա, վորովհետև շուտով նրանք իմաստի համեմատ ընթերցանության վարժվելով՝ կնկատեն, վոր արտասանում են՝ հայտնի-յե, սեղանի վրա-յե իմ գիրքը: Նույնիսկ ըստինքյան ել մի առանձին

նշանակութիւնն չպիտի ունեննա, յեթե լինեն մարդիկ, վոր եւ՛ բայի յեզակի Յ-րդ և հոգն. Յ-րդ դեմքերը (ե, եք), ինչպես անցյալը (եր) նախորդ ձայնա-վորից հետո հորանջով արտասանելիս լինեն,—ինչպես կարծում ե իրեն համար Ս. Մ.-ը,— և ըստ այնմ ել գրեն սեղանի վրա ե իմ գիրքը, «հայտնի ե», հայտնի չե, ինչպես և ազատ կերպով գրում են՝ չեմ գալիս, չեմ գալի, չեմ մտնիլ, չեմ մանի, չեմ գնալ, չեմ գնա, հաջող, աջող և այլն: Այսպիսի կրկին գրութիւններ միշտ կան և կլինեն: Յերբեք չպիտի մոռանալ, վոր հնչյունական գրութիւնը ինչքան ել կաաարյալ լինի, չի կարող բավարարութիւն տալ վոչ յերեխաների հատ-հատ բառերով կարդալուն և վոչ ել ամեն անհատական և բարբառային տարբերութիւններին, այլ միայն վորոշ բարբառի, այս դեպքում միայն մեր գրական-դպրոցական արտասանութիւնը: Իսկ այս վերջինս մեջ հորանջով չենք արտասանում ինչպես նույն բառի մեջ յեղած յերկու կից ձայնավորները, նույնպես և վերջահար (ենկլիտիկ) եւ՛ բայի միավանկ ձևերը, վորոնք յենթակա յեն նախորդ բառի շեշտին և նրա հետ միանում են իբրև մի հնչյունական կապակցութիւն: Բայց յեթե այս դեպքերի համար ել միակերպ գրութիւնն անհրաժեշտ պայման ե, այն ժամանակ Ս. Մ.-ն և իր նման արտասանողները (յեթե կան այդպիսիները) պիտի հարմարվեն ընդհանուր գրական-դպրոցական արտասանութիւնը:

## XII.

Յես վերևում բերեցի նոր ուղղագրութիւն վերաբերմամբ զգործնական տեսակետից՝ Ս. Մ.-ի դիտած «պակասութիւնները» ըստ իր հասկացողութիւնն, և տեսանք, թե ինչպես այդ հասկացողութիւնը ինքը շատ պակասավոր ե: Նրա դիտողութիւններից և վոչ մեկը չի դիմանում քննադատութիւն, վորովհետև դրանք լեզվի ուսումնասիրութիւնից չեն ծագում: Հայտնելով թե ինքն ինչու «անկեղծ կողմնակից» ե մեր ուղղագրութիւնն «արմատական ռեֆորմին», նա իսկապես կողմնակից ե հանդիսանում ավանդական ուղղագրութիւնը թեթև փոփոխութիւններով և վերջիվերջո ուրիշ ճար չի գտնում մեր ուղղագրութիւնն համար, բայց յեթե գիմել կոնոններ և բառեր անգիր անել տալու: Այսպես՝ վոս և ոզ (=ոտ և օդ հին ուղղագրութիւնը) գրութիւնն դեմ ճառելուց հետո՝ նա յեղրափակում ե.

«Վճրքան հեշտ և անբռնազբոս կերպով կարելի յե հասնել Մ. Արեղյանի առաջադրած նպատակին՝ («վերացնել գրել կարդալու և ուղղագրութիւնն ուսման դժվարութիւնները») մնալով մեր այժմյան այբուբենի (պետք ե գրեր ուղղագրութիւնն. Մ. Ա.) ռեալ պայմաններում: Այսպես՝ «1. բառակղերում օ գրվում ե հետևյալ բառերում՝ օգնել, օգուտ, օգոստոս» և այլն (բերված են օ-ով սկսվող բառերը) «և նրանցից ածանցված և բազմաթիւ բառերում—անօգուտ, ամենօրյա և այլն»:

Այսպես, ուրեմն, Ս. Մ.-ը, վորպեսզի ուղղագրութիւնը «հակաժողովրդական» չլինի, «գործնական տեսակետից» կարևոր ե համարում պահել մեկ հեցյուցի համար յերկու գիր՝ օ և ո, մեկ նրա համար, վոր հայերենի ուսուցիչները գործ ունենան անելու, մեկ ել նրա համար, վոր աշակերտները «հեշտ և անբռնազբոս կերպով», այսինքն անգիր անելով սովորեն օ-ով սկսվող բառերը: Ապա՝ վորպեսզի անօգուտ, ամենօրյա և նման բա-

ռերը սխալ չգրեն, նա «գործնական տեսակետով» կարևոր և համարում աշակերտներին և ամենքին սովորեցնել նախ՝ մի կտոնոն ածանցական և բարդ բառերի մասին և ապա՝ մի յերկրորդ կանոն՝ սրանց գրութայն մասին: Ս. Մ.-ը չի կարողանում ըմբռնել նախ այն, վոր գրել-կարգալու և ուղղագրութայն ուսումը հեշտ և անբռնազբոս լինում և այն ժամանակ միայն, յերբ մի հնչյունը մի օ գրով ել գրում են և այլևս ավելորդ և դառնում օ-ով սկսվող բառերն անգիր անել տալը, ածանցման և բարդութայն կանոնը և ածանցված և բարդ բառերի ուղղագրութայն կանոնը: Նա չի կարողանում ըմբռնել ապա՝ նաև այն, վոր յերբ օ տառը պահվում և, թեկուզ բառակերպում և բարդ ու ածանցված բառերի մեջ, այդ տառը համարձակ կերպով մտնում և և այնպիսի բառերի մեջ, ուր իրավունք չունի մտնելու: Նա յերեսուն տարվա մեջ, յերևի, չի նկատել, վոր աշակերտներն ու ուղղագրութուն չսովորած մարդիկ գրում են՝ օլ, սօլօրել, ձօր, վօղօրմել, ինչպես և ընդհակառակն, անօգուտ, ամենտրեա: Յեվ այլապես ել չի լինիլ, քանի մի հնչյունի համար յերկու տառ կմնան—ա, և օ: Բայց մենք շարունակենք, թե ինչ և ասում Ս. Մ.-ը:

«2. Բառակերպում ա-ից առաջ վ չի գրվում, թեկուզ հնչվի յել (բացի Վոսփոր և վոհմակ բառերից)»:—Ուրեմն յերրորդ կանոն, բառակերպի ո-ի համար, և այս կանոնն ել իր բացառութուններով: Յեվ ինչ՞ու միայն «Վոսփոր և վոհմակ» և վոչ նաև Վոքմա, Վորոնեթ, Վորոնցով, Վոլտեր և ուրիշ շատերը: Յեվ Ս. Մ.-ը միամտորեն հավատում և, վոր յերբ այս կանոնը սովորեն, ել յերեխաները չեն գրիլ վորդի, վօրդի. վոտ, վօտ, վոր, վօր, վօհմակ, ոհմակ, և այլն, այլ միայն որդի, ոտ, որ, վոհմակ:—Բայց մենք շարունակենք:

«3. Բառերի մեջ գրվում և օ»:—Ահա մի չորրորդ կանոն ևս, և Ս. Մ.-ը կարծում և, թե այլևս չեն գրիլ ամօթ, ձօր, թագավօր, թագաոր, դինվօր, զինօր և նմանները: Նկատել և հիշում և արդյոք նա այս «թագաոր, զինօր, փառաոր» գրութունների նման սխալները, վորոնց մեջ ու= վո: Բայց շարունակենք:

«4. Բառերի վերջում գրվում և օ»:—Ահա մի կանոն ևս, և Ս. Մ.-ը կարծում և, թե այլևս չեն գրիլ Մարո, Կարո և այլն. բայց այս հինգերորդ կանոնով նա լուեյայն անց և կացնում մի փոփոխութուն մեր ուղղագրութայն մեջ, այն և՛ նա առաջարկում և օ-ով գրել՝ քօ, ներքօ, հետօ, այօ, ձուլածօ և շատ նմանները: Ի՞նչ կասի նա այս մասին. մի գուցե նա ինքը, մի շատ հին «գրավարժ մարդ, մոլորվել և իր կանոնների լաբիրինթոսի մեջ» և մոռացել և մի բացառութայն կանոն ել սահմանել քո, այո և շատ բառերի համար, վորոնք օ-ով չեն գրվում: Բայց տեսնենք նրա յեզրակացութունը:

«Ուրեմն հարկավոր և յեղել միայն 22 բառ և յեթե (խկապես հինգ) գյուրահասկանալի կարճ կանոն,— և ա-ի ու օ-ի ուղղագրութայն բոլոր գրվածութունները կվերաճան... Գրութունը ամեն տեղ կլինի միորինակ և հեշտ ու անսխալ:—Այո, միայն «22 բառ» անգիր անել, միայն «յեթե կանոն», այն ել իրենց բացառութուններով, և վերջացավ: Այստեղ և ասած՝ «յերանի հավատացողներին»:

Ճիշտ նույն ձևով, գրեթե նույն բառերով, կանոններ և սահմանում Ս. Մ.-ը և է և ե տառերի համար և նույն յեզրակացութունն անում, և

միամտորեն՝ հավատում, թե այլևս չեն գրիլ՝ մէռնել, մեռնել, մէռնել, բէր, բէրել, բերել, գիշէր և այլն. ասեիրնք, ասելիրնք, ասէլիրնք, բողբոջական, բողբոջական և այլն: Այստեղ մի այսպիսի կանոն ել ե տալիս. «Բառասկզբում ե-ից առաջ է չի գրվում բացի հետևյալ բառերից և նրանց ածանցներից.— յեղաշըջիլ, յեղափոխել, յեղեղել, յենվել, յեռել, յետ, յերյուրել»: Յեվ նա կարծում ե թե այլևս սխալ չեն անիլ. և չեն գրիլ հենվել, հետո և այլն. մինչպէս Մուրացանի նման գրագետը գրում ե «Ժայրահեղ»: Հապա թնչ կանոններ ե տալիս Ս. Մ.-ը յ-ով սկսվող բազմաթիվ ուրիշ բառերի համար, ինչպէս՝ յամառ, յառակ և այլն, վորպեսզի չգրեն համառ, հատակ և այլն և բառասկզբի յ— հնչյունից ազդվելով չգրեն՝ յաց, յասնել, աշխարյ, գայլիճ և շատ նմանները, վոր, իհարկե, չի նկատել և չի հիշում Ս. Մ.-ը: Հապա թնչ կանոններ ե տալիս նա ետ, եօ, իւ յերկբարբառների համար, վորպես- ՚յի այդ հնչյունները չգրեն այնպիսի բազմազան ձևերով, վոր տեսանք (ծառահական, եռող և այլն): Ինչ կանոններ ե տալիս, վոր չգրեն նաեւ, շոել, Մարօի, Մարօյի կամ գուցե՝ Մարօի, Մարոյի... Նա լռում ե այս ամենի և ուրիշ շատ տեսակի սխալների մասին:

Ս. Մ.-ը կարծում ե, թե նոր Ամերիկա յե գտել իր բառացուցակներով, իր կանոններով իրենց բացառություններով հանդերձ, վորոնք ամենքին ել և ինձ ել շատ լավ հայանի յեն և թե կուզեք՝ նույնիսկ յես եմ առաջին անգամ հավաքել, մշակել և տպագրել 1892 թ. իմ «Հայոց լեզվի ուղղագրությունը» գրքի մեջ: Բայց բանն այն ե, վոր այդ բառացուցակներն ու կանոնները յերբեք ել «հեշտ և անբռնադրոս կերպով» չեն հասնում իրենց նպատակին: Գանի կան միւսնույն հնչյունի համար օ և ո, է և ե կրկին տակերը, միշտ ել գրանք իրար կփոխանակեն, և կգրեն ձօր, օվ, քօ, ըէրէլ, մէժ և այլն. քանի կա վ հնչյունի համար վ տառը, միշտ ել կգրեն՝ վոտ, վօա. քանի բառասկզբում ո=վո, միշտ ել բառամիջում կգրեն՝ գինոր, թագաոր. քանի կա բառասկզբի յ— հ գրությունը, միշտ ել կգրեն՝ հատակ, յաց, աշխարյ, գայլիճ. քանի կա եա—յա գրությունը, միշտ ել կգրեն նաեաժ, ծառահական և այլն, և այլն, այսինքն այն բոլոր սխալները, վոր անում եյին առաջ բացի լույս, ավար, զվարք, գա սխալ գրություններից, վորոնց համար Ս. Մ.-ն իր բարեհաճ հավանությունն ե տալիս, վոր այլևս սխալ չկոչվեն:

Սակայն յերբ բանը հասնում ե բառացուցակներին և «հեշտ ու անբռնադրոս» կանոններին, ել վոչ մի ունեցում չի հարկավոր: Ինչո՞ւ չպիտի շարունակենք գրել «լոյս, աւար, զուարթ, գայձ». չի վոր զրանց համար ել կան ամենափրկիչ կանոններ. «Է գրվում ե ձայնավորից հետո, ինչպէս՝ հաւ, հիւանդ. ու գրվում ե բառամիջում բազմաձայնից հետո, ինչպէս՝ զուարթ. իսկ վ գրվում ե բառասկզբում և ո-ից հետո»: Ինչո՞վ այս կանոնը հեշտ հասկանալի և պարզ ու կարճ չե: Ուրեմն պահենք և լ=վ, ու=վ գրությունները: Հիշում ե արդոք Ս. Մ.-ն իր վեճը Մենեվիլյան վարդապետի հետ «վեվագրության» վերաբերմամբ, թե ինչպէս Մենեվիլյանը և ու, վ գրությունների համար կանոններ եր բերում, և ինչպէս ինքը Ս. Մ.-ն առաքելում եր այդ կանոնների գեմ: Ինչ կասի այժմ նա այդ մասին. արդոք այժմ ինքը չի ստանձնել Մենեվիլյանի դերը...

Ինչպիսիք այն ե, վոր ուղղագրության ունեցումը յեղել ե նրա համար, վոր դուրս ձգվեն հենց այդ ավելորդ կանոններն ու բառացուցակները, վոր այլևս կարիք չլինի բառերի կազմությունը սովորելու, վոր, ինչպէս

գեկրեալ մեջ ասված է, «ժողովրդական լայն խավերի համար գրագիտութեան ուսումը հեշտանա... և դպրոցն ուղղագրութեան սովորելիս գործ դրած անպիտան է ապարդյուն ժամավաճառութեանից ազատվի»։ Իսկ Ս. Մ.-ն ասում է, թե շատ պիտանի բան է կանոններ սովորեցնելն ու բառեր անգիր անել տալը... դրանով արդյոք չէ՞նք պահպանում գրութեան այնպիսի սխառեմ, վոր կիսագրագետը մի տեսակ գրի, իսկ գրագետն ուրիշ տեսակ, մի բան, վորին դեմ էր մի ժամանակ Ս. Մ.-ը։ Բայց դա մի ժամանակ էր. չէ՞ վոր ժամանակի հետ ել մարդիկ փոխվում են, և այժմ ուրիշ ժամանակներ են, ուրեմն և ուրիշ գործնական տեսակետներ։ Այժմ այլևս հարկավոր չէ «մի հնչյունին մի գիրը», այլ հարկավոր են կանոնները և բառացուցակները։

Բայց այժմ արդեն ուրիշները դեն են դրած այդ ավելորդ կանոններն ու բառացուցակները, և ընավ չեն վախեցել, վոր հաղարավոր հայ կարգացողներին համար, կամ ինչպես իմ Զիկուցման մեջ ասված է, «արդեն գրագետ մարդկանց, վորոնք վարժված են բառի սկզբում ու տառը վն և Ե տառը չե վանկ կարդալու, բավական դժվար կլինի օ-ով սկսվող բառերը (ընդամենը 20—23 բառ) օ-ով գրված տեսնել և օ (և վոչ վն) կարդալ, իսկ է-ով սկսվող բառերը (ընդամենը մի 10 բառ) Ե-ով գրված տեսնել և է (և վոչ չե) կարդալ», կամ բառասկզբի յե, յա, յո, յու գրութեանները հե, հա, հո, հու չկարդալ։ Ուղղագրութեան ուղղորդող չի յեղել հին գրագետների համար, վորոնք միշտ դժվարութեան կերեն նոր ուղղագրութեանից, այլ ապագա գրագետներին համար, վորոնք ինչպես սովորեն՝ այնպես ել կկարդան։ Բայց հին գրագետներն ել, յեթե կամենան, շատ հեշտ կհաղթահարեն այդ դժվարութեանը, և շատերն արդեն հաղթահարած են։

Գրիչ ուրեմն գրական-դպրոցական արտասանութեան համեմատ, մի հնչյունին մի գիր սկզբունքով. իսկ յեթե դեռ չես վարժվել գրական-գրադպրոցական արտասանութեանը, աշխատիւր վարժվել գրան, վորովհետև գրանով միայն գրական լեզուն դառնում է ընդհանուր լեզու, վոր է գրական լեզվի գլխավոր նպատակներից մեկն է։ Իսկ մինչ այդ, մինչև վարժվելդ հոգ չես, յեթե վոչխար գրելու փոխանակ կգրես տեղական արտասանութեան համեմատ՝ ոչխար։

Կատարված ուղղորդում, անշուշտ, դեռ չի սպասվում մեր ուղղագրութեան բարեփոխութեան խնդիրը։ Բայց այդ իմ նյութից դուրս է։

Այս դիրքը վեց ամիս առաջ, 1924 թ. մայիսին արդեն պատրաստ էր և հունիսին տպագրութեան հանձնված, յերբ Թիֆլիսի Заря Востока թերթի մեջ նույն թվի նոյեմբեր ամսի 29-ի համարում լույս տեսավ ընկ Գ. Մակինցյանի մի հոդվածը, վորի մեջ նա առաջարկում է թողնել սահակ-մեսրոպյան տառերը և գրել լատիններեն տառերով: Այդ հոդվածի մեջ շոշափված է նաև ուղղագրութեան խնդիրը միջանի հայանություններով: Ժամանակին լուս. ժող. կոմ. Գ. Մակինցյանը նոր ուղղագրութեան դեկրետի սկզբում գրել է. «Ժողովրդական լայն խավերի համար հայերենի գրագրութեան ուսումը հեշտացնելու, ընդհանուր կրթությունը բարձրացնելու և դպրոցն ուղղագրություն սովորելիս գործ դրած անպետք և ապարդյուն ժամավաճառությունից և աշխատանքից ազատելու նպատակը. իսկ այժմ նա հայտնում է, թե ինքն այն ժամանակ իսկպետ մի ուրիշ գաղտնի նպատակ է ունեցել և թե ինքը «վսչ մի դեպքում վոչ միայն ձայն չէր տալ ունեցորմի համար, այլև որինագիծ չէր մտցնիլ կոմիսարների թորհուրդը, յեթե ուղղագրութեան ունեցորմը չհամարէր իբրև մի աստիճան, վոր հեշտացնում է լատիններեն տառերին անցնելը»:

Այժմ է միայն հասկանալի դառնում, թե ինչու նա ուղղագրութեան ունեցորմի խնդիրն ամբողջական ձևով ներկայացրեց կոմիսարների թորհրդին (տես սույն գրքի մեջ, յեր 6): Նա այդպես վարվել է, վորովհետև լավ գիտես է իր այդ հոդվածի մեջ միջանի անգամ զանազան ձևերով պարզում է, վոր «հայերենի ուղղագրութեան կատարյալ ունեցորմից հետո» միայն հնարավոր կլինի լատիններենին անցնելը. ուստի և նա առաջարկում է ըստ-ձայն տառերի ուղղագրությունն ել փոխել և արտասանութեան համեմատ դարձնել, «մինչև ծայրը տանել ունեցորմը»:

Յես կարծում եմ, վոր ավելի լավ կլիներ, յեթե նախկին լուսժողկոմն ուղղագրութեան դեկրետի սկզբում հենց այն դրած լիներ, ինչ վոր ինքն իբրև գաղտնի նպատակ ունեցել է, այսինքն լատիններեն տառերին անցնելու նպատակը: Այն ժամանակ գուցե ժող. կոմիսարներից մեկը կամ մյուսը, գուցե և մեծամասնությունը ձայն չէր տալ ուղղագրութեան ունեցորմին, և գուցե չէր լինիլ այն զվարճալի գրությունը, վորի մեջ ընկած է ընկ. Գ. Մ.-ը, գրելով վոր յեթե լատիններեն տառերը չընդունվեն, այն ժամանակ «ավելի լավ է հին ուղղագրութեանն անցնելը», վորովհետև արտասանմանի հայերը Միրիայում, Կ.-Գոլսում է այլուր չեն անցել նոր ուղղագրութեանը և նույնիսկ հակառակ են դրան:—Ինչ վոր ընկ. Մ.-ը այժմ է մտածում, պետք է խորհրդածեր 1922 թ., յերբ իր կազմած Ուղղագրական Հանձնաժողովի արձանագրութեան մեջ կարդում էր, թե արևմտյան հայերը գեմ կլինեն ուղղագրութեան փոփոխութեանը. յերբ յես նույն թվի փետրվարի 25-ին «Թորհրդային Հայաստանի» մեջ մի յերկրորդ անգամ գրում եյի, վոր

ուղղագրութեան ռեֆորմն ասնպէս հեշտ ու արագ չի անցնիլ, ինչպէս կարծում են, և մեկ անգամից չի ընդունվիլ ամենքից և ամեն տեղ. նույնիսկ Հայաստանի սահմաններում նոր ուղղագրութեան ընդհանրանալու համար՝ առնվազն քսան ասարի ժամանակի պահանջ էյի գնում, ավելացնելով թե մի յերեսուն և հինգ ասարի հետո միայն՝ հին ուղղագրութեամբ սակավաթիվ հասաներ ծերունիները կշարունակեն գրել Հայաստանում. իսկ Կ.-Պոլսի և այլուր ցրված հայերի համար գրում էյի, թե նրանք ավելի յեն կապված հնին: Բայց այն ժամանակ ընկ. Մ.-ը նշանակութուն չեր սալիս գաղթական հայերին, վորոնց արժեքն այժմ և մեծացել նրա աչքին: Յերևի հիշում են շատերը ընկ. Մ.-ի կծու արտահայտութիւնը արևմտահայ կոնսերվատիվի գաղափարախոս Յ. Ոսյանի հասցեյին: Խնչ փոխվեց այս կարճ ժամանակամիջոցին:

Լատիներեն տառերին անցնել... Հեշտ գլուխ գալու րան չե այգ, քիեկուզ միայն այն պատճառով, վոր մեր բաղաձայնների համար, սակավ բացառութեամբ, չունենք ընդհանուր միակերպ արտասանութիւն. մենք դեռ ապրում ենք մեր բաղաձայնների շրջման ժամանակաշրջանը, վոր դեռ չի վերջացել:

Վերջապէս՝ ընկեր Գ. Մակինցյանը մի հայտնութիւն ևլ և անում նույն հոգվածի մեջ. «Արեղյանի ուղղագրութիւնը վորոշ յետադիմութիւն և... Արեղյանը մեզ վերադարձնում և գրեթե 12-րդ դարը:—Յերևի, նա վերջին յերկուսուկես տարվա ընթացքում հայ ձեռագիրների ուսումնասիրութիւն կատարելով՝ գտել և, վոր Ներսես Շնորհալին և ուրիշները 12-րդ դարում գրել են՝ Վակոս, հանգես, կավ, նվաստ, լույս, հատակ, սենյակ, ամսորյա, յոթն, արյուն, գայ, գրեյի, յեկ» և վոչ թե Վակաւ, հանդէս, կաւ, նուաստ, լոյս, յատակ, սենեակ, ամսաւրեայ, եաթն կամ եւթն, արեւն կամ արիւն, գա, գրեի կամ գրէի, եկ»:—Ս. Մ.-ը կարող և պարծենալ, վոր իր տարածած (տես սույն գրքի մեջ, յեր. 88 հոտն.) պաասպելը, թե ուղղագրութեան ռեֆորմը յեղել և յետահայաց ուղղութեամբ, նույնիսկ Գ. Մ.-ին և մոլորութեան մեջ ձգել:


Մ. Ա.



## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

ՆՁ	ՏՏՂ	ՏԳՎԱԾ Ե	ԳԵՏԻ Ե ԼԻՆԻ
12	16 ներքեից	վոր այդ	այդ
»	18 »	բայց	բայց վոր
17	5 վերեից	ա կապակցությունները	աւ կապակցությունները
»	10 ն.	(=i և u	(=i և u)
23	18 վ.	ե ե ի	ե և ի
24	9 »	յերկրորդի	յերկբարբառի
»	18 »	մի յ-ն	մեր յ-ն
25	17 ն.	կամ եա, եօ կապակցություններով	կամ ե, ի տառերով եա, եօ կապակցությունների մեջ
26	13 վ.	ձայնական	բաղաձայնական
»	16 ն.	սկզբի ալ	սկզբի լա
28	11 »	ձայնավորների մեջ	ձայնավորների հեա
»	8 »	ի-ն	ե-ն
34	5—6 վ.	ազատության	ազատութեան
35	14 ն.	գրականագետ	քերականագետ
37	4 »	մի + յեա	մի + եա
»	4 »	վոր յեվ	վոր եւ
41	22 վ.	փակցրած	փակկացրած
45	8 »	իօ	iu
»	6 ն.	HAM'EK	HAM'OK
46	12 »	վոչ յառ:	վոչ յա:
47	8 »	մանոււմ	անհրաժեշտաբար մտնում
50	9 »	դնում:	գնում. բայց և այնպես ամենից հարմարն այս գրությունն ե, քանի վոր ի տառն անվանկային ի ձայնավորի նշանն ե:
51	8. վ.	յօ=յու	եօ=յօ
»	9—10 ն.	բառի և յար յ	բառի... և լաա. յ
»	3 »	յ տառի	յ տառի
59	19 »	վոչ միայն	վոչ թե
61	9 »	ձայնավորների	ձայնալարերի
66	14 »	լեզվին և աշխարհաբարին	լեզվին—աշխարհաբարին
67	9 վ.	գրությամբ	գրությամբ
70	10 »	վոչ մի ուղղագրական	վոչ մի արտասանական, իսկ սենյակ գրությունը նաև ուղղագրական
»	17 »	միջնորդը	մենաշնորհը

74	6 ն.	տրամնադիր	տրամնասեր
76	3 վ.	յ=6	յ=հ=0 (զերո)
78	2 ն.	վորաշել, վողջունել	որոշել; ողջունել
81	3 վ.	շատ բան բնականորեն	բնականորեն
89	16 ն.	փոխվելով	ամեն դեպքում փոխվելով
93	6 »	և բայի	և ախլի բայերի
95	4 »	լինի	լինել
99	9 վ.	իրեն	իրենք
102	5 ն.	զնալու յեմ	զնալու յեմ, զնալու յեք
103	6 վ.	նախորդ	միանում և նախորդ
105	12—11 ն.	զբուլթյան	զբուլթյան
109	19 ն.	ինքն ինչու	ինքն





[50]4.

ՀԱՆ Հիմնարկ Այո. Արար.



FL0056094

A <sup>11</sup>  
899